



82-3

5-32









72

2004

2244 <sup>82-3</sup>  
532 4

1313-64

# Հ Ռ Ա Ս Ս Ե Լ Ա Ս

ԱՐԻԱՅՈՐԴԻՆ ԵԹՈՎՊԻՈՅ:

Որ է բանաստեղծական Պատմութիւն իմն բա-  
րոյական՝ յօրինեալ ՚ի մեծանուն Սամուէլէ  
Զանսրնեան: Յանգղիական բնագրէ Քարգ-  
մանեալ ՚ի Հայ բարբառ երկասիրութիւն

ՊԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՎԴԱԼԵԱՆՅ՝

800  
HSHK  
3749

Միոյ յանդամոյ Աստուծոյ Մեծութեան Քանգաւոյ, ԱՁ Ե

Տպագրեալ արդեամբք և ճակիւք Պարոն Պո-  
ղոսի Ուղանանեան, ՚ի Տպարանի Մարտասիրական  
Ճեմարանի:

՚ի Հայրապետութեան Տեառն Տեառն Երեւոյ՝ ակեայն  
Հայոց Կենդանիութիւն:

# Ի ԿԱԼԿԱԹԱ

1826 Ե



Որոյ բարւոյ Տնօր էցէ լինիլ կայուն յանկայ-  
 ունս, և մշտնջենաւոր ՚ի փոփոխականս: Ոչայլ  
 ինչ են այս թշուառ կեանք, բայց անձուկ ինչ  
 եւրիպեան նեղուց. ուր բարին և չալն Տանապա-  
 գորդ մակրնթայութի և տեղատութի փոփո-  
 խակի ելևել արարեալ, է՛ զի ընկղմեն զմարդ  
 բարեօք, և է՛ զի թողուն ՚ի ցամաքի:

ԹԵՍԱԸԻՐՈՍ .

2284

ՄԱՅՔՓՈՒՆԵՆՅ

ՕՂ. СТЕПАНЯИЦЪ

ВЪ ТИФЛИСѢ

№ 33

Ազնի Պարոն Պողոս Արղանանեան,

Իմ Յարգոյ Բարեկամ,

Բնութիւնն՝ ՚ի պարզեւելի-  
 քում պատուական անձինդ զձիրս յատուկս  
 և սեպհական մարդոյ՝ տարբացոյց յանդս  
 բանեղէն մտաց քոյ զսկզբունս պատուաւորս.  
 որք արտադրեն զգործս առատաձեռնու-  
 թեան յօգուտ հասարակաց. սին իրի և  
 ինձ ՚ի դէպ երևի յարմարել բնաւորու-  
 թեան քում զպոսացեալն յուժեմէ արդի ի-  
 մաստասիրէ, թէ իրաւունք և գլխաւոր  
 վախճան առատաձեռնին է՝ տալ պարզևս  
 յերախտաւորութիւն իւրոց հայրենեաց :



Արդ՝ մըտալ քո յայդպիսի գու-  
վանի սկզբանց , և յօժարակամ ըղձացեալ  
ըստ կարի սպասաՏարկութիւն ինչ մատու-  
ցանել քու մը ազգի՝ յայժմեան անշքացեալ  
և յանխիթար վիճակի նորին , ինձամ կալար  
սիրողապէս յիսկական գոյից քոց ՚ի լոյս ըն-  
ծայել տպագրութեամբ զտաշիկայ դուզ-  
նաքեայ աշխատասիրութիւն իմ այն է՝ ըզ-  
չնաշխարհիկ բանաստեղծական պատմու-  
թիւնն Հռատտեայ՝ զյօրինեալն ՚ի մեծա-  
նուն Ջանսընէ . ոչ այնքան սակս քաջա-  
լերելոյ պըրաւորական երկասիրութիւն իմ ,  
որքան սակս բնատուր և բարեխնդիր ու-  
տամնասիրութեան քոյ , և սակս սիրոյ բա-  
րեւաւութեան ազգի քոյ . ուստի և ճահո-  
ղապէս արժան է կոչել զքեզ Տայր քոյոց  
Տայրենեաց :

Ապաքէն՝ շնորհապարտեալ իմ ՚ի  
Տայրենասիրական առատաձեռնութե քում  
մէ՝ փոյթ յանձին կալում վերընծայել զայս  
փոքրիկ՝ բայց պիտանի մատեան պատուա-  
կան անձինդ , ընդ նոին և փոխարինել զոր-  
բխուր գոհունակութեան իմց , որ չունի  
զչափ : Արդ՝ Տաճեաց ընդունիլ զու այնպի-  
սի բարեՏաճութեամբ՝ որով մատուցանեմ  
զայն . յաւանակ զի Տրատարակութիւն սորին

մատակարարել լով այգի ընդ շառնոց զօգուտ ան-  
հարկին յաւերժացուցի ընդ նմին և զհամ-  
բար հայրենասիրութեան քոյոյ անձին :

Մնամ,

Իմ յարգոյ բարեկամ,

Բեզ միշտ սխառութեան  
և անձնադիր ծառայ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԴԱԼԵԱՆՅ :

Ի Մարտիտիւն Ճեմարտի :

Ի Կապիս, Ի 15 Սեպտեմբերի, 1826 :

*[The text on this page is extremely faint and illegible. It appears to be a list or index of names and titles, possibly related to a historical or scientific study. The text is mirrored across the page, suggesting it may be bleed-through from the reverse side.]*

ՅԱՌԱԶԱԲԱՆ :



Յառաջ քան զխօսել զբանս ինչ զառաջիկայ փոքրիկ գործոյս բանաստեղծուե՛ր, արժան համարիմ դուզնաբանել զյառաջադիմութենէ գրագիտութեան ՚ի միջի մերազնէից, և յիշատակել սակաւութ զայնոսիկ գրասէր մերազնէայս՝ որք ՚ի նորումս հետամուտ եղին արտադրել յազգի մերում՝ զպտուղս բանաստեղծական գրուածոց :

Արդ՝ Հայկական գրագիտութի՛ն ծաղկեալ երևեցաւ ՚ի դարս դարս և ՚ի տեղիս տեղիս աւ՝ ժամանակօք պէսպէս ակնաւոր նախորդաց մերոց . որոց լուսապայծառ գրաւոր երկասիրութիւնքն իջեալ առ մեզ՝ զմայլեցուցանեն զհոգիս ընթերցողաց, անմահացուցանելով միանգամայն զանուանս և գլխատակս հեղինակաց նոցին : Այսօքիկ բարենախաձ հայրենասէրք զանց արարեալ զառժամանակեայ զբօսանօք աշխարհի՛ն՝ անյուցին զկեանս իւրեանց յառանձնարանս սենեկայ . և կենցաղելով ՚ի վերայ

Իմացական մահիւթեանց՝ զրկեցին զլինքեանս ՚ի  
 մահիւթեց կենցաղոյս , առ ՚ի թողուլ մեզ ապա-  
 գայից իւրեանց զսեղան Տոգեպարար կերակրոյ՛  
 ՚ի վերջին ամս ընդ Տանրական ա-  
 լէճուի գերութեան և ազգային թշուառութե  
 մերոյ՝ տեսչութիւնն ո՛չ անտես արար զմեզ առ  
 ՚ի վայելելոյ զգրաւոր պտուղս բազմաց ՚ի մե-  
 ռայնոյ . որք Տայելեալ անձնանուէր նախահարց  
 մերոյ զլոյս գրապիտութեան յինքեանս ձգեալ՝  
 ո՛չ դանդաղեցան Տետեօղ լինիլ լուսաւոր պո-  
 ղոտայի նոցա , և մշակել զանդս գրապիտութե  
 Հակազանց . զոր սուր և հուր գերուլաց մերոյ  
 խոսքան արարեալ յաւեր դարձուցին : Եւ կարի  
 քաջ յերաւի . քանզի ՚ի մեջ պէսպէս ուսում-  
 նասէր Հայկազանց ծաղկելոյ առ արդի Ժամա-  
 նակօք՝ գեր ՚ի վերոյ տեսանեմք զգրաւորական  
 միաբանութիւնն Աննետիեան . որք յընթացս ա-  
 ռաւել քան հարիւր ամաց ուշ ՚ի կուրծս եդեալ՝  
 Թեակոխեցին և Թեակոխեն առ ՚ի լուսաւորել  
 զիմացական կարողութիւնս ազգին մերոյ հրատա-  
 րակութեամբ պէսպէս իմաստասիրական , բա-  
 ռոյական և ուսումնական մատենից . որոյ ընթեր-  
 ցողքն պարտին լինիլ մեծապէս արդիւնաւորեալ  
 և երախտապարտեալ : Այլ սակայն յաւեր զար-  
 մանալին այն երեւի՝ զի ՚ի հոգալ սոցա առ ՚ի  
 արտադրել զգրեանս ՚ի վերայ պէսպէս առ-



արկայից և գիտելեաց, ոչ նոյնօրինակ հոգա-  
 ցան գրել և իմաստասիրել զիւրյ վսեմական և  
 հաճոյական շառաւիղէ գիտութեան. զբանաս-  
 տեղծութիւնն ասեմ՝ որ գոլով մասնաւոր ձիւր  
 բնութեան մասնաւոր իմն եղանակաւ ներգործէ  
 ՚ի բնութիւն մարդոյ, գեղագեղ նկարագրութիւն  
 կրից, գործոց, անձանց և այլոց բնական իրաց,  
 շարժելով զկիրս մարդոյ և իշխելով ՚ի վերայ  
 սրտի նորա՝ որ կայան է կրից: Արդարեւ՝ տեսա-  
 նեմք ՚ի հրատարակեալ գրեանս հարց Մխիթար-  
 եանց զբանի մի գործս բանաստեղծութեան. այս-  
 ինքն՝ զԲան գործնական, զԻմառնութի չորից  
 վերջնոց, զԱրհեստ աստուածսիրութեան,  
 և զԱմարանոց բիւզանդեան, որ մատակարա-  
 րեալ են հոգւոյ իմոյ զմեծ օգուտ և զգուար-  
 ձութիւն, որպէս և ամենայն ուսումնասէր  
 ընթերցողաց. սակայն սորա առ բարդաստութիւն  
 այլոց բազմաթիւ գրեանց նոյն՝ երևին իբրև  
 զերիս կամ զչորս կաթիլս անձրևաց ՚ի մէջ  
 լայնարձակ աւազանի. և հազիւ թէ բաւական  
 են առ ՚ի թանալ զլեզուս մերազնեայ ուսում-  
 նասիրաց՝ որք կարի ծարաւի են գրուածոց բանաս-  
 տեղծութիւն: Թողում ասել զտաճկերէն թարգ-  
 մանութիւն Գիշերացն Եանկ փիլիսոփային, որ  
 յայսմ մասին հողագնտի է բոլորովին անհաս-  
 կանալի մերազնեայ ուսումնասիրաց:

Արդ՝ թէպէտ և զայսքան ասու-  
կաւ պտուղս բանաստեղծութեան մատուցեալ են  
մեզ գրաբուղիս մեղութիւնս Աննե տիեան փեթակին  
յընթացս դարու միոյ, և թէպէտ այսքան փոքր  
երևին բանաստեղծական գրեանք ՚ի միջի մեր,  
սակայն քաղցր է ինձ ծանուցանել ընթերցողաց  
իմոյ, զի նորոգ սկսեալ են Մխիթարեան միա-  
բանքն առաւել միտ դնել վսեմական քերթու-  
ծոյ բանաստեղծութեան: Քանզի ՚ի նամակէ  
միջէ՝ զոր գրեալ է առ իս գերապայծառ աբ-  
բայն Մխիթարեան միաբանութե՝ Հայր Սու-  
քիաս վարդապետն Սոմալեան, երևի զի ունին  
նորա ՚ի պատրաստի զՏարիւրաւոր ձեռագիր  
մատեանս ՚ի վերայ զանազան մակայութեանց և  
գիտելեաց: ՚ի միջի սոցա յիշատակեալ կան  
Հօշիուսի քերթածք ՚ի վերայ շարձարանաց Քն  
և այլոց, նա և թատրոնական ողբերգութիւնք ՚ի  
նկարագիր արարոց դիւցազանց յօրինեալք և  
թարգմանեալք: Այս սխրալի առհասարակաց  
ունիմք առ մեզ զԱրտագեան թաղերգութիւնն  
՚ի վերայ քաջաց Վարդանանց՝ զյօրինեալն ՚ի մե-  
րոյ գերագանց բանաստեղծէն՝ ՚ի Հայր Ղուկա-  
սէ վարդապետէ Ինձիձեան: Ընդ այսու բա-  
րեյոյս պարագայիւք արժան է մեզ ակնունիլ,  
զի այսուհետև առաւելցին յազգի մերում  
բանաստեղծական մատեանք: որք ՚ի յօգտեցու-

Յոսուպէս

ցանկէն միանգամայն և զուարճացուցանեն զսիրտս  
 ընթերցողաց գեղեցիկ և նորանոր նկարագրութիւնք  
 Սոյնպէս և արժան է խոստովա-  
 նիլ, զի ճաշակ բանաստեղծութեան պտղաբեր  
 էղև և առ ոմանս յուսումնասեր մերազնեից  
 յայլևայլ տեղիս : Վասն զի յամի Տ՛ն 1793,  
 բանիբուն և հանձարեղ համազգիին իմ՝ Պարոն  
 Մարգար Զ. խօշեանց ընծայեաց ազգի մե-  
 ռում զգերազանց բանաստեղծական պատմութի  
 թեկեմաքի, որպէս յայտ է ամհայն ընթերցո-  
 ղաց : Եւ չորեքտասան ամօք յառաջ՝ բանաս-  
 տեղծութիւն Նումայի Պոմպիլիոսի և Բելիսա-  
 բիոսի՝ ի լոյս ընծայեցան ի մերում լեզուի եր-  
 կասիրութեամբ գիտնական Պետրոս վարդապե-  
 տի Պուռնագեան : որոյ թարգմանութիւնն բա-  
 նաստեղծութեանն Զիւ Բլայի տակաւին ո՛չ է  
 ՚ի լոյս ընծայեալ : Թողում յիշատակել ըզ-  
 Վոլտերեան եղերերգութիւն Յուլիոսի Կեսարո-  
 սի՝ զաշխատասիրեալն ՚ի Պարոն Յակովբայ Նա-  
 զարայ Ըամբեանց . և զեղերերգութիւնն Պիզ-  
 զարոյի՝ զթարգմանեալն ՚ի զուարթածաղիկ Պա-  
 րոն Սեմայ Սէթ Սամեան : Այս վերջին բանաս-  
 տեղծութիւն տակաւին ո՛չ է ՚ի լոյս ընծայեալ,  
 որքալի օրհաս վաղամեռիկ թարգմանչին խա-  
 ճիան արկանելով տաղաղութեան նորին :

Այլ արդ՝ յառաջ անտի սկզբնու-

ւորութեան աշխատասիրութեան իմոյ յուս-  
 մունա գրոյ, հանդիպեալ իմ բազմայ գեղեց-  
 կահաւ գրուածոյ վսեմախոհ բանաստեղծից  
 Անգղիոյ, և ընթերցեալ զնոսա հետազօտութե  
 նորութե և զուարճութե՝ այնքան զմայլեցայ ՚ի  
 միտս իմ և ՚ի հոգի, որքան առարկայք նոցա  
 են վսեմ և նկարագրութիւնք նոցա զարդարուն,  
 ազդողական և հաճոյական: Յորդորեալ իմ  
 յայսպիսի առարկայից, և յաւէտ կամեցեալ հա-  
 ղորդել պատուելի ազգին իմոյ զայն ճաշակ  
 քաղցրութեան, զոր բանաստեղծք այլազգեաց  
 մատակարարեցին իմոյ քմայ՝ թեւհոխեցի թարգ-  
 մանել ՚ի մեր լեզու յամի Տեառն 1823 զա-  
 ռաջիկայ բանաստեղծական պատմութի հոսս-  
 սելայ՝ արքայորդուն Եթովպիոյ: Թեպէտ և  
 միտքիկ և սակաւութերթ երևի սա յուրում ար-  
 տաքին տեսութեան, սակայն պարունակէ ՚ի ներ-  
 քուստ զբազում օգուտս և զվսեմաբան նիւթս  
 խրատուց. վասն զի այս է գեղեցիկ իմն նկա-  
 րագրութիւն ամենայն վիճակաց մարդկային կե-  
 նաց, և պայծառաւիայլ հայելի ամենայն մարդ-  
 կեղէն բարձանաց ՚ի խնդիր երջանկութե: Արժանե  
 է աստուծօր իմաստասիրել զի ամենայն մահա-  
 նայու՝ յորում վիճակի և իցե՝ ունի զիւր վիշտս  
 և զհոգս. և իւրաքանչիւր ոք կարի փոյթ է  
 կարծել զինքն ՚ի վիճակի իւրում կարօտ երջան-

կութեան, մինչ խոշորացոյց պատիր երևակայ-  
 ութեան պատկերացուցանէ նմա զայլս 'ի վիճակս  
 իւրեանց անկարօտ այնմիկ : Այսմ 'ի դէպ գայ  
 քեղեցիկ բանն այն՝ ոգեալ քնարաւ իմս սիրելի  
 Բանաստեղծին՝ Հայր Ղուկաս վարդապետի Ին-  
 ճիճեան, յիւրում Ամարանոցի բիւզանդեան :

Աղքատք և փարթամք՝ միադէս տանջին,  
 յառիժ տանջանայ՝ միայն տարբերին .  
 աղքատըն տանջի՝ առ կարեաց անձին,  
 փարթամըն տանջի՝ առ հոգոց վշտին :

Եւ թէպէտ կարի դիւրին է մեզ՝  
 համարել զայլս առաւել երջանիկ քան զմեզ,  
 սակայն կարի դժուարին է գտանել ուրեք ըզ-  
 նոյն իսկ երջանկուի . որ կայանայ միայն յուղ-  
 ղութեան վարուց և գործոց, 'ի չափաւորութե  
 կրից և բաղձանաց, կամ լաւ ևս տեսլ, 'ի ներ-  
 գործութեան առաքինութեան :

Հեղինակ այսր կենցաղօգուտ մա-  
 տենին՝ մեծամուռն Սամուէլ Զանալեան, ո՛չ է  
 անձանօթ բազմաց 'ի գրասէր մերազնեից . որք  
 արդէն վայելին զարդիւնս Հայկական թարգ-  
 մանութեան բառարանի նորա . և ծաղկաբաղ-  
 բանք ինչ 'ի հատլնաիր գրուածոց նորա՝ զոր 'ի  
 լոյս ընծայեցի 'ի մատենի իմում մակագրելոյ :



Անգիստայ Անդէտ յամի տեառն 1821, հանդերձ մասնաւոր ծանօթութեամբ հանգամանայ սորին, քաջայայտ յուշանէն Հայկազուն ընթերցողաց զանհնարին կարողութիւն հանձարոյ և մեծիմաստ մտայ նորա: Բայց և այնպէս առ ՚ի առաւել ծանօթութիւն հետազօտ համբախաց, կարևոր վարկայ ՚ի սկզբան մատենիս կարգել զհամառօտ պատմութիւն ինչ վարուց և գրուածոց այսր գերահռչակ հեղինակի. զորոյ զարդիւնս հնար է միայն ճանաչել ճաշակելով զպտուղս բանասիրական աշխատասիրութեանց նորա:

Անիք բանիս. խոնարհամիտ յուշ սով ակնունիմ զի բարեմիտ համազգիք իմ սիրողապէս հաճեսցին չունիլ զառաջիկայ դուզ նաքեայ երկասիրութիւն իմ, իբրև զման յայնուջիկ սպասահարկութեանց, զոր ամենայն բանական անձն պարտական է մատուցանել ազգի իւրում յօգուտ իւրոց հայրենեայ: Նա և յուսամ ՚ի ինձան երկնաւորին, զի զկնի սակաւուց յաջողութեամբ Տեառն կարացից հրատարակութեամբ ընծայել զբասէր մերազնէից զԴինարբան՝ որ է գեղեցիկ իմն շարունակութիւն բարոյական պատմութեանն Հռասսելայ՝ յօրինեալ յանանուն հեղինակէ ումեմնէ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԴԱԿԱՆՅ:

ՍՈՒՂ ԻՆՉ ԲԱՆ

Յաղագրս Վարուց և Գրուածոց

ԶԱՆՍԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝

**Ս**ամուէլ Զանսն ծնեալ էր ՚ի Լիճ-  
Ֆիլղ, ՚ի Ստաֆֆորդ շայր, յեօթներոր-  
դում ամեանն սեպտեմբերի յամի 1709: Նա  
էր երկրպոյն որդի Մեքայէ լի Զանսնեան,  
որ էր գրավաճառ մի յայնմիկ քաղաքի: Մայր  
նորա՝ Սարրա Փորդեան՝ սերեալ ՚ի պատուա-  
ւոր գերդաստանէ ՚ի Վարվիկ շայր՝ էր քոյր  
Յուլսէի Փորդեան վարդապետի, որ էր բը-  
ժիշկ գերահռչակ, և հայր Առուսէ լիոսի  
Փորդեան՝ մեծահամբաւ մատրանապետի տէր  
Ճեսսէրֆիլղայ:

՚ի մանկութենէ իւրմէ Զանսն ախտաւոր  
էր խողիք կամ խուլիւ պարանոցի, որ հասա-  
րակօրէն յԱնգղիացիս ասի ախտ արքայի: Այ-  
նորիկ աղագաւ մայր նորա հաւատայեալ ՚ի  
ներգործութիւն արքայական փորձոյ՝ էած զնա  
տուաջի դշխոյին Աննայի, որ զաւաջինն կատա-  
րեաց զայս աղաչածն, և եւ մատաղ հիւանդին  
իւրոյ զամենայն զապաքինիչ զօրութիւն՝ զոր

հնար էր նմա մատուցանել: Ի վերայ այսք  
 ամենայնի ախտն ո՛չ զիջաւ այսուիկ դեղով:  
 Յետ այնորիկ հատաւ նա վանն ողջութեան այ-  
 նորիկ խլային թարախի. սակայն հատումն այն  
 տգեղացոյց վիայն զդէմն նորա, վնասեաց լսե-  
 լեաց նորա, և զրկեաց զնա ՚ի տեսութենէ ձա-  
 լոյ ազան նորա:

Մռձաւ նա ՚ի գիտնական ուսմանս ՚ի ձրի  
 դպրոցին Լիճ՛իղայ, ընդ հրահանգութեամբ  
 պարոն Հնորբի: Յառաջագիմնութիւն նորա ընդ  
 այսուիկ սեպուհաւ պարտի լինիլ կարի մեծ և  
 քանզի ՚ի հնգեասան ամաց հասակի փոխադրե-  
 յաւ նա ՚ի բարձրագոյն դպրոց ՚ի Սորբրիէ  
 որ ՚ի Վորսէստրըշայր, ուրանօր ստացաւ նա  
 զկատարեալ հմտութիւն ուսումնական գրագի-  
 տութեան: Եմնաւ նա իբրև երկրորդ կարգի  
 աշակերտ ձեմարանին Պեմբրօկայ որ Մքս-  
 ֆօրդ, ՚ի 31 երրորդում հոկտեմբերի 1728.  
 սակայն եթող զհամարարանն առանց առնլոյ  
 զաստիճան ինչ:

Յամսեանն դեկտեմբերի յամի 1731, հայր  
 նորա վախճանեցաւ, ՚ի 79 ամաց հասակի իւրոյ,  
 և եթող զգերդաստան իւր յայնպիսի յանձուկ  
 պարագայս, մինչ զի Չանարն պարտաւորեցաւ  
 ընդունիլ զպաշտօն դասատուութեան ՚ի դըպ-  
 րոցին Մարկէթբուլոթայ ՚ի Լէյսէստէրշայր:

սակայն զինի սուղ ինչ յանանակի եթող նա  
 զայս պաշտօն, և գնաց առ ՚ի բնակիւ ՚ի Բլր-  
 մինգՏամ, ուրանօր թարգմանեաց նա զճանա-  
 պարհորդութիւն Լորոյի առ Արինսինիա կամ  
 Հաբէշտան: Պանն այսր աշխատասիրութեան  
 ստացաւ նա զդուզնաբեայ գումար հինգ կինեաց  
 ՚ի գրաւաճառէ միոջէ յայնմ տեղւոջ: Այս էր  
 առաջին շանն, զոր արար նա առ ՚ի գտօնէլ  
 զնպատ փողոյ ՚ի գոջէ իւրոյ, և այս ունէր  
 տալ նմա զկարի սակաւ քաջախրութիւն վանն  
 միզբնական պաշտօնի հեղինակութեան իւրոյ:

Զանարն ոչինչ իւրիք անձամօթ էր զօրութե  
 իդական գեղեցկութեանց: Մինչդեռ էր նա ՚ի  
 Ստորբրկեան գարոցի, յույանէր զսէր առ  
 օրիորդ Օլիվիա Լայդ, որ էր պատանուհի  
 սոսկացող, (կուէկրր) որում վերաբեաց զօ-  
 բինակ մի ոտանտորայ, և յամի 1735 լինելով  
 ՚ի 26 ամաց հասակի՝ ամուսնացաւ ընդ տիկնոջն  
 Պորտերայ, որ էր մետաքսավաճառ ՚ի Բլր-  
 մինգՏամ, և որոյ հասակն գրեթէ կրկին էր  
 քան զիւրն. արտաքին երևոյթ նորա ոչ էր եր-  
 բէք զմայլեցուցիչ, և բովանդակ ստացումք  
 նորա ոչ էին աւելի քան զ800 պօնդս: Այսու-  
 փողով ջանացաւ նա հաստատել զճեմարան մի  
 յիդիւսլ, մերձ առ Լիճիկոյ. սակայն յառա-  
 ջադրութիւն նորա ոչ ել ՚ի դլուխ: Մեայնակէ

աշխերթաբն՝ որք կարգեալ էին ընդ ինձանե-  
 դութեամբ նորա՝ էին գերասպառազ Գառնի  
 Գեորգիեան, եղբայր նորա Գեորգ Գեորգի-  
 կեան և պատանի սեպուհ ռմն Տարտառայ արոյ  
 անուն էր Օթիլի որ և վարձանեցաւ յառաջ  
 բան զկատարումն ուսմանց իւրոց: Իբրև զայտա-  
 ժամանակաւ սկիզբն արար յօրինել զեղերեթի-  
 դութիւն Իրինայ. և յամենուն մարտի յամի  
 1737, չու արար առ Լոնդոն: Աշխերթա նորա  
 Գեորգի գնաց ՚ի Լոնդոն յայնմ ժամանակի ո-  
 տա ՚ի Տեռաիւ անդամօր պաշտօնի իրաւախո-  
 Տութեան:

Յամենան մայիսի 1738, Չանսըն Տրատարու-  
 կեաց զգերագանց ուսմաւոր իւր մակագրեալ  
 Լոնդոն, գրեալ Տամեմաւ երրորդ երգիծանու-  
 թեան Չուվինէլայ՝ զոր գնեաց Գաղսլի վան-  
 տանս պօնդիցէ Գործս այս Տիմն էարկ մեծաւ  
 Տամբաւութեան նորա:

՚ի վրայս ամենայնի շահքն՝ զորոս ստանայք  
 ՚ի քրաւորական աշխատասիրութեց իւրոյ՝ էին  
 այնքան դուզնաբեայ, մինչ զի զարդիս շնայաւ  
 նա առ ՚ի գամանէլ զպաշտօն վարժապետութեան  
 ճր՝ դպրոցի եօթք յԿարգլի որ ՚ի Լէյսէս-  
 արըշայր, վանս տարեկան վարձու 60 պօնդիցէ  
 սակայն, որով Տեռա Տանգամաբ դպրոցին պա-  
 Տանջէր զի վարժապետ արՏեաօփյ առաջնոր-



հետեւ նման պարտաւորեցաւ նա Թողուլ զայն  
 պաշտօն : Չկին պարտիկ արտադրեաց նա ըզ-  
 բարձր մտաւորակա զարմանալի եւ ապու թեամբ :  
 Եւրայարեաց նա զսինկղիտոսական բարոյս վանն  
 շտեմարանայ : և գրեաց զբազմազան յառաջա-  
 բանս վանն զանազան գործոյ : Յամի 1743 յօ-  
 ղինեաց նա զգանկ իմն գրանոյին Օքսֆորդայ :  
 և շարահարդեաց զՆարեան մանրագատունն :  
 Յամի 1744 կարի յոյժ մեծայոյց զհամբա-  
 իւն Տրատարակելով զվարս վայրենեաց որ յօ-  
 ղինեալ էր ի նմանէ : Ապա յառաջարեաց զնո-  
 ղոք տպագրութիւն Եւքսպիերեան գործոյ որ  
 ոչ եւ ի գլուխ յայտ մանանակի :

Յամի 1747 Տրատարակեաց նա զտարայոյց  
 բառարանի Անգղիական լեզուի : զոր վերն-  
 ծայեաց առ կումն Ճէստերֆիլդայ : Գրաւա-  
 ճառքն որք դաշինս եղին ընդ նմա վանն կա-  
 տարման այսր մեծադիր գործոյ : Եին պրն Ճաւ-  
 լես շիճ, պարոն Ատրէաս Միլլէր, պարոնայք  
 Լանգմէն և Նեպտրն : Չարդիս կալաւ նա ի  
 վարձու գտուն մի ընգարձակ, գոլով յարդա-  
 րեալ մի ի վերին սենեկայ ծորին իբրև գտեղի  
 համարակալայ : և կալաւ զվեց նօտարս վանն  
 օրինակելոյ : Բառարանն աւարտեցաւ իբրև ի  
 վերջ 1754 տարուոյ :

Բառարանն ի վերայ այսր ամենայնի ոչ ճաւ

խէր զբովանդակ վամանակ նորին. քանզի այն  
ինչ յամբ կատարէր զայն արտադրեաց զեղեր-  
երգութիւն իրինայ. հրատարակեաց զմանուկ  
ինն տասներորդ Երգիծանութի Զուվինելայ  
մակագրեալ Ունայնութիւն մարդկային Յանկու-  
թեանց. և սկսաւ և աւարտեաց Վեգերօյն ։

Յամի 1758 արտադրեաց զՀեղգայօյն, որ  
երևիւր յիւրաքանչիւր շաբաթու յեօթնեկեան  
լրաթղթի միում մակագրելոյ՝ Ընդհանրական  
Քրոնիկոն ։

Մայր նորա վախճանեցաւ յերկարաձիգ հա-  
տակի 90 ամաց, յամսեանն յունվարի 1759 ։  
Չկնի այսր պատահման՝ հուլ 12 հուլ գրեաց  
նա զՀռաստելաւ իւր՝ զարքայորդին Եթովպե-  
ոյ, զի շահաք նորին կարացէ հատուցանել  
զձախս արարեալս ՚ի յուղարկաւորութեան նա-  
րին, և վճարել զխումն ինչ պարտս, զորս պար-  
տէր մայր իւր ։ Ասան այսր գեղեցիկ և զարմա-  
նալի պատմութեան ստացաւ նա զգումար 100  
պօնդից, և զ25 պօնդոս յերկրորդ տպագրութի  
նորին ։ Ասէր նա ազնուական Յետուայ Ռեյ-  
նօլդեան, զի շարադրեաց զայն յերեկոյս միոյ  
շաբաթու, ուղարկեաց զայն ՚ի տպարանն որպէս  
գրեալ էր զայն, և ոչ երբէք ընթերցաւ զայն  
զկնի ։ Յամի 1762 արքայն ետ նմա դռնիկ  
300 պօնդից ամի ամի, իբրև զպարգև վասն

գերազանցութեան գրուածոց իւրոց, և վասն  
օգտի բարոյական դիտաւորութեց նոցա: Տպա-  
գրութիւն Էքսպոզիւրեան գործոց նորա հրա-  
տարակեցաւ յամի 1765: Համալսարանն Գուր-  
լինայ իբրև զայսու Ժամանակաւ ձեռնադրեաց  
զնա վարդապետ օրինայ, և յետ այնորիկ ընկա-  
լաւ նա զնոյն պատիւ ՚ի համալսարանէն Օքս-  
ֆորդայ:

Յամի 1773 ուղեկցութիւն պարոն Բասկէլի  
զնայ նա յայցելութիւն արեւմտեան կղզեաց Սկոտ-  
տիոյ: Չայսմիկ ձանապարհորդութենէ հռչա-  
կեաց նա զբան ինչ, որ համարի գրեալ անպա-  
տեհ նախապաշարմամբ ընդդէմ երկրի և Ժո-  
ղովտեան Սկոտտիոյ, սակայն ձոխ է այն բազ-  
մօք փիլիսոփայական տեսարանօք ընկերակցութիւն  
հանձարալիւ մտախորհութեամբք և կենդանի  
նկարագրութեամբք:

Յամի 1777 պատարկեցաւ գրել զհակիրճ  
վարս Անգղիայի բանաստեղծից: Կատարեաց նա  
զայս գործ այնպիսի եղանակաւ, մինչ զի ամե-  
նայն անաչառ վերձանօղ պարտի գիտել, զի  
իբրև զանձնագիր և զգրադաս չունէր նա զոք  
հաստար ինքեան: Այս էր վերջինն ՚ի գրա-  
ւորական աշխատասիրութեց Չանսլին, և թե-  
պէտ զարդիս էր նա ՚ի 71 տնայ հասակի, սու-  
կայն յայանեաց աշխարհն զի զօրութիւնք մտայ

նորա էին տակաւին հզօրեղ որպէս միշտ

Յամեանն նոյեմբերի 1783 ընկալաւ զախա ջրգողութեան: Յայմիկ ախտէ առ ժամանակ մի խոն ինչ դիւրութիւն եգիտ նա . և ՚ի մեջ ամառան յամի 1784, գնաց նա ՚ի Գերբիշայր, առ ՚ի առնուլ զօգտիոխութեան փորձ: Յամեանն նոյեմբերի այնր ամի կարի սաստիկ նեղեցաւ նա ՚ի շնչարգելութենէ և ՚ի ջրգողութենէ, այսր աղագու վերտին դարձաւ ՚ի Լոնդոն յօգուտ առաւել բժշկական խրատո և Սակայն ամենայն հնարք էին անզօր և Չարդիս իմացաւ նա զվասնան իւր մերձեալ . և վախճանեցաւ ՚ի 13 երողում դեկտեմբերի յամի 1784, ՚ի հասակի 75 ամաց: Ըմիտիեցաւ նա ՚ի Աէստիւնըստըր Էբբի, մերձ առ ստորոտ մասարձանին Շէքսպիերայ և հուպ առ գերեզմանն Գերբիկայ: Համեմատ նորին իսկ լնդրոյ մեծ և կապտագոյն քար իմնեղաւ ՚ի վերայ գերեզմանի նորա, հետագայ մակագրութեամբ:

ՍԱՄՈՒԷԼ ԶԱՆՍԸՆ. Վ. Օ.

Հանդուցեալ ՚ի 13 Դեկտեմբերի

Յ-ի Տիւնն 1784:

՚ի հասակի 75 ամաց:

Չունելով զայլ մերձաւոր ընտանիս՝ եթող  
նա զգումար ստացուածոց իւրոց, որ էին իբրև  
1500 պօնդք՝ հաւատարիմ սեաւ ծառային  
իւրոյ՝ անուանելոյ Քրանսիս Բարբըր. և կար-  
գեաց զազնուական Յեսու Ռէյնօլդեան, զազ-  
նուական Յովհաննէս Հակինսեան, և զազնուա-  
կան Աիլիէմ Սկատեան՝ կտակահատարք իւր-  
Կա՛հ Զանսըն վարդապետին շարժեաց զմտա-  
դրութիւն հասարակայ անսովոր եղանակաւ . և  
տալարանքն պատարուն էին զեղուածովք յիշա-  
տակութի նորին՝ գրելով բազմազան եղանակաւ  
զքարոց, զներբոց, զանցս կենաց, վարույ և  
պատմուեց նորին : Կերպարան Զանսըն վարդա-  
պետին էր մեծ, կայտաւ և անձնեայ . սակայն  
ենթակայ էր նա տկարութեան իմիք՝ նմանելոյ  
չնչողականութեան մկանանց . և ունէր զսեր-  
մունս այնքանեայ հիւանդութեց սերմանեալս ՚ի  
կազմուածի իւրում, մինչ զի փոքր ժամանակաւ  
յառաջքան զմահ իւր ասաց, զի հազիւ երբէք  
մտաբերէր զօր մի անցուցել ՚ի կեանս իւր միան-  
գամայն ազատ ՚ի ցաւոց : Չարմանալովնչ կարո-  
ղուիք իմաստուե՛ զորս սեպհականէր նա՝ մշո-  
կեալ էին ընթերցանութք, ևս առաւել մտա-  
խորհութեամբ և մտածութեամբ : Յիշողակա-  
նութիւն նորա էր պահեցողական . երևակայուի  
նորա հզօրեղ . և դատողութիւն նորա առողջ

և թախանցիկ ։ Բարեօրտութի, աղատամտուի  
 և մարդասիրութիւն նորա էին անկողար ։ և  
 ասի թէ տուն նորա էր հաւաստի պատսպարան  
 նեղելոյ և տառապելոյ ։ Ճշմարտասիրութիւն  
 նորա էր այնքան սաստիկ՝ մինչ զի ասի ։  
 Թէ յարաժամ խօսակցէր նա իբրև ՚ի վերայ  
 երդման ։ Թերութիւնք նորա հակամարտեալք  
 ընդ առաքինուէց նորին՝ սուղանին յոչնչուէ-  
 և գրուածք նորուն ընթերցյին յապագայից  
 յարգութեաւ ։ Հեղինակ նոցա, որքան լեզուն  
 այն՝ յորում գրեալ եղեն նորին՝ Թասյէ ան-  
 մուայ ՚ի վերայ աշխարհի ։





UNIVERSITY

1810

THE UNIVERSITY OF CHICAGO

It is the policy of the University of Chicago to provide a liberal education for all students, regardless of their background or financial resources. The University is committed to the highest standards of academic excellence and to the development of the intellectual and moral character of its students. The University's curriculum is designed to provide a broad and deep understanding of the human condition and the world in which we live. The University's faculty is composed of the finest scholars and teachers in the world, and the University's facilities are among the best in the world. The University's motto is "The way to the future is through the past."


*[Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several lines and is mostly obscured by fading and a large stain.]*

ՀՌԻՍՏՈՍԻ ԿԱՍ.



Ք. Մանուկյանի անվան ճեպարանի օժանդակությամբ

Մանուկյանի քոբ դիմե անուր յեղբոսանու անոց  
ստուերացելոյ ճառ ովք



THE LIBRARY

OF THE UNIVERSITY OF TORONTO

1827


*[The following text is extremely faint and illegible due to fading and bleed-through from the reverse side of the page. It appears to be a list of names and titles, possibly a library inventory or a list of donors.]*



# Հ Ռ Ա Ս Ս Ե Լ Ա Ս

Գ Լ ՈՒ Խ • Ա •

Ներդրածին Պալատի Ռոյ 'ի հովտի Ռում :

 Որք ունին դնէք դիւրահաւանութեամբ  
Հին Հմանք երեւակայութեան , և զհետ  
պնդիք ըղձաձկտութեամբ ցնորից յուսոյ , որք  
ակն ունիք զի ծերութիւն կատարեսցէ զխոստմունս  
պատանեկունք , և զի պակասութիւնք այժմեան աւուր  
լցնին 'ի վաղիւ , լուարութեամբ շուստ  
սելայ' արքայորդոյն Եթովպիոյ : Շուստելայ  
էք չորրորդ որդի : հզօրեղ կայսերն այնորիկ ,  
յորոյ տէրութիւն հայրն ջրոյ սկսանի զընթացս  
իւր • որոյ յորդութիւնն 'ի վայր թափէ զհե-  
ղեղս առատութե , և տարածէ 'ի վերայ կիսոյ  
մասին աշխարհի զհունձս Եգիպտոսի :

Համեմատ սովորութեանն՝ որ մնացեալ է դարէ 'ի դար 'ի մէջ արքայիցն այրեցած գօտւոյն՝ Հռասսեւլաս արգելեալ կայր յառանձնական պալատի միում, հանդերձ այլովք ուստերօք և դատերօք Եթովպեական արքայութեան, մինչև կարգ յաջորդութեան կոչեսցէ զնա յաթուր շխանութեան:

Տեղին՝ զոր իմաստութիւն կամ քաղաքականութի հնազանց կարգեալ էր վասն բնակութեան Եթովպեական արքայազանց՝ էր լայնատարած հովիտ մի 'ի Թագաւորութեան Ահմարայ, շրջապատեալ յամենայն կողմանէ 'ի լեռանց՝ որոց գագաթքն ամբարձեալ էին 'ի միջոյ մասին: Միայնակ անցքն՝ ընդ որ հնար էր գտանել զմուտ՝ էր քարանձաւ մի, որ անցանէր ընդ ժայռիւ միով: զորմէ յերկար ժամանակաց հետէ հակաճառեն, եթէ արդեօք այն է գործ բնութեան, թէ մարդկային գործունէութեան: Եւք քարանձաւին ծածկեալ էր մայառախիտ անտառաւ. և բերանն՝ որ բացեալ լինէր առ հովիտն՝ փակեալ էր երկաթեայ դրամբք՝ գործեցելովք յարուեստաւորաց վաղեմի աւուրոյ. և էին նոքա այնքան ստուար՝ մինչ զի ոչ ոք կարէր թարց նպաստի մեքենայից բանալ կամ փակել զնոսա:

'Ի լեռանց յամենայն կողմանէ իջանէին գետորայք: որք ինչին զհովիտն տղջոյն դալարութեան:

և արտաւտութիւնք . և ձեայույանէին զլիճ մի  
 'ի միջոյ . յորում բնակէին ամենայն տեսակք  
 ձկանց , և յոր յաճախէին ամենայն թռչունք .  
 որոյ բնութիւնն ուսուցեալ էր թանալ զթեւ  
 իւրեանց 'ի մէջ ջրոյ : Լիճս այս արձակէր զա-  
 լելագանց ջուրս իւր վտակաւ միով , որ մտանէր  
 'ի խաւարչուտ խրամատ մի լերին 'ի Տիւսիսային  
 կողմանէ , և հոսէր զարհուրելի ձայնիւ 'ի քա-  
 ռաժայուէ 'ի քառաժայու , մինչև այլ ոչ ևս  
 լինէր լսելի :

Կողմունք լերանց ծածկեալ էին ծառովք . ե-  
 դերք վտակաց գունաւորել էին ծաղկամբ . իւրա-  
 քան չիւր փչիւն հողմոյ թօթափէր զհամեմս 'ի  
 քարանց . և իւրաքանչիւր ամիս արկանէր զպտուղս  
 'ի վերայ երկրի : Ամենայն կենդանիք՝ որք խա-  
 ծանեն զխոտն կամ արածին 'ի թուփս՝ թէ վայ-  
 րենիք և թէ ընտանիք՝ դեգերէին յայսմիկ լայ-  
 նատարած տեղոջ , ապահովեալք 'ի գիշատող  
 դաղանայ 'ի լերանց յայնոյիկ՝ որք արգելէին  
 զմուտս նոց : 'ի միում մասին խաչինք և անդեայք  
 անանէին յարօտս . 'ի միւսում մասին ամենայն  
 որսորդական կենդանիք խայտային 'ի դաշտս .  
 կայտառ ունն ոստնոյր 'ի վերայ ժայռից . խո-  
 րագէտ կապիկն խաղայր 'ի վր ծառոց . և ծանրա-  
 հայեայ փիղն հանգչէր յանդորրու 'ի տուերի :  
 Ամենայն պէսպիսուիք բարեայ աշխարհի էին

Ի միասին . բարիք բնութե էին ժողովեալ , և  
խոպանքն յաղաւեալ և արտաքսեալ :

Հովիտն գոլով Էարձակալայր և պողաբեր՝  
մատակարարէր բնակչայ նր զպիտոյս կենայ . և  
ամ զուարճութիք և աւելազանցութիք բարեաց  
առաւելուին ի ժամանակն տարական այցելուե  
կայսերն առ մանկունս իւր . յորժամ երկաթեաց  
դրունքն բայեալ լինէին ձայնիւ երաժշտուե .  
և յընթացս ութն աւուրց իւրաքանչիւր ոք՝ որ  
բնակէր ՚ի հովտին՝ հայցուածով յառաջադրէր  
զոր ինչ սասարիչ էր հաճոյականուե միայնակե-  
ցութեան , առ ՚ի լյուցանել զդատարկութիւնս  
մտադրութեան , և նուազեցուցանել զտաղտկուի  
ժամանակի : Ամենայն ցանկութիւն իսկ և իսկ  
կատարիւր : Ամենայն արհեստաւորք հեշտութե  
հրաւիրեալ լինէին առ ՚ի բերկրեցուցանել  
զխրախճանս հովտին . երաժիշտքն արժարժէին  
զզօրուի դայլայլի . և պարսաւորքն ցուցանէին  
զզօրձունէութի իւրեանց առաջի սրբայազանց ,  
յուսալով առ ՚ի անցուցանել զկեանս իւրեանց  
յայամիկ երջանիկ գերուե . ուրանօր նոքա միայն  
գոռանէին զմուտ՝ զորոց արարողութիւնս պատշաճ  
համարէին առ ՚ի յաւելուլ զհաճոյս նորուե  
Ի բերկրանս մտովկակեցուե : Այսպէս էր երեոյթ  
ապահովութեան և զուարճուե՝ զորս առանձնա-  
կանութիւնս այս մատուցանէր , զի նոքա՝ որոց

նոր երևեր այն՝ համապազ զանկային զի լիցի  
այն տեղական • և քանզի նորա՝ յորոյ վերայ եր-  
կաթի դուռն փակեալ էր միանգամ՝ ոչ գտա-  
նէին զարձակուի վերագարձման, յայն սակս չէր  
հնար նոցա իմանալ զներդործուի երկարագոյն  
փորձառութիւն: Այսպէս ամենայն տարի արտա-  
դրէր զնորոգ յառաջագրութիւնս բերկրուէ,  
և զնորոգ հետամուտս բանտարգելութեան:

Պալատն կառուցեալ կայր ՚ի վերայ բարձ-  
րաւանդակի՝ ամբարձեալ իբրև երեսուն ոտնա-  
չափ ՚ի վեր քան զերեսս լճին: Բաժանել էր նա  
՚ի բազմապատիկ պողոտայս և ՚ի քառակուսի  
շինուածս՝ կերտեալս մեծագոյն կամ նուազագոյն  
հոյակապութիւն: համեմատ վիճակի նց, որոյ վասն  
պատրաստեալ էին զնա: Յարկքն կերտեալ էին  
ստուարաժայռ կամարօք միակցելովք այնպիսի  
շաղխով՝ որ եղանէր կարծրագոյն ըստ անցման  
ժամանակի • և կերտուածն կանգնել կայր դարե-  
նի դար՝ ծաղր առնելով զարևակայից զանձրևս  
և զտիւփոնս գիշերահասասարի, առանց կարօ-  
տելոյ նորոգութեան: Տունս այս այնքան մեծ  
էր՝ մինչև ոչ որ գիտէր զամենայն ասպարանս  
նորին, բայց միայն քանի մի վաղեմի պաշտօնա-  
տարք՝ որք յաջորդաբար ժառանգէին զձածուկս  
այնր տեղուոյ • և այնպիսի եղանակաւ էր շինել,  
որպէս թէ կանկաճուտուին ինքնին յուցեալ էր

զձև նորին : Ան զի յիւրաքան չիւր սենեկի գոյր  
 յայտնի և գաղտնի անցք և մուտք . իւրաքան չիւր  
 քառակուսի շինուած ունէր զհաղորդակցուի Ե  
 այլոյ շինուածոյ , կամ վերին դատիկոնօք ՚ի ձեռն  
 գաղտնի ձեմելեայ , կամ ստորերկրեայ անցիւք ՚ի  
 ձեռն ցածագոյն ապարանից : Բազումք ՚ի սեանց  
 ունէին զանյայտ խոռոչս , ուրանօք երկարատե  
 ցեղք ինքնակալայ պահպանել էին զգանձս իւր  
 եանց . ապա փակեցին նք զբացուածն մարմարի  
 ոնաւ , զոր շէր պարտ երբէք փոխադրել , բայց  
 միայն ՚ի կարի հարկաւոր իրս Թագաւորութե .  
 և յիշատակեցին զգումար գանձուցն ՚ի մատենի  
 իմիք , որ էր ինքնին Թագուցեալ յաշտարա  
 կի միում . յոր ոչ ոք բայց միայն կայսրն կարէր  
 մտանել , հետեւեալ նմա արքայորդին՝ որ էր  
 երկրորդն ՚ի յաջորդութեան :

---

### ԳԼՈՒԽ . Բ .

Տէգոհութեան Հասկելոյ յերջմիջ հոգութեան

Աստանօր ուստերք և դասերք Եթով  
 փիոյ բնակէին միայն առ ՚ի գիտել զմեղմ փո  
 փոխականութիւնս հեշտութեան և հանգս  
 տեան , սպասահարկեալ յամենեցուն՝ որք յա



Չողակ էին 'ի բերկրեցուցանել . և շատայեալ  
այնոքիւք ամենեքումքք՝ զորս զգայութիքն կա-  
րեն վայելել : Դեգերէին նոքա յայգիս անու-  
շաւտութե , և ննջէին 'ի դղեակա ապահով-  
ութեան : Ամենայն արհեստ 'ի կիր արկանիւր  
առ 'ի առնել զնոսա հաճեցեալ ընդ կայուի  
նոցա , իմաստունքն՝ որք հրահանգէին զնոսա՝  
զոչ իմեքէ բայց միայն զթշուառութեց հըր-  
չակաւոր կենաց պատմէին նոցա . և նկարագրէին  
զամենայն եղեալսն արտաքոյ լերանց իբրև զեր-  
կիրս թշուառութեան . ուրանօր տարածայնութիւն  
բռնանայր հանապաղ . և ուրանօր մարդ յար-  
ձակէր 'ի վերայ մարդոյ :

Առ 'ի բարձրացուցանել զկարծիս նոցա զեր-  
ջանկութենէ իւրեանց , նոքա յամենայն առուր  
զուարճայեալ լինէին երգովք՝ որոյ առարկայն  
էր հօգիտն եղանկն : Ախորժակք նոցա յառ-  
նէին 'ի յաճախական յիշատակութեց պէսպէս  
վայելչութեանց . և խրատաճանութիւն և բերկ-  
րութի էր գործ իւրաքանչիւր ժամու 'ի ծագ-  
մանէ առաւօտու մինչև 'ի մուտս արեգական :

Այսոքիկ կարգաւորութիւնք էին հասարա-  
կօրէն յաջողակ . սակաւք յարքայազանց երբէք  
ցանկացան մեծացուցանել զսահմանս իւրեանց .  
այլ՝ անցուցին նք զկեանս իւրեանց իրազէկ լինե-  
լով քաջապէս , զի սեփականէին զամենայն ինչ՝

զոր արՏեստ կամ բնութիւն կարէին շնորհել .  
 և գթային 'ի վր' նց՝ զորս բարդն արգելեալ էր  
 յայսմիկ տեղոյ յանդորրութեան , իբրև զխա-  
 դալիկս դիպուածոյ և զգերիս թշուառութե :

Այսպիսով յառնէին նք յառաօտու և ընկողմա-  
 նէին 'ի գիշերի , հաճեցեալ 'ի վր' միմեանց և  
 'ի վր' ինքեանց . ամենեքեան հաճեցեալ էին լէ  
 վիճակս իւրե՛նց՝ բայց միայն Հռատսելաս . որ 'ի  
 քսան և վեցերորդ ամաց հասակի իւրում սկսու  
 անշատել զինքն 'ի զբօսանաց և 'ի ժողովոյ նց .  
 և բերկրիլ յառանձնաւոր ճանապարհս և 'ի  
 լռին մտածողութիւնս : Յաճախակի նստէր նա  
 առ սեղանոյ ծածկեցելոյ համադամօք . և մո-  
 ռանայր ճաշակել զհամեղահամ իրս՝ որք զե-  
 տեղեալ կային զառաջեալ նորա . յառնէր նա  
 շտապաւ 'ի ժամ տալերդութե . և տազնապա  
 առանձնանայր անդր քան զձայն դայլայլի :

Սպասահարկութիւնն նր նկատէին զփոփոխութիւնն .  
 և շանային վերանորոգել զսէր հեշտութեան  
 նորին : Չանց առնէր նա զսպասահարկութիւնք  
 նոցա . մերժէր զհրաւիրմունս նոցա . և անցու  
 ցանէր զօր զկնի աւուր յեղերս առուակաց ըս-  
 տուէրայելոյ ծաւովք . ուրանօր երբեմն ունկն-  
 դիւր լինէր թռչնոց՝ որք նստէին 'ի վերայ  
 ստեղանց . երբեմն նշմարէր զձկունս՝ որք խա-  
 դային 'ի վտակին . և փոյթ ընդ փոյթ արկա-

նէր զաչս իւր 'ի վերայ արօտից և լերանց լը-  
ցելոյ անասնութք . յորոյ ուննք խառնակին ըզ-  
բանչարս, և ուննք ննջէին 'ի միջի թփոցս :

Այս տարօրինակ հակամիտութիւն նորա են-  
թակայ կայոյց զնա գիտողութեան բազմաց : Մի  
'ի յիմաստնոյ՝ յորոյ զրուցատրութեան յառա-  
ջագոյն զուարճացեալ էր Հռասսելաս՝ հետե-  
էր նմա գաղտնաբար, յուսալով առ 'ի իմանալ  
զպատճառ անհանգստութեան նորա : Հռասսե-  
լաս՝ որ ոչ գիտէր թէ կայր զկնի իւր ոք հետ-  
ամուտ՝ սակաւիկն մի յառեալ զաչս իւր 'ի վր  
այծից՝ որք արածէին 'ի միջի քարանց, սկսու-  
բաղդատել զկայոցի նոցա ընդ վիճակի իւրում :

Ձի՛նչ տարբերութի՛ գոյ՝ ասայ նա՝ 'ի մէջ  
մարդոյ և այլ ամ կենդանի արարածոց : Իւր-  
աքանջիւր գազան՝ որ թափառեալ շրջի յեռ-  
կոյս իմ՝ ունի զնոյն մարմնաւոր պիտոյս նման  
ինձ . քաղցեալ է նա, և կտրէ զխոտն . ծա-  
բաւի է նա, և ըմպէ զջուրն . ծարաւ և քաղց  
նորա զիջանեն . շատանայ նա և ննջէ . յառնէ  
նա վերստին և է քաղցեալ . կերակրի վերստին  
և հանգստանայ : Ես քաղցեալ և ծառաւի եմ՝  
նման նմա . սակայն յորժամ ծարաւ և քաղց դա-  
դարին, ես ոչ հանգստանամ . եմ ես զօրէն նք  
տառապեալ կարօտութեամբ, սակայն չեմ զօ-  
րէն նորա շատացեալ լիութեամբ : Միջանկեալ

Ժամքն են տաղտկալի և աղջամղջին . ցանկամ վերստին լինիլ քաղցեալ , և վերստին շարժիցեմ զմտադրութիւն իմ : Թուշունքն կոյահարեն զհատապտուղս կամ զցորեան , և Թուշին յանտառս . ուրանօր նստին յերևելի երջանկուէ՛ի ՚ի վ՛ր ստեղանց ծառոց . և անյույանեն զկեանս իւրեանց եղանակելով զանխոփոխ տեսակս երգոց : Ես և սոյնգունակ կարեմ կոչել զնուագածուն և զերգեցիկն . սակայն երգքն այնոքիկ՝ որք հաճելի էին ինձ յերեկեան աւուր՝ տաղտկալի երևին ինձ այսօր . և եղիցին առաւել և ստաղտկալի ՚ի վաղիւ : Զոչինչ կարողութիւն ճանաչողութեան հնար է ինձ գտանել յիս , որ ո՛չ լինի յագեցեալ նօրին պատշաճաւոր հեշտութեամբ . բայց և այնպէս ո՛չ գտանեմ զիս շատայեալ և բերկրեալ : Հաւաստեալ մարդ ունի զթագուն զգայութիւն ինչ , որում տեղիս այս ո՛չ տայ բաւարարութի . կամ ունի զյանկութիւնս ինչ տարորոշեալս ՚ի զգայութենէ . որ պարտի լինիլ շատայեալ մինչև նա կարող լիցի առ ՚ի լինիլ երջանիկ :

Յետ այսորիկ ամբարձ նա զգլուխ իւր . և տեսեալ զլուսինն յարուցեալ՝ ճեմեաց դէպ առ պալատն : Այն ինչ անցանէր նա ՚ի միջի դաշտաց , և տեսանէր զանասունս զիւրև շուրջանակի , այսպէս ասաց նոցա . Դուք էք երջանիկ

և ոչ պարտիք նախանձիւլ 'ի վերայ իմ, որ այսպէս ձեմ առնեմ 'ի միջի ձեր ծանրաբեռնեալ ինն . և ոչ ևս ես՝ ով հեղահամբոյր էակք՝ նախանձիմ ընդ երջանկութիւն ձեր . քանզի ոչ է այդ երջանկութիւն մարդոյ : Ունիմ ես զբազում նեղութիւնս , յորոյ զերժ էք դուք ամենեքին . երկնչիմ ես 'ի ցաւոյ՝ յորժամ ոչ զգամ զայն . է՝ զի սրտաբեկ լինիմ խորհելով զչարիս մտաբերեալս . է՝ զի շրտնում ասիւ խորհելով զչարիս նախատեսեալս . արդարեւ արդարակշռութի տեսչութեանն կրչուեալ է զյատկական տառապանս ընդ յատկական վայելչութեանց :

Այսպիսի բանիւք և դիտողութեամբք արքայորդին զբօսեցուցանէր զինքն , մինչ դառնայր վերստին 'ի պալատն . արտասանէր նա ըզբանս իւր թաղձագին ձայնիւ . սակայն այնպէք տեսիլ դիմաց նր , մինչ ցուցանէր զնա զգալ խումս ինչ բերկրութի 'ի կորուլուէ մտաց իւրոյ : Գտանէր նա դուն ինչ մխիթարութիւն 'ի թշուառութիս կենաց իւրոյ , խորհելով 'ի միտս իւր զճարտարութիւնն՝ որով զգայր զնոսա . և մտածելով զպերճախօսութիւնն՝ որով ողբայր զնոսա : Այցորդէր նա զուարճութեամբ յըզբօսանս երեկոյին . և ամենեքեան բերկրեալ խընդային 'ի տեսանել զսիրտ նորա դիւբայեալ :



## ԳԼՈՒԽ • Գ •

Կարօսուծեալ նորո՛րց ոչ ի՛նչ կարօսի :

Ի միւսում աւուր վաղեմի դաստիարակ նստ  
 ըս կարծելով զի այժմ իմացեալ է զտկարուի  
 մասս նր՝ յուսայր սպաքինել զայն խրատութե  
 և քաղաքավարութեամբ խնդրէր զպատե՛հ զը  
 ռույատրութե՛ք՝ զոր արքայորդին ո՛չ կամէր առ  
 նել . քանզի բազմօք յառաջ ճանաչէր զնա գող  
 այնպիսի ոք՝ որոյ իմաստքն էին արդէն սպա  
 աւել : Ընդէ՛ր , սասց նա , այրս այս այսպէս ՚ի  
 ներքս սպրդի ՚ի վերայ իմ . ո՛չ երբէք մարթ է  
 ինձ մոռանալ զայնոսիկ խրատս՝ որք հաճելի  
 էին ինձ միայն յորժամ էին նոր . և առ ՚ի եղա  
 նիլ նոցա վերստին նոր՝ պարտիմ ՚ի մոռացօնս  
 արկանել զնոսս : Ճեմեաց նա ապա յանտառն ,  
 և պատաղեցոյց զինքն ՚ի սուլորական մտածողութիս  
 իւր . բայց՝ մինչչև էին մտածողութիւնք նորա  
 առեալ զհաստատուն իմն կերպարան՝ ետես  
 նա զհետամոռան իւր առ կողմամբ իւրով . նախ  
 անհամբերութի իւր մղէր զնա առ ՚ի բայ զնալ  
 անտի շտապա . սակայն չկամելով նորա զայրա  
 յույսանել զոք՝ զոր երբեմն յարգեալ էր և տա  
 կաւին սիրէր՝ հրաւիրեաց զնա ապա առ ՚ի նրա  
 տիլ ընդ ինքեան ՚ի վերայ գետեզեր :



Երբունին այսպիսի քաջալերութեան հանդիպեալ սկսաւ ողբալ զփոփոխութիւնն զայն՝ որ նորոգ պատահել էր ՚ի վարս արքայորդոյն . և եհարց թէ ընդէ՞ր այսքան յաճախակի առանձնանայր նա ՚ի հեշտութեց պալատին ՚ի վարս միայնակեցութեան և լռութեան : Փասնչիմ էս ՚ի հեշտութենէ , ասաց արքայորդին , քանզի հեշտութիւնն դադարեցաւ ՚ի հեշտայուցանելոյ . միայնակ էմ էս , քանզի էմ թշուառական . և ո՛չ կամիմ նսեմացուցանելով ամպապատել ներկայութե իմով զերջանկութի այլոց : Դու տէ՛ր , ասաց իմաստունն , էս առաջինն՝ որ տրտնջեաց զթշուառութենէ ՚ի մէջ երջանի : Եւ զի : Յուսամ իրագեկ առնել զքեզ , զի տրտնջ քոյ չունի զձշմարիտ պատճառ :

Աստանօր սեպհականես դու զայնուսիկ ամենայն՝ զոր կայսրն Եթովպիոյ կարէ ընձեռել . աստանօր ո՛չ վաստակ գոյ առ ՚ի կրել զայն , և ո՛չ վտանգ գոյ առ ՚ի երկնջիլ ՚ի նմանէ . սակայն գոյ աստ ամենայն ինչ՝ զոր վաստակ կամ վտանգ կարէ գտանել կամ գնել : Հայեանց շուրջանակի և ասանց յիս , թէ զինչպիսի իրաց կարօտութիւն ունիս . եթէ ո՛չ իմիք կարօտիս , զի՛արդ էս դու ապերջանիկ : Պատճառ տրտնջման իմոյ է , ասաց արքայորդին , զի ո՛չ իմիք կարօտիմ , կամ ո՛չ գիտեմ թէ զինչ իմիք կա-

բօսիմ . եթէ ունէի զյայտնի իմն կարօտուի ,  
 կարէի ունիլ զցանկութիւն ինչ հաստատուն .  
 նոյն ցանկութիւն շարժելոյ էր զձան . և ես ա-  
 սպ ո՛չ տրտնջէի ՚ի տեսանել զարեգակն հակիլ  
 այսպէս յամբ դէպ առ արեմտեան լեռան . և  
 ո՛չ ողբայի ՚ի լուսանալ առաւօտու , յորժամ  
 քունն այլ ոչ ևս ունի ծածկել զիս յինէն :

Յորժամ տեսանեմ զուլս և զգառիսս պըն-  
 դեալք զկնի միմեանց , կարծեմ զի երջանիկ լի-  
 նիցիմ եթէ ունիցիմ պնդիլ զհետ իօրք : Այլ  
 սակայն սեպհականելով իմ գամենայն ինչ՝ որ-  
 ում կարօտիմ՝ տեսանեմ զմի օր և զմի ժամ  
 միանգամայն նման միւսոյ . բայց միայն զի վեր-  
 ջինն է առաւել ևս տաղտկալի քան զառաջինն :  
 Ծանձ ինձ փորձառութիւնք քով . թէ զի՛արդ այժմ  
 օրն երևեսցի այնպէս կարճ՝ որպէս ՚ի ժամանա-  
 կի մանկութեան իմում . յայնժամ բնութիւն տա-  
 կաւին էր նոր . և իւրաքանչիւր բոպէ ցուցա-  
 նէր ինձ զայնպիսի ինչ , զոր ո՛չ էր իմ տեսել  
 կամ իմացել յառաջագոյն : Արդէն վայելել է  
 իմ զբազում ինչս . տուր ինձ զիր ինչ ցանկալոյն :  
 Ծերուկին զարմացեալ էր ՚ի վերայ այսր նո-  
 բատեսակ տաղտապութե և խռովութե մտայ նր .  
 և ո՛չ գիտէր զինչ պատասխանել արքայորոցն .  
 բայց և այնպէս ո՛չ կամէր մնալ լուռ միաճգա-  
 մայն : Տէ՛ր՝ ասաց նա , եթէ տեսեալ էր քո ըզ-

Թշուառուիս աշխարհի և կարող լինելի գիտելի  
 թէ որքան մեծ են բարիք մխիթարութե այժ-  
 մեան վիճակի քոյ : Ահա , ասաց արքայորդին ,  
 ետուր ինձ զիր ինչ ցանկալոյ . ցանկացայց տե-  
 սանել զթշուառուիս աշխարհի . մինչ զի տե-  
 սարան նոցա հարկաւոր է երջանկութեան :

---

### ԳԼՈՒԽ . Դ .

Աւստրիայի շարժումի պրպիւ և որոնել :

Յայտնիկ Ժամանակի ձայն երաժշտութեան  
 յայտ արար զԺամ ճաշու , և զըրույսարութիւն  
 աւարտեցաւ : Ծերունին գնաց անտի տրամեալ  
 և տեղոհայեալ ըստ բաւականին , տեսանելով  
 զի աւարկութիւնք բանից իւրոյ արտադրեալ են  
 զմի այնակ եզրակացութիւնն՝ զոր կամէր նա ար-  
 գելել նոքօք : Սակայն ՚ի հոյովեալ ամս կե-  
 նաց ամօթ և տխրութիւն են սակաւտուն . զի-  
 արդ և իցէ , տանիմք մեք զիւրաւ զոր ինչ  
 կրեալ եմք ընդ երկար . տեսանելով զմեզ  
 ՚ի ծերութեան սակաւ պատուեալ՝ սակաւ պատ-  
 ուեմք զայլս . կամ սակաւ փոյթ ունիմք զտա-  
 ռապանաց՝ որոյ գիտեմք զի ձեռն մահու կարէ  
 տալ զկախձան փութանակի :

Աբայորդին՝ որոյ անհալութիւնքն տարածեալ էին ընդարձակագոյն՝ ոչ կարէր կանուխ զիջուցանել զխառութիւն մտաց իւրոց : Չարհուրէր նա յառաջագոյն յերկարաձգութիւնս նաց՝ զոր բնութիւնն խոստացեալ է նմա՝ քանզի մտածէր զի յընթացս երկար ժամանակի պարտէր նմա տանձլ բազմաց իրաց . իսկ այժմ բերկրէր նա ՚ի պատանեկութեն իւրում . քանզի ՚ի բազում ամա հնար էր նմա զբազումս գործել :

Այս առաջին ճառագայթ յուսոյ՝ որ երբեք շառաւիղեալ էր ՚ի միտս նորա՝ վերասին զարթոյց զծաղիկ պատանեկութեան յայտս նորա . և կրկնապատկեաց զաժխութեանն աչաց նորա : Բորբորեալ էր նա ցանկութեամբ առնելոյ զիր ինչ . թէ պէտ տակաւին որոշակի ոչ զվախճան գիտէր և ոչ զհնարս :

Չարդիւս ոչ էր այլ ևս տրտմեալ և առանձնակեաց . սակայն կարծելով զինքն իբրև տրբադանի մթերից երջանկութե՝ զոր կարէր վայելել միայն ծածկելով զայն՝ կեղծէր նա մասնակից լինիլ յամենայն յառաջադրութիւնս խրախճանութեց . և շանայր առ ՚ի հաճեցուցանել զայլս ընդ վիճակն այն՝ որ էր նմա ինքեան անհաճոյ և տաղտկալի : Սակայն չէ՛ հնար այնքան բազմացուցանել և երկարաձգել զհեշտութիւնս մինչև չթողուլ զմեծ մասն կենաց անգործ և անօ

զբաղ : Հռաստելաս ունէր զբաղում ժամս գի-  
շերոյ և տունչեան , զորս կարէր անցուցանել  
Թարց կասկածանայ յառանձնասիրական մտախոր-  
հութե : Բեռն կենայ էր կարի Թեթևայեալ  
ի նմանէ . երթայր նա յաճախակի և փութա-  
շան ՚ի ժողովս մարդկան . քանզի կարճէր զի յա-  
ճախութիւն ներկայութե իւրոյ յայնուիկ ժո-  
ղովս՝ հարկաւոր էր յաշողակութե առարկայից  
իւրոյ . մեկուսանայր նա բերկրութեամբ յառ-  
անձնականութի , քանզի զարդիս ունէր նա զա-  
ռարկայ մտածողութեան :

Գլխաւոր զբօսանք նր էր տատկերացուցա-  
նել ինքեան զաշխարհն զայն՝ զոր շէր նր բը-  
նաւին տեսեալ . գետեղել զանձն իւր ՚ի պէս-  
պէս կացութիւնս . անկանիւ և շիտթիւ յուր-  
ուական և ՚ի մտայածին դժուարութիւնս . և  
պատաղիւ յերեւակայական վտանգս և ՚ի դիպ-  
ուածս . սակայն բարերարութիք նորա հանապազ  
վերջաւորէ ին զյառաջադրութիւնս նորին յօգ-  
նութիւն տառապելոյ , ՚ի յայտնութիւն դա-  
ւաճանութեան , ՚ի պարտութիւն բռնութեան , և  
՚ի տարածութիւն երջանկութեան :

Այսպէս անցին քսան ամիսք կենացն Հռաս-  
տելայ : Այնքան սաստկապէս պատաղեցոյ զինքն  
՚ի մտայածին խռովութե՝ մինչ զի մոռայաւ  
նա զիսկական միայնակեցութիւն իւր . և ՚ի մէջ



100  
3749H



Ժամ ըստ Ժամէ պատրաստութեանց վասն բազմազան դիպուածոց մարդկային գործոց, անհոգացաւ ՚ի մտածել թէ զինչպիսի հնարիւք խառնեայի ընդ մարդկան :

Յառուր միում մինչ նստեալ կայր նա ՚ի գետեղեր, պատկերացոյց ինքեան զորք օրիորդոմն զրկեալ ՚ի դո-գնաբեայ օժտե իւրմէ ՚ի խաբեբայ սիրականէ ումեմնէ : Թուէր ինքեան թէ օրիորդն այն սղաղակէր զկնի իւր առ ՚ի վերադարձուցանել զօժիտն նմա, և ՚ի թիկունս հասանել որբութեան նորա : Այնքան ուժգնակի տղաորեալ էր պատկերակերպութիւնն այն ՚ի միտս Հոաստեղայ՝ մինչ զի շէտեաւ նա առ ՚ի թիկունս հասանել օրիորդին . և յառաջ ընթացաւ առ ՚ի լմբունել զդաւաճանն ամ անձկանօք ճշմարիտ հետապնդութեան : Երկիւղ բնականապէս փութացուցանէ զփախուստ մեղաց : Հոաստեղաս ոչկարէր անհնարին ջանիւք իւրովք ըմբունել զփախստեայն . սակայն յառաջադրելով վաստակեցուցանել յարտեութեամբ զնա՝ որում ոչ կարէր հասանել երագութիւն ընթացաւ նա յառաջ, մինչև ստորոտ վերինն ընդմիջէց զընթացս նորա :

Աստանօք սկսաւ նա մտածել ինքնին, և ծիծաղիլ ՚ի վերայ անպիտան և բռուն դիմեցա-



ման իւրոյ : Ապա համբարձեալ զաչս իւր առ  
լեառն՝ ասաց նա , այս է վտանգաւոր ոտնա-  
ռուն՝ որ արգելէ միանգամայն զվայելչութի  
հեշտութեալ և զկիրառութի առաքինութեան :  
Որքան ընդերկար յոյս և ցանկութի իմ թը-  
ռուցել են անդր քան զայս սահման կենաց իմոց ,  
ընդ որ տակաւին ոչ երբեք վստահայայ ես  
ի վեր ելանել :

Հարեալ յայմիկ մտածողութենէ՝ բազմե-  
ցաւ նա ՚ի մտախորհութիս պարագիւլ . և յի-  
շէր զի յօրէ յայնմանէ՝ յորժամ զառաջինն ՚ի  
մտի եդ զերձանիլ վախատեամք ՚ի բանտարգե-  
լութենէ իւրմէ՝ արեգակն երկիցս անցեալ էր  
ի վերայ գլխոյ իւրոյ ՚ի տարեկան յնթացսնի :  
Չարգիս զգայր նա զայնպիսի տրտմութիւն՝  
որում յառաջագոյն ոչ էր ծանօթացեալ բնա-  
ւին : Մտածէր թէ զորքան գործս հնար էր ին-  
քեան գործել ՚ի ժամանակին յայնմիկ՝ որ էր  
արդէն անցեալ և զոչինչ թողեալ զկնի : Բաղ-  
դատէր նա զքսան ամիսս ընդ կենաց մարդոյ :  
ի կեանս՝ ասէր նա՝ ոչ է արժան ՚ի համար  
արկանել զտգիտութիւն տղայութե կամ զան-  
զօրութիւն հասակի : Աւնիմք մեք զլինելուի  
յառաջ քան զմարթանալ մեր առ ՚ի մտածել ,  
և կանուխ դադարիմք ՚ի կարողութենէ գործո-  
ղութեան : Չչմարիտ ժամանակ մարդկային կե-

ցութեան համարելի է ըստ իրականց քառան  
սուն անք . յորոց զքսան և չորսն անցուցեալ է  
իմ որոճմամբ և մտածողութիւնս : Չոր ինչ կորու  
սեալ է իմ է հաւաստի . քանզի հաւաստեա  
ունէի զայն . բայց ո՞ կարէ հաւաստի առնել  
ինձ զապագայ քսան ամիսս :

Իրազեկութիւն յիմարութեան նորա թափանց  
եմուտ ՚ի սիրտ նր ուժգնակի . և յետ օգուտ  
ժամուց հազիւ կարէր նա յինքն յանկուցանել  
զսիրտ իւր : Մնացեալ մասն ժամանակի իմոյ  
ասէր նա՝ ծախեցաւ յանցանօք կամ յիմարութիւնս  
նախահարց իմոց , և անհետեթ օրինօք և սո  
վորութիւն երկրի իմոյ . մտաբերեմ զայն տաղտա  
կութեամբ , բայց առանց ստրջութե . սակայն  
ամիսքն այնորիկ՝ որք անցեալ են յօրէ յայն  
մանէ յորժամ նորոգ լոյս շառաւիղեաց ՚ի հոգ  
ւոջ իմում , յորժամ կերպարոյցի զառա  
ջարկութիւն բանաւոր երջանկութիւն՝ ծախեալ  
են սխալութիւնս իմով : Կորուսեալ է իմ զայն՝  
զոր ոչ երբէք կարեմ գտանել վերստին . տե  
սեալ է իմ զարնն ծագել և մտանել զքսան  
ամիսս , իբրև զպղերգ հայեցող ՚ի վերայ լուսոյ  
եբկնից . յայսմ ժամանակի թռչունքն թողեալ  
են զբոյնս մօր իւրեանց , և գնացեալ են յան  
տառս և յերկինս . ուն լքեալ է զպսակունս  
ստեանց մօր իւրոյ , և ուսեալ է հետ զհետե

եւանել ՚ի վեր ՚ի ժայռս ՚ի յոյզ և ՚ի խնդիր անկախ պարենի . ես միայն ոչ եմ արարել զյառաջադիմութիս , այլ եմ տակաւին անօգնական և անգէտ : Լուսինն առաւել քան քրտան փոփոխութեամբք յանդիմանեաց զիս վասն հոսան կենաց . առուակն՝ որ հոսէր առաջի սոխից իմոյ՝ կշտամբեաց զանգործունէութի իմ : Նստէի ես բերկրել ՚ի վերայ իմացական փառկութեան՝ անփոյթ գոլով նոյնգունակ զօրինակաց երկրին , և զհրահանգութենէ մոլորակաց : Քսան ամիսք են արդէն անցեալ . ո՛վ վերադարձուսցէ զնոսա :

Այս քիկ տրտմալի մտածողութիք սեղմեալ էին ՚ի միտս նորա . անցոյց նա զչորս ամիսս յառաջադրելով առ ՚ի ճկորուսանել զաւելի ժամանակ յնդուսայն յառաջադրութիւնս . և մրդեցաւ նա յառաւել հզօրեղ ջանայողութիւն , լսելով զբանս աղջկան միոյ՝ որ բեկեալ էր ըզյախճապակեայ բաժակ մի և ասէր , թէ զորինչ չէ՛ հնար նորոգել չէ՛ պարտ աշխարիւ :

Այս էր քաջայայտ . և Չասսելաս կըշտամբէր զինքն զի ոչ էր իմացեալ զայն , ոչ գիտելով կամ ոչ մտածելով , թէ քանի պիտեան բանք լսելի լինին դիպուածով , և թէ որքան յաճախակի միտքն մղեալ եռանդեամբ իւրով ՚ի տարակաց տեսարանս՝ անհոգանայ զճըշ-

մարտութեամբք՝ որք անկեալ դնին բայ զառա-  
ջեալ նորա : Նա ՚ի քանի մի ժամս աշխարհը  
զաշխարումն իւր . և յայնմ ժամանակէ ամե-  
նեւին ՚ի մտի եդ փախչիլ ՚ի հովտէն երջան-  
կութեան :

---

### ԳԼՈՒԽ . Ե .

Արտարդիւն երեւի շփոթուող իւր :

Չարդիս տեսանէր զի կարի դժուարին ե-  
ղիցի կատարել զայն՝ զոր կարի դիւրին էր հա-  
մարիլ կատարեալ : Յորժամ հայեր նա զիւրե-  
շուրջանակի՝ տեսանէր զինքն արգելեալ ՚ի նպայ  
բնութե . որք ոչ երբէք էին մինչ ցարդ խոր-  
տակեալ . և դրամբն այնուիկ՝ ընդ որ անցեալ  
էր ոք միանգամ՝ չկարէր երբէք դառնալ վեր-  
ստին : Հռասսելլաս էր այժմ՝ այնպէս անհամբեր ,  
որպէս արծիւ մի ՚ի մեջ վանդակի : Անյուշա-  
նէր նա շաբաթ զինի շաբաթու յեւանէն ՚ի լե-  
րինս , առ ՚ի տեսանել եթէ գոյր անդ բայ-  
ուած ինչ , զոր թփոյ հասր էր ծածկել . սակայն  
եգիտ զամենայն զարտեանս լերանց անմատչելի  
՚ի բարձրութենէ նուա : Յուսահատէր նա առ-  
՚ի բանալ զդուռն երկաթեայ . բանդի ոչ մի-

այն ապահովեալ էր այն ամենայն զօրութեամբ արուեստի , այլ հանապաղ պահարանիւր 'ի յաշորդական պահակերայ . և 'ի դրութենէ նորա ենթակայ էր մշտնջենական դիտողութեան ամենայն բնակչայն պալատին :

Ապա քննեաց զբարանձաւն՝ ընդ որ ջուրքն լին արձակեալ հոսէին . և հայեցեալ 'ի խոնարհ յայնպիսի պահու՝ յորժամ արեգակն սաստիկ ճառագայթս արձակէր 'ի բերան նորա՝ ետես զայն լցեալ խորտակեալ ժայռիւք . որք թէպէտ թոյլ տային ջուրց վտակին հոսիլ Էբաղում անձուկ անցս , սակայն արգել լինէին այլոյ ստուար զանգուածոյ : Դարձաւ նա սրտակտուր և վհատեալ . սակայն զարդիս ծանուցեալ նորա զբարիս յուսոյ՝ յառաջագրեաց ջրյուսահատիլ երթէք այսուհետե :

Յայսմիկ անպտուղ խոզարկութեան անցոյց նա գտանն ամիսս : Բայց և այնպէս ժամանակն անցանէր զուարճաբար . յառաւօտուն յառնելը նա նորաբողբոջ յուսով . յերեկոյին գովաբանէր զիւրն ժրաշանութի . և 'ի գիշերի ննջէր զիւրութեամբ զկնի աշխատանայ իւրոյ : Հանդիպէր նա հարիւրոյ հարիւրոյ զբօսանայ՝ որք մեղմէին զվաստակ նր , և բազմազատկէին զորոճմունս և զխոկմունս նորա : Ծանեաւ նա զբազմազան բնական ազդմունս անամնոյ և զյառ-



կութիւնս տնկոյ . և եգիտ զտեղին զայն լլցեալ  
 Տրաշիւք և զարմանալի իրօք . յառաջադրեաց նա  
 մխիթարել զինքն մտախորհութիւք զայսոցն  
 Տրաշիւք , եթէ շիցէ նմա հնար եբէք հնարել  
 զփախուստ իւր 'ի տեղուոյն անտի . բերկրէր  
 նա 'ի միտս իւր զի շանայողութիւնք իւր ' թէ-  
 պէտ և տակաւին անյաջող մատակարարեալ էին  
 նմա զաղբիւր անսպառելի խուզարկութեան :

Սակայն նախնական հետաքրքրութիւն նորա ոչ  
 էր տակաւին զիջեալ . յառաջադրեաց նա ստա-  
 նալ զգիտութիւն ինչ ճանապարհաց մարդկան :  
 Յանկութիւն նորա տակաւին տեեսայ , սակայն  
 յոյս նորա նուազեցաւ : Դադարեցաւ նա 'ի տե-  
 սանելոյ աւելի ևս զգարիսպս բանտին իւրոյ . և  
 կասեցաւ յորոնելոյ նորոգ աշխատանօք զբացա-  
 տութիւնս , զորս անհնար համարէր գտանել .  
 սակայն 'ի մտի եղ առ 'ի ունիլ զնպատակ իւր  
 միշտ առաջի աչաց իւրոյ . և զբռանք ամէլ  
 զպատեհ ինչ՝ զոր ժամանակն կարիցէ մատու-  
 ցանել :

Սակայն նախնական հետաքրքրութիւն նորա ոչ էր տակաւին զիջեալ . յառաջադրեաց նա ստանալ զգիտութիւն ինչ ճանապարհաց մարդկան : Յանկութիւն նորա տակաւին տեեսայ , սակայն յոյս նորա նուազեցաւ : Դադարեցաւ նա 'ի տեսանելոյ աւելի ևս զգարիսպս բանտին իւրոյ . և կասեցաւ յորոնելոյ նորոգ աշխատանօք զբացատրութիւնս , զորս անհնար համարէր գտանել . սակայն 'ի մտի եղ առ 'ի ունիլ զնպատակ իւր միշտ առաջի աչաց իւրոյ . և զբռանք ամէլ զպատեհ ինչ՝ զոր ժամանակն կարիցէ մատուցանել :



ԳԼՈՒԽ • Զ •

Զ-ի վերայ որտեպի վերջըն-բեռն

Ի միջի արճեստաւորայն բնակելոց ՚ի հո-  
 վաք երկնի՝ որք կարգեալ էին առ ՚ի աշ-  
 խատասիրել վանն հաճութեան և զուարճուե-  
 բնակչայ նորին էր այր մի գերահոշակ սակս  
 գիտելոյ զմեքենայական զօրութիւնս : Տնարեալ  
 էր սա զբազում մեքենայս պիտեանս և զքօսե-  
 ցուցիչս մարդկան : Անուա միով՝ զոր շրջե-  
 ուժգնութի ծխոյ՝ արտահանէր նա զշուրն յաշ-  
 տարակ մի բարձր . և աստի ելեալ գնայր շուրն  
 առ անենայն ապարանս պալատին : Աերտեայ նա  
 զվրան մի ՚ի յայգւոջն . և շուրջ զնուլա պահ-  
 պանէր զօդն միշտ հով արուեստական անձրե-  
 օք : Մին ՚ի ծառանկոց անտի՝ զոր կարգեալ  
 էին ՚ի պէտս տիկնայ՝ տարուբերեալ լինէր ՚ի  
 հողմահարաց . և վտակն անցեալ ընդ այն՝ տայր  
 նոցա զյարատեական շարժումն . նա և դործիք  
 մեղմաձայն երաժշտութեան զետեղեալ էին ՚ի  
 պատշաճաւոր տեղիս . յորոց զոմանս նուագէր  
 մղումն հողմոյ , և զոմանս զօրութիւն վտակին :

Արճեստաւորիս այսիկ երբեմն երբեմն այց  
 ելանէր շուասելաս . որ հաճեցեալ էր ընդ  
 անենայն տեսակս գիտութեան , մտածելով թէ

եկեսցէ ժամանակ՝ յորժամ ուսումն գիտութի  
իւրոյ ողջոյն պիտանայաւ ինկցի նմա՝ ՚ի բացար-  
ձակ աշխարհի . Եկն նա յառար միում, առ ՚ի  
զքօսեցուցանել զինքն ըստ սովորականին . և ե-  
գիտ զվարժապետն պարապեալ ՚ի շինուի առա-  
գաստաճեմ կառայ . տեսանէր զի գիտառ-  
բութի նորա էր հնարառը ՚ի վերայ մակարդակ  
մակերևութից . և մեծաւ հաւանական բանիւք  
թախանձեաց զկատարումն նորա : Գործառքն  
հաճեցեալ էր ՚ի տեսանել զինքն այսքան պա-  
տուեալ և մեծարեալ յարքայորդւոյն . յառա-  
ջողքեաց նա շահիլ տակաւին զմեծագոյն յար-  
գութիւնս : Տէր՝ ասաց նա՝ տեսեալ էք ըզ-  
փոքրիկ մասն այնոցիկ ամենեցուն՝ զոր մեքենայ-  
ական գիտութիւնքն կարեն կատարել : Ընդ եր-  
կար ՚ի կարծիս էի , զի փոխանակ դանդաղաբը-  
նայ նաւայ և կառայ , հնար է մարդոյ ՚ի կիբ  
արկանել զերագընթաց տեղափոխութի թևոց .  
զի դաշտք օդոյ բայ են գիտութեան , և տգի-  
տութիւն և պղերգութիւն պարտին սողալ ՚ի  
վերայ երկրի :

Այս բան վերստին զարթոյց զցանկութիւն ՚ի  
սիրտ արքայորդւոյն առ ՚ի անցանել ընդ լե-  
րինս . տեսեալ նորա զոր ինչ մեքենայագործն ար-  
դէն կատարեալ էր՝ յսժար էր ՚ի մտածել զի  
կարող էր նա առաւել ևս գործել . սակայն

յառաջագրեաց աւելի ևս Տարցանել, մինչև  
 թոյլ տուեալ էր յուսոյ վշտացուցանել ըզ-  
 միտն նորա անյաշողութեամբ: Երկն չիմ ես, ա-  
 րայնա զարհեստաւորն, զի երևակայութի քոյ  
 բռնանայ ՚ի վերայ Տանձարոյ քոյ. և զարդիս  
 դու ասես ցիս զոր ինչ կամիս, քան թէ զոր  
 ինչ գիտես: Իւրաքանչիւր կենդանի ունի ըզ-  
 տարր մի յատկայեալ ինքեան. թռչունք բնա-  
 կին ըօդն. և մարդիկ և գազանք բնակին յեր-  
 կրի: Այսպէս, պատասխանեաց արհեստաւորն,  
 ձկունք բնակին ՚ի ջուրս, յորում գազանք ևս  
 կարեն լուղալ բնութեամբ, և մարդիկ սովոր-  
 ութեամբ և արհեստիւ: Նա՛ որ գիտէ լու-  
 ղալ՝ ոչ պարտի յուսահատիլ առ ՚ի վերա-  
 թեւել. լուղան է թռչիլ ՚ի թանձրագոյն Տե-  
 ղեղի. և վերաթեւելն է լուղալ ՚ի նրբագու-  
 նին: Մեզ պարտ է միայն չափաւորել զկարո-  
 ղութիւն մեր ՚ի դիմակալութիւն բազմազան Տո-  
 ճութե՛ նիւթոյ՝ ընդ որ ունիմք անցանել և Հար-  
 կաւորապէս ամբարձցիս դու յօգոյ ՚ի վեր, ե-  
 թէ կարիցես նորոգել զմղումն ինչ ՚ի վերայ նո-  
 րա պնդագոյն քան զոր օդն կարէ մղել ՚ի բըռ-  
 նութենէն: Սակայն կրթութի լուղալոյ՝ ասաց  
 արքայորդին է կալի յոյժ տարժանակիր. հզօ-  
 րեղ բարձքն մութով իննին վաստակեալք. եր-  
 կն չիմ զի արուեստ վերաթռչութեան եղիցի



առաւել ևս սաստկագոյն . և թեքն ո՛չ այնքան  
պիտանի լիցին , մինչև կարիցեմք թռանիլ ա-  
ռաւել քան թէ լուղալ :

Աստակ ամբառնալոյ յերկրէ , ասաց արուես-  
տաւորն , եղիցի մեծ , որպէս տեսանեմք զայն  
'ի ծանրագոյն ընտանի հաւս . սակայն՝ ըստ  
երում բարձրագոյն ևս վերանայցեմք , ձգումն  
երկրի և ծանրութիւն մարմնոյ է լիցին հետ ըզ-  
հետէ նուազեալ , մինչև ժամանակսցեմք 'ի սահ-  
ման մի , ուրանօր մարդն ծածանեսցի 'ի վերայ  
օդոյ , առանց իրիք դիտաւորութե անկանելոյ .  
ոչինչ հոգ եղիցի յայնժամ հարկաւոր , բայց  
միայն յառաջ ընթանալ , զոր մեղմագոյն մղումն  
ունի պատճառել : Իսկ տէր , որոյ հետաքր-  
քութիւնն է այսքան շարժեալ և արծարծել ,  
կարող լիցիս դիւրաւ իմանալ , թէ զինչպիսի  
բերկրութեամբ փիլիսոփայ մի սեպհականեալ  
զթեւս և սաւառնայեալ յերկինս՝ մարթասցի  
տեսանել 'ի խոնարհ զերկիր և զամենայն բնա-  
կիչս նորա . որք հոլովելով 'ի ներքոյնր՝ յան-  
դիման կայուսցեն ինքեան յաջորդաբար 'ի ձեռն  
օրական շարժման նորին զամենայն երկիրս եղելս  
ընդ նոյն զուգահեռական գծիւ : Չիարդ բեր-  
կրեացի առ կախեալ հայեցողն 'ի տեսանել ըզ-  
շարժողական տեսարան երկրի և ծովու , քաղա-  
քաց և անապատից : Չիարդ բերկրեացի նա 'ի



օրեսանէլ նոյնգումնակ ապահովութեամբ զվա-  
 ճառ անոցս առ և արոյ և զգաշտս կռուոյ, զլե-  
 րինս բնակեալս 'ի բարբարոսաց, և զպտղաւետ  
 երկիրս զուարճացեալս առ առութեամբ և հան-  
 դարեալս խաղաղութիւն : Չիւրդ զիւրաւ ապա  
 հնար լիցի մեզ երթալ զհետ Նեղոսի ընդ ամ  
 անցս նորա, անցանէլ 'ի վերայ հեռակաց երկ-  
 րից, և քննել զերեսս բնութեան 'ի միոյ ծայրե-  
 աշխարհի մինչև ցմիւսն : Այսոքիկ ամենայն  
 սասց արքայորդին՝ են կարի յոյժ ցանկալի .  
 սակայն երկն չիմ՝ զի ոչինչ մարդ կարող լիցի  
 շնչել յայտոսիկ սահմանս տեսողութե և յան-  
 դորրութեան : Ասացեալ են ինձ, զի շնչառու-  
 թիւնն է դժուարին 'ի վերայ բարձրագոյն լե-  
 ցանց . սակայն յայտոսիկ քառաժայռից թեպէտ  
 ոյնքան բարձր են սոքս մինչև պաճառել ըզ-  
 մեծ նրբութի օդոյ՝ կարի դիւրին է մարդոյ ան-  
 կանիլ 'ի վայր . վասն այսոքիկ երկու անամ զի  
 'ի բարձրութենէ իմիք՝ ուրանօր հնար է պահ-  
 պանել զկեանս՝ եղիցի վասնզ փոյթ ընդ փոյթ  
 ի շաներոյ 'ի խոնարհ :

Յոչինչ կարեմք լինիլ երբեք ձեռնամուխ  
 պատասխանեաց արուեստաւորն, և թէ զառաջինն  
 յաղթել կամիցիմք ամենայն հնարաւոր դժուար-  
 ութեց և ոտնառուաց : Եթէ օգնական լինիցիս  
 ինձ յառաջին կազմակերպութե դորձոյ իմոյ :

փորձելից զառաջին վերաթռչումն ՚ի վասն զանձին իմոյ, քննեալ է իմ զկազմուած օրացին անամնոյ. և տեսանեմ զծախալ յարակցութեոց չղջիկան դիւրաւ յարմարեալ մարդկային ձեռոյ: Ի վերայ այսր գաղափարի սկսայց գգործ իմ ՚ի վաղիւ. և յնթացս ամբ միոյ ակումնիմ սրանալ յօրն անդր քան զչարակնութիւն և զընթացս մարդոյ: Այլ սակայն գործելից միայն այսու դաշամբ, զի արհեստն ոչ եղիցի յայտնեալ այլոյ ումբ, և դու ոչ խնդրեսցես յինէն կերտել զթեւս վասն այլոց բայց միայն վըմբը երկոցունց:

Ընդէ՞ր՝ ասաց Հռասսելլաս՝ նախանձիս դու. և ոչ կամիս զի այլք մասնակից լիցին այսպիսի մեծի օգտի: Պարտ է մարդոյ ՚ի կիր արկանել զամ զհանձար մտաց իւրոց յօգուտ հասարակաց. իւրաքանչիւր ոք պարտի այլոց զբազում իրս, և հարկ է նմա վերադարձուցանել նոցա զընկալեալն իւր զբարերարութիւն:

Եթէ ամենայն մարդիկ լինէին առաքինի, ասաց արուեստաւորն, մեծաւ յօժարութք և սրտի մտօք ուսուցանէի նոցա զարհեստ վերաթռչելոյ: Սակայն զինչ լինէր ապահովութիւն բարեայ և առաքինեայ, եթէ չարքն և մոլիքն կարէին լը հաճոյից իւրեանց յարձակիլ ՚ի վր նոցա յերկնից: Ընդդէմ զօրաց առադաստա-



Քեմ եղևոց ընդ անգս, ոչ պարխազք, ոչ քե-  
 ընք և ոչ ծովք կարելին մատուցանել զաղա-  
 հովութի ինչ: Իսուսք իմն հիւսիսարնակ վայ-  
 րենեաց կարելին սաւառնել լէ հողմն, և իջա-  
 նել միանգամայն անդիմամարտելի սաստկութի  
 ՚ի մայրաքաղաք պողաւէտ երկրի միոյ՝ որ հողո-  
 վէք ՚ի ներքոյ նոցա: Չայս հովիտ ևս, որ  
 է առ անձնարան արքայազանց և բնակութի եր-  
 ջանկութեան՝ հնար էր յազականութիւն փո-  
 խադրել յանկարծական իջմամբ անայ ՚ի մերկա-  
 կենցաղ ազգաց. որք զօրէն մեղուաց պար գոր-  
 ծեալ կուտին յեզերս հարաւային ծովու: Ար-  
 քայորդին խոտոտայաւ ծածուկ պահել զարհեստն.  
 և օգտակէր վասն կատարման գործոյ, ոչ միան-  
 գամայն յուսաբեկ եղեալ սակա յաջողութեան  
 նորուն: Երթայր նա ՚ի տեսութիւն գործոյ  
 ժամանակէ ՚ի ժամանակ. նկատէր զյառաջա-  
 դիմութի նորա, և ցուցանէր զբազում ճար-  
 տարագիւտ հնարս, առ ՚ի գիւրացուցանել ըզ-  
 չարժողութիւն և ՚ի միաւորել զթեթևութի լէ  
 ուժոյ: Արհեստաւորն յամենայն առուր առա-  
 շել հաստատէր ՚ի մտի իւրում, զի վերաթե-  
 ելով ունէր թողուլ զանգեղս և զարծիւս ըզ-  
 կնի իւր, և տարափոխիկ ակա յուսադրութե  
 իւրոյ բռնայաւ ՚ի վր արքայորդոցն: Ի տար-  
 ւոյ միում թեքն եղն պատրաստելք. և ՚ի պայ-

մնադրեալ յառաջու միում իմաստասէրն  
 Երեւոյաւ պատրաստ առ ՚ի վերաթու ջիւ ՚ի սա-  
 բաւսնդ մի փոքրիկ . տարուբերէր նա սակաւիկ  
 մի զթեւս իւր առ ՚ի ժողովել զՏօղմ . ապա  
 ստեաւ ՚ի տեղւոցէ իւրսէ , և ՚ի վայրկենի մի-  
 ում էարկ զինքն ՚ի լիճ անդր . Թեք նր՝ որք  
 անպիտան էին լէ օդն՝ պահպանեցին զնա ՚ի Միջ  
 ջրոյ . և արքայորդին ձգեաց զնա ՚ի ցամաք ,  
 կիսամեռ եղեալ արճաւբօք և վշտօք :

### Գ. ԼՈՒԻՍ . Է :

Արքայորդին գտանէ շայր որ ուսեալ :

Արքայորդին ո՛չ էր կարծի վշտագնել յայ-  
 միկ պատահարէ , այլ անկախութեամբ յու-  
 սայր հանդիպիլ երջանկագոյն դիպումանոյ . քան  
 զի չունէր նա առաջի իւր զայլ հնարս փրկու-  
 թեան : Տակաւին յամառէր նա ՚ի դիտաւորուե-  
 իւրում առ ՚ի թողուլ փութամակի շնչիսն  
 երջանի , և խառնիլ ընդ բնակիչս աշխարհի :

Երեւակայութիւն նորա զարդիս զկայ էառ .  
 ո՛չ տեսանէր նա զհնարս մտանելոյ յաշխարհ .  
 և թէպէտ և մեծագէտ ջանայր առ ՚ի զարկել  
 զինքն , սակայն աճգոհումի նորա սակաւ առ սա-

կաւ բռնացաւ 'ի վր' նորա , և նա սկսաւ վերըն-  
 տին կորուսանել զխոկմունս իւր 'ի տրամութե-  
 յայսմ վայրի անձրևային եղանակն՝ որ յայ-  
 ստսիկ երկիրս սկսանի 'ի պայմանեալ ինչ ժա-  
 մանակի՝ արգել եղև նմա գիգերիլ 'ի ծառա-  
 տունիս և յանտառս : Անձրևն տեւաց երկա-  
 րագոյն և առաւել սաստկութեամբ քան թէ  
 երբեք պատահեալ էր յառաջագոյն . ամպքն  
 պայծեցան 'ի վերայ շրջակայ լեռանց . և Տե-  
 ղեղքն հոսեին ողիսօրէն 'ի դաշտս յիմ կող-  
 մանէ . մինչև դուռն քարանձախն կարի նեղ ե-  
 րևէր առ 'ի արձակել զջուրն : Լիճն 'ի յոր-  
 դութենէ շրոց արտազեղոյր յեզերս իւր . և մա-  
 կաւասաբ հովտին ծածկեալ էր ջրհեղեղաւ .  
 Բարձրաւանդակն՝ յորոյ վր' կառուցեալ կայր  
 պալատն և քանի մի այլ տեղիք ամբարձել երկ-  
 րի , էին զերծ 'ի ջրհեղեղէն , զոր աչք մար-  
 դոյ զարդիս կարէր տեսանել : Անդեայք և  
 հօտք թողեալ էին զարօտս , վայրենի և ըն-  
 տանի գազանք ապաւինեալ էին 'ի լեռինս :  
 Զրհեղեղս այս պարտաւորեաց զիմ զորս  
 քայսզոնս պարտպիլ 'ի տնային դրօսանս . և  
 մտադրութիւն Հռասսելոյ մանաւորապէս ան-  
 կաւ 'ի վերայ ոտանաւորի միոյ՝ զոր իմ լակ վե-  
 րակրկնէր 'ի վր' տէսն վիճակաց ազգի մարգ-  
 կան : Պատուիրեաց Հռասսելա բանաստեղծին

առ ՚ի գնալ ՚ի սենեակ իւր , և վերակրկնել զոտանաւորն իւր յերկրորդ նուագի . ապա մըտեալ Հռաստելայ յնստանական խօսակցութիւն երջանիկ համարէր զանձն իւր ՚ի գտանել զայր ոմն , որ այսպէս քաջածածութ էր աշխարհի , և կարող էր այսպիսի ճարտարութեամբ նկարագրել զտեսարանս կենաց : Աւնէր նա զհազարաւոր հարցափորձութիւնս ՚ի վերայ պէսպէս իրաց . որք թէպէտ հասարակ և ծածութ էին այլոյ ան մահկանայնաց՝ սակայն բանտարգելութիւնս նորա ՚ի մանկութենէ կայրուցեալ էր զնա անծանօթ ՚ի նոցանէ : Բանաստեղծն գթայր ՚ի վերայ արիտութեանս նորա , և սիրէր զհետաքրքրութիւնս նորա . և զքօուչուցանէր զնա օր ըստ օրէ բանիւք նորութիւն և հրահանգութիւն . այնքան մինչ արքայորդին աշխարհէր զհարկաւորութիւն քնոյ . և մեծափափաք անձկանօք ըստ պատէր , մինչև առաւօտն վերանորագեսցէ ըզգուարձութիւն իւր :

Այն ինչ նստէին նորա ՚ի միասին , արքայորդին պատուիրեաց իմլակայ առ ՚ի պատմել ըզպատմութիւնս իւր , և ասել թէ որով գիտուածով պարտաւորեցաւ , կամ որով շարժաթիւ հարկադրեցաւ կնքել զկենցաղավարութիւնս յերջանիկ հոգեմէ : Յորժամ կամէր նա սկըսել զպատմութիւնս իւր , Հռաստելայ հրաւիր-

րիցսւլ ՚ի Տանդէս ներդաշնակցութե . և պարտաւորեցաւ խախտել զՏեաքքբբութիւն իւր մինչև յերեկոյ :

**ԳԼՈՒԽ . Ը**

**Պատճառն իմլոյ :**

Տարանիւթումն առնր՝ յերկիրս այրեցած գօտոյն՝ է միայնակ եղանակ խրախճանութե և գբօսանաց . և այսորիկ աղագաւ երաժշտութիւն դարարեցաւ ՚ի մէջ գիշերոյ և արքայազունքն առանձնացան : Հասսելաս ապա կոչեաց զընկեր իւր , և ինդրեաց ՚ի նմանէ սկսել զպատմութիւն կենաց իւրոյ :

Տէր՝ պատասխանեաց իմլակ՝ պատմութիւն ո՛չ եղիցի ընդերկար . կեանքն՝ որ նուիրեալ է գիտութեան՝ անցանէ ՚ի բայ լռելեայն և սուղ ինչ պէսպիսանայ դիպումսմովք : Խօսել ՚ի Տրւապարակի , խորհիլ յառանձնութեան , կարդալ և լսել , առնել և պատասխանել զՏարցախորձութիւն , են գործ աշակերտի միոյ . դեգերի նա յաշխարհի առանց փառաց և երկիրի . և ո՛չ ճանաչի և ո՛չ արժանաւորութիւն իմացիլ ինի , բայց միայն յարանց նմանելոց ինքեան :



Ծնեալ է իմ յարքայութեան Գոյիմանայ ,  
 ոչ կարի տարակայ յողբերէն Նեղոսի : Հայր  
 իմ էր վաճառական բազմահարուստ , որ առ-  
 ևտուրս առնէր 'ի մէջ ներքին երկրից Ափրիկոյ  
 և ծովեզերացն կարմիր ծովուն : Էր նա այր հա-  
 մեստ , ժուժկալ և ժբաջան . սակայն խոր-  
 հուրդք մտաց նորս էին փամաքի , և իմացակա-  
 նութիւն նորս էր նուաստախոհ . ցանկայր նա  
 լինիլ միայն հարուստ , և ծածկել զհարստութիւ  
 իւր . զի մի գուցէ կուսակալք նահանգին այնու-  
 րիկ կողոպտեսցեն զնա 'ի ճոխութեանց իւրոց :

Արդարեւ , ասաց արքայորդին , հայր իմ պար-  
 տի լինիլ անսիրտ և զանցառու 'ի պաշտօնի իւր-  
 ում , եթէ որ 'ի սահմանս տէրուէ իւրոյ վրս-  
 տահասցի առնուլ զայն յանիրաւի ' որ պատկանի  
 այլում : Ոչ գիտէ նա , զի թագաւորք պատաս-  
 խանաւոր են վասն անիրաւութեանց , զորս ին-  
 քեանք , թոյլ տան այլոց առնել աներկիւղ :  
 Եթէ ես կայսր լինէի , ոչ անարգագոյնն 'ի հպա-  
 տակաց իմոց ունէր կրել զանիրաւութի յայ-  
 լոց առանց պատժոյ և պատուհասի : Արիւն իմ  
 շէտնու յորժամ լսեմ զի վաճառականս ոմն ոչ  
 կարաց վայելել զարդիւնս արդար վաստակոց  
 իւրոց , երկնչելով առ 'ի կորուսանել զայն յա-  
 փչտակութիւն իշխանաց : Յիշեան զանուն կու-  
 սակալին այնորիկ որ կեղեքելով կողոպտէր ըր-



ժողովուրդն , զի յայսնիցեմ զմեզս նք կայսերս  
 Տեր՝ ասաց իմ լակ եռանդն քո է բնական  
 ներգործութիւն առաքինութեան ներշնչելոյ ՚ի  
 պատանեկութենէ . եկեսցէ ժամանակ յորժամ  
 թողցես զսխալանս հօր քոյ , և գուցէ լուիցես  
 նուագագոյն անհամբերութեամբ զանիրաւութիս  
 և զմեզս կուսակալաց : Բռնաւորութիւնն ո՛չ է  
 յաճախեալ կամ թէլադրել ՚ի սահմանս տե-  
 րութեանն Եթովպիոյ . սակայն ոչինչ ձե կա-  
 ռավարութեալ է մինչև ցարդ , որով հը-  
 նար իցէ արգելուլ բոլորովին զգործս անիրա-  
 ւութեան : Ստորակարգութիւնն ՚ի շանակէ զիշ-  
 խանութիւն ՚ի միոյ կողմանէ և զհպատակութի  
 ՚ի միւսոյ կողմանէ . և եթէ իշխանուի լինիցի  
 ՚ի ձեռս մարդկան , երբեմն վարեսցեն նք զայն  
 շարաշար : Հսկողութիւն և զգուշութիւն գե-  
 րագոյն իշխանաւորին պառճառեսցեն զբազում  
 օգուտս ժողովրդեան . բայց և այնպէս ո՛չ եղի-  
 ցի նա ձեռնհաս առ ՚ի միտ դնել և զգուշա-  
 նալ այլոց բազմաց իրողութեանց : Նա ո՛չ կարէ  
 բնաւին գիտել զամենայն մեղս՝ զորս գործեն ա-  
 նոպայք և մոլիք յիւրում տէրութե . և հա-  
 զիւ երբէք կարէ պատահասել զայնոսիկ մե-  
 ղապարտս՝ զորոց լինի ամբաստանութի ՚ի լսե-  
 լիս իւր : Չայս՝ ասաց արքայորդին՝ ո՛չ հաս-  
 կանամ ես . սակայն առաւել կամիմ լսել քեզ

քան թէ հակաճառել ընդ քեզ : Եւրոման  
կեան զպատմութիւն քոյ :

Հայր իմ՝ կրկնեաց անդրէն Իմլակ՝ յառաջ  
Չագոյն կամէր զի ես չունիցիմ զայլ ուսումն ,  
բայց միայն զայնպիսիս , որոյ հնար էր կատար  
ելագործել զիս վասն վաճառականութեան .  
և տեսանելով յիս զեւծ զօրութիւն յիշողութե  
և զերագութիւն իմացականութեան , յաճախակի  
յուսայր և ասէր զի եղէց՝ ես երբեմն բաղ-  
մահարուստ այր ոմն ՚ի սահմանս Եթովպիոյ :  
Ընդէ՛ր՝ ասաց արքայորդին՝ հայր քոյ ցանկայր  
առաւելուլ զհարստութի՛ն , մինչ այնքան առա-  
ւել էր այն՝ զոր նա ոչ վստահանայր յայանել  
կամ վայելել : Ոչ կամիմ տարակուսիլ զձրչ-  
մարտուէ բանից քոյ . սակայն անյարմարութիքն  
ոչ կարեն լինիլ ճշմարիտ :

Անյարմարութիք՝ պատասխանեաց Իմլակ՝ չկա-  
րեն լինիլ ուղիւ , սակայն վերաբերեալք առ-  
մարդ լինիցին ճշմարիտ : Այլ սակայն պէտքի-  
ստութիւնն ոչ է անյարմարութի . հայր իմ գուցէ  
ակն ունէր տեսանել զժամանակ մի՛ որ լինէր  
առաւել ապահովագոյն և անվտանգ : Բայց և  
այնպէս ցանկուի իմն հարկաւոր է առ ՚ի պահ-  
պանել զկեանս ՚ի շարժողութեան . և նա՛ որոյ  
իսկական կարօտութիւնքն՝ մատակարարին՝ պար-  
տի զհետ լինիլ մտայածին և երեւակայական կա-

բօտութեց : Չայս՝ ասաց արքայորդին՝ հնար  
է ինձ ըստ մասին ինչ հասկանալ : Յաւիմ ես  
զի ընդմիջեցի զբանս քոյ :

Այսու յուսով կրկնեաց իմլակ՝ ուղար-  
կեաց նա զիս ՚ի դպրոց . սակայն յորժամ միան-  
դամ գտի զգուարձութիւն գիտութեան , և  
զգացի զհաճութիւն իմացութեան և զպարծանս  
պիւտոյն սկսայ լռելեայն արհամարհել զհարրս-  
տութիւն և ՚ի մտի էդի խափանել զնպատակ հօր  
իմոյ . որոյ իմացականութեան թանձրութիւն աշ-  
խարհի էր խնամ գթութիւն : Ի քսան ամաց հա-  
սակի եի , յորժամ խանդակաթութիւնը եարկ  
զիս ՚ի վաստակս ճանապարհորդութիւն . յայտ  
ժամանակի պէսպէս բանիբուն վարժապետը  
հրահանգեալ էին զիս յողջոյն գրագիտութե  
երկրի իմոյ : Եւ քանզի իւրաքանչիւր ժամ ու-  
սուցանէր ինձ զիւր ինչնոր , կայի ես ՚ի հանա-  
պարտողական ընթացս զուարձութեանց . սակայն  
ըստ որում մերձեցայ դէպ առ հասակն մարդ-  
կութեան , կորուսի զբազումս ՚ի պատուոյ և ՚ի  
յարգութենէ անտի , որով սովոր էի հայել  
յուսուցիչս իմ , քանզի յորժամ դասն վերջա-  
նայր , ո՛չ գտանէի զնոսա իմաստնագոյն կամ բա-  
րեգոյն քան զհասարակ մարդիկ :

Ի վերջոյ հայր իմ յառաջադրեաց հրահան-  
գիւնս զիս ՚ի որո՞ծս վաճառականութիւն , և բա-

յեալ զմի ՚ի ստորերկրեայ գանձարանայ իւրոյ՝  
 համարեայ զտասն հազար հոտորա ոսկւոյ : Պա-  
 տանեակ՝ ասայ նա՝ այս է գլուխ դրամոյն , ու-  
 բով պարտիս վաճառականութի առնել : Սկը-  
 սեալ է իմ զառեւտուրս առնել հինգերորդ  
 մասամբ այսր դրանոյ , և տեսանես դու թէ  
 զհիւրդ գործունէութիւն և խնայողութիւն իմ  
 առաւելեալ են զայն գումար : Այլ է ստայ-  
 ուած քոյ իսկ . և ՚ի կամս քո է վառնել կամ  
 շահեցուցանել զայն : Եթէ վառնեսցես զայն  
 զանյառութեամբ կամ ըստ թելադրութե հա-  
 ճոյից քոյ , պարտիս սպասել մահուան իմոյ ,  
 մինչքէ կարող լիցիս հարստանալ . եթէ յն-  
 թայս ջորս ամայ երկպասկեցես զգլուխ դրա-  
 մոյ քոյ , յայնմ հետէ թողուք զօրէնս ստո-  
 բակարգութեան , և կեցցուք ընդ միմեանց իբրև  
 բարեկամս և հաշուակիցս , քանզի նա յարա-  
 ժամ հաւասար եղիցի ինձ , որ հաւասարապէս  
 կիրթ իցէ յարուեստին գտանելոյ զճոխութի :

Երբք մեք զգրամս մեր ՚ի վերայ ուղտուց ,  
 թագուցանելով զայն ՚ի կապոցս դիւրագին ապ-  
 րանայ , և ուղևորեցաք յեզրն կարմիր ծովուն :  
 Յորժամ արկանէի զաչս իմ ՚ի վերայ տարա-  
 ծութե ջրոյ , սիրտ իմ կայթեր իբրև զսիրտ  
 զերծուցեալ բանտարկելոյ : Չգացի զանչիջա-  
 նելի հետսզօտութիւն ինչ բորբոքեալ ՚ի միտս





## ԳԼՈՒԽ • Թ •

Պարտաւիրան Իմաստի շարժաններ

Յորժամ զառաջինն մտի յաշխարհ ջրոյ և  
կորուսի զտեսարան երկրի, հայեցայ զինև շուր-  
ջանակի հաճելի երկիրդիւ . և խորհելով զհո-  
գի իմ մեծացեալ անհուն հայեցուածով ջրոյն  
կարծէի զի մարթ էր ինձ նայիլ շուրջանակե  
յախտեան առանց յագեցութեան . սակայն ՚ի  
սակաւ ժամանակի վաստակեցայ հայելով ՚ի վր  
անպտուղ միակերպութե, ուրանօր միայն կարէի  
տեսանել կրկին զայն՝ զոր տեսեալ էի յա-  
ռաջագոյն : Ապա դնայի ՚ի ստորին սենեակ նա-  
ւուն, և սակաւիկ մի ՚ի տարակուսանս էի թէ  
արդեօք ապագայ զբօսանք իմ ոչ վերջանային  
զօրէն սորա, ՚ի տաղտկութեան և յանյուսութե :  
Այլ սակայն արդարև՝ ասայի ես՝ ծովն և եր-  
կիրն են կարի յոյժ զանազան . միայնակ պէս-  
պիսութիւն ջրոյ է հանդարտութի և շարժո-  
ղութիւն . սակայն երկիրն ունի զլէրինս և ըզ-  
հովիտս, զանապատս և զբարդքս . բնակին ՚ի  
նմա մարդիկ տարբերեալք սովորութքք և ան-  
համաձայն եղեալք կարծեօք . և յուսամ գտա-  
նել զպէսպիսութի ՚ի կեանս, թէպէտ և կո-  
րուսանիցեմ՝ զայն ՚ի բնութեան :



Այսու խոհմամբ համդարեանցոյն զմիտս իմ .  
 և զբօսեցուցանէ ի զիս յինթացս ճանապարհոր-  
 դուէ , երբեմն ուսանելով ՚ի նաւաստեաց զար-  
 հեստ նաւաւարութեան , զոր ոչ է իմ ՚ի կից  
 արկեալ բնաւին . և երբեմն առնելով զյարա-  
 ջադրութիւն վան վարուց իմոյ ՚ի զանազան վի-  
 ճակս՝ զորոց ոչ աւել զգործ բնաւին :

Գրեթէ տաղակացեալ էր իմ ՚ի նաւական  
 զբօսանաց իմոյ , յորժամ անբող ի ջաբ յեր-  
 կերն Սուրբայ : Աստ ապահովեւ լիպահագանեցի  
 զդրամ իմ . և գնելով զապրանս ինչ աւել ՚ի սոյց  
 մարդկան միայն՝ գնացի ընդ կարաւանի միում ,  
 որ անցանէր ընդ ներքին մասն երկրին : Ընկե-  
 ռակիցք իմ վան մի կամ միւս պատճառ ի կար-  
 ծելով թէ հարուստ եմ ես , և հարցախորձա-  
 թեամբք և զարմացմամբ իմով տեսանելով զի  
 անպէտ եմ ես , համարէին զիս իբրեւ զնորեկ .  
 զոր իրաւունս ունէին առ ՚ի պատրել . և պարտ  
 էր ինձ սովորական ծախաւք ուսանիլ զարհեստ  
 պատրողութեան : Մասնէին նոքա զիս գողուէ  
 սպասաւորաց և զրկողական պահանջմանց պաշ-  
 տօնակալաց , և տեսանէին զիս կողոպտեալ սակս  
 պատիր կեղծեաց , առանց գտանելոյ զանձնուոր  
 օգնու ինչ : Բայց ուրախանային նոքա ընդ գե-  
 րագանյութիւն գիտութեան իւրեանց :

Այց սահաւիկ մի՝ ասաց արբայորդին : Իյէ՞

այսպիսի ազահանութիւնն 'ի սիրտ մարդոյ, զի քնասեսցէ այլում թարց օգտի անձին իւրոյ :  
 Հնար է ինձ դիւրաւ իմանալ, զի ամենեքեան  
 հաճին ընդ գերազանցութիւն սակայն անգիտութի  
 քոյ էր լոկ պատահական, որ լինելով ոչ սխա-  
 ւանք քոյ և ոչ յիմարութիւն՝ չկարէր տալ նց  
 զիրաւունս գովաբանելոյ զինքեանս . և թէպէտ  
 և չունէիր դու զգիտութիւնն զայն՝ զոր նօքա  
 ունէին, սակայն հնար էր նոյա ուսուցանել  
 քեզ զայն 'ի ձեռն զգուշութեան, քան թէ  
 'ի ձեռն մատնողութեան :

Հպարտութիւն՝ ասաց իմլակ է հազիւ ուրեմն  
 անուշակ . հաճեցուցանէ զինքն անարգագոյն  
 շահաբ . և նախանձն ոչ զգայ զիւրն զերջան-  
 կութիւն, բայց յորժամ բողոքատեալ լինի այն  
 ընդ թշուառուն այլոյ : Թշնամիք էին նօքա,  
 քանզի տրամէին առ 'ի խորհիւ զիս հարուստ .  
 և բռնաւորք իմ էին, քանզի բերկրէին 'ի գը-  
 տանել զիս տկար :

Շարունակեալ զպատմութիւն քո՝ ասաց ար-  
 քայորդին՝ ոչ երկբայիմ զձմարտութենէ բա-  
 նից պատմութեանց քոյ . բայց մտածեալ զի վե-  
 րաբերես դու զնոսա 'ի սխալեալ շարժառիթս :

Ընդ այսոցիկ արանց աւայ իմլակ՝ ժամանե-  
 ցի ես Սգրա՝ 'ի մայրաքաղաքն Հնդկաստանի .  
 զքաղաքն զայն ասեմ, յորում մեծն Մղուլ յա-

րաժամ բռակի : Արդի զիս ՚ի կրթութիւնս լեզուի երկրին այնորիկ , և յլնթայս քանի ամսոյ կարող էի խօսակցիլ ընդ ուսեալ արանց . յորոյ զոմանս գտի դեգս և ծանրաբարոյս , և զայլս հանդարտս և ազդողականս . ոմանք ոչ կամէին ուսուցանել այլոյ զոր ինչ ինքեանք ուսեալ էին դժուարութեամբ . և ոմանք ցոյանէին զի վախճան տքնուէց իւրեանց էր շահիլ զստտիճան հրահանգելոյ :

Այնքան մտերմաբար ծանոթայայ դաստիարակին մատաղաւուրց արքայազանց , մինչ զի էամ նա զիս առ կայսրն իւրեւ զայր ոք բանիբուն : Այսրն արար ինձ զբաղում հարցատիրոճութիս յաղագս երկրի և ճանապարհորդութեց իմոց . և թէպէտ չէ մարթ ինձ զարդիս մտածել զոր ինչ նա ասէր անդր քան զկարողութիւն հասարակ մարդոյ , սակայն արձակեաց նա զիս զարմայեալ թիմաստութի նորա և սիրահարեալ ընդ բարեբարութիւն նորա :

Համբաւ իմ զարդիս այնքան էր հռչակեալ և մեծայեալ , մինչ զի վաճառականքն թորոյ ուղևորեալ էի խնդրէին յինէն զներածական թուղթս առ տիկնայս աղբունետայ : Չարմայել էի ևս հիացմամբ ընդ վստահութիւն թախանձանաց նոցա . և մեղմով յանդիմանեցի զնս սակա ապօրէն վարուց նոցա՝ որով վարեցան ընդիս

Ի ճանապարհորդութեան մերում : Լուան նորքս  
զբանս իմ անիոյթ անհոգութբ . և ոչ ցուցին  
Ի դէմս իւրեանց զնշան ամսթոյ և կամ տրտ  
մութեան :

Ազգս սկսան ստիպել զիս Թախանձանօք իւր  
եանց և հրաւիրմամբ կաշառայ . սակայն զոր  
ինչ չէր ինձ կամ առնել սակս բարերարուե ,  
ոչ առնէի սակս դրամոյ . և ոչ կատարելի զխրն  
դրուած նց . քանցի ոչ թէ վնասեալ էին նոքս  
ինձ , այլ զի ոչ թողուի նոցա վնասել այլոց . և  
գիտէի զի ունէին նք ՚ի կիր արկանել զհամբա  
իմ առ ՚ի պատրել վնս՝ որք գնէին զվաճառս նց :  
Բնակելով իմ յԱգրս և ուսանելով զամենայն  
գիտութի այնք քաղաքի , ուղեորիցայ առ Պար  
սիաստան . ուրանօր տեսի զբազում Քաջուածս  
նախնի մեծագործութե . և նկատելի զբազում  
նորանոր հոյակապ շինուածս : Պարսիկք են  
ազգ գերահաշակ կենցաղակցութեամբ . և ժո  
վողք նց յամենայն աւուր տային ինձ զդիպու  
կութիս նկատելոյ զհամբաւս և զվարս , և նը  
շանակելոյ զմարդկային բնութիւն ընդ ամենայն  
պէտքիսութիւնս նորա : Յաշխարհէն Պարսից  
անցի առ Արաբիա . ուրանօր տեսի զազգ մի մի  
անգամայն շիճական և պատերազմասէր . որք բը  
նակին առանց հաստատուն ինչ բնակութե . ո  
րոյ միայնակ հարստութիւն էր հօտք և անդեայք

Նոցա . և որք մինչ ցայս օր մղեալ են յամենայն դարս զժառանգական պատերազմ ընդ ամազգի մարդկան , թէպէտ և նորս ոչ ազասեն և ոչ նախանձաբեկ լինին ընդ կալուածս և իշխանութիւնս նոցա :

### ԳԼՈՒԽ . Ժ :

Պատմութիւն Իմլիայ շարունակալ : Ճառ 'ի զլրայ  
Բանաստեղծութեան :

Ուրանօր գնայի , տեսանէի զի բանաստեղծութիւն համարեալ էր յամենեցունց իբրև ուսուցիչ բարձրագոյն և գերագայ , և պատուեալ գրեթէ յարգութեամբն այնուիկ՝ զոր մարդ մատուցանէ հրեշտակային բնութեան : Եւ սակայն զարմանալի է ինձ 'ի տեսանել , զի գրեթէ յամենայն երկիրս նախնագոյն բանաստեղծքն համարին գերազանցագոյն և քաջագոյն . ուր թողցուք և զայս , զի այլ ամ տեսակ գիտութե է ուսումն ինչ սակաւ առ սակաւ ստացել . իսկ բանաստեղծութիւնն է պարզ և իմն բնութեան շնորհեալ մարդոյս միանգամայն . կամ զի առաջին պտուղ բանաստեղծութե յիւրաքանչիւր ազգի զարմացոյց զնոսա իբրև զգիւտ ինչ նոց և



Ճաշխարհիկ , և պահպանեաց զՏամբա գերա-  
 կայութեան իւրոյ հաւանութեամբ ապագայից ,  
 զոր գիպուածով ստացաւ զառաջինն 'ի հաճուէ  
 նախնեց . կամ որովհետեւ գործ բանաստեղծուէ  
 է նկարագրել զբնուի և զկիրս , որք են յարա-  
 ժամ միօրինակ , յայնսակս նախկին գրողքն ձեռ-  
 նամուխ եղեն յառաւել արդողական առարկայս  
 վն նկարագրուէ , և յառաւել հնարաւորագոյն  
 գիպուածս վասն ստեղծաբանութե . և ոչ թո-  
 զին ինչ հետեւողաց իւրեանց , բայց միայն զօրի  
 նախութիւնս մի և նոյն գիպուածոց և զնորոգ  
 շարայարութիւն մի և նոյն գաղափարաց և պատ-  
 կերաց : Ար ինչ և իցէ պատճառ սորին , հա-  
 սարակաց կարծիքն այս է՝ զի նախնի գրողքն սեպ-  
 հականէին զբնութի , և հետեւողք նոցա զար-  
 հետ . նախնիքն գերազանց էին 'ի վսեմական և  
 'ի գերազանց գիւտս բանից , և արդիւն 'ի վսե-  
 մութի ունոյ և 'ի կատարելագործութե արուեստի :

Յանկայի յաւելուլ զանուն իմ 'ի թիւ ան-  
 դամոց այսորիկ լուսապայծառ եղբայրութեան ,  
 Ընթեռնուի զամենայն բանաստեղծս Պարսիոյ և  
 Արաբիոյ . և կարէի վերակրկնել յիշողութիւն ըզ-  
 հատորս գրեանց սուկախելոց 'ի մզկիթին Մէք-  
 քայի : Սակայն իսկ և իսկ ծանեայ , զի ոչ որ  
 էր գերագոյն հանգիտացեալ օրինակութեամբ :  
 Յանկութիւն և եռանդն գերազանցութե իմոց



տեսիլներն զիս դարձուցանել զմտադրութի իմ  
առ բնութիւնս և առ կեանս : Բնութիւնս պար-  
տէր լինիլ առարկայ իմ . և մարդիկ՝ ունկրն-  
դիրք իմ . չէր հնար ինձ բնութիւնս նկարագրել  
զոր ոչ էի տեսեալ . չէր մարթ ինձ յուսալ  
առ ՚ի շարժել զնոսս բերկրութեամբ և եր-  
կիրդիւ՝ զորոյ օգուտս և զկարծիս ոչ էի  
իմացեալ :

Չարդիս եղի ՚ի մտի իմում՝ առ ՚ի լինիլ  
բանաստեղծ . և տեսանէի զամենայն ինչ նորոգ  
դիտաւորութեամբ . չափ և սահման մտադրութե  
իմոյ յանկարծակի մեծացաւ . չէր պարտ ինձ զանց  
առնել զո՛ր և իցէ գիտութեամբ և զուսմամբ :  
Դեգերէի ՚ի լերինս և ՚ի բլուրս վանս պատ-  
կերաց և գաղափարաց . և պատկերացուցանէի  
մտաց իմոյ զամենայն զճարտ անտառի և զճա-  
ղիկս հովտի : Նկատէի հաւասար մտադրութե  
զգարեկս ժայռին և զկատարս պալատին : Եր-  
բեմն թափառէի ՚ի մէջ բաւրց վտակին . և  
երբեմն դիտէի զփոփոխութիւն ամառնային ամ-  
պոյ : Բանաստեղծին ոչ ինչ եղիցի անպիտան :  
Որ ինչ է գեղեցիկ և որ ինչ է զարհուրելի ,  
պարտին լինիլ ընտանի երեակայութեան նորա .  
պարտ է նմա հմուտ լինիլ այնոցիկ ամենայնի ,  
որ ասեղապէս է տարածեալ և գեղեցկապէս  
սակաւ : Տոնկք այգւոյն , անասունք անտառին ,

Տանք երկրին , և մեռէորայք երկնից պարտին  
աննեքեան Տամաձայնիլ առ 'ի ամբարել զմիտս  
նորա անսպառելի պէսպիսութիւն . քանզի իւրա-  
քան չիւր գաղափար պիտանի է վն օպօցուցուէ  
և պճնազարդութեան բարոյական կամ կրօնա-  
ւորական ճշմարտուէ . և նա՛ որ բազումս գի-  
տէ՛ բազում կարողութի ունիցի առ 'ի պէս-  
պիսացուցանել զտեսարանս , և բերկրեցուցանել  
զընթերցօղս իւր հեռաւոր յիշատակութեամբք  
և անակնկալ հրահանգութեամբք :

Ասան այսորիկ իմամ՝ կալայ ուսանիլ զամե-  
նայն երևոյթս բնութեան . և իւրաքանչիւր եր-  
կիւր՝ զոր տեսեալ է իմ՝ առաւելեալ է զմը-  
թերս բանաստեղծական զօրութեանց իմոց :

Յայսպիսի լայնատարած տեսարանի՛ ասաց ար-  
քայորդին՝ հաւաստեալ թողեալ իցիս դուրզ-  
բազում իրս անքննելի : Անցեալ է իմ մինչ  
ցարգ 'ի մէջ շրջագատի լերանցս այսոցիկ . սա-  
կայն ոչ կարեմ արտաքս գնալ առանց տեսա-  
նելոյ զիւր ինչ , զոր չէր իմ երբէք տեսեալ  
կամ նկատեալ յառօջագոյն :

Գործ բանաստեղծի է՛ ասաց իմ լակ՝ առ 'ի  
քննել ո՛չ զանհատս , այլ զտեսակս . պարտի նա  
նկատել զընդհանուր յատկութիս և զմեծ երևոյ-  
թիւս . նա ո՛չ 'ի թիւ արկանէ զգիծս կակաչի , և  
ո՛չ գծագրէ զզանազան ստուերս 'ի դալարութե

անտառայ . գործնք է ցուցանել 'ի նկարուածն  
 բանաստեղծութիւն իւրոյ զայնպիսի գերամբարձ և  
 զազգողական կերպարանս , մինչ առ 'ի յանդի-  
 ման կայուցանել զնախատիպս նց իւրաքանչիւր  
 մտայ . և պարտ է նմա զանց առնել զխոբրու-  
 գոյն տարբերութեամբք՝ զորս միոյ նկատեալ  
 իցէ՝ և միւսոյ զանց արարեալ , վասն այնոցիկ  
 որոշմանց՝ որք նոյնգունակ յայտնի են զգուշուե  
 և անզգուշութեան :

Սակայն գիտութիւն բնութեան է միայն կէս  
 պաշտօն բանաստեղծի . պարտի նա նոյնգունակ  
 քաջածանօթ լինիլ ամենայն վիճակաց կենցաղոյս :  
 Պարտ է նմա լը հանգամանաց պաշտօնի իւրոյ  
 ճանաչել և գիտել զերջանկութիւն կամ զթշուա-  
 ռութիւն իւրաքանչիւր վիճակի . պարտ է նմա  
 նկատել զզօրութիւն ամենայն կրից 'ի միակողմ-  
 ութեան նոցա ողջոյն , և նշանակել զփոփոխութիւնս  
 մարդկային մտայ , ըստ որում չափաորեալ լի-  
 նին նոքա բազմազան սահմանադրութեք և պա-  
 տահական զօրութեամբք կլինայից կամ սովոր-  
 ութեանց , 'ի կայտառութենէ տղայութե մին-  
 չև ցյուսահատութիւն զառամութեան : Պարտ  
 է նմա մերկացուցանել զինքն 'ի նախապաշար-  
 մանց դարու և երկրի իւրոյ . պարտ է նմա խոր-  
 հիլ զուղիղն և զթիւրն յանշատեալ և յանփո-  
 փոխ կայութե նոցա . պարտ է նմա զանց առ-

Եւ զայժմեան օրինօք և զկարծեօք, և ամբառնալ յլնդ Տանուր և ՚ի գերազնիւ ճշմարտութիւնս՝ որք միշտ Տասցեն միօրինակ: Ամորոյ պարտ է նմա բաւարարել զինքն յուշիկ յառաջադիմութիւն անուան իւրոյ. արհամարհել զգովեօտ ժամանակին իւրոյ. և թողուլ զիրաւունս գովեստի և փառայ իւրոյ յարգարուի ապագայ սերնդոյ: Պարտի նա գրել իբրև զթարգման բնութիւն, և իբրև զօրհնողիւր ազգի մարդկան. և համարիլ զինքն իբրև իշխող ՚ի վերայ խորհրդոյ և վարուց ապագայ ազգայ. և ոչ այսչափ միայն՝ այլ և պարտի կարծել զինքն իբրև էակ գերագոյն քան զժամանակն և զտեղին՝ յորում կենցաղավարի նա յաշխարհի:

Աստուակ նք ոչ վերջանայ տակաւին. պարտ է նմա գիտել զբազում լեզուս և զբազում գիտութիւնս. և առ ՚ի լինիլ ոճոյ նորա արժանի խորհրդոյ նորա՝ պարտ է նմա անդադար կրթութեամբ ընտելայուցանել ինքեան զամենայն անուշակութիւն բարբառոյ և զքաղցրուի համաձայնութեան:

## ԳԼՈՒԽ • ԺԱ •

Պարտութիւն իմելոյ շարունակել : Բուն 'ի վերոյ ունի  
 փէհնոյրեան :

Իմակ զարդիս զգաց զանսոյ յախշտակութե  
 մտայ . և հանդերձեալ էր մեծացուցանել զար-  
 տեստ իւր իսկ , յորժամ արքայորդին աղաղա-  
 կեայ՝ հերիք է . զգացուցեր ինձ , զի ոչինչ  
 մարդկային էակ կարէ երբեք լինիլ բանա-  
 ստեղծ : Շարունակեալ զպատմութիւն քոյ :

Առ 'ի լինիլ բանաստեղծ՝ ասաց իմակ՝ է  
 արդարև կարի դժուարին : Այնքան դժուարին՝  
 պատասխանեաց արքայորդին՝ մինչ զի զարդիս  
 այլ ոչ ևս լուայց աւելի զգործոյ և զվաստակոյ  
 նորին : Ասա՛ ինձ թէ ո՞ր գնացեր զկնի տեսա-  
 նելոյ քո զՊարսիաստան :

'Ի Պարսիոյ՝ ասաց բանաստեղծն՝ ուղևորե-  
 ցայ առ Ասորեստան . և զերիս ամս բնակեցայ 'ի  
 Պաղեստին . ուրանօր խօսակցութիւն կալայ չ  
 բազմայ հիւսիսաբնակ և արևմտեան ազանց Ե-  
 ռուզիոյ . զայնոսիկ ասեմ՝ ազինս՝ որք այժմ սեպ-  
 հականեն զամենայն իշխանութիւն և զամ գի-  
 տութիւն . որոյ զօրքն են անդիմամարտք , և  
 որոյ նաւատորմիդքն հրամանս արձակեն յես եր-  
 կարագոյն կողմունս հողագնտի : Յորժամ բաղ-



դասէն զայստակ մարդիկ ընդ ճնեալս յարքայ-  
ութեան մերոյ իսկ, և չ այնոյիկ՝ որք բնակին  
չորջրվեօք, երևէին նոքա գրեթէ այլ իմն  
դարգ եակաց: Յերկիրս նոց դժուարին է ցան-  
կալ իմիք, զոր ոչ լիցի հնար ՚ի ձեռս բերել:  
Տաղարաւոր արուեստք՝ զորոյ ոչ է լուեալ մեր  
բնակին՝ հանապազ ՚ի կիր արհանին վանս յաջո-  
ղակութեան և դիւրութեան նոցա, և զոր ինչ  
ոչ արտադրէ երկիր և նահանգ նոցա՝ մատակա-  
րարէ վաճառականութիւն նոցա:

Չի՛նչպիսի հնարիւք՝ սասց արքայորդին՝  
Եւրոպայիք են այսպէս հզօրեղ, և մինչ նո-  
քա այսպէս դիւրաւ կարեն ելանել Ասիա և  
Աֆրիկէ վանս վաճառականութե՛ կամ յաղ-  
թահարութեան, ընդէ՛ր ոչ կարեն Ասիայիք և  
Աֆրիկէցիք յարձակիլ ՚ի ծովեզերս նոցա, հաս-  
տատել զգալթականս ՚ի քաղաքս նոցա, և տալ  
զօրէնս բնական արքայազանց նոցա: Մի և նոյն  
հորն՝ որ յետ տանի զնաւս նոցա՝ կարէ ա-  
ծել զմեզ յերկիրս նոցա:

Տե՛ր՝ նոքա են հզօրագոյն քան զմեզ՝ պա-  
տասխանեաց իմլակ, քանզի են իմաստագոյն,  
գիտութիւնն հանապազ իշխեսցէ ՚ի վերայ տը-  
գիտութեան, ըստ որում մարդ բանականութե՛  
լուրով իշխէ ՚ի վերայ այլոյ կենդանեաց: Բայց  
թէ ընդէ՛ր է գիտութիւն նոցա առտե՛լ քան



զմերս, չգիտեմ զինչ իրաւունս կարեմք տալ .  
 բայց զայս և եթ գիտեմք, զի անխնելի իմաս-  
 տութիւն գերագոյն էակին տնօրինեալ է ըզ-  
 վիճակս մարդկան այսբան տարբեր ՚ի միմեանց ։  
 Ե՛րբ՝ ասաց արքայորդին հառաջմամբ՝ կարացից  
 ելանել ՚ի Պաղեստին, և խառնիլ ՚ի խումբս  
 այսոցիկ զօրաւոր բազմապատիկ ազգաց ։ Սինչ-  
 չև ժամանեալ իցէ երջանիկ վայրկեանն այն, ։  
 Թոյլ տուր ինձ ընու զժամանակն այնպիսի բեր-  
 կրալի նկարագրութեամբք՝ զորս կարես դու ըն-  
 ձեռել ։ Գիտեմ ես զպատճառն՝ որ ժողովէ  
 զայսպիսի բազմուի ժողովրդեան յայնմ տեղ-  
 ւոջ . և մարթ է ինձ համարիլ զտեղըն զայն  
 իբրև զկեդրոն իմաստութե և բարեպաշտուե .  
 ուրանօր պարտին համապագորդութեամբ գնալ  
 բարեգոյն և իմաստագոյն մարդիկ աննայն երկ-  
 րի ։ Գոն ազգք ոմանք՝ ասաց իմլակ՝ որք ուղար-  
 կեն գբանի մի տեսուչս առ Պաղեստին . քան-  
 զի բազում անթիւ և ուսեալ ազգք Ռուրոսիա  
 համաձայնին յարհամարհել զուխտեգնացու-  
 թիւնն իբրև զյաւելորդապաշտութիւն, կամ  
 այլպանել զայն իբրև զիւր ինչ ծաղրելի ։ Գի-  
 տես դու՝ ասաց արքայորդին՝ Թէ յարգելեալ  
 կենցաղաւարութեան իմում՝ որքան սակաւ իմա-  
 ցեալ եմ զպէսպիսութիւն կարծեսց . կարի լէ  
 երկար եղիցի լսել զառարկութիւնս երկոյունց

կողմանց, դու՛ որ քննեալ ես զնոսա որչոյն՝ ա-  
սա՛ ինձ՝ զկատարածն ։

Ուխտէ գնացութի՛ն՝ ասաց իմլակ՝ զօրէն այլ  
ամենայն գործոց բարեպաշտութե՛, եղիցի իրա-  
ւայի կամ՝ յաւելորդապաշտական համեմատ այ-  
նոցիկ սկզբանց՝ որով մարդիկ կատարեն զայն ։

Երկար ճանապարհորդութիք ՚ի խնդիր ճըշ-  
մարտութե՛ն՝ ո՛չ են պատուիրեալ մարդկան ։ Ծըշ-  
մարտութի՛ն՝ ըստ որում հարկաւոր է կարգա-  
ւորութե՛ կենաց՝ գտանի հանապազ ուրանօր խնդ-  
րեմք զայն ըստ պատշաճի ։ Տեղափոխութիւնն  
ո՛չ է բնական պատճառ առաւելութեան բարե-  
պաշտութեան . քանզի անհրաժեշտաբար պատ-  
ճառէ նա զդեգերանս մտաց ։ Այլ սակայն՝ ը  
որում մարդիկ գնան յիւրաքանչիւր աւուր  
առ ՚ի տեսանել զդաշտս՝ ուրանօր մեծամեծ  
գործողութիք լինին կատարեալ, և վերադառ-  
նան ուժեղագոյն տպաւորութիք գիպուածոյն՝  
նոյնօրինակ հետազօտութի՛ն բնականապէս յոր-  
դորեացէ զմեզ տեսանել զայն երկիր՝ ուստի  
կրօն մեր արար սկսուած . և ես կարծեմ զի ո՛չ  
ոք տեսանէ զայնոսիկ ահեղագի՛ն տեսարանս ա-  
ռանց հաստատելոյ ՚ի միտս իւր զսուրբ գիտա-  
ւորութիւն ։ Երազ իմն է մտայածին յաւելորդա-  
պաշտութե՛ առ ՚ի խորհիւ, զի գերագոյն էակն  
եղիցի առաւել դիւրաւ ՚ի գութ շարժեալ

'ի միտմ' տեղոջ քան թէ 'ի միտում. բայց  
 առ 'ի խորհիւ զի տեղիք ինչ ներգործութիա  
 արասցեն 'ի միտս մեր անտուր իմն եղանակաւ .  
 է կարծիք իմն՝ զոր ժամ ըստ ժամէ փորձա-  
 ռութիւն ուծի յուցանել ամենեցուն : 'Նա՛ որ  
 կարծէ զի հնար է առաւել յաշորութե՛ս ամ-  
 ձահարել և նկուն առնել զմոլութիւնս իւր  
 'ի Պաղեստին՝ գուցէ գայէ զինքն սխալեալ .  
 սակայն կարէ երթալ անդանօր առանց յիմա-  
 ջական դիտաւորութեան . որ միանգամ կարծէ  
 զի առաւել դիւրութեամբ թողեալ լիցին յան-  
 ցանք իւր անդանօր՝ անպատուէ միանգամայն ըզ-  
 բանականութիւն իւր և զկրօն :

Այսոքիկ՝ ասաց արքայորդին՝ են տարբերութիւ  
 Եւրոպացոց : Մտածեցից զնոսա 'ի միտում  
 նուազի : Չինչ օգուտ ես տեսեալ 'ի ներգոր-  
 ծութենէ գիտութե՛ . Արդեօք այսոքիկ ազինք  
 երջանկագո՞յն են քան զմեզ :

Այնքան ապերջանկուհի գոյ 'ի վերայ աշխար-  
 հի՝ ասաց բանաստեղծն՝ մինչ զի հազիւ երբէք  
 կարէ որ գտանել զպարսպ 'ի տառապանաց իւ-  
 ռոց առ 'ի իմանալ բողոքաւորութեամբ զերջան-  
 կութիւն այլոց : Գիտութիւնն է՛ անշուշտ մի  
 'ի պատճառաց բերկրութեան . որպէս յուցանէ  
 բնական ցանկութիւն՝ զոր իւրաքանչիւր որ զգայ  
 առ 'ի առաւելու զիւր իմացութեմ : Տգիտութիւն

է լոկ պակասութի՛ որով չէ՛ հնար արտադրել զիւ ինչ . այդ է դատարկութիւն իմն՝ յորում հոգին բազմի անշարժ և թմբբեալ առ ՚ի չգոյէ հրապուրանայ ձգողութեան . և առանց գիտելոյ զպատճառն՝ հանապազ բերկրիմք մինչ ուսանիմք , և տխրիմք մինչ մոռանամք . Ասան այսորիկ յօժարիմ եզրակայուցանել՝ զի եթէ ոչինչ արգել խափանեսցէ զքնական զէլս ուսման , եղանիմք առաւել երջանիկ լւ որում միտք մեր ստանայ զընդարձակագոյն արծարծ գիտուէ :

Ի համար արկանել զյատկական մխիթարութի կենայ , գտցուք զբազում օգուտս ՚ի կողմանէ Եւրոպայոց : Նոքա ապաքինեն զլէշս և զհիւանդութիս՝ յորոյ մեք մնասիմք և մեռանիմք : Արեմք մեք զխստութիւնս եղանակի՛ զոր նոքա կարեն խափանել : Ունին նոքա զմեքենայս առ ՚ի փութանակի կատարել զբազում տարժանակիր գործս՝ զոր պարտ է մեզ կատարել ձեռագործական աշխատութի : Այնպիսի գըրաւոր հալորդակցութի իմն գոյ ՚ի մէջ հեռաւոր տեղեաց՝ մինչ զի հազիւ երբեք կարեմք համարիլ զբարեկամ մի գուհ հեռի ՚ի տեսուէ բարեկամի իւրոյ : Քաղաքականութի նոցա բանայ ՚ի միջոյ զամենայն հրազարակական խոջս և զգժոռարութիս . ունին նոքա զճանապարհս բացեալս ՚ի մէջ լերանց իւրեանց , և զկամուրջս կա-

ուրախալս 'ի վերայ գետոց . և եթէ իջանիցեմք  
մեք յառանձնարանս կենաց նոցա՝ ունիմք տե-  
սանել զբնակութիս նոցա լինիլ առաւել յա-  
ջողակ և յանդորր , և զստայուածս նոցա առ-  
աւել ազահոյլ և անքոյթ :

Արդարև երջանիկ են նոքա՝ ասաց արքայորո-  
գին՝ որք ունին զայսոսիկ գիւրութիւնս և զյա-  
ջողակութիւնս կենաց . և ես ո՛չ այնքան նախան-  
ձիմ ընդ այսոսիկ բարիս սոցա՝ որքան չէ գիւր-  
ութիւն այն՝ որով հեռաբնակ բարեկամք յայտնեն  
վիմեանց 'ի հեռուստ զխորհուրդս իւրեանց :

Եւրոպայիք՝ ասաց Իմլակ՝ են սակաւ ապեր-  
ջանիկ քան զմեզ . բայց և այնպէս ո՛չ են նոքա  
երջանիկ : Մարդկային կեանքն է ամենայն ուր-  
եք այնպիսի կայութի մի , յորում բազմաց դժ-  
ուարութեց պարտիմք տանիլ և 'ի սակաւ գիւր-  
ութիւնս ունիմք վայելել :

### Գ.ԼՈՒԻՍ . ԺԲ :

Պարտաւեան Իմլակայ շարունակուէ :

Ո՛չ են ինձ կամք՝ ասաց արքայորոգին՝ առ 'ի  
կարծել զի երջանկութիւնն այսպէս խնայողութե  
և ճշդիւ բաժանեալ է 'ի մէջ մահկանայուաց .



և մարթ է ինձ հաւատալ, զի եթէ ունէի  
 զընտրութի կենաց, կարող լինէի 'ի լիուցանել  
 զամ առաւ իմ դիւրութե և բերկրութե : Ո՛չ  
 վնասէի մարդոյ ումեք . և ո՛չ գրգռէի զսրտ-  
 մտուի ուրութե . փարատէի զամենայն նեղուիս, և  
 վայելէի զօրհնութիւնս երախտագիտութեան :  
 Ընտրէի զբարեկամս իմ 'ի միջի իմաստնոյ, և  
 զկին իմ 'ի միջի առաքինագարդ օրիորդաց . և  
 այսորիկ աղագաւ ո՛չ լինէի ես 'ի վտանգի կրե-  
 լոյ զչարիս դժբողութեան կամ շարահամութե :  
 Մանկուսք իմ խնամովք իմովք լինէին ուսեալք  
 և բարեպաշտք . և վերադարձուցանէին ինձ 'ի  
 ծերութե իմում զոր ինչ մանկութի նոցա ստա-  
 ցեալ էր յիմոյ հայրական գրկաց : Ո՛վ որ հա-  
 մարձակէր 'ի նեղել զնա, որ երթայր յամե-  
 նայն կողմանէ առ հազարաւոր անձինս ճոխա-  
 ցեալս 'ի բարերարութենէ նորա կամ մխիթար-  
 եալս 'ի կարողութենէ նորա շուրնդէ՛ր կեանքն  
 ո՛չ անցանէր մեղմով և հանդարտիկ 'ի քաղցրիկ  
 փոխադարձութեան պաշտպանութեան և յար-  
 գութե : Չայսորիկ ամենայն հնար է մեզ առ-  
 նել առանց նպաստի Եւրոպական կատարելու-  
 թեանց . որք երեւին 'ի ներգործութեանց իւր-  
 եանց լինիլ առաւել փայլուն քան թէ պիտե-  
 ան : Թողչուք զնոսա, և զհետ զնասցուք ճառ-  
 նապարհորդութեան մերում :



Յաշխարհէն Պայեստինացոյ՝ ասայ իմակ՝  
անցի Է բազում սահմանս Ասիոյ . յառաւել  
քաղաքական և ՚ի լուսաւորեալ Թագաւորութիւ  
ձեացուցի զիս իբրև վաճառական . և ՚ի մէջ  
բարբարոսայն լերանց ցուցի զիս իբրև ուխտե-  
րնաց : Ի վերջոյ սկսայ ցանկալ առ ՚ի դառ-  
նալ վերստին ՚ի բնածին երկիր իմ , զի կարիւ  
չիմ հանգչիլ յետ ճանապարհորդութեանց և  
աշխատանայ իմոց յայնոսիկ տեղիս՝ ուրանօր  
անցուցեալ էի զկանխագոյն զամս կենաց իմոց ,  
և ուրախացուցանել զվաղեմի ընկերս իմ պատ-  
մութեամբ անցից իմոց : Յաճախակի պատկերա-  
ցուցանէի ինձ զնոսա՝ ընդ որոց անցուցեալ էի  
զբերկրագոլարձ ժամս առաւօտացեալ կենաց  
իմոց . Թուէր ինձ թէ նստէին նք շուրջ զի-  
նև յերեկոյացեալ առուրս կենաց իմոց , զար-  
մանային ընդ պատմութի իմ և ունկնդիր լինէին  
մտադիւրագոյնս խորհրդոց և խրատուց իմոց :

Յորժամ այս մտածողութի տիրեաց ՚ի վր մտաց  
իմոց՝ համարէի զամ վայրկեան անցեալ ընդ ու-  
նայն , որ ոչ ածէր զիս մերձագոյնս առ սահմանս  
Եթովպիոյ : Աճապարեցի ես Եգիպտոս . և  
թէ պէտ սահմարէր էի առ ՚ի գնալ փութով ՚ի  
տունս իմ , սակայն յապաղեցայ գտանն ամիսս առ ՚ի  
խորհիլ անգանօր զնախնի մեծագործուէց այնր  
գերահո-չակ երկրի , և ՚ի քննել զմիացուածս

նախնի ռամանց նորին: Տեսի ես 'ի Ասյրո զբող-  
 մութ ակնայն ազգաց. յորոյ ռամբ եկեալ էին  
 անդանօր 'ի սիրոյ գիտութե և ռամբ 'ի յուսոյ  
 քահեկանութեան, և բազումք 'ի ցանկութենէ  
 կենցաղաւարելոյ ըստ իւրեանց իսկ սովորութե  
 առանց ծանօթութեան և դիտորութեան, կս-  
 անլով թագուցեալ մնալ յառանձնականութե  
 բազմութեանց. քանզի 'ի բաշմամարդ քաղաքի  
 միում իբրև 'ի Ասյրո, հնարաւոր է 'ի նմին  
 իսկ ժամու վայելել զբերկրութիս կենցաղակ-  
 ցութեան և զծածկութիւն առանձնականութե և  
 'ի Ասյրոյէ ողբորել գնացի 'ի Սուէզ և  
 նաւեցի ընդ ծովն կարմիր, անցանելով մերձ առ  
 ծովեզերս մինչև ժամանեցի 'ի տեղին յայն, և  
 յորմէ մեկնեալ էի քսան ամօք յառաջ: Աս-  
 տանօր յարեցայ 'ի ճանապարհորդս ընդ կորա-  
 ւանի միում, և մտի վերստին 'ի բնածին երկիր  
 իմ: Չարդիս ակնունէի վայելել զգրկածու-  
 թիւնս և զկաթոզնութիս ազգականաց իմոց, և  
 ըսել զբանս շնորհաորութեց և ուրախակցու-  
 թեանց 'ի բերանոց բարեկամաց իմոց. և ոչ էի  
 առանց յուսոյ զի հայր իմ թէպէտ կարի պատ-  
 ուական համարէր զառատապարգև բարիս բաղ-  
 դի, սակայն ընդունելոյ էր ուրախութեամբ և  
 պարծանօք զորդի մի՝ որ կարող էր առստելու  
 զերջանկութիւնս և զյարգութիւնս ազգի իւրոյ:

Սակայն իսկ և իսկ ծանեայ զի ընդունայն էին  
 ակնկալութիք և մտածմունք իմ ողջոյն : Հայք  
 իմ մեռեալ էր 'ի չորեքտասան ամաց հեռէ ,  
 բաժանելով զՏարսուտութի իւր 'ի միջի եղբարց  
 իմոց . որք փոխադրեալ էին զքնակութիս իւր-  
 եանց յայլ հեռաւոր երկիրս : Յընկերակցաց  
 իմոց բազումք արդէն խառնեալ էին 'ի հող  
 գերեզմանի . և 'ի մացելոց անտի ոմանք դժուար  
 բութք կարէին զիս ճանաչել . և որք ճանաչ-  
 չէին՝ համարէին զիս իբրև զոմն ապականեալ  
 օտարոտի սովորութքք և վարուք այլադգեսոց :

Մարդ ներկութեալ 'ի փոփոխութիւնս աշ-  
 խարհի ոչ լինի փութով վճատեալ : Մտա-  
 յայ զինի սող ինչ ժամանակի վիմս տարաբար-  
 դութիւն . և շանայի ծանօթութք ներածել  
 զիս առ ազնուականս թագաւորութ . ընդունե-  
 ին նորա զիս 'ի սեղանս իւրեանց . լսէին պատ-  
 մութից և անցից իմոց . և արձակէին զիս ըզ-  
 մայլեալ ընդ բանս իմ : Բայի ես զդպրատուն  
 մի յերկրի իմում . սակայն բազումք արդէլին զիս  
 'ի հրահանգելոյ զմանկունս , զի մի միտք նոցա  
 փոփոխեսցին օտարոտի սովորութքք : Յետ  
 այսորիկ եդի 'ի մտի հանգչիլ 'ի հանդարտութ  
 անային կենաց . այսու դիտաւորութեամբ զու-  
 րանէի զսէր ամուսնութեան առ տիկին մի , որ  
 սիրէր զիմն զբույսբանութի : սակայն ոչ կա-

մեցաւ ամուսնանալ ընդիս , քանչի հայր իմ էր վաճառական :

Հուսկ յետոյ վաստակեց լիմ 'ի յաճախադէտ խնդրուածոյ և 'ի յաճախադէտ խոցուածոյ՝ զոր կրեցի յիգական ամբարհաւածութի 'ի յառաջադրութիւնս իմոյ անյաջող և տարբարդիկ ամուսնութեան՝ եղի 'ի մտի իմում թագույսնեկ զանձն իմ յախտեան յաշխարհէ , և ոչ աւելի ևս կախիլ զկարծեաց այլոց և զյնորից կանանց : Սպասէի ժամանակին այնմիկ յոր՝ ժամ դրունք երջանի հոգիի լինէին բայեալք : Գի կարող լինէի տալ զհրամէշտական ողջոյն յուսոյ և երկիւղի . ժամանեաց օրն այն 'ի վերջոյ . կայսրն 'ի տարեկան այցելութեան իւրում մեծարեաց զարարս և զգործողութիս իմ շնորհարաշխութեամբ . և ես արկի զանձն իմ 'ի մշտնջենական բանտարգելութիւն այսր երջանի հոգիի :

Գտե՛ր դու աստանօր զերջանկութի 'ի վախճանի՝ տապ Հռասսելաս : Ասա՛ ինձ աւանց թաքստեան . շատայեալ է՛ս դու ընդ կայսութի քո , թէ ցանկաս վերստին լինիլ թախառական և հետազօտ իրաց աշխարհի : Ամենայն բնակիչք այսր հովտի գովեն զվիճակս իւրեանց , և 'ի տարեկան այցելութի կայսեր հրաւիրեն գոյլապա 'ի մասնակցիլ յերջանկութեան իւրեանց :

Մեծամորտ արքայորդի՝ ասաց իմ լակ՝ խօսե-  
ցայց ճշմարտիւ : Ո՛չ գիտեմ և զոչ մի ՚ի սպա-  
տահաւորաց քոց՝ որ ո՛չ աշխարհ զժամն զայն՝  
յորժամ եմուտ յայս տեղի առանձնակեցուե՛  
Ես սակաւ ապերջանիկ եմ՝ քան զայլս , քանզի  
ունիմ՝ զմիտս լցեալս պատկերօք , զորս քի հա-  
ճոյից քմայ իմոց հնար է ինձ փոփոխել և մի-  
աւորել : Մարթ է ինձ քաղցրայուցանել զմի-  
այնակութիւն իմ նորոգութեամբ գիտութեան  
իմոյ՝ որ սկսի թարշամիլ ՚ի յիշողութենէ իմ-  
մէ՛ և յիշատակութեամբ զիպուածոց անցեալ  
կենաց իմոց : Այլ սակայն այս ամենայն եղերի  
՚ի տրամալի մտածողուե՛ , յորժամ խորհիմ՝ զի  
ուսմունք իմ են զարդիս անպիտան , և զոչ մի  
՚ի բերկրութեանց իմոց կարեմ՝ վերստին վայե-  
լել : Մնայեալ անձինքն՝ որոց միտքն չունին  
զայլոյ իրեք զտպաւորութի բայց միայն զայժ-  
մեան վայրկենի՝ կամ կրճեալ և հիւժեալ մա-  
շին ՚ի շարաթոյն կրից , կամ նստին թմբբեալ ՚ի  
խաւարի մշտնջենական գատարկութեան :

Զինչ կիրք կարէ տառապեցուցանել զնոսա՛  
սասայ արքայորդին՝ որք չունին զթ ջնամիս : Մեք  
յայնպիսի տեղոջ բնակիմք , ուրանօր անկարօ-  
ղութիւնն արգել լինի շարութեան , և ուրանօր  
նախանձարեկութիւնն խափանի ՚ի հասարակուե  
զուարճութեց և վայելչուեց : Հնար է լինիլ



Տասարակու՛ն՝ ասոց իմ՛լոյ՝ նիւթական ստացուա-  
 ծոց . սակայն՝ ջկարէ երբէք լինել Տասարակու՛ն  
 սիրոյ և արժանապատու՛նք : Պատահեսցի զի մե-  
 ոմն առաւել Տաճեսցի քան թէ միւս ոք . որ  
 միանդամ տեսանէ զինքն արճամարճեալ՝ միշտ  
 նախանձաբեկ լիցի . և առաւել ևս նախանձա-  
 բեկ և չարաթոյն եղիցի , եթէ դատապարտել  
 լինի առ ՚ի կեալ առաջի նոցա՝ որք արճամար-  
 ճեն ցնա : Հրաւիրմունքն՝ որովք Տրապուրեն  
 նոքա զայլ յայսպիսի իմն կայութիւն՝ զոր ին-  
 քեանք Տամարին թշուառական , յառաջ գան ՚ի  
 բնական չարութենէ յուսաբեկ թշուառութիւն :  
 Տարուկալի են նոքա ինքեանց և իրերաց . և  
 ակնունին առ ՚ի գոանել զղիւրութի՛ն ՚ի նորոգ  
 ընկերակիցս իւրեանց : Նախանձին նք լէ ազա-  
 տութիւնն այն՝ զոր յիմարու՛ն իւրեանց է կոր-  
 ուսեալ . և ինդամտաբար տեսցին զամ՝ զազգ  
 մարդկան բանտարգել եղեալ իբրև զինքեանս :

Բայց սակայն՝ բոլորովին ազատ եմ ես յայս-  
 միկ յանցաւորութենէ : Ոչ ոք կարէ ասել թէ  
 թշուառացեալ է աստ իմովս Տրապուրողու՛ն :  
 Հայիմ՝ ես գթասիրութեամբ և ատուակցութե-  
 յայն բաղմութիւն մարդկան՝ որք ամ ըստ ամի  
 թախանձանօք խնդրեն զմուտ յայս տեղի գե-  
 րութեան և բանտարգելութեան . և երանի՛ թէ  
 օրինաւոր լինէր վասն իմ՝ առ ՚ի զգուշացու-

քանել զնոսս 'ի վաճառէ իւրեանց :  
 Իմ սիրեցեալ Իմ լակ' սասց արքայորդին՝  
 քայից քեզ զամենայն զգաղօնիս սրտի իմոյ :  
 Ընդ երկար մտածեալ է իմ փախստեամբ զեր-  
 ծանիլ յերջմի հոգեւն : Քննեալ է իմ զլե-  
 րինս յիմ կողմանէ . սակայն տեսանեմ զիս ար-  
 գելեալ յայսմ տեղոջ առանց հմարից ժըր-  
 կութեան . ուսո՞ ինձ զճանապարհ զերծանելոյ  
 'ի բանասարկութենէ իմմէ . դու եղիցիս ընկերա-  
 կից փախստեան իմոյ , առաջնորդ դեգերանայ  
 իմոյ , մանակից ստացուածոց իմոց և միտջնակ  
 պատուիրոջ և տնօրինող յերբուրեմ Եւոջ :  
 Տէ՛ր' պատասխանեաց բանաստեղծն' զերծուն  
 քո լիցի դժուարին . և գուցէ կանուխ ըստը-  
 շասցիս վաճառ հետազօտութե քոյ : Չաշխարհն'  
 զոր պատկերացուցանես քեզ մեղմ և հանդարտ  
 իբրև զլիճն 'ի մէջ հովտին' գայես իբրև զծով  
 ալեծփեալ և փրփրեալ մըրկօք և տնտանեալ  
 յորձանուտօք . է' զի յաղթահարեսցիս 'ի կո-  
 հակայ անիրաւութե , և է' զի հարցիս զժայ-  
 ուից դժբողութեան : 'Ի մէջ զրկանայ և խար-  
 դաւանայ , հակառակութեց և հոգունակու-  
 թեանց , հազարիցս ցանկացես բնակիլ յայտ-  
 սիկ վայրս հանդարտութե . և յօժարակամ կանե-  
 յիս թողուլ զբերկրանս յուսոյ առ 'ի լինիլ  
 ազատ 'ի վշտաց երկիւղի :

Մի շահար երկեցուցանել և ՚ի բայ դարձուցանել զիս ՚ի յառաջադրութենէ իմմէ՝ ասաց արքայորդին. անհամբեր եմ ես առ ՚ի տեսանել զոր ինչ տեսեալ է քո. և որովհետև դու ինքնին տաղտկացեալ ես ՚ի հովտէն, յայտ է զի նախկին կայութի քոյ էր բարեգոյն քան զայս։ Առ ինչ և եղիցի կատարած փորձառութիւնոյ, յառաջադրեալ է իմ քննել աչօք իմովք ըզբազմազան զիճակս և զկայութիւնս մարդկան, և ապա զգուշութեամբ առնել զբարեգոյնն ինչոյ։

Երկն չիմ ես՝ ասաց իմլակ՝ զի արգելեալ լիցիս դու ՚ի հղորագոյն ոտնառուաց քան թէ ՚ի հրացուրողութեանց ինչոյ. սակայն՝ եթէ յառաջադրութի քոյ է հաստատուն՝ ոչ տամ քեզ զխորհուրդ յուսահատութեան։ Սակաւ իրք են անհարաւոր գործունէութեան և ճարտարութիւն մարդկան։

## ԳԼՈՒԽ • ԺԳ •

Հասկերու գրոմէ զհարս գործարան :

Չարդիս արքայորդին արձակեայ զսիրական  
իւր առ ՚ի երթալ և ձաշակել զհանգիստ քնոյ •  
անկայն պատմութիւնք Տրաշից և նորութեց աշ-  
խարհի լցին զմիտս նր շփոթութ և խռովութ :

Չմտաւ անէր նա զոր միանգամ լուեալ էր  
՚ի շրթանց իմրակայ • և պատրաստէր զանհա-  
մար խնդիրս և զհարցափորձութիւնս վն հե-  
տագայ առաւօտու : Մնդիւրութիւն մտայ նր  
և հոգունակութիւնք նորին հանդարտեալ էին  
այժմ մեծապէս : Ունէր նա զբարեկամ մի՝ ո-  
րում կարէր յայտնել զխոկմունս մտայ իւրոց •  
և փորձառութի բարեկամին իւրոց կարէր օգ-  
նել ինքեան ՚ի դիտաւորութիւնս և ՚ի յառա-  
ջադրութիս իւր : Միտս նորս այլ ոչ ևս դա-  
տագարտեալ էր ուսնուլ վշտակրութեամբ և  
անխօս տաղտապանօք • կարծէր նա զի հնար  
էր ինքեան բնակիլ յեղմնի հողին միսթարու-  
թեամբ՝ կենակցելով ընդ այսպիսի ընկերի մի-  
ում • և զի՝ եթէ հնար լինէր նոցա գեգերել  
՚ի միասին յաշխարհի՝ ոչ ունէր նա կրել ՚ի  
սրտի իւրում զցանկութի կամ զբաղձանս այլոց  
իրայ :

Ի քանի աւուրց միջի ջուրն ցամաքեցաւ, և գետինն շորայաւ : Արքայորդին և Իմլակ գնացին ապա արտաքս ՚ի միասին առ ՚ի խօսակցիւ ՚ի վերայ իրայ աշխարհի առանց իմանալոյ այլոյ բնակչայ հովտին : Արքայորդին՝ որոյ խոկմունքն միշտ էին ՚ի վերայ Թռուցիկ Թեոյ մըտայ՝ մինչ անցանէր ք երկաթակուռ դրունս պալատին՝ ասաց տխրահայեաց իմն դիմօք, ով դըրունք, ընդէ՛ր այսպէս հզօրեղ էք դուք : և ընդէ՛ր մարդն է այսպէս անզօր և տկար :

Մարդն ո՛չ է անզօր և տկար՝ պատասխանեաց ընկեր նորին . գիտուին է առաւել հըզօր քան զզօրութի ուժոյ : Արթապետ մեքենայից ծիծաղի ՚ի վր ուժոյ : Հնար է ինձ խորտակել զդրունս զայստսիկ, բայց ո՛չ կարեմ առնել զայն ծածկաբար : Պարտ է մեզ փորձել զայլ ինչ հնարս ազատութեան :

Այն ինչ զգնային նոքա ՚ի վերայ կողման լերին միոյ, տեսանէին զի Քազարք ունաք՝ զորս անձրեւն տեղափոխ էր արարեալ յորջոց նոցա՝ պաշտպանեալ էին զինքեանս ՚ի մէջ Թիոյ . և արարեալ էին զծակս յայնկոյս նոցա՝ ուղղեալ ՚ի վեր խոտորմակ գծիւ : Հնագէտք կարծեն՝ ասաց Իմլակ՝ զի բանականութի մարդկանս փոխ է առեալ զբազում արուեստս ՚ի բնական ազդմանց անասնոց . ամեն իբի մի անարդանս ինչ հա-



մարտոյութ մեզ առ 'ի ուսանիլ զգործ ինչ  
յանբան ճագարաց աստի : Հնար է մեզ զերծա-  
նիլ 'ի բանտարկութենէ աստի թափանցելով թ  
լեառն մի և նոյն ճանապարհաւ : Պարտ է մեզ  
ակսիլ առ 'ի հատանել զստորերկրեայ ճանա-  
պարհ փախստեան՝ ու բանօր արտեան լերին խո-  
նարհի 'ի վերայ միջոյ մասին . և աշխատ եղի-  
ցուք 'ի վեր ելանել , մինչև ամբարձցութ անդ  
քան զբարձրութիւն լերին :

Յորժամ արքայորդին լուա զայս յառա-  
ջադրուի՝ աչք նորա սկսան ցայտել զուրախուի :  
'Ինրին էր կատարումն յառաջադրուի նոյին .  
և կարի հաւատեալ տեսանէին նորա զհնա-  
բաւոր յաջողակութի ճողոպրելոյ զանձինս իւր-  
եանց յարգելանայ այնր երջանիկ գերութեան :  
Աչ ճասնէին նորա այժմ զվայրկեան մի յուճ-  
պէտս , և ոչ ժամալաճառ լինէին ընդունայն :  
Վաղբաջ ընդ առաւօտն փութայեալ աճա-  
պարեցին նորա ընտրել զտեղի մի պատշա-  
ճաւոր առ 'ի սկան հատանել 'ի պէտս փախ-  
տեան : Ելանէին նորա մեծաւ աշխատութի 'ի  
մէջ ժայռից և պարելսաց և դժնկաց . և յետս  
դառնային առանց գտանելոյ զտեղի ինչ՝ որ յա-  
ջողակ լինէր առ 'ի գլուխ տանիլ զձեռնարկ  
դիտաւորութե նոցա : Երկրորդ և երրորդ օրն  
անցին մի և նոյն եղանակաւ և մի և նոյն առջաջո-

ղակութեամբ : Սակայն 'ի չորրորդում առուր  
գտին նոքա զխոռոչ մի փոքրիկ՝ ծածկեալ  
մայառաւ միով . և յայսմ վայրի յառաջադրե-  
ցին նոքա փորձել զփորձ իւրեանց :

Իմլակ հնարեցաւ զգործիս պատշաճաւորս կո-  
փելոյ զքարինս և փոխադրելոյ զհողս . և 'ի  
միւսում առուր ձեռնամուխ եղէն նոքա 'ի գործ  
իւրեանց առաւել եռանդեամբ և անձկանօք  
սրտի՝ քան թէ ուժով և ժրութք անձին :  
Իսկ և իսկ խոնջեալ պարտասեցան նք 'ի վաստակոյ  
իւրեանց . և նստան առ 'ի թօսել և  
հնաւ 'ի վր խոտոյ : Արքայորդին սակաւիկ մե  
երեւեր վհատեալ և լքուցեալ : Տէր՝ ասաց  
ընկեր նորա՝ կրթուին կարողացուսցէ զմեզ առ  
'ի շարունակել զվաստակս մեր մինչև ցերեկադա-  
գոյն ժամանակ . վն այսորիկ նկատեան թէ որքան  
եմք յառաջացեալ . և ապա ունիս տեսանել զի  
վաստակ մեր 'ի ժամանակի իմիք հասցէ յամբողջ  
գործոյն : Մեծամեծ գործք կատարին ոչ ուժով  
մարմնոյ , այլ յարտեութեամբ դիտաւորուծ-  
առաջիկայ պալատն կառուցեալ է 'ի միակ միակ  
քարանց . բայց այժմ տեսանես դու զբարձրութի  
և զլինդարձակութիւն և զհոյակապութիւն նի :  
Նա՝ որ ժրութեամբ գնասցէ զճանապարհ զե-  
րիս ժամս յիւրաքանչիւր առուր՝ յնթայս եօթն  
ամաց գնասցէ զճանապարհ մի հաւատար շրջա-

պատուութեան հողագնտին մերոյ :

Իստնային նոքա անդրէն 'ի գործ իւրեանց  
 օր ըստ օրէ . և 'ի սակաւ ժամանակի գտին ըզ-  
 ձեղքուած մի 'ի ժայռին' որ կարողայոյց զնոսա  
 առ 'ի վարիլ յառաջկոյս կարի սակաւ դժուար-  
 ութեամբ կամ արգելմամբ : Ձայս դիւրութի  
 յառաջադիմութեան Հռասսելաս համարէր իբ-  
 ըն զբարի նշան : Մի խառութի զմիտս քոյ՝ ա-  
 սայ իմլակ՝ այլով յուսով կամ երկիւղիւ . այլ  
 հետեւեալ միայն ազդմանց և պատգամաց բանա-  
 կանութի . եթէ հաճեցեալ էս դու ընդ գու-  
 շակութիւն բարեայ՝ զարհուրեսցիս նոյնգունակ  
 'ի նշանաց չարեայ . և բովանդակ կեանք քոյ  
 հաշեալ մաշեսցի 'ի զնորից աւելորդապաշտու-  
 թեան : Որ ինչ դիւրացուցանէ զգործ մեր՝ է ա-  
 ուաւել քան զսոսկական երևոյթ բարի գուշա-  
 կութեան . այդ է պատճառ յաջողութեան մե-  
 րոյս ձեռնարկութի : Այս է մի յայնոցիկ հա-  
 ձելի զարմացմանց՝ որք յաճախակի հանդիպին  
 գործունեայ դիտաւորութեանց : Բազում իբք  
 դժուարինք դիտաւորութի մարդոյ՝ երևին դիւ-  
 րին կատարման նորա :

## ԳԼՈՒԽ • ԺԴ •

Հասկերն է իմ ի սրտում շնորհակալ լինելուս համար

Չարդիս արարեալ էին նոքա զճանապարհ  
 իւրեանց առ միջին կողմն, և քաղցրացուցանէին  
 զաշխատանս իւրեանց խորհելով զմերձեցեալ  
 ազատութենէ իւրեանց. յայսմ ժամու ար-  
 քայորդին ՚ի վայր իջանէր առ ՚ի զովացուցանել  
 զինքն քաղցրութիւն օգոյ, յորժամ եգիտ զքոյս  
 իւր զՆեկայա կանգնեալ առ բերանով խոտ-  
 չին: Ըրտեալ նա երկիւղիւ և կանգնեցաւ  
 շիտեալ. երկուցեալ առ ՚ի յայտնել զդիտու-  
 ւորութի իւր, և տակաւին յուսաբեկեալ առ  
 ՚ի գալել զայն: Ի քանի մի ժամն ՚ի մտի եղ-  
 նա առ ՚ի վտահանալ ՚ի հաւատարմութի նր.  
 և յայտնելով նմա զծածուկ յառաջադրութիւն  
 իւրեանց հայցել ՚ի նմանէ առ ՚ի անյայտ պու-  
 հել զայն յայլոց բնակչաց հոյակապ պալատին:

Ի կարծե՞ր ասայ դուստր արքային զի ե-  
 կեալ է իմ աստանօր իբրև զլրտես ոք. ընդ-  
 երկար նկատէի ես ՚ի պատուհանէ իմնէ, զի դու  
 և իմ լակ ուղղէիք զգոյսս ձեր առ մի և նոյն  
 կէտն. սակայն ոչ կարծէի զի կամէիք ընտրել  
 ձեզ զայլ ինչ բարեգոյն տեղի քան զառաւել  
 զովարար հովանոյ մի և կամ զառաւել զանու-

չաէտ եզր վտակի . և եկի զՏէտ ձեր ոչ այլ  
 իւրք դիտաւորութի՛ն բայց միայն առ ՚ի մասնա-  
 կից լինիլ ՚ի խօսակցութեան ձերում : Սմին  
 իրի՛ որովհետև ոչ կասկածանօք այլ կաթոգ-  
 նութք գտեալ եմ զձեզ և իմացեալ զգործս  
 ձեր՝ մի թողութի՛ն ձ կորուսանել զօգուտ  
 գիւտոյ և իմացութեոյ իմոյ : Ես ևս նոյնգու-  
 նակ տաղտկացեալ եմ ՚ի բանտարկութենէ զօ-  
 րեն ձեր . և ոչ սակաւ փափագիմ ինձնալ թէ  
 զինչ են գործք կամ արարք աշխարհի : Թոյլ  
 տուք ինձ զերժանիլ ընդ ձեզ յայսմիկ ան-  
 Տամ անախորժ յանգորրուէ . որ եղիյի առ ա-  
 լել ևս տաղտկալի, յորժամ մեկնել ձեր աս-  
 տի՛ թողջիք զիս անմխիթար : Հնար է ձեզ ոչ  
 թողուլ ինձ առ ՚ի ուղեկից լինիլ ընդ ձեզ .  
 սակայն ոչ կարեք արգելուլ զիս առ ՚ի Տե-  
 տեիլ գնացից ձերոց : Արքայորդին՝ որ սիրեց  
 զՆեկայա առաւել քան զմիւս քորս իւր՝ ոչ կա-  
 մէր հրաժարիլ ՚ի կատարելոյ զխնդիր նորա .  
 և տրամէր զի կորուսեալ էր զպատեհ յուցա-  
 նելոյ նմա զյուսադրութի իւր, յայտնելով նմա  
 յօժարակամ զգաղտնի յառաջագրութիւն իւր :  
 Ասոն այսորիկ հաւանեցան զի ելեալ մեկնես-  
 ցին ՚ի հովտէ անտի ընդ նմա . և ՚ի նմին իսկ  
 ժամու ասային Նեկայայ զգուշանալ զի մի թա-  
 փառական ոք մղեալ ՚ի դիպուածոյ կամ ՚ի Տեոյ



տաքբերութի՛ն եկեսցէ զկնի նոցա ՚ի լեառն անդ ։  
 Ի վերջոյ հասին նոքա յամբողջ գործոյ և  
 աշխատանայ իւրեանց . տեսանէին նոքա զչա-  
 ուաւող լուսոյ անդը քան զքարձրութիւն լերին .  
 և ելեալ ՚ի վեր ՚ի կատար լերին՝ տեսանէին  
 զանձուկ հոսանս Նեղոսի պարայածիւլ ՚ի ներ-  
 քոյ իւրեանց ։ Արքայորդին հայէր շուրջանակի  
 յաիշտակութեամբ մտայ , խորհելով յառա-  
 ջագոյն զամ զբերկրանս ճանապարհորդութի՛ն ,  
 և ՚ի խոկմունս մտայ իւրոյ արդէն տեղափո-  
 խեալ էր անդը քան զսահմանս տէրութի՛ն հօր  
 իւրոյ ։ Իմլակ թէպէտ կարի ուրախացեալ էր  
 ընդ զերծումն իւր՝ սակայն ասկաւ ակնկալութի՛ն  
 ունէր առ ՚ի ճաշակել զվայելս բերկրութեան  
 աշխարհի . զորոյ յառաջագոյն առեալ էր ըզ-  
 փորձ , և յորմէ տաղտկացեալ էր նա արդէն ։  
 Հռասսելաս այնքան բերկրեալ էր ընդ լայ-  
 նատարած հորիզոն մի , մինչ զի դժուարին էր  
 կանուխ հաւանեցուցանել զնա առ ՚ի վերա-  
 դառնալ ՚ի հովիտն ։ Յայտ արար նա քեռն  
 իւրում , զի այժմ՝ բայ էր նոցա ճանապարհն .  
 և ոչ ինչ խոչք կամ արգել երեւէին առաջի  
 իւրեանց . ամին իրի պնդտ էր նոցա առնել  
 զպատրաստութիւն առ ՚ի զերծանիլ ՚ի հովտի  
 անտի ։

## ԳԼՈՒԽ • ԺԵ •

Որքի և դուստր արքային ռճելին զպատմ  
 զհոտուսի արքային ընդուն շնորհիս և փետունն  
 շնորհմ շնորհունի էրս :

Որքի և դուստր արքային ռճելին զպատմ  
 ռճական ակունս բաւականս առ ՚ի առնել զնժ  
 մարթամս ՚ի ժամանել իւրեանց ՚ի տեղի ինչ  
 վաճառականուէ . զայսոսիկ ակունս պատուիրա-  
 նա իմլակայ թագույին նք ՚ի հանդերձս իւր-  
 եանց . և ՚ի գիշերի միւսոյ լրայեալ լուանոյ ա-  
 մենեքեան թողին զհոլիտն : Մտերիմ սպասա-  
 հարկու ոմն միայն երթայր զհետ դստեր արքայ-  
 ին . և ոչ գիտէր թէ ուր երթայր տիկին իւր  
 ընդ միւս ընկերաց իւրոյ : Յախիթերս գնա-  
 ցին նոքա ՚ի վեր ՚ի խոռոչս լերին . և սկսան  
 իջանել ՚ի վայր ՚ի միւս կողմանէ : Դուստր  
 արքային և աղախին նորին դարձուցանէին զայս  
 իւրեանց առ ամենայն կողմն . և տեսեալ զոչինչ  
 առ ՚ի չափաորել զհայեցումս իւրեանց՝ կար-  
 ծէին զինքեանս հասեալ ՚ի վտանգ կորստեան  
 յահեղագին վայրս անապատի : Չկայ առին նք  
 և դողային սաստկապէս : Գրեթէ լմբանեալ  
 է իմ յերկիւղէ՝ սասայ դուստր արքային՝ առ ՚ի  
 սկսանիլ զճանապարհորդութիւն մի . զորոյ ոչ  
 կարեմ գտանել զվախճան . և ՚ի վտանգ ար-

կանել զանձն իմ՝ յայս մեծագիր դաշտի՝ ուրա-  
 քօր Տնար է ինձ հանդիպել յամենայն կողմն-  
 ւէ՛ այնպիսի մարդոյ՝ զորս ոչ է իմ տեսեալ  
 բնաւին : Արքայորդին զգայր գրեթէ զնոյն տաղ-  
 նապս և զլառութիս մտայ . թէ և առաւել  
 արիւնթիւն համարէր առ ՚ի ծածկել զերկիւզ  
 իւր յայլոյ : Իմլակ ծիծալէր ՚ի վերայ երկիւ-  
 ղի և զարհուրանայ նց, և քաջալերէր զնոսա  
 յառաջանալ . սակայն դուստր արքային մնայ ՚ի  
 վարանս տարակուսանայ առանց հաստատուն ինչ  
 դիտաւորութե՛ . և անյայտաբար այնքան էր յա-  
 ռաջայեալ՝ մինչ ոչ էր նմա Տնար դառնալ  
 անդրէն ՚ի հովիտն :

Յառաօտուն ծագել գտին նոքա զհովիւս  
 ոմանս ՚ի դաշտի անդ . որք եղին զկաթն և  
 զպտուղս զառաջեալ նց : Դուստր արքային մե-  
 ծագէս զարմանայր , մինչ տեսանէր զի պալատ  
 մի ոչ էր պատրաստեալ վասն ասպնջականուէ՛  
 իւրեանց , և սեղան մի ոչ էր տարածեալ հա-  
 մադամօք վասն ընդունելութեան իւրեանց .  
 սակայն լինելով նորա խոնջեալ և քաղցեալ  
 էարբ զկաթն և եկէր զպտուղս . և համարէր  
 զնն առաւել և սա ախորժական և համեղագոյն  
 քան զբերս հովիտն :

Յառաջ երթային նոքա դիւրագնայ ճանա-  
 պարհօք՝ լինելով նց ամենեցուն անսովոր վառ-

տակոյ և դժուարութեան . և գիտէին զի թէ-  
 պէտ Տնար էր նոցա մոլորիւ , սակայն ոչ որ  
 կարէր պնդիւ զինի իւրեանց : Յընթացս քա-  
 նի աւարց եկին նոքա յառաւել մարդաշատ եր-  
 կիրս և ՚ի բնակութիս : Իմլակ աստանօր զուար-  
 ճացեալ բերկրէր ընդ բանս զարմայման , զոր  
 ընկերք իւր արտասանէին ՚ի վերայ պէսպէս սո-  
 վորութեանց և ազգի ազգի կայուեց և զբաղ-  
 մանց մարդկան : Հանդերձք նոցա էին այնպիսի  
 ձեռլք յօրինեալ , մինչ զի շէր Տնար պատճա-  
 ուել այլոց զկասկածանս ունելոյ զիր ինչ թա-  
 գուցեալ յանձինս իւրեանց . սակայն արքայոր-  
 զին ուր և ժամանէր՝ ակն ունէր տեսնել ըզ-  
 պատիւ Տնարանդութեան . և դուստր արքային  
 ահարեկ լինէր , քանզի որք միանգամ գային  
 առաջի նորա , ոչ երկիրպագանէին նմա որպէս  
 Տնարկ էր նց առնել արքայազանց : Իմլակ պար-  
 տաւորեալ լինէր առ ՚ի պահպանել զնս մեծաւ  
 զգուշութեամբ . զի մի գուցէ ՚ի վեր Տանցեն  
 նոքա զլիճակ մեծութե իւրեանց անսովոր վար-  
 ուք իւրեանց . և յապաղեցոյց ցնոսա ՚ի բաղում  
 շարաթս յառաջին գեղջն , առ ՚ի սովորական  
 ընծայել աշայ նոցա զլիճակս հասարակ մահ-  
 կանացուայ : Սակաւ առ սակաւ արքայագուն  
 թախտակամբն ուսան առ ՚ի իմանալ , զի առ  
 ժամանակ մի ՚ի բաց էին եղեալ նք զաստիճանս

մեծուհի իւրեանց . և պարտ էին ակնուհիւ մի-  
այն առ ՚ի գտանել զայնպիսի մեծարանս պատ-  
ուոյ , զոր պատասխանութիւն և քաղաքալա-  
րութի կորէին Տնարել : Եւ Իմլակ բազմօք խոր-  
հրդովք և ազգարարութեամբք առնելով զնոսա  
պատրաստականս առ ՚ի համբերել խոռովութեց  
Ի բարձունքիւր տեղոյ , և տանել զբերութիւն  
և զժամատութիւն վաճառականայ՝ էած զնոսա  
առ եզր ծովուն : Արքայորդին և քոյր նորա  
որոց ամենայն ինչ երևեց նոր և զարմանալի՝  
հաւատարապէս քերկրեալ էին յամենայն տեղիս .  
և այսորիկ սղաքաւ մնային զքանի ամիսս ՚ի տեղ-  
ոռն յայնմիկ առանց յօժարելոյ բնաւին առ ՚ի  
յառաջ խաղալ ՚ի ճանապարհորդութիւն իւրեանց .  
Իմլակ հաճեցեալ էր մեծապէս զի դադարեալ  
էին նոքա յայսմ տեղոռ . քանզի ոչ համարէր  
ազահոմ առ ՚ի ձգել զնոսա ՚ի վտանգս օտար  
երկրի , լինելով նոցա միանգամայն անհմտա ի-  
ջայ և գործոց աշխարհի :

Ի վերջոյ սկսաւ նա երկն չիւլ , զի մի գույն  
յառուր միում ՚ի յայտ գայցեն արքայազունքն .  
անն իբի յառաջդրեայ առ ՚ի կարգել զօր մի  
վն չուելելոյ նյ անտի : Չունէին նք զիրառունս  
և զկարողութի առ ՚ի առնել յառաջդրութիս վն  
իւրեանց . և Թողուն զամենայն ինչ կամայ և  
քնօրինութեան Իմլակայ : Այսն այսորիկ նա



ասկ է արկ նաւաղետի միում առ 'ի տանիւ զնն  
 'ի Սուէզ . և իբրև ժամանեայ օր չուէլոյ , մե-  
 ծաւ գ ժուարութեամբ հաւանեցոյց նա զդուստր  
 արքային առ 'ի մտանել 'ի նաւն . նաւարկուի  
 նոցա եղև կանուխ միանգամայն և յաջողակ . հա-  
 տեալ նոցա 'ի Սուէզ՝ ուղևորեցան ընդ ցամաք  
 առ Կայրօ՝ 'ի մայրաքաղաքն Եգիպտոսի :

**ԳԼՈՒԽ . ԺԶ :**

Մասնէն երես 'ի Կայրօ և գտնուէ շահեայն հարց երջանից

**Յայտ** վայրի մերձեցան նոքա 'ի քաղաքն ,  
 որոյ հոյակապութիւն ընոյր զօտարականս մեծաւ  
 զարմացմամբ . Իմլակ ապա ասայ ցարքայորդին՝  
 այս է տեղին այն՝ ուրանօր ուղևորք և վաճառ-  
 աւականք ժողովին յամ կողմանց աշխարհի : Ու-  
 նիք դուք գտանել աստանօր զմարդիկ պէսպէս  
 համբաւոյ և պէսպէ գործոյ և զբաղմանց : Աւ-  
 ճառականութիւն է աստանօր գործ իմն պատուե-  
 լի . ես վարեցայ իբրև զվաճառական , և դուք  
 կեցջիք իբրև զօտարականս . որք չունիք զայլ  
 վախճան ճանապարհորդութե . բայց միայն առ 'ի  
 քաղիւ զպատուս հետազօտութեան . փութով  
 քանիցեն մարդիկ զի եմք մեք փարթամ և ըն-

չեղ. համբաւ մեր գտցէ վն մեր պնտաւ և զճա-  
նօթութի առ ամենայն ոք՝ զոր ցանկայցեմք ճա-  
նաչել. տեսանելոյ էք զամենայն կայութիւնս  
աղգի մարդկան, և կարող լիջիք ՚ի պարսպ ժա-  
մաւ առնել զբարեօրէն իւրոց ձերոց :

Չարդիս մտանէ ին նոքա ՚ի բարաքն, ընդար-  
մացեալք յաղաղակէ բազմութեանց և վշտա-  
ցեալք ՚ի կռտակութենէ ամբոխից : Հրահան-  
գութիւնն տակաւին ոչ էր այնքան զօրացեալ  
՚ի վերայ ունակութեան նոցա . հիացեալ զար-  
մանային նոքա ՚ի տեսանել զինքեանս ոչ պատ-  
ուեալ և մեծարեալ ՚ի փողոցին . և մանաւանդ  
յորժամ տեսանէին զի ցածագոյն մարդիկ սնցա-  
նէին առ նոքօք առանց յարդութեան և պատ-  
ուոյ : Գուստր արքային ոչ կարէր զառաջինն  
տեսանել զինքն հաւասարեալ ընդ ռամկայ .  
սմին իրի մնաց նա առ ժամանակ մի ՚ի սենեկի  
իւրում, ուրանօր մտերիմ նորա՝ Պէկոա սպա-  
սահարկութեամբ ծառայէր նմա իբրև ՚ի պա-  
լատի հովտին :

Իմլակ՝ որ գիտէր զվաճառականութիւն՝ վա-  
ճառեաց զման ինչ ՚ի պատուական սկանց ՚ի մի-  
տում առւր և վարձեաց զտուն մի հոյակապ-  
զայս տուն այնքան գեղեցիկ և վայելուչ զարդաք  
զարդարեաց, մինչ զի ամենեքեան իսկ և իսկ  
կարծէին զնա լինել վաճառական ոք բազմա-

հարուստ : Քաղաքավարութիւն նորա շահեցաւ  
 զճանօթութի բազում անձանց . և առատաւր-  
 տութիւն նորա սիրելի կայոյց զնա յաչա բազմաց  
 կարօտաւորաց : Սեղան նորա լիեալ էր բազ-  
 մականօք յոգունց ազգաց . որք ամենեքեան զար-  
 մանային չէ գիտութիւն նորա և թախանձանօք  
 խնդրէին զչորհաբաշխութիւն նորա : Ընկերք  
 նորա ոչ կարելով մանակցիլ 'ի զրուցատուեն  
 յայնմիկ' ոչ կարէին յայտնել զոգիտութի կամ  
 զզարմացումն իւրեանց . և սակաւ առ սակաւ  
 հրահանգեալ լինէին յիրս աշխարհի , ըստ ու-  
 բում ստանային զհմտութիւն լեզուին :

Արքայորդին յաճախական խրատութեալ  
 էր զգործածութիւն և զորպիսութիւն փողոյ .  
 այլ սակայն տիկնայքն ոչ կարէին յընդերկար  
 ժամանակի իմանալ զոր ինչ վաճառականքն առ-  
 նէին փոքրիկ կոտորովք ոսկւոյ և արծաթոյ . և  
 զարմայեալ էին թէ ընդէ՞ր մարդիկ հաւասար  
 բակչիւ արժողութեամբ փոխանակեսցեն զպի-  
 տոյս կենաց ընդ այնգիսի փայլուն իրաց' որ  
 յաչա իւրեանց երևէին կարի դուզնաքեայ և  
 շնչին : Ուսանէին նոքա զլեզու երկրին զամս  
 երկուս , մինչ իմլակ հանդերձէր առ 'ի դնել  
 զառաջեաւ նց զբազմազան վիճակս և զկայուիս  
 ազգի մարդկան : Ծանօթանայր նա ամենեցուն'  
 օրք ունէին զիր ինչ մանաւոր և զարմանալի 'ի

վիճակս կամ 'ի վարս իւրեանց • յաճախէր նման  
առ հեշտասէրս և առ ժուժկալս , առ դա-  
դարկահեացս և առ գործաւորս , առ վաճառա-  
կանս և առ արս ուսեալս և գիտնականս :

Չարդիս արքայորդին կարելով խօսակցիւ  
ճարտարութեամբ , և ուսեալ նորա զհարկաւոր  
զգուշութիւն՝ զոր պարտ էր ինքեան ցուցանել  
'ի խօսակցութեան իւրում ընդ այլոց , սկսաւ  
ուրեկցութեամբ գնալ ք իմլակայ առ տեղիք  
ժողովարանի , և մտանել յամենայն ժողովս , զի  
կարիցէ առնել զհարուստիս ինչս իւրոց : Առ-  
ժամանակ մի համարէր նա զընտրութիւն կենաց  
անհարկաւոր • քանզի ամենայն վիճակ երևէր  
նմա հաւասարապէս երջանիկ : Աւրանօր և եր-  
թայր , հանդիպէր բերկրութե և քաղցրութե •  
և լսէր զերգ ուրախութեան կամ զծիծաղ ան-  
հոգութե : Ապասկսաւ նա հաւատալ զի աշխարհ  
արտապէտոյր զընդհանրական աւատութիւն , և  
զի ոչինչ պակասութիւն գոյր 'ի մէջ անարժանե  
և արժանաւոր անձանց • զի իւրաքանչիւրոյ ձեռն  
տեղայր զանձրևս ողորմածութեան , և իւրաքան-  
չիւրոյ սիրտ հալէր եռանդեամբ բարերարութե •  
և ապա ուրեմն՝ ասաց նա՝ ո՞վ ոք կարէ կենցա-  
ղիւ 'ի վիշտս և լինիլ թշուառացեալ :

Իմլակ թոյլ տայր արքայորդւոյն բերկրիւ  
'ի մտայածին խորհուրդս իւր , և ոչ կամէր 'ի

դեղնե հանել զյոյս անխորձառութեան նորա և Յաւուր միում Հռասսելաս սակաւիկ մի անխօս նստեալ ասէր թէ ոչ գիտեմ զինչ է պատճառ լինելոյ իմոյ առաւել ապերշանիկ քան զայլս ՚ի բարեկամաց մերոյ . տեսանեմ զնս միշտ և հա նապօղ զուարթերես և ուրախ . սակայն զգամ ես ՚ի միտս իմ՝ զանդիւրուի և զխաւովուի : Ո՛չ է իմ շատացեալ ընդ այնոսիկ հեշտուիս՝ զորս երևէի ես սիրել մեծայն : Աեամ ես ՚ի բազմուե ուրախամիտ մարդկան , ոչ այնքան առ ՚ի վայելել զընկերակցուի նց , որքան առ ՚ի խորշիլ ՚ի նոցանէ . և բարձրաճայն և ուրախ երևեցուցանեմ զանձն իմ միայն առ ՚ի ծածկել զտրլաբութիւն իմ ՚ի նոցանէ :

Իւրաքանչիւր ոք՝ ասաց իմլակ՝ քննելով զիւր իսկ միտս՝ կարող է խորհիլ զոր ինչ անցանէ ՚ի միտս այլոյ . յորժամ տեսանես զի ուրախուի քոյ իսկ է կեղծուպատիր՝ անշուշտ ունիս դու կասկածել զի ուրախուի ընկերակցաց քոյ ոչ է իսկական ուրախուի : Եւսխանձն է հասարակօրէն սոխադարձական : Աենցաղիմք մեք յձի Է երկար , ոչ կարելով գիտել զի ոչ գտանի ուրեք երջանկուի . և իւրաքանչիւր ոք կարծէ զի այլք ունին յինքեանս զերջանկուի , առ ՚ի պահպանել կենդանի զյոյս ստանալոյ զայն վն ինքենս ՚ի Գողովին յայնմիկ՝ ուրանօր անցուցեր դու զանցեալ



գիշերն՝ երեւէին այնպիսի արք զուարթերեսք և  
 ուրախք, և երեւեալուի նց էր այնքան ցնդական  
 և փոփոխական, մինչ համարէի գնոսա եակս  
 գերմարդկայինս՝ ստեղծեալս սու ՚ի բնակիւ ՚ի  
 խաղաղական սահմանս, ուր ոչ գոն հոգումա-  
 կութիւնք և տրամութիւնք աշխարհի. սակայն  
 հաւատն ինձ՝ մեծախառ արքայորդի՝ զի ոչ ոք  
 գոյր ՚ի միջի մարդկան այնր ժողովոյն, որ ոչ  
 երկնչէր ՚ի սարսափելի վայրկենէ անտի՝ յոր-  
 ժամ մեկուսութիւնն մատնեացէ զնա բռնաւո-  
 րութեան մտածողութեան և հոգունակութե :

Այսպէս եղիցի կայութիւն այլոյ՝ ասաց ար-  
 քայորդին՝ քանզի այդպէս է կայութի անձին  
 իմոյ. սակայն որ ինչ և իցէ ընդ հանրական  
 ապերշնակութի մարդոյ, յայտնապէս երեւի զի  
 մի վիճակ մարդկան է առաւել երջանիկ քան  
 զմիւսն. և իմաստութիւնն պատուիրէ մեզ ըն-  
 դունիւ զփոքրագոյն շարն յընտրութեան Կեաց :

Պատճառք չարեաց և բարեաց՝ պատասխա-  
 նեաց իմլակ՝ են այնքան բազմազան և անհաս-  
 տատ, այնքան յաճախակի խառնեալք ընդ մի-  
 մեանս, այնքան պէսպիսայեալք յազգի ազգի  
 առ ընչութեանց, և այնքան ենթարկեալք աննա-  
 խատես պատահմանց և դիպումոց, մինչ զի որ  
 միանգամ հաստատեսցէ զվիճակ իւր ՚ի վերայ  
 անդ իմամարտ իրաւանց նախընտրութեան, պար-

տի կեալ և մեռանիլ պարագելով ՚ի Տարցա-  
փորձութիւնս և ՚ի մտախորհութիւնս :

Բայց արդարեւ ասաց Հաստեղատ արք ըզ-  
գօծաւիրոք և իմաստունք, որոյ անսամբ յարգութե  
և զարմացմամբ՝ ընտրեցին զայն եղածակ կենաց  
վասն ի՛քեանց՝ զոր կարի պատշաճաւոր և վայ-  
ելուչ համարեցան սու ՚ի առնել զինքեանս եր-  
ջանիկ :

Կարի սահաւ անձինք՝ ասաց բանաստեղծն՝  
վարեն զկեանս իւրեանց ընտրութեամբ վիճա-  
կաց : Իւրաքանչիւր ոք վայելէ յայժմեան վի-  
ճակի իւրում ՚ի ձեռն այնպիսի պատճառաց՝  
որք հասուցեալ են զնա յայն վիճակ առանց  
յառաջատեսութե նորա . և նա ինքն ո՛չ է լեալ  
յարաժամ խնդամտաբար գործակից լէ այնոյիկ  
պատճառաց . սմին իրի հպիւ ուրեմն հանդի-  
պեսցիս ումեք՝ որ ոչ համարեսցի զվիճակ դը-  
րացոյն իւրոյ լինիլ առաւել բարեբաւտիկ և  
երջանիկ քան զիւրն :

Քննոր է ինձ խորհիլ ասաց արքայորդին՝  
զի ազնուականութի և մեծութիւն իմ առա-  
ւել գերազանց են արարեալ զիս քան զոյլս, և  
տուեալ են ինձ զկարողութի խորհելոյ և յառա-  
ջողիլոյ զիրս յօգուտ անձին իմոյ : Աստա-  
հաւանիկ ունիմ առաջի իմ զգեւոյէս իրս և  
զգործս աշխարհի . բննելով նկատեսցի զնուս

ողջոյն ըստ պարագոյ և ըստ հաճոյից իմոց .  
անտարակոյս գոյ ուրեք յաշխարհի աստ երջան-  
կութիւն , զոր ես այժմ ոչ կարեմ գտանել :

**ԳԼՈՒԽ ԺԵ .**

Ազգայորէի շնորհիւ ընդ հարաշարանի անջնի հոգե-  
տաղիսց գնմ երեւո և շարեւեռո :

Հոաստեղաս յարեա վաղվաղակի ՚ի միւ-  
սում աւուր , և եդ ՚ի մտի իւրում սկսանիլ  
առ ՚ի առնուլ զփորձ կենցաղաւարութեան աշ-  
խարհի : Հասակ պատանեկութեան՝ ասաց նա-  
է ժամանակ տրախութեան . խառնեցայց ես ՚ի  
խումբս զուարթամիտ պատենակաց , որոց միայ-  
նակ գործն է բերկրեցուցանել զսիրտս իւրեանց .  
և որոց ժամանակն ողջոյն անցանէ ՚ի բազմապա-  
տիկ և յանընդհատ վայել զուարճութեանց և  
բերկրութեանց :

Հոաստեղաս յաճախեց յընկերակցութիւնս  
վերոյասացեալ մատաղատունկ անձանց , և դիւ-  
րաւ և համարձակ գտանէր զմուտ ՚ի մէջնց .  
սակայն անյուրեալ նր զքանի մի աւուրս յայտ  
միկ ընկերակցութե . յետս դարձաւ անտի ձանձ-  
րացեալ և տաղտկացեալ : Ուրախութիւնս նոցա

էր առանց պատկերաց և գաղափարաց . ծիծաղ  
նոցա էր առանց երևելի ինչ պատճառի կամ  
չարժաւթի . Տեշտութիւնք նոցա էին անհե-  
թեթ և մարմնասիրական , յորս միտք նոցա ոչ  
զգայր զբերկրանս զուարճութեան . վարք նոցա  
էր միանգամայն վայրենի և շինականագոյն . ծի-  
ծաղէին նոքա զօրինօք տէրութեան . և պախա-  
րակէին զկանոնս բարեկարգութե . սակայն խո-  
ժուումն իշխանութե վճատեցուցանէր զսիրտս  
նոցա . և աչք իմաստութեան պատկառեցուցա-  
նէր զնոսա ողջոյն :

Աբբայորդին իսկ և իսկ ծանեալ , զի չէր  
հնար ինքեան լինիլ էրջանիկ յայնպիսի կենցա-  
ղավարութեան , յորմէ զամօթի հարկանէր նա  
պատկառանօք : Անպատշաճ համարէր նա զի  
բանական էակ միւլարեսցէ զկեանս իւր առանց  
ինչ ձեռոյ կամ գաղափարի , և եղիցի տրը-  
տում կամ ուրախ միայն ՚ի պատահական դիպ-  
ուածոց : Երջանկութիւն ասաց նա՝ պարտի լինիլ  
հաստատուն ինչ և մշտնջենական , առանց եր-  
կիւղի և առանց անհաստատութեան :

Սակայն ընկերակիցք նորա այնքան շահեալ  
էին զսէր նորա անկեղծութեամբ և քաղցրու-  
թեամբ իւրեանց , մինչ զի Հռասսելաս ոչ կա-  
րէր մեկնիլ յընկերակցութե նոցա առանց տա-  
լոյ նոցա զխրատս զգուշութե և բարելաւութե

վարույն Բարեկամք իմ՝ ասաց նա՝ զգուշութիւն  
 խորհեալ է իմ զվարս և զնպատակս մեր . և  
 տեսանեմ զի սխալեալ եմք մեք յօգուտս ան-  
 ձանց մերոց : Առաջին ամբ մարդկային կենաց  
 պարտին առնել զպատրաստութիւնս վասն վեր-  
 ջին անոց : Ար ոչ խորհի և մտածէ՝ ոչ կարե-  
 երբէք լինիլ երջանիկ : Մշտնջենական ունայ-  
 նասիրութիւնս վերջացի ՚ի տգիտութեան . և  
 անբարեխառնութիւն՝ թեպէտև բորբոքեցէ զո-  
 գիս զքանի մի վայրկեանս՝ արայցէ զկեանս  
 մարդկան սակաւատև և թշուառայեալ : Ար-  
 ժան է մեզ խորհիլ, զի հասակ պտտանեկուէ  
 ոչ է երկարատև . և ՚ի յառաել հասունա-  
 ցեալ հասակի մերում՝ յորժամ կատարողիք  
 և հրապոյրք երևակայութեան դադարեցին, և  
 ցնորք ուրախութեան այլ ոչ ևս պարեպեն-  
 շուրջ զմեօք՝ սիրոք մեր ոչ ուստեք գտցեն  
 զմխիթարութիս բայց միայն յարժանապատուութե-  
 իմաստնոց և ՚ի ներգործութեան առաքինուէ :  
 Մին իրի արժան է մեզ դադարիլ այժմ՝ մինչ  
 դադարին է ՚ի կարողութե մերում . կեցցութե  
 իբրև զմարդիկ, որք ՚ի ժամանակի միում պար-  
 տին համակիլ յալիս ձերութեան . և մեծ  
 տարաբաղդութի եղիցի նց առ ՚ի թուել զա-  
 լուրս անցեալ կենաց իւրեանց յիշատակելով  
 զյիմարութիւնս իւրեանց, և ՚ի միտս բերել



զնախկին ողջանձնութի պատանեկութեան իւրեանց, բարդատելով զայն Է բազմապատիկ հիււանդութեցն՝ զորս շուայտատ և անառակ կենացարարութիւն իւրեանց թողեալ է զկնի ։  
 Սակաւիկ մի պշուպեալ հայեիմ նորա ՚ի միւսեանս լուութիւն և ՚ի վերջոյ հերքեցին զնոսանսի ՚ի բոց ընդ հանրական ձայնիւ անընդհատ ծաղրածութեան ։

Թեպէտ և Հռասսելլա քաջ գիտէր զի քանք իւր էին իրաւացի, և դիտաւ որուիք մտաց իւրոց էին բարի և մարդասիրական, սակայն հառ զիւ ուրեմն կարէր նա հանդուրժել արհաւիրաց կատականայ և ծաղրածութիւն ։ Այլ սակայն նոսրճգեաց նա վերստին զյանդորրութիւն մտաց իւրոց, և շարունակեաց զառարկոյ հետազօդ տութեան իւրոյ ։

### ԳԼՈՒԽ . ԺԸ ։

Արտաբոյսի գրածն զայր ռն իմաստն և երզնիի ։

Մինչ յառուր միում երթայր Հռասսելլա ՚ի մոտոցի, ետես նա ՚ի ճանապարհին զշինուած մի հոյակապ և ընդարձակ օրոյ դրունքն լինելով բայ առ ամենեւեան՝ ոչ գոյր ումեք արգել

Ի ներքս մտանելոյ : Գնաց նա գհետ բաղմունք մարդկան . և մտեալ ՚ի շինուած անդր՝ ետես զսրահ կամ զվարժարան մի ստենաբանութեան , ուրանօր վարժապետք քարոզս կարդային ՚ի լսելիս բաղմաթիւ ունկնդրաց : Յառեաց նա զաչս իւր ՚ի վերայ իմաստասիրի միոյ՝ որ կանգնեալ կայր ՚ի բարձրագոյն տեղոջ , և մեծաւ ազդողութիւն ստենաբանէր ՚ի վերայ կառավարութիւն կրից : Հայեցուած դիմաց նորա էր մեծարոյ . շարժուած մարմնոյ նորա էր գեղեցիկ և վայելուչ . արտասանութիւն նորա էր պարզ և յստակ . և բացատրութիւն բանից նորա էր ընտիր և գեղեցկայարմար :

Յուցանէր նա հզօրեղ առարկութեամբ և պէսպէս բացայայտութիւնք բանից , զի մարդկային բնութիւնն յանարգութիւն փոխի և նուաւ տանայ , յորժամ ստորին կարողութիւնք մարդոյ բռնանան ՚ի վերայ վերագոյն կարողունց : զի յորժամ երեւակայութիւնն՝ զմայրն ասեմ կրից , յինքն գրաւէ զիշխանութիւն մտայ՝ ոչինչ յառաջ գայ անտի բայց միայն բնական ներգործութիւն ապօրէն կառավարութիւն , լսուողութեան և շիտթութեան . և ոչ այսչափ միայն , այլ և մատնէ նա զամբոյս իմացական կարողութեանց ՚ի ձեռս ապստամբ իշխանաւորաց , և յապստամբութիւն յրդորէ զմանկունս իւր

ընդդէմ բանականութեան՝ օրինաւոր իշխանին  
 իւրեանց ։ Բարդաստէր նա յատենաբանութեան  
 իւրում զբանականութիւն մարդոյ ընդ արեգա-  
 կան , որոյ լոյսն է տեսական , միակերպ և ան-  
 ընդհատ . և համեմատէր զերեւակայութիւնն չ  
 մեռէ որայի միում , որոյ լոյսն երևի պայծառ ,  
 բայց է սակաւատե . և դիւրանցիկ . որոյ շրջա-  
 բերութիւնն է անհանոն , և որոյ ճանապարհն է  
 պատրողական ։

Ապա յուշ առնէր ունկնդրաց իւրոց զգէտ-  
 պէս խրատս աւանդեալս մարդկան ժամանակե-  
 ՚ի ժամանակ վասն յողթահարութեան կրից . և  
 գեղեցիկ իմն իմաստասիրութեամբ նկարագրէր  
 զերջանկութիւն այնոցիկ ամենեցուն՝ որք արդէն  
 ստացեալ էին զկարեւոր յողթանակութիւն ՚ի  
 վերայ կրից իւրեանց . քանզի զկնի յողթահա-  
 րելոյ մարդոց զկիրս իւր , այլ ոչ ևս լիցի նա  
 գերի երկիւղի , և ո՛չ եղիցի նա ծաղրածու յու-  
 սոյ . այլ ոչ ևս հաշեալ մաշի նա ՚ի նախան-  
 ձուէ , ո՛չ բորբոքեալ այրի ՚ի բարկութենէ ,  
 ո՛չ մեղկեալ լինի ՚ի բերկրութէ և ո՛չ վհա-  
 տեալ ընկճի ՚ի տրտմութենէ . այլ ճեմէ ան-  
 խռով ՚ի մէջ խռովութեց և լռութեանց կե-  
 նաց , ըստ որում արեգակն ընթանայ միօրինակ  
 զճանապարհ իւր ընդ պարզ կամ չ մըրկապատ  
 երկինս ։

Յուրանէր նա զբազմապատիկ օրինակս և զվկայութիւնս դիւցազանց, որք անյողողող մը նային 'ի ցաւս տառապանաց կամ 'ի բերկրանս հեշտութեանց. և անհոգութիւն հայեցան յայնուսիկ հանգամանս և 'ի դիպուածս կենայ՝ զորս ուսիկք անուանեն բարիք և չարիք կենաց: Յոր գորեալ քաջախիբէր նա կունկնդիրս իւր առ 'ի բաց ձգել յանձանց իւրեանց զամենայն զնախաբարձրմունս իւրեանց, և ամբայուցանել զինքեանս ընդդէմ նեւտից չարութեան և ձախողութեան անխոյեղի համբերութեամբ, և հուսկ ամենայնի եզրակայուցանէր զբանս իւր ասելով, զի այս վիճակ կենայ միայն էր երջանկութիւն. և զի զայս երջանկութիւն հնար էր ամենայն ուսմեք 'ի ձեռս բերել:

Հուսսեղաս ունկնդիր եղև նմա յարգութիւն և պատուով, որ արժանի է գերագոյն էակի միոյ. և սպասելով հանդիպիլ նմա 'ի դրան՝ խոնարհաբար հայցեաց 'ի նմանէ զարձակութիւն շորհեւ ինքեան առ 'ի այլ ելանել այսպիսի գերիմաստ վարժապետի միում, որ ուսուցանէր զճշմարիտ իմաստութիւն: Ատենախօսն սակաւիկ մի վարանեալ տարակուսէր 'ի միտս իւր, յորժամ Հուսսեղաս եղ զբոսակ մի լցեալ ոսկում 'ի ձեռննր, զոր նա բնկալաւ բերկրութիւն սրբոտի միանգամայն և զարմայեալ հայեցուածովք:

Յորժամ դարձաւ անդրէն արքայորդին առ  
 Իմլակ՝ ասաց յնա՝ թէ գտեալ է իմ զայր ոմն ,  
 որ կարող է ուսուցանել զամենայն իրս կարեւ-  
 որս ծանօթութեան մարդկան . որ ՚ի բարձրուէ  
 անդրդուելի ասթուոյ բանական արիութե Տայի  
 ՚ի խոնարհ ՚ի տեսարանս կենաց , որք յեղ յե-  
 դեալ շրջեալ փոփոխին ընդ իւրե : Յորժամ  
 նա բանայ գրերան իւր առ ՚ի ատենաբանել ,  
 ունկնդրութիւնն նստի ՚ի վերայ շրթանց նորա :  
 Առնէ նա զձեռնարկութիւնս , և ազգայոյք  
 կնքեալ փակէն զգարբերութիւնս բանից նորա :  
 Այրս այս արդարեւ եղիցի այսուհետեւ առաջ-  
 նորդ վարուց և կենաց իմոց . ուսայցեա զվար-  
 դապետութիւնս նորա , և հետեւեցայ ընթացից  
 կենցաղաւարութեան նորա :

Մի լինիւր կարի շուտափոյթ՝ ասաց Իմլակ՝  
 առ ՚ի հաւատալ կամ զարմացմամբ լսել զբանս  
 վարժագետաց բարոյականութե . խօսին և վար-  
 դապետեն նորա զօրէն հրեշտակաց , բայց սա-  
 կայն ապրին նորա և վարեն զկեանս իւրեանց  
 յաշխարհի զօրէն մարդկան :

Հաստեղիս՝ որ ոչ կարէր իմանալ թէ զի-  
 արդ հասն էր ումք առարկութիւնս առնել  
 այսպիսի ազդողութեամբ և ներգործութեամբ ,  
 առանց զգալոյ զազդութիւն տրամաբանական  
 ձեռնարկութեանց իւրոց , զկնի քանի առույց



գնաց յայցելութիւն գերիմատ վարժապետին և  
 օսկայն տարաբողբայէս ոչ կարաց գտանել ըզ-  
 մուտ 'ի տուն նորին : Արդէն ուսեալ էր նա  
 զորպիսութիւն և զգորութիւն դրամոյ և ե-  
 ղեալ 'ի ձեռս դոմայանին վկասոր մի ոսկոյ՝  
 գնացեալ եմուտ 'իներքին սենեակս տան և ու-  
 ջանօր եգիտ նա զփիլիսոփայն 'ի խաւարին և  
 'ի մթին սենեկի միում և որոյ աչքն էին թանձ-  
 ջամած և երեսքն գոմատեալ և դալկացեալ :  
 Տէր՝ օսաց փիլիսոփայն՝ յայնպիսի տարաբողբ-  
 ժամանակի ես եկեալ առ 'ի տեսանել զիս և  
 յորժամ մարդկայն բարեկամութիւն ողջոյն է  
 անզօր և անպիտան և ով դառնայէս ցարցս և  
 որք 'ի վերայ իմ հասին յանկարծակի և չէ՛ հը-  
 նար դարման ինչ մատուցանել վշտացս՝ զոր կը-  
 բեմ յանձին և չէ՛ հնար վերատին գտանել զայն՝  
 զոր կորոյս անձն իմ և Դուստր իմ կաթոգին և  
 ո՛հ և միամօր դուստր իմ սիրելի՝ յորոյ քաղց-  
 րութենէ և խանդակաթուէ ակնունէի գտա-  
 նել զամենայն տիտիանս միսիթարութե 'ի ծաղ-  
 կեալ հասակի ձերութեան իմոյ՝ զրաւեցաւ 'ի  
 կենացս յանցեալ գիշերի 'ի սաստիկ հիւան-  
 դութենէ ջերմախտի և Ակնկալուիք իմ և նպա-  
 տակք իմ և յուսադրութիւնք իմ ողջոյն 'ի  
 գերեւ ելեալ չքայան և զարդիս մնացեալ եմ՝  
 միայնակ և անմխիթար և միանգամայն և բաժա-

նեալ յընկերակցութենէ մարդկան :  
 Տէ՛ր՝ ասաց արքայորդին՝ մասն է այնպիսի  
 դիպուած մի , յորմէ իմաստուն ոմն ո՛չ կարէ  
 երբեք զարհուրիլ կամ ապշիլ . քաջ գիտեմք  
 մեք զի մասն յարածամ մերձ է 'ի դրունս մեր .  
 ամին իրի և պարտիմք յարածամ ակնունիլ  
 գայտեան նորին : Պատանեակ՝ պատասխանեաց  
 սիրիստիպն՝ խօսիս դու զօրէն առն միոյ , որ  
 ո՛չ է կրեալ բնաւին զցառս և զուգնայս բա-  
 ժամման սիրելեաց և մերձաւորաց 'ի միմեանց :  
 Ազա ուրեմն մոռացեալ ե՛ս դու զխրատս և  
 զվարդապետութիւն՝ ասաց արքայորդին՝ զոր այսմք  
 ներգործութիւն քարոզելիւ 'ի լսելիս ունկնդրաց :  
 Ո՛չ ազաբէն իմաստութիւն ունի զկարողութիւն առ 'ի  
 ամբայուցանել զսիրտ մարդոյ ընդդէմ ակեալից  
 և ձախորդութեց աշխարհի : Խորհեանց զի ար-  
 տաբին իրք են բնականապէս յողորդ և սուստ-  
 խական . սակայն ճշմարտութիւն և բանականութիւն  
 են յարածամ միօրինակ և անայլայլական : Չի՛նչ  
 միսթարութի կամ սիրտանս՝ ասաց իմաստուն  
 սգաւորն՝ կարեն ճշմարտութիւն և բանականութիւն  
 մատուցանել այժմ՝ տրամեալ սրտի իմում .  
 զի՛նչ ներգործութիւն առնեն նոքա այժմ՝ 'ի սրբ-  
 անի իմում , որ անշարժ է 'ի զօրութենէ նոցա .  
 դոյս և եթ յուր առնեն նոքա ինձ , զի չի՛հր-  
 նար ինձ երբեք վերաստանալ զդուստր իմ վա-

զամեռիկ և ողբալի :

Արքայորդին՝ որոյ մարդասիրութիւնն ոչ թոյլ տայր ինքեան արհամարհել զթշուառութիւն մարդոյ բանիւք յանդիմանութեան՝ գնաց մեկնեցաւ ՚ի տանէ փիլիսոփային, քաջ խնայեալ ՚ի միտս իւր զդատարկաձայն հնչմունս ճարտասանական տեղեաց և ձևոյ, և զանցորութիւն ճարտարան արքերուից և ճարտարարուեստ բանից :

### ԳԼՈՒԽ . ԺԹ .

Նշարտիւն իւր հոգևորուն ինչոց :

Հաստեղաս տակաւին փութաշան էր ՚ի խոյզ և ՚ի խնդիր երջանկութեան . և լուեալ նորա զհասբա ճգնաւորի միոյ՝ որ բնակէր մերձ առ ստորնագոյն սահանս Նեղոսի, և խոյզ զբովանդակ երկիրն անուամբ հռչակաւոր սրբակեցութեան և ողջախոհութիւնոյ, յառաջադրեաց գնալ և տեսանել զխրճիթ առանձին բնակութիւն նորին, և հետազօտելով քրննել թէ արդեօք զերջանկութիւն՝ զոր հրապարակական կեանքն ոչ կարէր մատուցանել՝ հնար էր գտանել ՚ի հանդարտիկ տեղիս առանձնակեցութիւն . և թէ արդեօք այլ ոմն՝ որոյ ծաղ

կեալ հասակ ձերութեան և առաքինութիւնսն  
 ձին արարեալ էին զնա մեծարոյ յաջ աշխար-  
 հի՝ կարող էր ուսուցանել զմանաւոր հնարս  
 ինչ զերծանելոյ՝ ի չարեաց աշխարհի, և կամ  
 հանդուրժելոյ համբերութիւնը արեւոյց և տառա-  
 պանայ :

Իմլակ և դուար արքային հաճեցան առ ՚ի  
 գնալ ընդ նմա ողեկցութիւն ի յառաջադրեալ  
 տեղի ճանապարհորդութիւն նորին, և արարեալ  
 նոցա զհարկաւոր պատրաստութիւնս ողե-  
 քութեան՝ սկսան զճանապարհորդութիւնս իւրեանց :  
 Պարտ էր նոցա գնալ առ ճանապարհաւ դաշ-  
 տաց, ուրմօր խաչարածք պահպանէին զհօտս  
 իւրեանց, և մատաղ գառինքն ոսանուին և խա-  
 զային ՚ի վերայ դալարագեղ արօտի : Արձակս  
 այս՝ սասց բանաստեղծն՝ է կեանքն այն, զոր յա-  
 ճախակի գովութեամբ դրուատեալ են մարդիկ  
 ՚ի պատճառս անմեղութեան և յանդորրութե-  
 նորին. արժան է մեզ անյուցանել զՉերմայել  
 ժամս տունջեան ՚ի վրանս հովուաց, և գիտել  
 թէ արդեօք հետազօտութիւնք մեր ողջոյն ոչ  
 ունին եզերիլ ՚ի հովուական պարզմտութիւն :

Այս յառաջադրութիւնս Իմլակայ հաճելի  
 երևեցաւ յաջ ոչ անկեցումն. և նք ՚ի ձեռնս  
 փոքրիկ ընծայից և ընտանի հարցախորձութեց  
 պարտաւորեցին զհովուսն առ ՚ի խոտորւանիլ

զկարծիւս իւրեանց յաղագս իսկական վիճակի՞ն  
 իւրեանց : Այնքան բիրտ և անպէտ էին նոքա ,  
 այնքան դժուարութեամբ կարէին հասնեալտեղ  
 զբարիս ընդ շարեայ գործաւնութե՞ն իւրեանց ,  
 և այնքան անորոշ և մթին էին պատմութիք և  
 նկարագրութիւնք բանից նոցա , մինչ զի կարի  
 սակաւ ծանօթութիւնս հնար էր ինքեանց ստա-  
 նալ 'ի գեղջուկ հովուաց անտի : Բայց սակայն  
 յայտնապէս երևէր , զի սիրտք նոցա կրծեալ  
 մաշէին 'ի ժամեայ տժգոհութեան : Համար-  
 էին նոքա զանձինս իւրեանց դատապարտեալ  
 առ 'ի աշխատիլ 'ի պէտս փափկութեան փար-  
 թամայ . և թանձրամիտ շարակամութիւն հայէին  
 յայնոսիկ անձինս՝ որք գերագոյն էին քան զն՞  
 վիճակաւ :

Դուստր արքային աղաղակեաց սաստկութիւն ,  
 թէ ինքն ո՛չ երբէք թոյլ տայէ այսոցիկ նա-  
 խանձարեկ և վայրագատուն բարբարոսաց լինիլ  
 ընկերակիցք իւր . և թէ այլ ոչ ևս կամի տե-  
 սանել զօրինակս գեղջկական երջանկութեան .  
 բայց և այնպէս ո՛չ կարէր նա հաւատալ թէ  
 ան՞ բանք 'ի վր նախնական հեշտութեց և եր-  
 ջանկութեան էին ստայօդ և առասպելախառն .  
 և երկբայելով տարակուսէր , թէ արդեօք գոյ  
 'ի կեանս մարդկան իր ինչ՞ զոր արժանապէս  
 հնար էր նախադաս համարիլ քան զհանդար-



տիկ և զքաղցրիկ բերկրութիւնս դաշտաց և անտառաց : Յուսայր նա մեծաւ ակնկալութեամբ զի եկեսցէ Ժամանակ մի , յորժամ ընդ քանի մի առաքինազարդ և նազելի ընկերակցաց հաւաքեսցէ զճաղկունս անկեալս ձեռօք ի բոլբ : ընդդրկեսցէ զգառինս մաքուց իւրոց , և ունկնդիր լիցի առանց հոգունակուե՛ ՚ի մէջ առուակաց և քաղցրասիւղ հողմոց՝ միում յաղախնեաց իւրոց , որ ընթեռնուցու վան իւր ըզգիրս ՚ի զովարար հովանոցի :

### ԳԼՈՒԽ • Ի :

Արարեց Երեմուշտուրեան :

Յերկրորդում աւուր շարունակեցին նոքա զճանապարհորդութիւն իւրեանց , մինչև Չերմութիւն արևու պարտաւորեսց պնտա խնդրել զզովարար հովանոց մի : Սուղ ինչ յերկար տեսանէին նոքա զանտառ մի ստուերախիտ . այլ սակայն մինչչև էին մտեալ ՚ի ներքս՝ իսկ և իսկ ծանեան զի մերձ եղանէին բնակութեանց մարդկան : Թուսիքն խնամով և զգուշութեամբ հատեալ էին առ ՚ի բանալ զճանապարհս , որ բանօր ստուերք անտառաց էին կարի մթադոյն .

Ճիւղք հանդիպակաց ծառոց էին գեղեցիկ իմն արհեստիւ ներհիւսեալք ընդ միմեանս . նստաբանք ծաղկաւէտ հողակոշտի կառուցեալ էին ՚ի դատարկ տեղիս . և առուակ մի՝ որ պարայածեալ խաղայր առ կողմմբ շրջադտոյտ ճանապարհի միոյ՝ երբեմն երբեմն հեղոյր զշուրս յեղերաց իւրոց ՚ի փոքրիկ աւազանս . և հասանք նր երբեմն խափանեալ լինէին ՚ի փոքրիկ թմբոց քարանց բարդելոց ՚ի վերայ միմեանց առ ՚ի առաւելուլ զխոխոջանս առուակին :

Անցանէին նք մեղմուլ և հանդարտիկ ՚ի մեջ անտառաց , բերկրեալ մեծապէս ընդ այսպիսի անակնկալ դիւրութիւն ճանապարհին . և բերկրեցուցանէին զմիմեանս խորհելուլ և ասելուլ , թէ զինչ կամ ո՞վ ոք է աշխատ եղեալ յայտոսիկ ամայի և յանմարդաբնակ երկիրս , և յարդարեալ զայսպիսի անմխաս դիւրութիւնս ճանապարհի : Այն ինչ յառաջ ընթանային նոքա , լսէին զձայն երաժշտութեան և տեսանէին զպատանիս և զօրիորդս պարել բերկրութիւն յանտառի . և առաւել ևս յառաջացեալ նոցա՝ տեսին զընդարձակ և զհոյակապ պալատ մի կառուցեալ ՚ի վերայ բլրոց միոց շրջապատելոյ յանտառաց : Օրէնք արեւելեան հիւրընկալուե ետուն նոցա համարձակ մտանել ՚ի պալատ անդր . և տէր պալատին ասպնջահան եղև նոցա բարե-

Տաճոյ ընդունելութեամբ իբրև զայր ոմն ազատասիտ և փարթամ : Տանուտէրն ըստ բաւականին Տանձարեղ էր առ 'ի ճանաչել զնոսա 'ի հերպարանայ նոցա , զի չէին նոքա հասարակ հիւրք և հասարակ մարդիկ . սմին իրի տարածեաց զսեղան իւր առաջի նոցա մեծաւ շքեղութե և ամենայն ախորժական բարեօք : Պերճախօսութիւն իմլիկայ գրաւեաց զմտադրութի տանուտեառն . և վէհապանձ քաղցրութի և քաղաքալարութիւն դստեր արքային շարժեցին ըզպատիւ և զմեծարանս նորին : Յորժամ կամէին նոքա մեկնիլ անտի , նա աղաչեաց զնոսա առ 'ի մնալ անդ զքանի աւուրս . և յերկրորդում աւուր առաւել ևս յարեցաւ 'ի սէր ընկերակցութեան նոցա . և ոչ կամէր թողուլ զնն մեկնիլ անտի : Դիւրաւ հաւանեցան նոքա մնալ անդ առ ժամանակ մի . և քաղաքալարութին սակաւ առ սակաւ փոխեցաւ յարձակութի վարուց և 'ի մտերմութիւն բարեկամութեան :

Արքայորդին զարդիս տեսանէր զամենայն ծառայս և զսպասահարկուս պալատին այնորիկ բերկրեալ և ուրախամիտ . երեսք բնութեան ժպտեալ ծիծաղէին շուրջ զտեղեաւն այնուիկ . սմին իրի սկսաւ նա յուսալ զի հնար լիցի ինքեան գտանել յայսմ վարի զայն երջանկուի , զոր որոնէր այսքան ըղձակաթ հետազօտութե .

սակայն յորժամ խնդակից լինէր չէ տանուտէ՞ռն  
 յարգս կալուածոց և ստացուածոց նորա՝ պա-  
 տասխանեաց նա հառաչմամբ, կայութիւն իմ  
 արդարեւ ունի զարտաքին երեւոյթ երջանկուէ՛ն,  
 սակայն երեւոյթքն են անհաստատ և պատրոդա-  
 կան : Յաջողութիւն և բարեբաղդութիւն իմ  
 արկանեն զկեանս իմ՝ ՚ի վտանգ չարեաց և մահ-  
 ուան . միաչայն Եգիպտոսի է ոխերիմ թշա-  
 վի իմ . և թշամութի նորա է վանս ոչ այլոյ  
 կրիք պատճառի, եթէ ոչ վանս բազմապատիկ  
 հարստութեան իմոյ, և վն մեծի սիրոյ և յար-  
 գութեանն որով ժողովուրդքն պատուեալ մե-  
 ծարեն զանուն իշխանուէ իմոյ : Իշխանք երկ-  
 րի իմոյ մինչև ցայս օր պաշտպանութի պահ-  
 տանեալ են զիս ՚ի վնասակարուէ և ՚ի բռնա-  
 ւորութի նորա . բայց սակայն՝ որովհետև բա-  
 բերարութիւն մեծամեծաց է անհաստատ, չգի-  
 տեմ թէ զիարդ մութանակի պաշտպանք և  
 օգնականք իմ՝ հաւանեցին առ ՚ի կողոպտել  
 զինչս և զստացուածս իմ և բաժանել զայնո-  
 սի ընդ միաչային Եգիպտոսի : Առաքեալ է  
 իմ զգանձս իմ՝ յերկիր մի հեռաւոր . և ՚ի լը-  
 սել իմ զտաշինն զուր խառութի, իսկ և  
 իսկ թողեալ զտեղի բնակութեան իմոյ՝ գնացից  
 առ ՚ի սպաստան անկանիլ յերկիրն յայն, ու-  
 բանօր գանձք իմ են պահպանեալ : Յայնժամ՝

Քչամիք իմ՝ յարձակեալ ՚ի բնակութիւն իմ՝  
գործեսցեն անդանօր զգործս շուայտութեան և  
անառակութեան . և վայելեսցեն զարգասիս և  
զպտուղս այգւոյն այնորիկ՝ զոր անկեալ էմ ձե-  
ռօք իմովք :

Աննեքեաննորս ՚ի միասին ողբային զմօտա-  
լուտ վտանգնորին , և աղօթէին առ տէր առ  
՚ի արգելել զաքտրանանորին . և դուստր ար-  
քային այնքան խառլեալ էր ՚ի շիտթութենէ  
տրամութեան և սրամտութեան , մինչ զի առ-  
անձնայառնա միայնակ ՚ի սենեակ իւր : Մնային  
նորս զայլ քանի մի աւուրս չէ ասպնջականին  
իւրեանց . և ապա հրաժարեալ ՚ի նմանէ՝ յուղի  
անկեալ գնային առ ՚ի գտանել զձգնաւորն :

### ԳԼՈՒԽ . ԻԱ :

Երջմիւթիւն Բայնալեցուրեան : Պարտութիւն ճգնաւորին :

Եկին նորս յերրորդում՝ աւուր առաջնոր-  
դութեամբ գիւղականաց ոմանց առ այրն ձգնա-  
ւորին . էր սա քարանձաւ մի առ կողմամբ լե-  
րին միոյ ստուերայելոյ յարմաւենեաց . տեղիս  
այս այնքան հեռի էր ՚ի հասանայն Նեղոսի ,  
մինչ զի ոչինչ լինէր լսելի բայց միայն մեղմա-



ձայն և միակերպ խոխոջումն ջրոյ, որ հանգու-  
ցանէր զմիտս մարդոյ 'ի տխրական մտածողու-  
ն և առաւել յորժամ հողմն շնչեալ 'ի մէջ  
տետրանց արմաւենեաց՝ խառնէր թէ ձայն խոխո-  
ջանաց ջրոյ : Աստակ մարդոյ այնքան կատար-  
ելագործեալ էր զառաջին զանհարթ և զանտաշ  
գործ բնութեան՝ մինչ զի քարանձաւն պարունա-  
կէր յինքեան զազգի ազգի ապարանս և զսե-  
նեակս պատշաճեալս ազգի ազգի պիտոյից . և  
յաճախակի մատուցանէր զօթեանս ճանապար-  
հորդաց՝ զորս մթութիւն գիշերոյ կամ սաստիկ  
սիւթորիկք ածէին անդամօր :

Ճգնաւորն բազմեալ կայր 'ի վերայ նստա-  
րանի միոյ առ մուտս քարանձաւին, առ 'ի  
վայելել զզովայուցիչ օդն երեկորին : 'Ի մի-  
ում կողման եդեալ կայր մատեան մի հանդերձ  
գրչօք և թղթով . և 'ի միւսում կողման դա-  
սեալ կային մեքենայական գործիք բազմատե-  
սակք : Մինչ մերձենային նոքա առ նա առանց  
տեսանելոյ 'ի նմանէ զնշան մտադրութեան կամ  
ակնածութեան, դուստր արքային ասաց՝ թէ նա  
ոչ ունէր զկերպարանս առն միոյ, որ գտեալ  
էր զճանապարհ երջանկութեան կամ կարէր ու-  
սուցանել զհնարս հասանելոյ առ այն :

Յորժամ եկին նոքա առաջի ճգնաւորին՝ ե-  
տուն նմա զողջոյն մեծարանաց և պատուոյ . և

նա դարձոյ զողջունատուութիւն նոյա այնպիսի եղանակաւ, որ ցուցանէր զնա սուլոր լինիլ ծիսից և սուլորութեց պալատականայ : Մանկունք իմ՝ սասայ ճգնաւորն՝ եթէ մոլորեալ էք դուք ՚ի ճանապարհորդութեան ձերում, յօժարակամ մատուցից ձեզ յայսմ գիշերի զայնպիսի դիւրութիւնս և զպիտոյս կենաց, զոր քարանձաւս այս կարող է ընձեռել ձեզ : Ունիմ ես աստ զամենայն զպիտոյս բնութե . և չէ պարտ ձեզ ակնունիլ առ ՚ի գտանել զգրգանս և զճամադամս յայրի միայնակեաց ճգնաւորի միոյ :

Օտարականքն մատուցին նմա զտրիտուր շէնորհակալութեանց իւրեանց . և մտեալ նոյա ՚ի քարանձաւն՝ հաճեցեալ էին մեծապէս ի գեղեցկութիւն, ընդ մաքրութիւն և ի կանոնաւորութի բնակութեան նորին : Ճգնաւորն եդ առաջի նոյա զմիս և զգինի, թէպէտ և ինքն սնանիւր միայն պտղովք և ջրով : Չորոյք բանից նորա էին զուարճալի առանց ունայնասիրութեան, և բարեպաշտ առանց յափշտակութե մտայ : Փութամակի շահեցաւ նա զսէր և ըզպատիւ կոչնականայ իւրոց . և դուստր արքային ցաւէր վասն շուտափոյթ քննութե և ըստ գտանայ իւրոց :

Ի վերջոյ իմլակ սկսաւ խօսիլ ընդ ճգնաւորին ըստ հետագայ օրինակի : Ոչ զարմանամ

ես այժմ, զի համբաւ բարեպաշտութեան քոյ է այսքան ընդ երկար տարածեալ. լուսք մեք 'ի Կայրօ զհամբաւ իմաստութեան քոյ. և եկաք աստանօր առ 'ի խնդրել 'ի քէն, զի բարեհաճութեամբ և մարդասիրութեամբ յուցցես այսմիկ պատանւոյ և պատանուհւոյ զքաջողէս եղանակ շարժեալն ինչ :

Նմա՛ որ կեայ բարեկայելու չ կենցաղավարութեամբ, պատասխանեաց ճգնաւորն իւրաքանչիւր վիճակ կենաց է՛ բարեկայելու չ. և չէ՛ հնար ինձ տալ զայլ կանոն ինչ վասն ընտրութեան վիճակաց, եթէ ոչ առ 'ի խորշիւ 'ի բաց յամենայն երևելի շարեաց : Խորշեացի նա կարի հաւաստեալ 'ի շարեաց՝ ասաց արքայորդին՝ որ նուիրեացէ զանձն իւր այնմիկ առանձնակեցութեան, զոր գովելի և հաճելի ընծայեցուցանես դու օրինակաւ անձին քոյ :

Արդարեւ՝ ասաց ճգնաւորն՝ կեցեալ է իմ յայսմ քարանձառի 'ի միայնակութեան յընթացս հնգետասան ամաց. սակայն ս'չ ցանկամ երբէք զի օրինակ անձին իմոյ յորդորեացէ զայլս հետեոյ ընիլ կենցաղավարութե ճրգնաւորի : 'ի ժամանակի աշխոյժ պատանեկուէ իմոյ ոճելի ես զպաշտօն զինուորութեան. և սակաւ առ սակաւ ամբարձեալ հասի 'ի գերագոյն աստիճան զինուորական աւագութե : Ուր

և որեալ է իմ 'ի լայնատարած երկիրս Տրամա-  
 նատարութեամբ բազմաթիւ զօրականաց իմոյ .  
 և տեսեալ է իմ զբազմապատիկ պատերազմունս  
 դաշտաց և զբազմապատիկ պաշարմունս քաղա-  
 քաց : Հուսկ ամենայնի տաղտկայայ 'ի պաշտօ-  
 նէ իմմէ , յորժամ տեսի զկրտսերագոյն զօրա-  
 գլուխ մի ամբարձեալ շնորհաբաշխութեամբ  
 տերութեան 'ի զինուորական աւագութի՛ գե-  
 բագոյն և ընտրելագոյն քան զաստիճան զօրս  
 պետութեան իմոյ , զոր ընդերկար և տարժա-  
 նակիր աշխատութե՛ էի ստայեալ : Եւ տեսա-  
 նելով զի զօրութիւն անձին իմոյ սկսեալ էր  
 նուազիլ և պակասիլ՝ եդի 'ի մտի իմում առ  
 'ի կնքել զկենցաղալարութիւն իմ 'ի վայրս  
 խաղաղութեան . քանզի գտեալ էի զաշխարհն  
 լի որոգայթիւք , դաւադրութեամբ , տարածայ-  
 նութեամբ և թշուառութեամբ : 'Ի ժամանակի  
 զինուորութե՛ իմոյ դէպ եղև ինձ երբեմն զեր-  
 ծանիլ 'ի հետապնդութենէ թշնամեաց իմոյ ,  
 ապաստան անկանելով յայս քարանձաւ առանձ-  
 նութեան . սմին իրի ընտրեցի ես զայս տեղի վն  
 վախճանական բնակութեան իմոյ : Ապայ ես 'ի  
 վարձու զարհեստաւորս առ 'ի բաժանել զայս  
 բնակարան 'ի պէտպէս սենեակս և յապարանս .  
 և ամբարեցի 'ի նոսա զամենայն ինչ՝ որոյ ունէի  
 անգամ՝ զպէտս կարօտութեան :

Սուղ ինչ զկնի առանձնանայոյ իմոյ 'ի խռո-  
 վայոյզ տեսարանայ Տի, բերկրէի զուար-  
 ձութեամբ իբրև զմըրկակոծ նաւաստի ոմն 'ի  
 մտանէլ իւր 'ի նաւահանգիստ խաղաղական .  
 իմդալով ընդ յանկարծական փոփոխութի խռո-  
 վութեան և խուճապանայ պատերազմի 'ի յան-  
 դորրութիւն և 'ի հանգիստ կենցաղաւարութե  
 միայնակեցի : Յորժամ հեշտութիւն նորութե  
 տեղի տուեալ չքայաւ , և առանձնութիւն իմ  
 երևեւր ինձ հնայեալ և սուլորական , անցու-  
 ցանէի զժամս իմ քննելով զտունկս և զբոյսս՝  
 որք աճէին 'ի հուլտի աստ , և զհանքանիւթս  
 և զմետաղս՝ զորս ժողովեալ հաւաքէի 'ի քա-  
 ըանց : Բայց սակայն հետազօտութիւնն և քըն-  
 նութիւնն այն եղեալ է այժմ անհամ և ան-  
 յախորժ միանգամայն և ձանձրալի : Առ ժամա-  
 նակ մի եղէ խռովեալ , ամբօսեալ և մոլեգ-  
 նեալ , միտք իմ շփոթեալ է 'ի հազարաց հա-  
 զարաց խռովութեանց տարակուսանայ և յու-  
 նայնութեանց երևակայութե . քանզի ո՛չ կարեմ  
 ես գտանել զզարաց հանգստեան և զուարճա-  
 լի զբօսանայ : Երբեմն զամօթի հարկանիմ  
 խորհել , զի ո՛չ կարէի ես ապահովել զանձն  
 իմ 'ի հետևելոյ մոլեկան գործոց , բայց միայն  
 հրաժարելով 'ի ներգործուէ աւաքիմական գոր-  
 ծոց , և այժմ սկսիմ տարակուսիլ զի առաւել



'ի սրտմտութենէ քան թէ 'ի բարեպաշտութի  
 յորդորեալ մղեցայ առ 'ի մտանել յայս վայր  
 առանձնակեցութի : Երեակայութի իմ շուայ-  
 տի և զեղխի 'ի տեսարանս յիմարութեան . և  
 եսողբամ զի կայսքան բազում օգուտս կորու-  
 սի հրաժարմամբ իմով յաշխարհէ , և զայսքան  
 սակաւս շահեցայ մտանելով յառանձնակեաց  
 վայրս քարանձախն : Յառանձնակեցութի աստ  
 եթէ զերծանիցիմ յօրինակայ մոլեկան և շա-  
 րագործ անձանց , կարօտիմ նոյնգունակ խրա-  
 տուց և զրուցատրութի առաքինեաց : Յընդ-  
 երկար ժամանակայ հետե բաղդատեալեմ ըզ-  
 մնասս ընդ օգտից ընկերակցութի . և եղեալ  
 եմ 'ի մօտի իմում դառնալ անդրէն 'ի գործս  
 աշխարհի 'ի վաղուեան աուր : Կենցաղալար-  
 ուի առն միայնակեցի եղիցի հաւաստեալ ապեր-  
 ջանիկ և թշուառական . բայց ոչ եղիցի հա-  
 վաստեալ բարեպաշտ և ջերմեռանդական :

Հետախոյզ և բարեխնդիր հիւրքն լուան  
 զբանս ճգնաւորին զարմայմամբ . և հիացեալ  
 էին մեծապէս ընդ դիտաւորութի մտաց նորա .  
 սակայն սակաւիկ մի լուռ և եթ կացեալ նոցա  
 ամենեցուն՝ հրաւրեցին զնա առ 'ի երթալ ու-  
 ղեկցութեամբ ընդ նոսա 'ի Կայրօ : Ճգնաւորն  
 ե.հան յերկրէ զբազում գանձս , զորս թագու-  
 ցեալ էր 'ի մէջ ժայռից . և 'ի միասին ընդ

կոչնակաց իւրոց չորսւ ՚ի քաղաքն • և յորժամ  
մերձ եղև նա յարուարձանս նորին՝ տեսանէր  
զայն ՚ի հեռուստ բերկրութեւ սրտի և յախըշ-  
տակութեամբ մտաց •

### ԳԼՈՒԽ • ԻԲ •

Երջանիւ-բիւն քնաց՝ շուր անշուշտն ու հաժմայն քնուէ :

Հասակա երթայր յաճախակի ՚ի ժողո-  
վարան մի ուսեալ արանց , որք հանդիպէին  
միմեանց ՚ի պայմանադրեալ ժամանակս առ ՚ի  
յայտնել միմեանց զխորհուրդս մտաց իւրեանց  
և ՚ի բողոքատել զկարծիս իւրեանց : Վարքնց  
էր սակաւիկ մի բիրտ և շինական , սակայն զը-  
րույատրութիւնք և բանք նոցա էին օգտակար  
միանգամայն և խրատական . վիճաբանութիւնք  
նոցա էին սուր և զօրաւոր , թէպէտ և եր-  
բեմն եղանէին կարի սաստիկ և բռնական . վի-  
ճաբանքն յաճախակի շարունակէին զսաստիկ  
հակաճառութիւնս իւրեանց , մինչև ոչ որ ՚ի  
նոցանէ կարէր խորհել թէ յինչ ինդրոյ վե-  
րայ սկսան նոքա վիճաբանել : Ստալանք ինչ  
գրեթէ հասորակ էր ՚ի միջի նոցա . իւրաքան-  
չիւր որ յանկայր ձեռնարկութեամբ իւրով քա-

ըող լինիլ այլոց . և իւրոքան չիւր ոք հաճէր  
առ . ՚ի տեսանել զհանձար և զգիտութի այլոց  
անարգութեամբ արհամարհեալ :

Յայսիկ ժողովարանի Հռաստելաս պատմէր  
զխօսակցութիւն իւր ընդ ճգնաւորին . և խոս-  
տովանէր զզարմայումն իւր՝ որով հիացեալ էր  
՚ի տեսանել զնա դարովել զայնպիսի եղանակ  
կենցաղաւարութեան , զոր նա այսքան խոհական  
խորհրդածութեամբ ընտրեալ էր վասն իւր ,  
և որում հետեւեալ էր այսքան արժանալայել  
գովութեամբ : ՚ի վերայ այս անարկայի կարի  
տարբեր էին խոկմունք և կարծիք ունկնդրաց :  
Ոմանք կարծէին զի նա իրաւամբ պատահաւել  
էր զսնձն իւր յիմարական ընտրողութիւն իւրով ,  
գոլով դատապարտեալ ՚ի մշտնջենական յարա-  
տեութիւն և ՚ի համբերութիւն : Մի ՚ի մա-  
տալատունի պատանեկաց ՚ի միջի նոցա մեծաւ  
սաստկութիւն արտասանեաց զնա լինիլ այր ոմն  
կեղծաւոր : Ոմանք ասէին թէ ընկերակցութի  
մարդկան ունի զիրաւունս ՚ի վերայ աշխատանաց  
և վաստակոց անհատից . և համարէին զմիայ-  
նակեցութիւնն իբրև զհրաժարումն ՚ի պարտա-  
կանութեանց կենցաղոյս : Ոմանք հաւանէին յո-  
ժարական , զի գոյր ժամանակ մի՛ յորժամ իրա-  
ւունք հասարակաց վճարեալ կատարէին , և  
յորժամ այր ոք կարէր արժանագէտ հեռա-

ցուցանել զինքն յաշխարհէ , առ 'ի քննել  
 զվարս հենաց իւրոյ յառանձնութեան և մաք-  
 րել զսիրտ իւր 'ի ճգնութեան : Այր ոմն՝ որ  
 երևէր առաւել ներգործեալ և շարժեալ 'ի  
 պատմութենէ ճգնաւորին քան զայլս՝ ասաց զի  
 ճգնաւորն զինի քանի ամաց գնասցէ վերստին  
 'ի քարանձաւ միայնակեցութեան իւրոյ , և ե-  
 թէ ամօթ ոչ խափանեացէ զնա , կամ մահ ոչ  
 քարձցէ զնա 'ի միջոյ , անգամ մի ևս դարձցի  
 նա 'ի խրճիթէ միայնակեցութեան իւրոյ առ աշ-  
 խարհ : Վասն զի յոյս երջանկութե՝ ասաց նա  
 այնպէս ուժգնակի տպաւորեալ է 'ի միտս նր՝  
 մինչ զի երկարագոյն փորձառութիւնն չկարէ  
 անգամ եղձանել զայն 'ի տախտակաց մտաց նր :  
 Որ ինչ և լինիցի այժմեան կայութիւն մեր ,  
 զգամք մեք զտառապանս նորա և պարտաւորել  
 լինիմք առ 'ի խոստովանիլ զթշուառութիւնն  
 բայց տակայն յորժամ նոյն կայութիւն վերստին  
 հեռանայ 'ի մէնջ՝ երևակայութիւնն նկարել պատ-  
 կերացուցանէ զայն մտաց մերոյ ցանկալի և եր-  
 ջանիկ : Սակայն անտարակոյս եկեացէ յամսնակն  
 այն՝ յորժամ ցանկութիւնն այլ ոչ ևս եղիցի  
 տանջանք մտաց մերոյ , և ոչ ոք եղիցի ասերջա-  
 նիկ և թշուառական , բայց միայն սխալանօք  
 յանցանաց իւրոյ :

Արձակս այս՝ ասաց իմաստասէր ոմն՝ որ ան-

ապեալ էր բանից նորա մեծաւ. անհամբերութեան  
 է այժմեան կայութիւն իմաստուն առն միայն :  
 Արդէն հասեալ է ժամանակն՝ յորժամ ոչ ոք  
 լինի թշուառացեալ բայց միայն սխալանօք յան-  
 յամայ իւրոց : Չիք ինչ առաւել ընդունայն և  
 անօգուտ, քան թէ որոնմամբ խնդրել գերջան-  
 կութիւն. զոր բնութիւնն եղեալ է՝ ՚ի կարո-  
 ղութեան մերում : Ճանապարհ լինելոյ երջա-  
 նիկ է կեալ համեմատ ընթացից բնութեան :  
 հպատակելով այնմիկ ընդհանրական և անսխա-  
 փոխելի օրինայ՝ որ տպաւորեալ կայ ՚ի սիրտ  
 իւրաքանչիւր մարդոյ յառաջագոյն, այս օրէնք  
 ոչ է դրոշմեալ ՚ի տախտակս սրտի յաւան-  
 դութեանց և ՚ի խրատուց, այլ քանդակեալ է  
 ՚ի նոյն ՚ի վերին տեսչութիւն. ոչ է տպաւորեալ  
 ՚ի միտս մեր յուսմանց գրոց, այլ հեղեալ է ՚ի  
 մեզ ՚ի ծննդէնէ մերմէ : Որ միանգամ կենցա-  
 ղաւարի յաշխարհի համեմատ ընթացից բնութիւն,  
 զոչինչ վիշտս կրեսցէ ՚ի պատրանայ յուսոյ :  
 կամ զոչինչ վնասս կրեսցէ ՚ի թախանձանայ  
 զանկութեան. նա յինքն ընկալցի և ՚ի բաց ձը-  
 գեսցէ յինքենէ զիրս հաւասարութեան բնաւորութե-  
 իւրոյ. և դիւրաւ վարեսցէ զկեանս իւր կամ  
 վիշտս կրեսցէ ին որում պատճառ իրաց փոփո-  
 խակի կարգեսցէ զհամագամունս կենաց նորա :  
 Ոմանց հնար է զբօսեցուցանել զինքեանս ճար-



տարարուեալստ սահմանօք կամ մթին ձեռնարկուքք : Ուստի նոքա լինիլ իմաստուն դիւրագոյն հնարիւք . նկատեսցեն նոքա զեղն անտառին , և զքաղցրաձայն թռչնիկն ծառախիտ դաշտայ . քննեսցեն նոքա զկեանս անասնոյ , զորոյ զկանս և զյօժարութիս կանոնաորէ ազգումն բնութեան . հնազանդին նոքա առաջնորդի իւրեանոյ , և են երջանիկ : Սին իրի արժան է մեզ 'ի վերջոյ դադարիլ 'ի վիճաբանելոյ և ուսանիլ առ 'ի կենցաղաւարիլ յաշխարհի . արժան է մեզ 'ի բայ ձգել 'ի մէջ զճանբուի խրատոյ , զորս ոչ հասկանան նոքա՝ որք արտասանեն զնոսա այսքան պարճանօք և անսխառութ . և տպաւորեսցուք 'ի միտս մեր զայս պարզ և դիւրիմայ բան , զի զարտուղութիւնն 'ի բնութէ է զարտուղութի յերջանկութենէ :

Յորժամ նա խօսեցաւ զայս բան՝ հայեցաւ շուրջանակի քաղցրահայեայ դիմօք , ճանաչելով և վայելելով զսիրտիանս բարեբարութիւրոյ : Տէր՝ սոսայ արքայորդին մեծաւ հեղուք՝ որով հետեւ ես իբրև զայս 'ի մարդկանէ ցանկամ գտանել զերջանկութիւն , մեծաւ մտադրութիւնն զիւր եղէ բանից և վարդադետութեց քոյ . ոչ տարակուսանօք եկեղբայիմ զճշմարտութենէ առաջարկութի միոյ , զոր այսպիսի գիտնական այր մի աներկիւղ համարձակութեամբ առաջի է

արարեալ : ՏՈՒՐ ինչ միայն գիտել զզիարդն  
կենցաղաւարելոյ համեմատ բնութի :  
Յորժամ տեսանեմ զպատանիս այսպէս խո-

նարհամիտս և այսպէս ուսումնասէրս՝ պատաս-  
խանեաց իմաստասէրն՝ ոչ հրաժարեցայց ՚ի տա-  
լոյ նոյա զայնպիսի ծանօթութիւնս , զորս ստա-  
յեալ եմ ընդերկար և տարժանակիր ուսմամբք :  
Առ ՚ի կենցաղաւարիւ համեմատ բնութեան ,  
է՛ վարիւլ յարժամ պատշաճաւոր յարաբերու-  
թեամբ առ յարմարութիւն՝ ծագեալ յառ-ընչութեց  
և յորակութեց պատճառաց և ներգործութեց .  
զուգընթանալ ընդ մեծագոյն և անփոփոխ գա-  
ղափարի ընդհանրական երջանկութիւն . և գոր-  
ծակից լինիլ թէ հասարակ հանգամանաց և ըն-  
թացից այժմեան դրութեան իրաց :

Արքայորդին իսկ և իսկ ծանեալ զի այրս այս  
էր մի յիմաստասիրացն յայնոյիկ , զորոյ զբանս  
սակաւ կարէր իմանալ , քանզի ունկնդիր էր  
եղեալ նմա ընդերկար : Սմին իրի խոնարհեցոյց  
զգլուխ իւր և մնաց անխօս . և իմաստասէրն  
համարելով զնա շատացեալ բաւարարութիւն , և  
զայլս յարթահարեալ ՚ի ձեռնարկութեց իւր-  
ոյ՝ յարեաւ և մեկնեցաւ անտի հայեցումովք  
այնպիսի առն միոյ՝ որ գործակից էր եղեալ թէ  
այժմեան դրութեան իրաց աշխարհի :

## ԳԼՈՒԽ . ԻԳ .

Արտոյորդին և Կոյր Զորմ Բախնէն 'ի Տէլ Իրեանց ԸՆՏ  
Գրծ Կիրոշուհեան օ

Հաաստելայ դարձաւ անդրէն 'ի տուն' լին  
խոկմամբ և մտածութեամբք, տարակուսելով 'ի  
միտս իւր թէ զիարդ վարեսցէ զեղանակ ապա-  
գայ կենաց իւրոյ : Եգիտ նա զուսեալս և զա-  
նուսս հաասարագէս անտեղեակս ճանապարհին  
երջանկութեան . բայց սակայն՝ ըստ որում տա-  
կաւին ոչ էր հասեալ նա 'ի հասակ ծերութե՛  
հրապուրէր զանձն իւր յուսողութեամբ զի  
ունէր տակաւին զժամանակ մնայեալ վն առա-  
ւել փորձառութեց և վասն առաւել հարցախոր-  
ձութեանց : Յայտնեաց նա Իմլակայ զդիտողու-  
թիւնս և զտարակուսանս իւր . սակայն ընկալա-  
'ի նմանէ 'ի պատասխանի զնոր տարակուսանս և  
զնոր դիտողութիւնս , որք ոչ ետուն նմա զմխի-  
թարութիւն : Սմին իրի խօսակցէր նա առա-  
ւել յաճախակի և համարձակ ընդ քեռն իւր-  
ում , որ տակաւին ունէր զնոյն յոյս և զակն-  
կալութիւն ընդ Հաաստելայ . թէպէտ և մինչ  
յարդ ջանք հետազօտութեան նորա 'ի դերե-  
էին ելեալ , սակայն քոյր նորա յոյս տայր նմա  
ասելով , զի 'ի վերջոյ խուզարկութիբ իւր 'ի

Լնդիր երջանկութեան պսակեսցին յաշողութիւն :  
 Մինչ ցարդ՝ ասաց Նեկայա՝ սակաւ ծանօ-  
 թութիւն եմք ստացեալ զիրաց աշխարհի . ո՛չ  
 եմք հասեալ տակաւին ՚ի մեծութիւն ինչ կամ .  
 ՚ի ցածութիւն : Յերկրի մերում՝ թէպէտ ու-  
 նէաք զիրաւունս արքայութեան , սակայն զուրիշ  
 էաք յիշխանութենէ նորին . և յայսմ երկրի  
 ո՛չ եմք տեսեալ տակաւին զգաղտնի տեղիս տը-  
 նային անդորրութեան և միաբանութիւն : Իմլակ  
 ո՛չ միաբանի ընդ մեզ ՚ի հետազօտութե մե-  
 լում , զի մի ՚ի ժամանակի միում գոյութիւնս  
 սխալեալ : Բաժանեսցի՛ք մեք զաւարկայ հե-  
 տազօտութեան մերոյ ՚ի մէջ մեր . դու հետա-  
 մուտ լիցիս առ ՚ի իմանալ զգաղտնիս շքեղութե  
 պալատականաց , և ես հետամուտ եղէց առ ՚ի  
 իմանալ գտութիւնս ցածագոյն վիճակայ : Գու-  
 ցէ հրամանատարութիւն և իշխանութիւն լինի-  
 ցին գերագոյն բարիք , քանզի մատուցանեն նոքա  
 զբազում դիպուկութիւնս առնելոյ զբարեգոր-  
 ծութիւն . կամ գուցէ երջանկութիւն այն՝ զոք  
 աշխարհս այս կարէ պարգևել՝ գտանիցի ՚ի  
 շարիւղոր բնակարանս միջասահման վիճակայ .  
 դուրով նք կարի ցած վասն մեծամեծ խորհր-  
 դոց , և կարի բարձր վասն չքաւորութեան և  
 կարօտութեան :

## ԳԼՈՒԽ • ԻԴ •

Արտայրդէն ասէ շէրջնիւմբէն գերագոյն վեճուոյն ։

Հաստեղատ գովեաց զդիտաւորուի քեռն իւրոյ , և յերկրորդում աւուր երեւեցաւ պայծառաշուք սպասահարկուօք ՚ի պալատ փաշային ։ Իսկ և իսկ պատուեալ մեծարեցին զնա վն շքեղութեան նորին . և ընկալան զնա սիրով ի բարև զի շխան ոմն՝ որոյ հետազօտութիւնն անեալ էր զնա անդամօր ՚ի հեռաւոր երկրէ , առ ՚ի ունիլ զմտերիմ բարեկամութիւն ընդ մեծամեծ պաշտօնատարաց , և յաճխակի խօսակցուի առնել ընդ մեծազօր փաշային ։

Չառաջինն Հաստեղատ յօժարէր հաւատալ , զի այրն այն պարտի լինիլ շատացեալ է վիճակ անձին իւրոյ , առ որ ամենեքեան մերձենային պատուով մեծարանաց , և ունին մատուցանէին բանից նորա հնազանդութեամբ . և ոչ այսչափ միայն՝ այլ և ունէր նա զկարողուի առ ՚ի տարածել զհրամանս և զհրովարտակա իւր ընդ թագաւորութի միողջոյն ։ Չիք ինչ բերկրանք՝ ասաց նա՝ համեմատ բերկրուեն այնմիկ , որով ի շխան ոք զգայ միանգամայն զմխութարութիւն հազարաց հազարաց անձանց՝ երջանիկ եղելոյ խոհական կառաւարութի նորին ։



Մակայն՝ որովհետև ըստ օրինաց ստորակարգուեալս  
 այս գերագոյն բերկրանք կարէ լինիլ յազգի  
 միում վիճակ առն միայնոյ, արդարև իրաւայի  
 իմն է խորհիլ, զի գոյ բերկրութիւն ինչ ա-  
 ռաւել հաճելի ժողովրդեան և դիւրամատոյց  
 մարդկան, և զի հազիւ ուրեմն բիւրաւոր ժո-  
 դովուրդք ենթակայ եղիցին կանայ միայնակ առն  
 միոյ, առ ՚ի միայն ընու զսեպհական սիրտ նք  
 անձառելի բերկրութեամբ ։

Այսոքիկ խոկմունք յարժամ վարանէին  
 զմիտս նորա, և նա ոչ կարէր գտանել զլու-  
 ծումն տարակուսանայ իւրոյ ։ Բայց սակայն՝  
 իբրև նա եգիտ զառաւել մտերմութի ՚ի ձեռն  
 ընծայից և քաղաքալարուեց, իսկ և իսկ ծա-  
 նետ զի գրծթէ ամենայն գերագոյն պաշտօնա-  
 տարք տտէին զայլ ստորին պաշտօնատարս, և  
 ատեալ լինէին ՚ի նոցանէ, և զի կեանք նոցա  
 անընդհատ ենթակայ էր դաւադրութեանց՝ որք  
 երբեմն ՚ի յայտ գային, դաւաճանուեց՝ յորոյ  
 երբեմն ճողոպրէին նոքա զանձինս իւրեանց, և  
 անդադար խառովութեանց և դժբողութեանց ։  
 Բազումք ՚ի նոցանէ՝ որք կանգնէին ՚ի սպասու-  
 առածի միաշային՝ առաքեալ էին անդր ՚ի դը-  
 րանէն առ ՚ի զգուշանալ վարուց նորա, և ազգ-  
 առնել դրանն զամենայն զհանգամանս գործոյ  
 նորա, յիւրաքանչիւրոյ բերանոյ ելանէր քրթ-

մնջիւն ստգտանայ. և իւրաքանչիւր ուրուք աչք  
որոնէր զյանցանս սխալանայ :

Հուսկ ամենայնի թուղթք ժամանեալ 'ի դը-  
րանէն՝ յետս կոչեցին զփաշայն . արքունի սպա-  
սաւորքն կապեալ զնա 'ի շղթայս երկաթի՝ տա-  
րան կապանօք 'ի կոստանդնուպօլիս . և անուն  
նորա այլ ոչ ևս յիշեցաւ 'ի վերջոյ :

Չի՞նչ պարտիմք մեք խորհիլ այժմ՝ զարտօ-  
նուէց ի շխանուէ՝ ասաց Հուսսեղաս ցբոյր իւր .  
ո՞չ ապաքէն յառաջ գայ անտի ներգործութի՛ն  
ինչ օգտաւէտ . կամ ո՞չ ապաքէն ստորակարգել  
մեծութիւն միայն է վտանգաւոր , և գերագոյն իշ-  
խանութիւն է ապահով և փառաւոր : Իցէ՞ ար-  
դեօք Սուլթանն միայնակ երջանիկ 'ի սահմանս  
տէրութե իւրոյ . կամ իցէ՞ նա արդեօք ենթակայ  
տանջանայ կասկածանայ , և երկիւղի թշնամեայ :

Չկնի սակաւուց երկրորդ փաշայն՝ որ յա-  
ջորդեալ էր վերոյասացեալ շղթայակապ փա-  
շային՝ ընկեցաւ յիշխանութենէ իւրմէ հրամա-  
նաւ արքային : Սուլթանն այն՝ որ ամբարձեալ  
էր զնա յայն գերագոյն աստիճան կուսակալուէ՝  
խողխողեալ սպանաւ 'ի թիկնապահ զօրաց իւ-  
րոյ՝ Էնիլ-ւել կոչելոյ . և յաջորդ արքայութեան  
նորա ունէր զայլ և այլ նպատակս և զայլ և  
այլ սիրականս և պաշտօնեայս :

## ԳԼՈՒԽ • ԻԵ :

Դասարար արտայնէ հեփաճուսի վնի ինչրոյ իւրում առաւ  
 ւել շնորհք տուն յաշուղը-բեւոճք :

Նեկայա ՚ի նմին Ժամու ներածէր զինքն  
 ՚ի ծանօթութիւն բազմապատիկ գերդաստա-  
 նայ . քանզի սակաւ գրունք գոն յաշխարհի՝  
 յորս ազատականութիւնն կցեալ ընդ բարեբա-  
 րոյութեան՝ չկարէ գտանել զմուտ : Դաստերք  
 բազմաց գերդաստանայ էին զուարթերես և  
 զուարճալի . սակայն Նեկայա կարի ընդերկար  
 ստորեալ էր զըուցատրութեանց իմլակայ և  
 եղբօր իւրոյ . և ոչ կարէր բերկրիլ չէ մանկա-  
 կան ունայնաբանութիւնն նց , կամ ընդ ճառատանս  
 շաղակրատանայ : Տեսանէր նա զի խորհուրդք  
 մտայ նոցա էին նուաստախոհ . ցանկութիւնք  
 սրտի նոցա էին ցածուն և անարգ . բերկրուիք  
 նոցա էին յաճախակի կեղծ և արուեստակեալ :  
 Հեշտութիւնք նոցա էին անարգ նման վիճակայ  
 նոցա . և ոչ կարէին նոքա պահպանել զնոսա  
 անարատ և ամբիծ , այլ դառնայուցանէին զնմ  
 յիսնաքի հակառակութեամբք և անարժան նա-  
 խանձաւորութեամբք : Յարաժամ նախանձէին  
 նոքա ՚ի վերայ գեղեցկութեան իրերայ . զայն-  
 պիսի բնական գերազանցութիւն իմա՝ յոր վիշոք

և անձկութիւնք արտի ջկարեն յաւելուլ ինչ և բանք շարախօսութե ջկարեն բառնալ ինչ ՚ի նմանէ : Բազումք ՚ի նոցանէ սիրահար էին ընդ անմիտ և չե ժամալաճառ անձինս նմանեալս ինքեանց . և բազումք ևս կարծէին զի էին սիրահար , բայց էին նոքա արդարև անմիտ և դատարկակեաց միայն : Սէր նոցա ոչ էր հաստատեալ յիմաստութեան կամ յառաքինութե . սին իրի և յաճախակի կատարած նորա էր տառապանք և վիշտք մտաց : Բայց և այնպէ տրտմութիւն նոցա նման բերկրութեան նոցին էր անկայուն և վաղանցիկ . ամենայն ինչ տատանէր ՚ի միտս նոցա՝ անխառն գոլով ընդ իրս անցեալս և ապառնիս . այնպէս զի մի ցանկութի դիւրաւ տեղի տայր միւսում ցանկութեան , ըստ որում երկրորդ քար արկեալ ՚ի ջուր՝ ջնջէ և եղծանէ զպտոյտս առաջնոյ քարին :

Նեկայս խաղայր ընդ այսոցիկ օրիորդաց իբրև ընդ անմխաս կենդանեաց . և տեսանէր զի հաճեցեալ էին նոքա ընդ բարերարութի իւր , բայց տաղտկացեալ էին յընկերակցութի իւրմէ :

Սակայն առարկայ իւր էր քննել զվիճակս նոցա առաւել խնամով և նրբութեամբ մտայ . և քաղցրաբարոյութիւն իւր դիւրաւ համոզեաց զսիրտս նոցա ուռուցեալս տրտմութե , առ ՚ի բանալ յականջս իւր զգաղտնիս նոցա . և նոքա՝

դորս յոյսն հրապուրէր և բարեբաղդութիւնն բերկրեցուցանէր՝ յաճախակի շողոքորթէին զնա առ ՚ի մասնակից լինիլ հեշտութեց իւրեանց ։

Դուստր արքային և եղբայր նորին հասարակօրէն հանդիպէին միմեանց յերեկոյին յառանձնաւոր ամարանոցի միում առ եզերք Նեղոսի, և պատմէին միմեանց զդիպուածս իւրաքանչիւր աւուր ։ Մինչ նստեալ կային նոքա ՚ի միասին՝ դուստր արքային էարկ զաչս իւր ՚ի վր գետոյն, որ պարայածեալ հոսէր զառաջեալ նորա ։ Պատասխանեա՛ ասայ նա՛ ուլ մեծազօր հայրդ ջրոց, որ թափես զհեղեղս քոյ ՚ի մէջ ութսուն բաղմաթիւ աղգաց, պատասխանեա՛ աղաղակի և բանից արերամնաց դստեր բնածին թագաւորին քոյ ։ Ասա՛ ինձ թէ արդեօք առողանես դու ընդ ամենայն ընթացս քոյ զմիայնակ բնակութիւն մի, յորմէ ո՛չ լսես զքրթմնջիւն և և զգանգատս տրտնջման ։

Ապա ուրեմն՝ ասայ Հռասսելաս՝ ո՛չ ես դու յաջողակ գտեալ ՚ի հետազօտութե՛ քում ՚ի տունս հասարակ անձանց, քան թէ ես ՚ի բնակարանս մեծամեծաց և պալատականաց ։ Յորմէ հետէ բաժանեցաք ՚ի միջի մեր զառարկայս հետազօտութեան՝ ասայ Նեկայա՛ կարայեալ եմ մտերմութե՛ ծանօթանալ բաղմայ գերդաստանաց, յորս գոյր գեղեցիկ երևոյթ յաջողութեան և



խաղաղութեան . և ո՛չ եմ գտեալ զտուն մի միայն՝ ուրանօր ո՛չ յաճախէր խռովութիւն ինչ առ ՚ի բառնալ զանդորրութիւն բնակչաց նորին :

Ո՛չ խնդրեցի զդիւրութիւն ՚ի մէջ աղքատաց , քանզի հաւաստեալ գիտէի զի չէր հնար գտանել զայն ՚ի միջի նոցա : Սակայն տեսեալ էի իմ զբազում աղքատս , զորս կարծէի կեալ փարթամութեամբ և առատութեամբ : ՚ի մեծադիր և ՚ի մարդաշատ քաղաքս աղքատութիւնս զկարի յոյժ տարբեր երևոյթս . յաճախակի թագուցեալ է այն ՚ի շքեղութեան , և բազում անգամ ծածկեալ է ՚ի շռայլութեան : Իննամբ բազմաց բազմաց ՚ի մարդկանէ է առ ՚ի ծածկել զչքաւորութիւն իւրեանց յայլոց . պահպանեն նոքա զինքեանս առօրեայ հնարիւք , և և ծախեն զամենայն օր յումպէտս առ ՚ի հայթհայթել զպիտոյս վաղուեան աւուր :

Բայց սակայն այս էր թշուառութիւն մի յաճախադէպ . այլ ես տեսանէի զայն սակաւ տրտմութիւն , քանզի կարօղ էի փարատել զայն : Սակայն ոմանք ո՛չ կամեցան ընդունիլ զբարերարութիւնս իմ , առաւել զայրացեալ է շուտափոյթ երազութիւնս իմ՝ որով յայտնի կայրօյանէի զկարօտութիւնս նոցա , քան թէ հաճեցեալ ընդ պատրաստական յօժարութիւն իմ՝ որով կամէի օգնել կարօտութեանց նոցա . և ու-

մանք՝ որոյ կարօտութիւնքն պարտաւորելին զնմ  
լնդունիլ զբարերարութիւն իմ՝ ոչ երբէք կա-  
րելին թողուլ զբարերար իւրեանց : Սակայն և  
այնպէս բազումք եղեն երախտագէտ անկեղծ  
գոհունակութեամբ, առանց ցուցանելոյ զպար-  
ծանս երախտագիտութեան, կամ զյոյս ընդու-  
նելոյ զայլ Հնորհս բարերարութեան :

### ԳԼՈՒԽ . ԻԶ .

Նէլայա շարունակէ զդիտողութեան իւր ՚ի վերայ առ  
առնչնայն ինչայ :

Դուստր արքային տեսանելով զեղբայր իւր  
յօժարակամ պատրաստեալ առ ՚ի ունկնդիր  
լինիլ բանից իւրոյ՝ շարունակեաց զպատմու-  
թիւն իւր :

Յայնպիսի գերդաստանս՝ ուրանօր գտանի  
կամ ոչ գտանի չքաւորութիւն՝ գոյ յաճախակի  
տարաձայնութիւն : Ըստ բանից իմլակայ եթէ  
Թագաւորութի մի լինիցի գերդաստան մի մեծ՝  
ուրեմն գերդաստան մի նոյնգունակ է՝ Թագա-  
ւորութիւն մի փոքր՝ Տերձեալ ՚ի խառվուրդից և  
մատնեալ յաճախական վրդովմանց և ապստամ-  
բութից : Անկիրթ դիտող ոմն ակնունի տեսանել

զ յարտե և զհաւասար սէր կաթողութեան ՚ի մէջ ծնողայ և որդւոյ . բայց սակայն այս խանդակաթութի սիրոյ հազիւ երբեք տեւէ անդրքան զամս մանկութեան . ՚ի սակաւ ժամանակի մանկունք եղանին նախանձորդ ծնողայ իւրեանց : Ծնողքն մեղմեալ ճնշեն զչնորհս երախտեայ իւրեանց նախատանօք և կշտամբանօք . և մանկունքն ցածուցանեն զերախտագիտութի իւրեանց նախանձու և ատելութեամբ :

Ծնողք և մանկունք հազիւ ուրեմն վարին թ միմեանց միաբանութի և համախոհութի . իւրաքանչիւր մանուկ շանահար լինի իւրացուցանել զյարգ և զսէր խանդաղատանայ ծնողայ իւրոյ . և ծնողքն նուազագոյն փորձութի մատենն զմիմեանս մանկանց իւրեանց . այսպէս ոմանք դնեն զյոյս վստահութի իւրեանց ՚ի սէր հօր , և ոմանք ապաւինելով վստահին ՚ի սէր մօր . և սակաւ առ սակաւ տուն նոցա ընանի գժտութեամբք և մեքենայիւք :

Կարծիք մանկանց և ծնողայ՝ զմատաղատունկ անձանց ասեմ և զճերտունեայ , են բնականապէս միմեանց հակառակք , ՚ի պատճառս ներհակական ներգործութեանց յուսոյ և յուսահատութեան , ակնկալութեան և փորձառութեան առանց յանցանայ կամ յիմարութեան ՚ի կողմանէ երկաքանչիւրոյ : Երանգք կենաց յաշ-

խոյժ պատանեկութեան և ՚ի ծաղկեալ ծերութեան  
 երևին տարբերք , ըստ որում երեսք բնութեան  
 յեղանակս գարնան և ձմեռան : Եւ զի՛արդ Տնար  
 է մանկանց հաւատ ընծայել բանից ծնողաց իւր-  
 եանց , զորս իւրեանց իսկ աչքն ցուցանեն լի-  
 նիւ սուտ և կեղծեալ :

Սակաւ ծնողք այնպիսի եղանակաւ վարին ,  
 մինչ զօրացուցանել օրինակաւ վարուց և կե-  
 նաց իւրեանց զհաստատուն սկզբունս ճշմար-  
 տութի ՚ի միտս մանկանց իւրեանց : Ծերունին  
 հաւատայ բոլորովին յամբ հնարագիտութեան  
 և աստիճանաւոր յառաջադիմութեան . պատու-  
 նին ակնունի յառաջ մղել զգնացս իւր յօժա-  
 րութեամբ կամաց իւրոց , ժրութեամբ և գա-  
 հալիժութեամբ : Ծերունին խնամ տանի ձու-  
 խութեան , և պատանին պատուեալ մեծարե-  
 զգործս առաքինութեան : Ծերունին նծացու-  
 ցանէ զխոհեմութիւն . պատանին հաւատայ զանձն  
 իւր մեծարտութեան և դիպուածոց բաղդի :  
 Պատանին ո՛չ խորհեալ ՚ի միտս իւր զչարիս՝  
 կարծէ զի այլք ևս ո՛չ խորհին զչարիս ՚ի  
 միտս իւրեանց . և այսորիկ աղագաւ վարի նա  
 յամենայնի պարզմտութեամբ և սրբութեամբ սրտի .  
 սակայն հայրնք կրեալ արդէն զգրկանս խոր-  
 դաւանաց և նենգութեան՝ ստիպի կասկածել  
 զդաւադրութենէ , և բազում անգամ հրա-

պուրեալ լինի առ 'ի վարիւլ խորամանկութեւ  
Ծերութիւն հայի բարկութեամբ 'ի յանդգնուի  
պատանեկութեան . և պատանեկուին հայի ար-  
համարհութեամբ յանչափ զգուշուի ձերուէ :  
Այսպէս ծնողք և մանկունք ըստ մեծագոյն մա-  
սին կենցաղին առ 'ի սիրել զմիմեանս նուազա-  
գոյն սիրելութեամբ . և եթէ նոքա՝ զորս բը-  
նուին այսպիսի մերձաւորութեամբ միաւորեալ  
է ընդ միմեանս՝ են տանջանք իրերայ , ապա  
ուրեմն ո՛ր խնդրեսցուք մեք զսէր խանդաղա-  
տանայ և զմխիթարութիւն :

Արդարեւ՝ ասաց արքայորդին՝ տարաբաղդ ես  
եղեալ դու յընտրողութեան ծանօթութե քոյ .  
ոչ յօժարիմ հաւատալ զի բնական հարկաւոր-  
ութիւն այսպէս խափանէ զօգուտս մերձաւոր-  
բագոյն և կաթոգին ազգականայ :

Տնային անհամաձայնութիւն՝ պատասխանեց Նե-  
կայա՝ ոչ է վտանգաւ և հարկաւորաց կարեւոր-  
բայց և այնպէս չէ՛ հնար դիւրաւ բառնալ զայն  
'ի միջոյ : Հազիւ ուրեմն տեսանեմք զդերդաս-  
տան մի լինիլ բողորովին առաքինի . առաքի-  
նիքն և մոլիքն ոչ կարեն համաձայնիլ ընդ մի-  
մեանս . և մանաւանդ մոլիքն ոչ կարեն կեալ  
ընդ միմեանս համաձայնութեամբ . առաքինիքն  
ևս երբեմն հակառակին միմեանց , յորժամ  
տարբերութիւն ինչ գոյ 'ի մեջ առաքինութեց



նոցա , և առաքինութիւնքն իսկ խոտորին 'ի ծայրս իւրեանց : Հասարակօրէն այնքիկ ծնողք առաւել պատուել մեծարին 'ի զաւակայ իւրեանց , որք առաւել արժանի են յարգութեան նոյին : քանզի որ միանգամ վարի բարեւայելուչ կենցաղաւարութիւն , ոչ եղիցի ենթակայ արհամարհութեան և սնարգանայ :

Բազում այլ չարիք նեղեալ հարստահարին պառանձնական կեանս : Ոմանք են գերիք ծառայից , որոց հաւատացեալ են զգործս իւրեանց : Ոմանք համակին 'ի հանապազորդական տագնապս անձկութեան սրտի յաղազս ինքնահնար մտածութեց փարթամ ազգականայ , զորս ոչ կարեն հաճեցուցանել և ոչ վստահանան զայբայուցանել : Արք ոմանք են ամբարտաւանք և գոռոզք , և կանայք ոմանք են խստապարանոյք և ապառուսք . արդարև առաւել դիւրին է առնել զչար քան զբարի . թէպէտ և իմաստութիւն կամ առաքինութիւն միոյ անձին հազիւ երբեք կարէ առնել զբազումս երջանիկ , սակայն յիմարուի կամ մոլուի միոյ անձին կարէ յաճախակի առնել զբազումս ապերջանիկ :

Եթէ այսպէս իցէ ընդհանրական ելքս մուսնուէ՝ ստաց արքայորդին՝ վտանգաւոր համարեցայց միաւորել զօգուտս իմ ընդ օգտից այլոյ անձին , զի մի գուցէ ապերջանիկ լինիցիմ՝

սխալանօք ընկերին իմոյ :

Հանդիպեալ է իմ՝ ասաց դուստր արքային՝ բազմաց բազմաց անձանց , որք վարեն զկեանս անամուսնութե՛ վասն վերոյասացեալ պատճառի . բայց սակայն ոչ երբեք տեսի զխոհակաշուքիւն նոցա լինիլ պատճառ . նախանձու այլոց : Անցուցանեն նոքա զժամանակ իւրեանց առանց բարեկամութե՛ և առանց կաթոգնութե՛ . և ստիպին առ ՚ի զերծուցանել զինքեանս յայնմ օրէ՛ զորոյ չունին զպէտս , մանկական զբօսանօք կամ մոլեկան բերկրութեամբք : Աւրին նոքա իբրև էակք յարածամ զգալով ՚ի միտս իւրեանց զյայտնի ցածութիւն անձին , որ ընու զմիտս նոցա չարութեամբ և ատելութեամբ , և զլեզուս նոցա ստգտանօք և կշտամբանօք : Նոքան դեգ և անհամբոյր ՚ի տան , և յաչաղկոտ և ոխերիմ՝ արտաքս . և իբրև ելուզակս մարդկային բնութեան , պարապին և զբօսնուն առ ՚ի խռովել զընկերակցութիւնն վայն՝ որ արգելեալ պահէ զնոսա յառանձնաշնորհութեց իւրոց : Ահալ առանց զգալոյ և շարժելոյ ըզհամակրութի , լինիլ երջանիկ առանց առաւելլոյ զերջանկութի այլոց , կամ լինիլ վշտացեալ առանց ճաշակելոյ զբալասան գթութե՛ , է՛ կայութիւն մի առաւել աղջամղջին և թաղձագին քան զառանձնակեցութիւն . այս ո՛չ է

միայնակեցութիւն , այլ արտաքսումն յլնկեր-  
ութենէ ազգի մարդկան : Ամուսնութիւնն ունի  
զբազում յաւս , բայց անամուսնութիւնն չունի  
զճեշտութիւնս :

Ձինչ ուրեմն պարտիմք առնել՝ ասաց շը-  
ռաստելաս . որքան առատել հետամուտ լինիմք  
իրաց , այնքան սակաւ կարեմք յառաջադրել  
զիրս : Արդարեւ նա առատել կարէ հաճեցու-  
յանել զինքն , որ չունի հոգալ զայլոց յօժար-  
ութեանց :



### ԳԼՈՒԽ • ԻԷ :

Խոյշ և ե՛շիւ 'ի վերոյ Բժու-Բեռն :

Դուն ինչ զկայ առին նք 'ի զրուցատրու-  
թենէ իւրեանց : Արբայորդին բարւոք քննեալ  
զբանս և զգիտողութիւնս քեռն իւրոյ՝ ասաց  
յնա թէ քննեալ ես դու զկեանս նախապաշար-  
մամբ , և կարծեալ ես տեսանել զթշուառութի  
ուրաճօր ո՛չ ես գտեալ զայն : Պատմութի քոյ՝  
ասաց նա՝ արկանէ զևս մթագոյն աղջամուղջ 'ի  
վերայ հայեցուածոց և առարկայից ապագայ  
ժամանակայ . գուշակութիւնք իմլակայ էին  
մեղի գծագրութիւնք աղետից և թշուառուէց

նկարագրելոյ ՚ի Նեկայայ : Չարդիս բարեոք  
 իմացեալ էմ ես զի հանդարտութիւնն ո՛չ է  
 դուստր մեծութեան կամ իշխանութեան . և ո՛չ  
 է հնա՛ր գնեւ զայն հարստութե՛ն , կամ նուա-  
 ճեւ զայն յալթանակութեամբ : Քաջայայտ  
 է զի ըստ որում վարե ոք զկեանս իւր յընդար-  
 ձակագոյն վիճակի , առաւել ևս ենթակայ ե-  
 դիցի հակառակութեան թշնամեաց կամ ձախո-  
 դութեան դիպուածոյ . որ միանգամ ունի հա-  
 ճեցուցանել կամ կառաւարել զբազում ան-  
 ձինս , պարտի ՚ի կիր արկանել զգործակալութի  
 բազում պաշտօնատարաց , յորոյ ոմանք եղի-  
 ցին ապերախտք և ոմանք տգէտք . ոմանք մոլո-  
 րեցուսցին վնաս պատրանօք , և ոմանք մասնես-  
 ցին զնա դժբողութե՛ն : Եթէ նա բերկրեցուցե-  
 զմի ոմն , զայրացուցե զմիւս ոմն . նոքա՛ որք ո՛չ  
 են տեսեալ ՚ի նմանէ զչնորհս երախտեաց , հա-  
 մարեցին զանձինս իւրեանց վնասեալ և զրկել .  
 և քանզի չէ՛ հնար ումեք պարգևել զչնորհս  
 երախտեաց բայց միայն սակաւուց , յայն սակս  
 բազումք եղիցին հանապազ տժգոհ և տխուր :  
 Յուսամ՝ ասաց դուստր արքային՝ զի կարօղ ե-  
 դեց արիութե՛ն արհամարհել յարաժամ զայս-  
 պիսի անպատշաճ տժգոհութի . և դու ունի-  
 ցիս զկարողութի առ ՚ի խախանել զայն նուա-  
 ճութեամբ :

Տժգոհութիւնն՝ պատասխանեայ Հռաստելան՝ ո՛չ եղիցի առանց պատճառի չէ կարի իրաւացի և աշալուրջ կառավարութեամբ Տրապարակական գործոց : Թէպէտ և կարի մտադիր և աշալուրջ իցէ իշխան ոք , սակայն և այնպէս ո՛չ կարէ յարժամ իմանալ զայն արժանաւորութիւն , զոր չքաւորութիւն արժանաւոր անձին և խռովութիւն տէրութեան ծածկեսցին դիպուածով . և թէպէտ կարի հզօրեղ և մեծ իցէ նա , սակայն ո՛չ կարէ յարժամ վարձատրել իրաւացէս զայն արժանաւորութիւն : Բայց որ միանգամ տեսանէ զնազագոյն արժանաւորութիւն ուրուք նախադաս համարեալ քան զարդիւնս անձին իւրոյ , բնականապէս համարեացի զայն նախադասութիւն պատճառեալ ՚ի կողմնասիրութենէ և յինքնահար հաճոյից . և արդարև հազիւ ուրեմն կարեմք յուսալ , զի թէպէտ և մեծասիրտ իցէ ոք ՚ի բնէ , կամ ամբարձեալ իցէ ՚ի վիճակ գերակայ , կարող լիցի յարժամ մնալ անսխալ ՚ի հաստատուն և յանդրդուելի արդարութե՛ մատակարարելոյ զուրս պարգևաց . երբեմն կատարեսցէ նա զիւր յանկութիւնս , և երբեմն հաճեսցէ զկամս սիրականաց իւրոց , թոյլ տայէ նա ոմանց հաճեցուցանել զինքն , որք ո՛չ կարեն բնաւին ծառայել ինքեան , տեսցէ նա կոյր սիրով ՚ի սի-



բականս իւր զայնպիսի գերազանցուիս , զորս օչ սեպհականեն նք տիրապէս . և յորոյ միանգամ ընդունի զբերկրանս հեշտութեան , փոյթ յանձին կալցի առնել նոցա զդարձ փոխարինի : Այսպէս երբեմն գովելի և հաճելի երևեսցին մարդիկ յաչս վեհագունից իւրեանց . և նոքա գնեն զայս գովութիւն և հաճութիւն դրամով , կամ առաւել աղականիչ կաշառաբեկութք շողորթութեան և ստրկութեան :

Որ միանգամ ունի կատարել զբազում գործս , երբեմն սխալեսցի յիւրում գործառնութեան . և զիւրոյ սխալանայ պարտի կրել զհետեանս . և եթէ հնար լինէր նմա վարիլ յարժամ 'ի գործս իւր ուղղութեամբ , տակաւին գոյր նմա վտանգ ստգտանայ . վասն զի բազումք եղիցին դատաւոր վարուց նորա . և 'ի դատողութեան իւրեանց չարքն պարսաւեսցին և խափանեսցին զնա առելութիւն , և բարիքն երբեմն դատապարտեսցին զնա վայրապար սխալանօք :

Սմին իրի շէ հնար յուսալ առ 'ի տեսանել զգերագոյն վիճակս լինիլ բնակարանք երջանկութե . քանզի յօժարակամ հաւատամ զի երօջանկութիւնն փախչի 'ի բարձրութենէ արքայական աթոռոց և պալատաց 'ի կայանս խոնարհ առանձնութե և հանդարտ անշքութեան : Վասն զի զի՛նչ կարէ խափան լինիլ մխիթարութեանց

և անկախութեանց նորա, որոյ կարողութիւնքն  
 և ընդունակութիւնքն են հաւասարակշիւ գոր-  
 ծառնութեանց նորա, որ տեսանէ աչօք իւրովք  
 զբովանդակ սահման զօրութիւն իւրոյ, որ ընտ-  
 րէ ըստ գիտութեան իւրում զամենեսին՝ որոյ  
 հաւատայ զանձն իւր, և ո՛չ ոք ձկտի երբէք  
 պատրել զնա յուսով կամ երկիւղիւ : Արդարեւ  
 շունի նա զայլ ինչ առնել, բայց միայն սիրել  
 և սիրիլ, լինիլ առաքինի և լինիլ երջանիկ :  
 Հասասելաս աւարտեալ զխօսս իւր՝ Նեկայա  
 սկսաւ խօսիլ ըստ հետագայ օրինակի : Աշ-  
 խարհս այս ո՛չ տայէ մեզ զդիպողութիւն առ  
 'ի իմանալ ուղղապէս, թէ հնձր է գտանել  
 զկատարեալ երջանկութիւն կիրառութիւն կա-  
 տարեալ առաքինութիւն : Սակայն հնձր է գոնեայ  
 զայս ասել, զի ո՛չ դտանեմք հանադազ վերե-  
 ելի երջանկութիւն առ համեմատութեամբ երե-  
 ելի առաքինութեան : Ամենայն բնական և  
 գրեթէ ամենայն քաղաքական չարիք են միօրի-  
 նակ պատահական մոլեայ և առաքինեայ, այս-  
 ոքիկ չարիք հասարակայ խառնեալ են 'ի թշ-  
 ուառուրիս սովու, և ո՛չ մեծամյ զանազանեալ  
 'ի կատարութիւն քաղաքական խառնութիւն, այսօքիկ  
 աղէտք մտանեն յերկիր նոցա միանգամայն 'ի  
 մըրկածուսի ալէկոծութեան, և վտարեալ լինին  
 անտի միանգամայն յաստատակաւորայ և 'ի

Տրոսակայ ։ Ամենայն տուրք առաքինութեան  
է յանդորրութիւն խղճի մտայ , որ է հաստա-  
տուն նպատակ երջանկագոյն վիճակի . այս նը-  
պատակ կարողացուցէ զմեզ տանիլ տառապա-  
նայ մերոյ համբերութեամբ . սակայն յիշեա՛ զի  
համբերութիւնն ո՛չ է առանց պատճառի ցա-  
ւոյ և վշտայ ։

### ԳԼՈՒԽ • ԻԸ ։

Հաստեղատ և Նեկոյա շարահայն զեօռուցո՛ւի երեւոյ՝

Սիրելի դուստր արքայի՛ ասայ Հաստեղատ՝  
անկանիս դու ՚ի հասարակ սխալման շտիպան-  
ցական բայախօսութեան , բերելով յընտանեկան  
խօսակցութեան զօրինակս ազգային թշուառու-  
թեանց , և զտեսարանս լայնատարած տառա-  
պանայ . որք առաւել գտանին ՚ի թերթս մա-  
տենից քան թէ ՚ի վերայ երեսայ աշխարհի .  
և որովհետև սղէտքս այսոքիկ են սոսկալի և  
անտանելի , յայն սակս տեսչուին արարեալ է զնս  
նուազ և սակաւագիւտ ։ Մի՛ խորհեացուք ըզ-  
ջարիս , զորս ո՛չ զգալք ՚ի սիրտս մեր . և մի՛  
մեասեացուք զկեսանս մեր ստութեամբ և այլ չ  
այլոյ բանիւք ։ Ո՛չ կարեմ՝ տանիլ այնմիկ թաղ-

Ճաղիրն և գանգատաւոր պերճախօսութեան , որ սպառնայ իւրաքանչիւր քաղաքի զպաշարումն իբրև զԵրուսաղէմի . որ յուրանէ զսուրբ Ժամանեալ յիւրաքանչիւր Թաւրոս մարտոյ և կախէ զոճիրս ժամատախտի զթևոց իւրաքանչիւր փշման հողմոյ , որ ելանէ ՚ի հարաւոյ :

Ընդունայն և անօգուտ է առնել վիճաբանութիւնս ՚ի վերայ այնոցիկ հարկադիր և անհրաժեշտ շարեաց , որք կործանեալ իջուրանեն զթագաւորութիւնս միանգամայն . յորժամ ՚ի վերայ հասանեն այսպիսի աղէտք հասարակաց , պարտ է ամենեցուն տանիլ նոցա համբերութեամբ : Սակայն քաջայայտ իմն է , զի այսոքիկ պայթիւնք ընդ հանրական ներգութեան և տառապանաց են առաւել սոսկալի քան թէ զգալի . հաղարք և տան հազարք փթթեալ ճաղիրն ՚ի հասակի պատանեկութեան , և ալագեալ թարշամին ՚ի հասակի ծերութեան , առանց զգալոյ զայլինչ շարիս բայց միայն զճոյնին աղէտս . և կրնն զմի և նոյն հեշտութիս և զտառապանս , եթէ թագաւորք նոցա իցեն գրթած կամ անգութ , եթէ զօրականք երկրի իւրեանց զհետ պնդեսցին թշնամեաց իւրեանց կամ ՚ի բաց մախիցեն առաջի նոցա : Մինչ արքունիք խռովեալ են ներքին հակառակութիւն և դեսպանք գործակատար լինին յօտար երկիրս ,

գարբինն հանդարտ գանակո՞ծ առնէ զսալ իւր, և հողագործն յառաջ վարէ զարօր իւր մեղմով . ունին նոքա զկարօտութիւն պիտոյից կէտնայ, և կարօտութիւնք նոցա ընանին . և յաջորդական գործ եղանակաց անընդհատ կատարէ զշրջան իւր սովորական :

Գաղարեսցո՞ւք ՚ի խորհելոյ զայն ինչ, որ գուցէ ո՞չ պատահեսցի երբէք . և եթէ պատահեսցի ևս, ծաղը արասցէ զմարդկային խորհուրդ և զխոհականութիւն : Ո՞չ ջանասցուք եղանակաւորել զշարժութիւնս տարերաց, կամ հաստատել զվիճակ թագաւորութեանց : Գործ մեր է քննել մտադրութեամբ զայն ամենայն, զոր նման մեզ էակք կատարեսցեն . իւրաքանչիւր ոք աշխատելով վասն երջանկութեան իւրոյ, և ջանալով առ ՚ի յառաջացուցանել զերջանկութիւն այլոյ անձանց, որք գտանիցին ՚ի փոքրիկ ընկերութեան իւրում :

Սմուսնուին է հաւաստեաւ ազդումն բնուէ . արք և կանայք ստեղծան յաշխարհի առ ՚ի լինիլ ընկերք իրերաց . սմին իրի հաւանական երևի ինձ զի ամուսնութիւնն է մի ՚ի նպաստից երջանկութեան :

Ո՞չ գիտեմ՝ ես՝ ասաց դուստր արքային՝ թէ արդեօք ամուսնութիւնն է առաւել քան զմի յանթուելի եղանակաց մարդկային թշուառուեցո՞



կայն յորժամ իմանամք մեք զբոլորն միանգամայն, երպէս է տեսանել ՚ի Թուական Տամարողուհոյ ամենեքեան Տամաձայն լինիմք ՚ի միում դատողութեան . և ոչ ոք երբեք փոփոխէ կամ այլ այլէ զկարծիս իւր :

Մի յաւելոյմք՝ ասաց արքայորդին՝ յայլ Թշուառութիւնս կենաց զվիշտ և զբառնութիւն վիճարանութեան . և մի շանացուք մրցիլ ընդ միմեանց ճարտար և նրբամիտ ձեռնարկութիւնք : Պարագիւմք մեք ՚ի հետազօտութեան այնպիսի բարեաց, զորոյ երկաքանչիւրոցս պարտ է հաւասարապէս վայելել զյաջողութի կամ կրել զձախողութիւն . ամին իրի պարտ և պատշաճ է մեղ օգնել իրերաց յաշխատանս հետազօտութեան մերում : Արդարև կարի շտապու և վաղվաղակի սուցանես զեզրակացութիւնս ընդդէմ օրինադրութեան ամուսնութեան ՚ի պատճառս աներջանկութեան նորա . ոչ ապաքէն Թշուառութի կենաց նոյնօրինակ հաստատեսցէ զի կեանքն ոչ կարէ լինիլ պարզ և երկնից : Մարգիկ պարտին բաղմանալ յաշխարհի ամուսնութեամբ, կամ պարտին բաղմանալ առանց ամուսնութեան :

Զէ ինչ փոյթ մեզ գիտել՝ պատասխանեսց Նեկայա՝ Թէ զիարդ աշխարհս ըցի բաղմութե մարդկան : Զոչինչ վտանգ տեսանեմ զի այժմեան սղգք զանց արանցին առ ՚ի Թողուլ զյա-

Չորդս յաշխարհի զկնի մահուան իւրեանց. այժմ  
չէ պարտ մեզ խնդրել զբարիս վն աշխարհի,  
այլ վն անձանց մերոց :

### ԳԼՈՒԽ • ԻԹ •

Սեպտեմբերի 1 զԷրմ) ամուսնութեան շարունակ :

Բարին բոլորին՝ ասաց Հաստեղատ՝ է նման  
բարեաց ամենայն մասանց նորին : Եթէ ամուսնու-  
թիւնն իցէ բարեգոյն և կենցաղօգուտ վասն  
ազգի մարդկան, հաւաստեալ պարտի լինիլ  
կենցաղօգուտ վասն ամենայն անհատից. կամ  
մշտնջենաւոր և հարկաւոր պարտականութիւն  
ինչ պարտի լինիլ պատճառ թշուառութեան,  
և յայն սակս զոմանս պարտ է անհրաժեշտա-  
բար զոհ մատուցանել մխիթարութե և դիւ-  
րութե այլոց : Բանք և կարծիք քո՝ որով քն-  
նեցիք զպարագայս վիճակաց ամուրեաց և ամուս-  
նացելոց՝ յայտնապէս յուցանեն զի վիշտք մի-  
այնակ կենաց են ըստ մեծի մասին հարկադիր  
և հաւաստի. բայց վիշտք ամուսնական կենաց  
են պատահական և զգուշալի :

Կարի հաւանական երևի ինձ, զի խոհեմու-  
թիւնն և բարեբարութիւնն արացեն երջանիկ

ղվիճակ ամուսնութեան : Ընդհանրական յիմաստութիւն աղբի մարդկան է պատճառ ընդհանրական տրանժման : Չի՞նչ պարտիմք ակնունիլ տեսանել, եթէ ոչ զձախողութիւն և զպաշտա յորժամ ընտրեմք զամուսինս 'ի տհասութե պատանեկութեան, 'ի բորբոքեալ ջերմութեան ջանկութեան, առանց դատողութեան, առանց նախատեսութեան, առանց խնդրելոյ զնմանութե կարծեաց, զհանգիստութիւն բարուց, զուղղութիւն ընտրողութեան կամ զմաքբութիւն խորհրդոց :

Այսպէս է հասարակ կարգ ամուսնութեան : Պատանի կամ օրիորդ մի պատահեալ միմեանց դիպուածով՝ կամ ածեալ առ միմեանս հնարիւք՝ փոխօխակի հային 'ի միմեանս ակնարկուք . փոխադարձեն նք զբաղաբաւարուիս . գնան 'ի տուն և երազեն զմիմեանց : Անելով նոցա զսակառ առարկայս առ 'ի զբօսեցուցանել զմտադրութի իւրեանց կամ պէտպիսացուցանել ըզխտկմունս իւրեանց՝ գտանեն զինքեանս անյանդորբս, յորժամ բաժանեալ են 'ի միմեանց, և յաղագս այտրիկ յօժարին եզրակացուցանել և հաւատալ, զի եղիցին երջանիկ 'ի միասին :

Այսու եզրակացուք ամուսնանան նք բերկրութեամբ, և տեսանեն զայն ամենայն՝ զոր ոչինչ բայց միայն կամաւոր կուրութիւնս և անմը-

տութիւնն ծածկեալ էր յառաջագոյն 'ի տեսո՞  
ղութիւնէ աչայ իւրեանց . սպառեալ մաշէն նք  
զկեանս իւրեանց գժտութեամբք և վիճաբանու-  
թեամբք . և մեղադիր լինին բնութե սակս ան-  
գթութեան և խստութեան :

Յայտոյիկ կանխապոյն ամուսնութեանց յա-  
ռաջ գան նոյնօրինակ թշնամութի և նախան-  
ձաւորութիւն 'ի մէջ ծնողաց և մանկանց . որ-  
դին լրջակիթ է առ 'ի ճաշակել զվայելս աչ-  
խարհի , մինչչև հայր նորա յօժարեալ իցէ  
հրաժարիլ 'ի վայելչութեանց նորին . և հա-  
զիւ ուրեմն գտանի միանգամայն տեղի վանս եր-  
կուց տոհմից : Դուստրն սկսի փթթիլ 'ի ծա-  
ղիկ առոյգութեան հասակի , մինչչև մայր նք  
շատայեալ իցէ թարշամիլ 'ի կ'ճառանս ծե-  
րութեան . և ոչ ոք 'ի սոյանէ զօրեայէ ցանկալ  
մահուան իրերայ :

Արդարև հնար է մեզ հեռացուցանել 'ի  
մէնջ զբովանդակ աղէտս զայստսիկ , խորհրդա-  
ծութեամբ և յապաղմամբն այնուիկ՝ զոր խոհե-  
մութիւնն պատուիրէ մեզ ունիլ յանհրաժեշտ  
և յաննահանջելի ընտրութիւնս ամուսնութե :  
'ի բազմապատիկ բերկրանս և 'ի հեշտութիս  
պատանեկութեան հնար է դիւրաւ անցուցանել  
զկեանս առանց օգնականութեան ընկերի միոյ :  
Երկարագոյն ժամանակ առաւելցէ զփորձա-

առթին մարդոյ . և ընդարձակագոյն տեսարանք մատուցեն զբարեգոյն դիպողութիս հետադօտութեան և ընտրողութեան . օգուտ մի գոնեայ եղիցի հաստատուն . այսինքն՝ ծնողքն ըստ երևութին եղիին երիցագոյն քան զմանկունս իւրեանց :

Չոր ինչ բանականութիւնն ո՛չ կարէ մակարերեիլ ասաց Նեկայա՝ և զոր ինչ փորձառուին մինչև ցարփ ո՛չ է ուսուցեալ , հնար է մեզ իմանալ ՚ի պատմութեանց այլոց : Լուեալ է իմ զի անագան ամուսնութիւնքն ո՛չ են կարի յոյժ երջանիկ : Այս է խնդիր իմն կարի կարեւոր , զորով չէ՛ պարտ մեզ զանց առնել . և ես յօլով անգամ առաջի եմ արարեալ զայս խնդիր նոցա՝ որոց անվրէպ գիտողութիւնն և լայնածաւալ գիտութիւնն արարին զկարծիս նոցա արժանի մեծարանաց և յարգութեան : Առ հասարակ եղեալ են նոքա ՚ի միտս իւրեանց , զի վտանգաւոր իմն է առն և կնոջ առ ՚ի կախել զվիճակ իւրեանց զմիմեանց յայնպիսում՝ ժամանակի , յորժամ կարծիք նոցա են հաստատեալ և սուղորութիւնք նոցա են հաստարմատ եղեալ . յորժամ երկոքեանն ևս արարեալ են զբարեկամութիւնս ընդ այլոց . յորժամ եղեալ են նոքա ՚ի վերայ կեանց իւրեանց զլարգ ինչ հաստատուն . և յորժամ միտք ն՛ց



ընդերկար վայելեալ է զտեսողութիւն առարկայից և նպատակաց իւրոց :

Հաղիւ ուրեմն հնարաւոր է երկուց անձանց՝ որք ճանապարհորդութիւն առնեն յաշխարհի ընդ առաջնորդութեամբ դիպուածոյ՝ գնալ անստերձւր ՚ի մի և նոյն ճանապարհ . և ոչ յաճախակի պատահեսցի զի երկաքանչիւրն թողցէ զշաւիղն զայն՝ զոր սովորութիւնն արարեալ է հաճելի և բերկրալի : Յորժամ անկարգ փոփոխամտութիւն պատանեկին հաստատի ՚ի վայելուչ կարգաւորութեան , փութով լինի նա ամբարհաւած՝ ամօթ համարելով խոնարհիւ . և լինի կամակոր՝ բերկրելով ՚ի կռուել : Եւ թեպէտ փոխադարձ յարգն յառաջ բերէ զփոխադարձ յանկուի հաճեցուցանելոյ զմիմեանս , սակայն ժամանակն ինքնին ըստ որում չափաւորէ անփոփոխ զարտաքին կերպարանս՝ նոյնպէ և փակէ թէ կողարաւ զձկտումն կրից . և անդրդուելի սաստկութիւն հաստատէ զվարս մարդկան : Երկար սովորութիւնք ոչ լինին կանուխ խորտակեալք . որ միանգամ ջանահնար լինի առ ՚ի փոխել զընթացս կենաց իւրոց , կարի յաճախակի աշխատի ընդունայն . և զի՛արդ արասցուք մեք զայն վասն այլոց , զոր հաղիւ երբեք կարող եմք առնել վասն մեր :

Բայց արդարեւ՝ ընդմիջեաց արքայորդին՝

Համարիս դու զգլխաւոր շարժաւիթ ընտրութե մոռայեալ կամ զանց արարեալ : Յորժամ կամիցիմ ես ամուսնանալ, առաջին հարցն իմ եղիցի՝ թէ արդե՞օք կինն իմ յօժարի վարիլ յամենայն իրս առաջնորդութեամբ բանահանութեան :

Այսպէս է՝ ասաց Նեկայա՝ զի փիլիսոփայք յաճախակի լինին պատրեալք : Գոն հազարաւոր ընտանեկան վիճաբանութիւնք, զորս բանահանութիւնն ո՛չ կարէ երբէք որոշել կամ վրձուել . զայնպիսի վէճն ասեմ՝ որք ծաղր առնեն զքննութիւն մարդկան և պախարակելի յուցանեն զառարկութիւնս տրամաբանութե . այնպիսի դիպուածք խռովութե գոն ՚ի գերդաստանս՝ յորս պարտ է առնել զիր ինչ, և յորս մարթ է սակաւս խօսիլ : Չմտնւ ամ զկայութիւն ազգի մարդկան . և տես թէ որքան սակաւ անձինք կարեն վարիլ ը պատշաճի ՚ի դիպուածս մեծամեծս և փոքունս, զպատճառս գործոց իւրեանց յարաժամ առաջի աչաց ունելով : Թշուառական եղիցին ամուսինքն այնոքիկ ՚ի վեր քան զամենայն անուանս թշուառութեան, որք դատապարտեսցին յարդարել լստ լուսոյ բանականութե յամենայն առաւօտու զամենայն մանրիկ և զթեթև պարագայս իւրաքանչիւր աւուր ՚ի տան իւրեանց :

Որք միանգամ՝ ամուսնանան ՚ի զարգայեալ  
 Հասակի, անտարակոյս զերծցին ՚ի բռնութեց  
 և ՚ի յափշտակութեանց մանկանց իւրեանց . սա-  
 կայն օգուտս այս ո՛չ այնքան մեծ եղիցի, յոր-  
 ժամ պարտաւորեացին ծնողքն թողուլ զման-  
 կունս իւրեանց զինի մահուան անգէտ և անօգ-  
 նակամ ընդ պաշտպանութեամբ հոգաբարձուի  
 միոյ . կամ եթէ ո՛չ պատահեցի այսպէս, պարտին նոքա գոնեայ ելանել յաշխարհէ աս-  
 տի յայնպիսի ժամանակի, յորժամ քաղցրիկ  
 մանկունք իւրեանց ո՛չ իցին հասեալ յար-  
 բունս հասակի կամ յաստիճան ինչ մեծուե :

Յորդոց իւրեանց եթէ ծնողքն սակաւ ու-  
 նին երկն չիլ, նոյնգունակ սակաւ ունին յուսալ  
 և ակնուծիլ . և առանց ստանալոյ փոխարէն  
 զայլ օգուտս, կորուսանեն նոքա զբերկրուիս  
 կանխագոյն սիրոյ, և զդիւրութի միաւորելոյ  
 զվարս իւրեանց լէ վարս մորչս և դիւրութեքս,  
 և շողկապելոյ զմիտս իւրեանց ընդ միտս ընդու-  
 նակս նորոգ տպաւորուեց . սովաւ հնար է նոյ  
 բառնալ ՚ի միջոյ զանհամեմատուիս բնաւորուեց  
 և սովորութեանց իւրեանց՝ լինելով ՚ի միասին  
 բնակակից ընդբերկար, լն որում կակուղ մար-  
 մինք համապաղորդ շիմամբ յարմարեալ նմանե-  
 ցուցանեն միմեանց զերեսս իւրեանց :

Հաւանական երևեսցի ամենեցուն, զի որք

միանգամ ամուսնանան անագան և 'ի զարգացեալ հասակի՝ մեծապէս բերկրեալ հաճեցին 'ի վերայ մանկանց իւրեանց . և որք միանգամ ամուսնանան կանուխ և 'ի հասակի պատանեկութեան՝ բերկրեալ հաճեցին 'ի վերայ ընկերաց իւրեանց :

Միաւորութիւն այսոցիկ երկուց սիրելու էջ՝ ասաց Հռաստելաս՝ կարէ արտադրել զամենայն օգուտս և զբերկրութիւն ամուսնայելոց : Թերևս գոյ ժամանակ մի՝ յորժամ ամուսնութիւնն կարէ միաւորել զայսոսիկ սիրելու թիւս . զայնպիսի ժամանակ մի ասեմ՝ որ ոչ կարի կանուխ եղիցի վասն հօր միոյ , և ոչ կարի անագան եղիցի վասն առն միոյ :

Իւրաքան չիւր ժամ՝ պատասխանեաց դուստր արքային՝ հաստատե զնախապաշարումն մտաց իմոյ և տայ ինձ հաւանիլ զառաջարկութիւնն՝ այսքան յաճախակի արտասանեալ 'ի բերանոյ իմլակայ . այսինքն է՝ բնութիւնն ցնէ զպարգևս իւր 'ի վերայ աջոյ և ձախոյ ձեռին : Ալիճակքն այնոցիկ՝ որք հրապուրեն զյոյս մեր և կամ շարժեն զցանկութիւն մեր՝ են այնպիսի եղանակաւ հաստատեալ , մինչ զի յորժամ մերձ լինիմք միոյն՝ հեռանամք 'ի միւսոյն : 'ի կեանս մարդկան գոն բարիք այնքան միմեանց ներհակք , մինչ զի չէ՛ հնար մեզ հասանել միանգամայն երկու-

յունց ներհական բարեաց . այլ մեծաւ խոհեմ  
մութեամբ պարտիմք անցանել 'ի մէջ նոցա 'ի  
հեռուստ , առ 'ի կարող լինել հասանել եր-  
կաքանչիւրոց : Այս է յաճախակի պատահումս  
ընդերկար մտածողութեան . նա զոչինչ առնէ ,  
որ ջանայ առնել առաւել քան զոր շնորհ  
հեալ է 'ի վերուստ մարդկայինս բնութեան :  
Մի հրապուրելի զքեզ ներհակութիւնք բերկ-  
րութեանց և հեշտութեանց : 'ի բարեաց ա-  
ռաջի քո եղելոց արա՛ զընտրողութիւն քո և  
լնր շատայեալ և բերկրեալ : Ո՛չ որ կարէ ճա-  
շակել զպտուղս աշնան , մինչ զուարթացուցանէ  
զհոտառութիւն իւր ծաղկամբք գարնան . ո՛չ որ  
կարէ 'ի նմին ժամանակի ընու զբաժակ իւր  
յողբերէն և 'ի բերանոյն Ներսի :

---



---

### Գ. Լ. ՈՒԻՍ . Լ :

Ի՛մա՛! հոռնէ 'ի ներս , և գո՛րէ զխօսակցութեանն :

Յայսմ վայրի Իմլակ մտեալ 'ի ներքս՝ ընդ-  
միջեաց զխօսակցութիւն նոցա : Իմլակ՝ ասաց  
Հռասսելլաս՝ մինչցարդ լսէի 'ի Նեկայայ ըզ-  
թաղձագին պատմութիւն առանձնական կենաց .  
և գրեթէ վճատեալ եմ առ 'ի առնել զա-



ւելի հարցախորձս և զդիտողութիւնս :

Թուի ինձ՝ ասայ իմլակ՝ զի մինչ առնես դու զընտրութիւն կենայ, անհոգանաս առ ՚ի վարել զկեանս ըստ պատշաճի: Դեգերեալ շըրջիս դու ՚ի քաղաքի միում, որ թէպէտ է մեծադիր և լլեալ պէսպիսութեամբք՝ սակայն կարէ մատուցանել քեզ զսակաւ առարկայս նորութեան. և մոռանաս դու զի բնակիս յայնպիսի յերկրի միում, որ գերահաշակ հանգիւսանայ ՚ի մէջ վարագոյն թագաւորութեանց վանս զօրութեան և իմաստութեան բնակչայ նորին. զայնպիսի երկիր մի ասեմ՝ յորմէ յառաջագոյն ճառագայթեալ ծագեցան նշոյլք գիտութեց, որք այժմ լուսաւորեն զաշխարհ ամենայն. և անդր քան զայս երկիր չէր հնար ՚ի հնումն գրտանել զարհեստս քաղաքական ընկերութեան և տնային կենայ :

Նախնի Եգիպտացիք թողեալ են զհնի իւրեանց զյիշատակարանս ճարտարութեան և զօրութեան, որոց առաջի մեծագործութիք Երոսպպուոյ համայն ոչնչայեալ կորնչին : Աւերածք ճարտարապետութեանս են դպրոցք արդի ճարտարապետաց, և ՚ի զարմանալի շինուածոց նախնի Եգիպտոսի՝ մինչ ցարդ անվնաս մնայելոց ՚ի կործանիչ ձեռաց անյեալ ժամանակաց, հնար է մեզ խորհիլ կարծեօք միայն

զայլ հոյակապ և զմեծամեծ շինուածս կործանեալս ՚ի վաղ ժամանակաց հետէ :

Հետազօտութիւն իմ՝ ասաց Հռասսելլաս՝ ո՛չ առաջնորդէ ինձ կարի ուժգնակի առ ՚ի քննել զկոյտս քարանց կամ զթումբս և զամբարտակս հողոյ . գործ իմ է քննել զգալանիս և զքնական պիտոյս մարդոյ : Եկեալ է իմ աստանօր ո՛չ առ ՚ի չափել զբեկորս տաճարաց կամ հետազօտել զլուցեալ ջրանցս , այլ առ ՚ի նկատել և նշմարել զազգի ազգի տեսարանս այժմեան աշխարհի :

Իրքն՝ որք կան այժմ՝ առաջի մեր՝ ասաց դուստր արքային , պահանջին զմտադրութիւն մեր և արժանի են քննութեան մերում : Զի՛նչ պէտս ունիմ նախնի դիւցազանց կամ մահարձանաց վաղիւնի ժամանակաց . զայնպիսի ժամանակս ասեմ՝ որք այլ ո՛չ ևս դարձ արասցեն բնաւին . և զայնպիսի դիւցազունս ասեմ՝ որոց կենցաղաւարութիւնն և վարքն տարբեր էին յայնմ ամենայնէ՛ զոր այժմեան կայութիւն ազգի մարդկան թոյլ տայ կամ պահանջէ :

Առ ՚ի գիտել զիր ինչ՝ պատասխանեաց բանաստեղծն՝ պարտիմք գիտել զներգործուիս նորին . առ ՚ի տեսնել զմարդիկ պարտիմք տեսնել զգործս նոցին . զի կարող լինիցիմք իմանալ զպատուէրս բանականութե և զգրգիւռս կրից :

և տեղեկանալ թէ զինչ են առաւել Տղօրեղ  
 շարժառիթք գործողութեան : Առ ՚ի ուղղա-  
 պէս դատիլ զայժմեան իրս , պարտիմք հակա-  
 դրութեամբ համեմատել զնոսա ընդ անցեալ  
 իրաց . վասն զի ան գատողութի լինի բաղդատութի  
 իրաց . և զպագայից չէ՛ հնար գտանել երբէք  
 զտեղեկութիւն : Ճշմարիտ իմն է , զի ոչ ոք  
 կարի պատարեալ է մտօք յայժմեան իրս . մը-  
 տածութիք և նախապաշարմունք ըսուն գրեթէ  
 զամ զվայրկեանս կենաց մերոյ : Աիրք մեր են  
 բերկրութիւն և տրամութի , սէր և ատելութի ,  
 յոյս և երկիւղ : Իրք անցեալք են առարկայք  
 բերկրութեան և տրամութեան , և իրք ապա-  
 դայք են առարկայք յուսոյ և երկիւղի . մա-  
 նաւանդ զի սէր և ատելութիւն հային յիրս ան-  
 ցեալս , վասն զի պատճառն եղեալ է բաղձօք  
 յառաջ քան զգործն :

Այժմեան կայութիւն իրաց է՛ հետեւութի  
 առաջնոյ իրաց . և բնական իմն է հետազօտել  
 զպատճառս բարեաց՝ զորս վայելեմք . և քննել  
 զառիթս շարեաց՝ զորս կրեմք յանձին : Եթէ  
 մեք աշխատ լինեմք վն մեր միայն՝ ոչ է խոհա-  
 կան առ ՚ի անիոյթ լինիլ զվերձանութենէ  
 պատմութեանց . եթէ պարտ է մեզ ունիլ ըզ-  
 լանամ և զհոգողութի առ այլ՝ անիրա իմն է  
 ցուցանել զայսպիսի զանպառութիւն : Անգի-

տուժիւնն՝ յորժամ յառաջ գայ 'ի կամաւոր  
անհոգութենէ՝ է փնասապարտ և պարսաւելի .  
և պատշաճապէս արժան է արկանել 'ի վերայ  
նորա զշարիսն՝ որ ոչ հոգ տարաւ առ 'ի ու-  
սանիլ զեղանակ խափանելոյ զայն յիւրմէ :

Զիք ինչ պատմութի այնպէս կենցաղօգուտ  
և պիտանայու մարդկան ընդ հանրապէս , որպէս  
պատմութիւն յառաջագիմութեան մարդկային  
մտայ , աստիճանաւոր կատարելագործուէ բա-  
նականութեան , յաջորդական մշակութեանց գի-  
տութեան , փոփոխութեանց ուսման և անգի-  
տութեան՝ որք են լոյս և խաւար մտածող է-  
ակայ , բարձման և վերստին կենդանութի ար-  
հեստից , և փոփոխուէց իմացական աշխարհիւ  
Եթէ պատմութիւնք պատերազմաց և ասպատա-  
կութեց են մասնաւորաբար զբաղանք իշխանաց ,  
չէ՛ մարթ նոցա անփոյթ և անհոգ մնալ զմշա-  
կութենէ պիտեան և պատուական արհեստից .  
որք միանգամ ունին կառավարել զպետութիս ,  
ունին նոյնգունակ մշակել զմիտս կենցաղօգուտ  
ուսմամբք :

Օրինակն յարժամ առաւել զօրաւոր է  
քան զխրատն : Զինուոր ոմն հրահանգի 'ի  
մարզս պատերազմի . և պատկերահան ոմն պար-  
տի ընդօրինակել զգատկերս : Յայսմ գոր-  
ծառնութեան կեանքն խորհրդածութեան է առ

ուսել օգտուէտ և արդիւնաբեր՝ հազիւ ուրեմն երեւին յաշխարհի գործք մեծամեծք, սակայն երկասիրութիւնք արհեստից յարժամ պատրաստ են վասն նոցա՝ որք ցանկան գիտել թէ արհեստքն զինչ գործս կարացել են արտադրել:

Յորժամ ակն կամ երեւակայութիւն մարդոյ յապուշ կրթեալ զարմանայ ընդ գործ իմն սնտուլոր, գործնական միտք նորա իսկոյն հետամուտ լինի առ ՚ի իմանալ զմիջոցսն՝ որովք գործն այն կատարեցաւ: Աստանօր սկսի ճշմարիտ կիրառութիւն այսպիսի մտախորհութեան. մեծաքուցանեմք մեք զտեսութիւն մտայ մերոյ նորանոր գաղափարօք, և գուցէ կարիցեմք գտանել զարհեստ ինչ՝ զոր մոռայեալ իցեն ազգ մարդկան, կամ ուսանիլ զայն ամենայն՝ որ ոչ է կատարելագէտ ծանուցեալ յերկրի մերում: Գոնեայ համեմատեմք մեք զժամանակ մեր ընդ նախնի ժամանակայ, և կամ զուարճուցեալ բերկրիմք ընդ կատարելագործութիւնս մտայ և վարուց մերոյ, կամ իմացեալ գտանեմք զպակասութիւնս և զթերութիւնս մեր՝ որ է առաջին շարժումն մարդոյ ՚ի բարին:

Յօժարակամ փափաքիմ՝ ասաց արքայորդին՝ առ ՚ի տեսանել զայն ամենայն, որ իցէ արժանի իմում քննութեան և հետազօտութեան: Եւ ես ևս՝ ասաց դուստր արքային՝ ուրախ ե:



դէպ իմանալ ինչ ինչ զվարույ նախնեաց և զոր-  
պիտութեանց առաջին ժամանակաց :

Յոյժ մեծաշուք յիշատակ Եգիպտական  
մեծութեան , և մի 'ի ծանրակշիռ գործոց ձե-  
ռակերտ ճարտարութեան՝ ասաց իմլակ՝ են բըր-  
գունքն բարձրաբերձք՝ զայնպիսի շինուածս ա-  
սեմ՝ որք կառուցան յառաջ քան զժամանակ  
պատմութեան , և զորոց կանխագոյն պատմութիքն  
թողեալ են մեղ զանհաստատ աւանդութիւնս  
և զընդաշուտ տեղեկութիւնս : Մեծագոյնն և  
բարձրագոյնն յայտոյիկ բրգանց տակաւին հաս-  
տատուն կայ , կարի սակաւ վնասեալ 'ի փոփո-  
խութենէ անցեալ ժամանակաց :

Գնասցո՛ք 'ի վաղիւ առ 'ի տեսանել ըզ-  
բրգունս՝ ասաց Նեկայա . բազում անգամ  
լուեալեմ զգարմանալի պատմութիւնս զբրգանց  
Եգիպտոսի . և ո՛չ դադարեցայց մինչև տեսանի-  
լեմ զնոսս աջօք իմովք 'ի ներքուստ և արտա-  
քուստ :

## ԳԼՈՒԽ • ԼԱ :

Երեսն նոքա 'ի արեոս-Բի-ն Երզնայ :

Այսպէս յառաջադրութիւն Իմլակայ հա-  
ձելի երեւեալ նոցա՝ յերկրորդում աւուր չուե-  
ցին նոքա առ 'ի տեսանել զբրգունան : Եղին  
նոքա զվրանս իւրեանց 'ի վերայ ուղտուց՝ կա-  
մելով մնալ 'ի մէջ բրգանց մինչև կարող լինի-  
ցին լիապէս զիջուցանել զծարա հետազօտուե-  
իւրեանց : Ուղեորէին նոքա մեղմով . դարձու-  
ցանէին զմտադրութիւն իւրեանց առ ամենայն  
իրս նշանաւորս . երբեմն երբեմն զկայ առնու-  
ին նոքա զձանապարհայն և խօսակից լինէին Ճ  
բնակչաց երկրին . և նկատեալ քննէին զաղգի  
աղգի երևոյթս աւերեալ և մարդաբնակ քաղա-  
քայ , և զլայրս ամայի և մշակեալ դաշտայ :

Յորժամ եկեալ ժամանեցին նոքա 'ի բուրգն  
մեծագործ՝ հիսոյմամբ զարմայեալ էին Ճ տա-  
րածութիւն հիման նորին , և ընդ բարձրութի  
գագաթան նորին : Իմլակ բացատրութի յայտ-  
նեաց նոցա զսկզբունան՝ որովք վայելուչ էին  
համարեալ նախնիքն կառուցանել զձև բրգան  
իրբև զկերտուած մի , առ 'ի հաստատուն մը-  
նալ ընդ տեղութեան աշխարհի . նա և ծա-  
նոց նոցա թէ աստիճանաւոր նուազութի բլր-  
դանն այնպիսի հաստատութեամբ ամրացուցանէր

զկերտուածն՝ մինչ ՚ի դերև հանել զամենայն  
 հասարակ բաղխիւնս տարերաց . և ոչ այսչափ  
 միայն՝ այլ և հաղիւ ուրեմն հնար էր նոյա  
 տապալեալ խախտիլ ՚ի գետնաշարժութեանց .  
 զայնպիսի բնական չարիս ասեմ , որում սակաւ  
 զօրութեամբ հնար է դիմամարտ լինիլ : Եւր-  
 ժումն երկրի՝ որ խորտակեալ փշրեացէ զբըր-  
 դունս՝ սպառնացէ զկործանումն աշխարհի :

Չափեցին նոքա զամենայն սառւարտութիւն և  
 զտարածութիւն նորին . և հարին զվրանս իւր-  
 եանց առ ստորտով նորին : Ի միւսում ա-  
 ւուր պատրաստեցան նոքա մտանել ՚ի ներքին  
 ապարանս նորին . և վերձեալ նոյա զհասարակ  
 առաջնորդս՝ էլին նոքա ՚ի վեր ընդ առաջին  
 անցան . յայսմ ժամու սիրական դասեր արբայ-  
 ին հայեցեալ ՚ի խորութիւն բրդանն՝ յետ  
 ընկրկեցաւ և սկսաւ դողալ : Պեկումն՝ ասաց  
 դուստր արքային՝ յի՞նչ իրաց զարհուրեալ եր-  
 կնչիս : Յանձուկ անյից ատօն՝ պատասխանեաց  
 տիկինն՝ և ՚ի սոսկալի մթութենէ այսր տեղ-  
 ւոջ : Ո՛չ իշխեմ ես մտանել ՚ի տեղի մի՛ ուրա-  
 նօր բնակին անշուշտ անհանգիստ ոգիք մեռե-  
 լոյ : Նախնական բնակիչք այսոցիկ ասեղագին  
 գերեզմանաց յարիցեն առաջի մեր . և գուցէ  
 արգելցեն զմեզ ՚ի ներքս յաւիտեան : Խօսե-  
 ցեալ նորա զայս բան՝ էարկ զբազուկս իւր

Հորջ զպարանոյսս դատեր արքային :

Եթէ երկն չիս դու միայն՝ ասայ արքայորդին՝  
յերևութական ջնորից և ՚ի տեսլեանց , ՚ի բաց  
փարատեա՛ զերկիւղ քո ընդունայն , քանզի ա-  
պահով եղիցիս Է մեզ : Չիք ինչ վտանգ ՚ի  
բազմաժամանակեայ մեռելոյ . որ միանգամ Է  
հողով ամփոփեալ Թողեցաւ՝ այլ ոչ ևս երև-  
եսցի մարդկան յաշխարհի աստ :

Ո՛չ կարեմ՝ հաւատեալս զուրանել՝ ասայ Իմ  
լակ՝ Թէ մեռեալք այլ ոչ ևս երևին յԾի ,  
ընդդէմ համաձայն և անփոփոխ վկայութեան  
ամենայն Ժամանակաց և ամենայն ազգաց : Ո՛չ  
դոն ուստեք Ժողովուրդք ուսեալք կամ անուք ,  
որք ո՛չ պատմեն և հաւատան զերևութական  
ջնորս մեռելոյ : Այս կարծիք երևութական  
ոգւոյ՝ որ գուցէ այնքան սաստիկանայ որքան տա-  
րածի մարդկայինս բնութիւն՝ եղիցի ընդհանրա-  
կան միայն ըստ ճշմարտութեան նորին . որք մի-  
անգամ ոչ երբեք լուան զբան ինչ զմիմեանց ,  
ո՛չ համաձայն լինեին ՚ի հաւատալ զպատմութե  
ինչ , զոր ոչինչ բայց միայն փորձառութիւնն  
կարէ առնել դիւրաւ հաւատալի : Ոմանք հա-  
կառակորդք ո՛չ հաւատան զլինելութիւն երև-  
ութական ոգւոյ մեռելոյ . սակայն սովաւ չե՛-  
հնար մեծապէս տկարացուցանել զվկայութիւն  
հասարակաց . և որք միանգամ ո՛չ հաւատան

զայն լեզուօք իւրեանց, խոստովանին զայն երկիրիւ և արհաւրօք իւրեանց :

Բայց և այնպէս չեն ինձ կամք առաւելու զայն և զարհաւիրս՝ որք եկեալ հասին ՚ի վր Պիկուայ : Չի՛նչ է պատճառն զի ոգիք մեռելոց առաւել ստեպ երևեսցին ՚ի բրգունս քան թէ յայլ տեղիս . կամ ընդէ՛ր կարասցեն և կամեսցին նք մնասել զանմեղուի և զմաքրուի մարդկան : Մտանելով մեր ՚ի ներքս՝ ո՛չ բռնաբարեմք զառանձնաչորհութիս նոցա . ո՛չ կարեմք բռնալ զիր ինչ ՚ի նոցանէ . ապա ուրեմն զի՛նք կարեմք զայրացուցանել զնոսս ցասմամբ :

Իմ սիրելի Պիկուա՛՝ ասաց դուստր արքային՝ ես յարաժամ դնայից առաջի քո և իմլաի եկեսցէ զկնի քո : Չմտա՛ւ աժ զի դու ես ընկեր դստեր արքային Եթովպիոյ : Եթէ դուստր արքային կամի զի ծառայ իւր մեռանիցի՝ պատասխանեսց տիկինն՝ հրամայեսցէ զմահ ինչնուազ ահաւոր քան զներփահումն յայսմիկ զարհուրելի քարանձաւի : Գիտես դու զի ո՛չ վստահանամ անհնազանդ լինիլ պատուիրանաց քոյ . պարտիմ՝ մտանել ՚ի ներքս՝ եթէ հրամայեսցես ինձ . սակայն եթէ միանգամ երթայցեմ ՚ի մէջ բրգան՝ այլ ո՛չ ևս հնար է ինձ դառնալ վերստին :

Դուստր արքային տեսանէր, զի ահ և եր-



դիւղ կալեալ էին զմիտս նորա սաստկապէս .  
 և չէր հնար հաւանեցուցանել զնա կշտամբա-  
 նօք և յանդիմանութեամբ առ 'ի ընկերակցիւ  
 նոյա և գնալ 'ի բուրգն . սմին իրի գիրկս ար-  
 կեալ նմա՝ թոյլ ետ նմա մնալ 'ի վրանի անդ  
 մինչև ինքեանք դարձցին անդրէն 'ի տեսութի  
 բրգան : Սակայն տակաւին Պեկուա ոչ էր  
 հաճեցեալ ընդ այս յառաջադրութիւն . այլ  
 թախանձանօք աղաչէր զդուստր արքային առ 'ի  
 կասիւ 'ի սոսկալի խորհրդոց իւրոց , և մի եր-  
 բէք մտանել 'ի խորշս և 'ի գաղտնիս բրգանս  
 այնորիկ : Թէպէտ և ոչ կարեմ՝ ուսուցանել  
 զարիութիւն՝ ասաց Նեկայա՝ սակայն և այնպէս  
 չէ պարտ ինձ ուսանիլ զերկշտութիւն . և ոչ  
 թողուլ 'ի վախճանի անկատար զայն ինչ՝ զոր  
 եկի միայն աստանօր կատարել :

### ԳԼՈՒԽ . ԼԲ :

Մտանէն նոյն 'ի Երբզն :

Պեկուա զատեալ յընկերակցութենէ նոյա՝  
 էջ անտի առ 'ի գնալ 'ի վրան իւրեանց . և  
 մնացեալքն առանց նորա ելեալ մտին 'ի բուրգն :  
 Անցեալ գնացին նոքա ընդ ձեմիլիս նորին . քըն-  
 նեալ նկատեցին զգերեզմանս մաքմարիոնեայս . և

քննեցին զարկին զայն՝ յորում կարծի թէ զե-  
տեղեալ պահպանի մարմինն Տիմնագրի բրգանն  
այնորիկ : Բազմեցան նոքա ՚ի միում ՚ի լայնա-  
տարած աննեկաց անտի առ ՚ի Տանգստանալ սա-  
կաւիկ մի , և ապա ելանէլ և դառնալ ՚ի վը-  
րան իւրեանց :

Հատայեալ եմք այժմ ՚ի միտս մեր՝ սասց  
Իմլակ՝ տեսանելով աչօք մերովք զզարմանա-  
սքանչ և զմեծագործ ձեռակերտ մարդկան ՚ի վը  
աշխարհի , բայց միայն զզարմանալի պարիսպն  
աշխարհին Սինէայուց :

Կարի դիւրին է յիշատակել աստանօր ըզ-  
դատաձառ կառուցանելոյ զպարիսպն զայն մեծա-  
գործ : Հաստատութիւն պարսպիս այսորիկ յա-  
պահովի կայուցանէր զբազմահարուստ և զերկ-  
չոտ ազգ մի յասպատակութեանց բարբարոսաց և  
Տրոսակաց . որք անտեղեակ գոլով քաղաքական  
արհեստից՝ առաւել դիւրինն համարէին մատա-  
կարարել զպիտոյս կենաց իւրեանց յաիշտա-  
կութեամբ քան թէ աշխատասիրութեամբ . և  
ոչ այսչափ միայն՝ այլ և ժամանակէ ՚ի ժա-  
մանակ յարձակելն սոքա ՚ի խաղաղաւէտ բնա-  
կարանս վաճառականաց , ըստ որում անգեղք  
իշանելով յարձակին ՚ի վերայ անային հաւուցե  
Բնակիչք երկրին այնորիկ հարկաւոր համարե-  
ցան կառուցանել զպարիսպն զայն ՚ի պատճառա

արագութեան և գաղանութեան նոցա . և ՚ի պատճառս անգիտութեան նոցա պարիսպն այն եղև զօրաւոր և անդիմամարտ արգել ասպատակութեանց նոցա :

Սակայն սակա կառուցանելոյ զբրգունս Եգիպտոսի ո՛չ ոք տուեալ է զպատճառս ինչ համեմատ ծախուց և աշխատանայ գործոյն : Սենեակք բրգանս այսորիկ երևին նեղ և անձուկ . ակն իրի և ո՛չ էր հնար տեսց սորա առանձնանալ և ապա ինիւ աստ յերեսաց թշնմեաց իւրեանց . և չէ՛ արժան համարիւ զայս տեղի իբրև գանձարան նոցա . քանզի կարող լինէին նոքա նոյնպիսի ապահովութեամբ պահպանել զգանձս իւրեանց յայլում տեղոջ և սակա ծախիւք : Թուի թէ նախնի իշխանքն Եգիպտոսի կառուցեալ են զբրգունս զայսոսիկ միայն առ ՚ի շատայուցանել զայն քաղց երևակայութեան , որ անդադար և հանապազ մաշեալ ծախէ զկեանս մարդոյ , և յարժամ պարտ է զիջուցանել զսաստկութիւն նորին աշխատանօք և գործով իւրիք : Որք միանգամ արդէն ստացեալ են զայն ամենայն՝ զոր կարեն վայելել , պարտին առաւելեալ մեծայուցանել զպակութիւնս իւրեանց : Որ բարձրայուցանէ ըզկերտուածս ՚ի պէտս բնակուէ իւրոյ , պիտոյք բնակութեան իւրոյ լնանին . ապա զհնի այնորիկ

պարտի սկսիլ առ 'ի կերտել զշինուածս 'ի պէտս ունայնութեան և սնախառութեան . և տարածէ զձև շինուածոյ իւրոյ մինչև յյետին կարողութիւն մարդկային գործողութեան , զի մի փութանակի պարտաւորեսցի առ 'ի ստեղծանել զայլ ցանկութիւն 'ի սրտի իւրում :

Համարիմ ես զայս մեծագործ և զանհնարին կերտուած իբրև զյիշատակ անբաւականութե մարդկային զուարճութեանոյ : Թագաւոր ոմն որոյ կարողութիւնն չունի զսահման , և որոյ գանձք անցանեն զանցանեն զամենայն ճշմարիտ և երևակայական պիտոյիւք՝ պարտաւորի զուարթացուցանել զյագուրդ իշխանութեան և զանհամութիւն հեշտութեանոյ՝ կառուցանելով ըզբուրգն մի , և զբօսեցուցանել զտաղտկութիւն հոլովէալ կենայ՝ տեսանելով զհազարաւոր վաստակաւորս աշխատիլ առանց վախճանի , և ըզքար մի յումպէտս եդեալ 'ի վերայ միւս քարի : Ընթերցող՝ ով որ և իցես դու՝ որ ոչ շատանաս ընդ վիճակ մի միշտահման , այլ կարծես զերջանկութիւնն բնակիլ յարքայական մեծագործութեան , և երազես զի իշխանութի կամ ճոխութիւն կարէ լնուլ զախորժակ նորութեան մշտնջենական հեշտութեամբք , նկատեա՞ զբրգունսն , և խոստովանեա՞ զյիմարութիւն քոյ :

## ԳԼՈՒԽ . ԼԳ .

Դրանք որոշյին պարտոհի ունիւնլու ի՞նչ պէտք ունենան :

Յարուցեալ նոց ՚ի տեղւոջէ անտի՝ դարձ  
արարին առ ճանապարհաւ խոռոչին այնորիկ՝  
ընդ որ մտեալ էին ՚ի ներքս յառաջագոյն .  
և դուստր արքային պատրաստէր վասն սիրահա-  
նին իւրոյ զերկար պատմութի աղջամղջին բա-  
ղայ և մեծածախ տեղեաց և ազգի ազգի ներ-  
գործութեց , զոր պէսսն իրք ճանապարհին տպա-  
ւորեալ էին ՚ի միտս իւր : Սակայն յորժամ  
ժամանեալ հասին նոքա ՚ի վրան իւրեանց՝ տե-  
սին զամենայն սպասահարկուս իւրեանց անխօս  
և վհատեալ : արքն յուլյանէին զամօթ և զեր-  
կիւղ յերեսս իւրեանց . և կանայքն յողլս և  
յարտասուս վարակել կային ՚ի վրանս իւրեանց :

Ո՛չ կարէին իմանալ թէ զինչ էր պատա-  
հեալ ՚ի բացակայութեան իւրեանց . այլ իսկ  
և իսկ հարցին զպատճառ տրտմութե և վհա-  
տութե ծառայից իւրեանց : Մինչչև էր ձեր  
մտեալ ՚ի մէջ բրդան՝ ասաց մի ՚ի սպասաւո-  
րաց անտի՝ խումբ մի թախառահան Արաբայւոյ  
յարձակեալ մտին ՚ի վրանս մեր . լինելով մեր  
թուով սակաւ՝ ո՛չ կարացաք զդէմ ունիլ աս-  
պատակութեանց և յտիշտակութեանցնոցին . և  
գողով մեր կարի յամր՝ ո՛չ կարացաք զերծանիլ



փախստեամբ 'ի ձեռաց նոցին : Հանդերձեալ  
 էին նոքա հետազօտել զվրանս մեր , նստույա-  
 նել զմեզ 'ի վերայ ուղտուց մերոց , և վա-  
 րել զմեզ առաջի իւրեանց , յորժամ գունդ մի  
 հեծելազօրաց Սարակինոսաց ժամանել առ մեզ՝  
 'ի փախուստ դարձուցին քնն աստի . սակայն կա-  
 լեալ նոցա բռնի զտիկինն Պեկուա և զերկուս  
 աղախնայս նք՝ տարան զնն 'ի բաց վաղվաղակի :  
 Հեծելազօրքն Սարակինոսաց այժմ փութալով  
 զհետ պնդին նց յորդորանօք մերովք . սակայն  
 երկն չիմ զի ոչ կարեն նոքա 'ի վերայ հասանել  
 ասպատակաւորայն այնոցիկ , և զերծուցանել  
 զՊեկուա 'ի ձեռաց նոցա :

'ի լսել զայս բան անակնկալ և դառնաղէտ՝  
 դուստր արքային անկաւ 'ի ծովս զարմայան և  
 տրամութեան : Հռասսելաս 'ի բորբոքիլ Չեր-  
 մութեան սրտմտութե իւրոյ՝ հրամայեաց սպա-  
 սաւորաց իւրոց գալ զկնի իւր , և հանդեր-  
 ձեցաւ հետամուտ լինիլ աւազակայն՝ ունելով  
 զվաղակաւորն 'ի ձեռին իւրում : Տէր՝ ասաց  
 իմլակ՝ զի՛նչ կարես ակն ունիլ 'ի բռնութենէ  
 կամ յարիութենէ . Արաբացիքն հեծեալ են 'ի  
 վերայ ձիոց , և կարի քաջակիրթ են 'ի մարզս  
 պատերազմի և 'ի հնարս փախստեան . և մեք  
 ունիմք միայն զգրաստս բեռնակիրս : Թողլով  
 մեր զայժմեան տեղի բնակութեան մերոյ՝ գու-

յէ տայցեմք 'ի ձեռաց մերոց զդուստր արքային՝  
 սահայն ո՛չ կարեմք յուսաւ առ 'ի գտանել  
 զՊեկուս կրկին : Չկնի սուղ ինչ ժամանակի  
 դարձ արարեալ եկին առ նոսա՝ հեծելագորքն  
 Սարակինոսաց , ո՛չ կարելով ըմբռնել զթշնա-  
 մին կամ զերծուցանել զՊեկուս : Դուստր ար-  
 քային դարձեալ սկսաւ ողբս յօրինել 'ի վերայ  
 կորստեան սիրականին իւրոյ . և Հռասսելաս  
 հազիւ ուրեմն կարէր համբերել առ 'ի ըստ-  
 գտանել զնոսա երկչոտութեամբ . սահայն իմ-  
 լակ կարծէր զի փախուստ Արաբացոց ո՛չ էր  
 նոցա մեծ տարաբարդութիւն . վասն զի գուցէ  
 նոքա առաւել յօժարէին սպանանել զգերիս  
 իւրեանց , քան թէ թողուլ զնոսա 'ի բաց 'ի  
 ձեռաց իւրեանց :

---

### ԳԼՈՒԽ • ԼԴ •

Դուռնն նոսա 'ի Կայրօ՝ ոտանց Պեկուս :

Տեսանէին նոքա այժմ , զի ո՛չ գոյր աւելի  
 յոյս առ 'ի գտանել զՊեկուս՝ յապաղելով չ  
 երկար յայնմ տեղուջ : Դարձ արարեալ գնա-  
 ցին նոքա 'ի Կայրօ՝ ցաւելով վասն եռանդեան  
 հետաքրքրութիւն իւրեանց , ստգտանելով զան-

Տոգութիւն տէրութեանն , ողբալով զանխոհեմ մութի իւրեանց՝ որով զանց արարին առ ՚ի կարգել զպահապան մի վասն Պեկուայ ՚ի բայակայութեան իւրեանց , խորհելով զբաղմապատիկ Տնարս՝ որով մարթ էր ինքեանց ապահով կայուցանել զնա ՚ի յանկարծական յախշտակութենէ թափառական ասպատակաորաց , թէպէտ և ոչ ոք ՚ի նոցանէ կարէր գտանել զպատշաճաւոր Տնարս զերժուցանելոյ զնա ՚ի ձեռաց թշնամեաց անտի :

Նեկայա ՚ի դառնութենէ սրտի իւրոյ առանձնացաւ ՚ի սենեակ իւր տրամութիւն . ուրանօր աղախնայք իւր ջանահար լինէին մխիթարական բանիւք փարատել զստուերս տրտմութեան ՚ի մտաց նորա : Ասէին սոքա թէ ամենեքեան յաշխարհի աստ ենթակայ են վշտաց և դժբաղդութեան . և թէ տիկին Պեկուայն ընդերկար վայելեալ էր զերջանկութիւն յաշխարհի աստ . և յայն սակս պարտ էր նմա իւրաւագէտ ակն ունիլ փոփոխութե՛ք բաղդի իւրոյ : Յուսային նոքա զի ո՛ր և իցէ նա այժմ՝ բարութիւն ինչ վիճակեսցի նմա . և բամբիշ իւրեանց կարէ գտանել զայլ բարեկամ ոմն , որ ընուցու զտեղի կորուսեալ սիրականին իւրոյ :

Դուստր արքային ոչ տայր նոցա պատասխանի . և նոքա շարունակէին զբանս մխիթարութեան .

և յաւակցութեան իւրեանց ։ ո՛չ կարի տրտմեալ  
 'ի սիրտս իւրեանց ընդ յանկալձական կորուստ  
 սիրահանին այնորիկ ։

'Ի Տետեալ առ ըր արքայորդին յայտնեաց  
 փաշային թղթով զանիրաւութիւնն զայն՝ զոր  
 կրեալ էին յԱրաբացոց 'ի տարագարտոց . և  
 աղաչեաց զնա դարման մատուցանել զրկեալ ան-  
 ձին իւրում ։ Փաշայն սպառնացաւ առ 'ի պա-  
 տուհասակոծ առնել զաւաղակն . սակայն ո՛չ  
 խնամ՝ տարաւ առ 'ի ունիլ զնոսա բռնութիւն .  
 և այս ո՛չ էր այնքան զարմանալի . քանզի շէր  
 հնար տալ նմա զտեղեկութի կամ զճանօթութի  
 ինչ , առ 'ի խննալ զտեղի ասպատակաւորայն  
 և ըմբռնել զնոսա ։

Իսկ և իսկ երեւցաւ զի ո՛չ կարէին նորա  
 հոգալ զհնարս ինչ վան փրկութեան Պեկու-  
 այ օգնականութեամբ փաշային ։ Առսակալք  
 սովորեալ առ 'ի լսել զյանցանս առաւել քան  
 զոր կարեն պատուհասել , և առ 'ի ունինդիր  
 լինիլ անիրաւութեանց առաւել քան զորս կա-  
 րեն դարմանել խնամով՝ Տնան անլրդով և յան-  
 դորրու անփոյթ զանյառութեամբ . և իսկ և  
 իսկ մոռանան զաղաչանս՝ յորժամ աղաչաւորքն  
 հեռանան 'ի տեսութենէ աչաց իւրեանց ։

Զկնի այսորիկ իմլակ շանայր առ 'ի գտա-  
 նել լուր ինչ զՊեկուայ միջնորդութեամբ առ-

անձին պաշտօնէից : Եգիտ նա զբազում անա-  
 ձինս՝ որք պարծէին գիտել զամ զբնակարանս  
 Թափառական Արաբացւոց, և ունիլ զկանո-  
 նաւոր հաղորդակցութի ընդ առաջնորդաց նց .  
 և ոչ այսչափ միայն՝ այլ և յօժարակամ պատ-  
 րանստ էին զերծուցանել զՊեկուա ՚ի ձեռաց  
 նոցա : Ոմանք յարանցս յայտոցիկ ընկալան զդը-  
 բանս ինչ յառաջագոյն վասն ճանապարհորդութե  
 իւրեանց, սակայն այլ ոչ դարձ արարին վերս-  
 տին . և ոմանք ևս ընկալան զառատ պարգևս սակս  
 այնպիսի լրոց, որք զկնի քանի աւուրց երեւցան  
 լինիլ սուտ : Բայց և այնպէս դուստր արքային  
 ոչ Թողոյր զհնարս՝ Թէպէտ անհնարաւորս,  
 զորս ոչ ՚ի կիր արկանէր վասն փրկութե Պե-  
 կուայ : Մինչ հնարէր նա զհնարս ինչ առ այս  
 վախճան, կենդանի պահէր զեռանդն յուսոյ  
 իւրոյ : Եթէ նա տեսանէր զմի հնարս ՚ի դե-  
 բե ելեալ, հետեւէր եռանդեամբ միւս հնա-  
 րից . յորժամ հրեշտակ մի յետս դառնայր ա-  
 ռանց գտանելոյ զՊեկուա, դուստր արքային իս-  
 կոյն առաքէր զմիւս ոմն առ ՚ի խնդրել զնա  
 յայլ և այլ տեղիս :

Այժմ երկու ամիսք էին արդէն անցեալ  
 և զՊեկուայ ոչինչ լուր կամ տեղեկութի էր ՚ի  
 յայտ եկեալ . Թէպէտ և ջանայեալ էին բա-  
 րեկամք Պեկուայ առ ՚ի կենդանի պահել ՚ի



միմեփնս զյոյս վերաստանալոյ զնա, սակայն ան-  
պտուղ հետազօտութիւնք այսոցիկ երկուց ամ-  
սոց արարին զյոյս նոցա նուազեալ և զրտա-  
յեալ. և դուստր արքային ո՛չ տեսանելով զայլ  
հնարս փրկութեան նորին՝ թողձեալ և անմխի-  
թար սնկաւ ՚ի խորս յուսահատութեան և վը-  
հատութե՛ն : Հազարիցս կշտամբեաց նա զանձն  
իւր սակս կատարելոյ զինդիր սիրահանին իւրոյ,  
և թողլոյ զնա միայնակ զկնի իւրեանց : Եթէ  
խանդաղատանք սիրոյ իմոյ՝ ասաց նա՝ ո՛չ էր  
նուազեցուցեալ զզօրութի՛ իշխանութե՛ն իմոյ,  
Պեկուս ոչ բնաւ համարձակե՛ր խօսիլ զեր-  
կիւղէ և զարհաւրաց իւրոյ : Պարտէ՛ր նա ա-  
ռաւել երկնչիլ յինէն, քան թէ յերևութա-  
կան ոգւոց մեռելոյ : Սաստիկ հայեցուածով  
հայելով իմ՝ ՚ի նա՝ կարէի յաղթահարել ըզ-  
տարապարտ զերկիւղ նորա . և հրամայելով նմա  
տիրական իշխանութեամբ՝ կարէի դիւրաւ ՚ի  
հնազանդութիւն ածել զնա : Ընդէ՛ր յիմարա-  
կան զիջումն և գթութիւն իմ՝ բռնայան ՚ի վր  
իմ : Ընդէ՛ր ես ո՛չ խօսեցայ հրամայաբար . և  
ընդէ՛ր ո՛չ անտեսարարի զինդրուած նորա :

Ի՛նծաշնչութեամբ դուստր արքայի՛ ասաց իմլակ՝  
մի՛ կշտամբանօք նախատեր զքեզ սակս առաքի-  
նութեան քոյ . և մի՛ համարեր զզործն զայն  
պարսաւելի՛ յորմէ յառաջայեալ են աղէտք

պատահականք : Խանդաղատանք սիրոյ քոյ վասն  
 երկչոտութեան Պեկուայ էր նշան բարերարուէ  
 և մարդասիրութեան : Յորժամ գործեմք մեք  
 զիր ինչ ըստ պարտականութե մերում, յանձն  
 առնեմք զկատարածն 'ի կամս նորս' որոյ օրէնքն  
 կարգեն և տնօրինին զգործս մեր . և որ ոչ  
 թողցէ զմարդիկ պատահասս կրէլ 'ի վասնձանի  
 վասն հնազանդելոյ նոցա երկնային պատուիրա-  
 նին : Յորժամ ունիմք առաջի աչաց մերոց ըզ-  
 նպատակ ինչ բարեաց բնականաց կամ բարոյա-  
 կանաց՝ և ոչ պահեմք զկանոնս կարգեալս վն  
 մեր, հեռանալով խորշիմք մեք յառաջնորդու-  
 թենէ գերագոյն իմաստութեան, և արկանեմք  
 'ի վերայ մեր զամենայն զկատարածս գործոց մե-  
 րոց : Մարդս ոչ կարէ այնքան իմանալ զյարա-  
 բերութիւն պատճառաց և ղխցուածոց, մինչ  
 վստահասցի գործել վրիպակաւ առ 'ի գործել  
 ուղղապէս : Յորժամ ջանամք հասանել նպա-  
 տակի մերում օրինաւոր միջոցօք, և 'ի ջանա-  
 սիրութեան մերում հանդիպիմք ձախողութե, և  
 պատշաճ է մեզ յարժամ մխիթարել զմեզ  
 'ի ձախողութեան մերում յուսալով հասանել  
 ապագայ վարձատրութեան : Յորժամ ընթա-  
 նամք միայն ըստ քաղաքականութեան մերում,  
 և թեկն ածեմք գտանել զմերձաւորագոյն ճա-  
 նապարհ բարութեան, անցանելով զհաստա-

տուն սահմանօք ուղղութիւն և սխալմանց , ո՛չ կարեմք անգամ լինիլ երջանիկ յաջողութեամբ մերով . վասն զի ո՛չ կարեմք խոյս տալ 'ի ներքին ծանօթութենէ սխալմանց մերոյ . սակայն եթէ հանդիպիցիմք ձախողութեան , յայնժամ ո՛չ կարեմք գտանել զհնարս բառնալոյ զդառնութիւն ձախողութեան մերոյ : Չի՛արդ դառն և անմխիթար է տրտմութի նորա՝ որ զգայ միանգամայն զտագնապս մեղայ և զվիշտութշուառութեան , զոր մեղքն հեղեալ է 'ի վերայ գլխոյ նորա :

Խորհեանց 'ի միտս քոյ՝ դուստր արքայի՛ թէ զի՛նչ լինէր կայութի անձին քո , եթէ տիկին Պեկուայն պաղատէր առ 'ի ուղեկից լինիլ քեզ . և գոլով 'ի քէն պարտաւորեալ առ 'ի մնալ 'ի վրանս՝ Արաքայիքն տանէին զնա 'ի բայ յաիշտակութեամբ . կամ զի՛արդ կարէիր հանդուրժել ցաւոյ քոյ , եթէ ստիպմամբ բռնադատէիր զնա առ 'ի մտանել ընդ քեզ 'ի բուրգն , և նա մեռանէր առաջի աչաց քոյ 'ի տագնապս արհաւրաց և զարհուրանաց :

Եթէ պատահեալ էր մի յաղետիցս յայտցիկ՝ ասայ Նեկայա՝ ո՛չ կարէի մինչև ցայժմ մնալ կենդանի . խորհելով իմ զայսպիսի անգթութիւն , սաստիկ վիշտս կրէի յանձին իմում և լինէի խելագարեալ 'ի ցաւոյ . կամ

Տաշեալ մաշեալ զբաւէի 'ի կենաց' 'ի սաստիկ ատելութենէ անձին իմոյ :

Թերևս՝ ասաց իմլակ՝ այս է այժմեան տրտուր առաքինական վարուց, զի ոչինչ անյաշող հետեանք կարէ պարտաւորել զմեզ առ 'ի ցաւիլ վան գործոյ մերոյ :

### ԳԼՈՒԽ . ԼԵ :

Դուրսդ որոշի՛նք նուազեալ շնորհիւս՝ զի չե՛սք Պէկուայ :

Նեկայա այսպիսի միտթարութեամբ սիրտփեալ զսիրտ իւր՝ տեսանէր զի ոչինչ աղէտք թշուառութեան է անտանելի, բայց միայն որ յառաջ գայ 'ի ներքին ծանօթութենէ սխալանաց անձին : Յայսմ հետէ սիրտ նորա փարատեցաւ 'ի մթապատ ամպոյ մըրկածուփ տրտուրութեան. և անկեալ համակեցաւ նա յանմուռնչ թաղձութեան և 'ի յաղձամղջին անգորրութեան : 'ի ծագմանէ առաւօտու մինչև 'ի մուտս երեկոյին խորհէր և բերէր 'ի միտս իւր զամենայն իրս արարեալս կամ ասացեալս 'ի Պէկուայ. գանձէր 'ի միտս իւր խնամով զամենայն ինչ, զոր Պէկուա յարգոյ էր համարեալ պատահմաբար. և որով հնար էր 'ի միտս բերել զա :

մենայն դուրնաբեայ պատահումն կամ զանհոգ  
զրույատրութիւն : Խորհուրդք և բանք նորա՝  
զոր այլ ոչ ևս ակն ունէր տեսանել վերստին՝  
դանձեալ մթերեալ էին 'ի միտս իւր իբրև  
զկանոնս կենցաղաւարութիւն . և ոչ խորհէր նա  
վայլ ինչ, եթէ ոչ զկարծիս և զխրատս սի-  
րականին իւրոյ Պեկուայ :

Կանայքն այնոքիկ՝ որք սպասահարկու լինէին  
նմա՝ ոչինչ գիտէին զիսկական որպիսութիւն ան-  
ձին նորա . ամին իրի դուստր արքային ոչ կար-  
էր խօսիլ ի նոցա, բայց միայն զգուշաւորութիւն  
և խոհեմութիւն : Սկսաւ նա նուազեցուցանել  
զեռանդն հետաքրքրութեան իւրոյ, ոչ ցանկա-  
լով մեծափափաք տենչանօք առ 'ի Ժողովել 'ի  
միտս իւր զայնպիսի խորհուրդս և զկարծիս՝  
զորս ոչ կարէր արտասանել 'ի լսելիս այլոց .  
քանզի ոչ ունէր զպարասց և ոչ զգիւրութիւն ան-  
ձին : Հռասսելլաս զառաջինն ջանայր միսթա-  
րել զնա սիրտիանօք . ապա խնամ տանէր զբօ-  
սեցուցանել զնա զուարճութեամբ . վարձեայ  
նա զերաժիշտս 'ի զբօսանս քեռն իւրոյ . Թե-  
պէտ Նեկայա երևէր ունին մատուցանել սց, և  
սակայն ոչ լսէր զերգս և զնուագս նոցա . և ոչ  
այսչափ միայն՝ այլ և կալաւ նա զվարժապետս  
առ 'ի հրահանգել զքոյր իւր 'ի զանազան ար-  
հեստս և 'ի գիտութիւնս . սակայն Նեկայա իսկ



և իսկ մոռանայր զդասս իւր. և յորժամ  
գնային վերստին աւ նա վարժագետք նորա,  
պարտ էր նոց կրկնել վերստին զընթերցուածս  
իւրեանց : Արուսեալ էր նա զձաշակ հեշ-  
տութե իւրոյ և զպատուասիրութիւն գերա-  
զանցութեան իւրոյ : Եւ թէպէտ միտք իւր ա.  
կամայ պարագէր ՚ի դիւրանցիկ խոկմունս այլոց  
իրաց, սակայն յարաժամ դառնայր անդրէն ՚ի  
պատկեր բարեկամին իւրոյ :

Գուստր արքային յիւրաքանչիւր առաւօտու  
թախանձանօք պատուիրէր իմլակայ առ ՚ի նո-  
րոգել զխոյլ և զխնդիր իւր. և յիւրաքան-  
չիւր երեկոյի հարցանէր զնա թէ արդե՞րօք  
լուեալ ես զլուր կամ զձանօթուի ինչ զՊե-  
կուայ. սակայն ոչ կարացեալ նո առնել ըզ-  
պատասխանիս մխիթարականս դատեր արքային  
սակաւ և սակաւ յօժարէր նա երևիլ առաջի  
նորուն : Նեկայս նկատեաց զյամբութիւն այցե-  
լութեան նորա. և հրամայեաց նմա առ ՚ի գալ  
՚ի տեսուի իւր : Ո՛չ պարտիս դու՝ ասաց նա՝  
շիտթել զանհամբերութիւնն ընդ սրտմտուե .  
կամ կարծել զի արկանեմ ՚ի վերայ քո զմեզս  
զանցառութեան, յաղագս գժտմնելոյ իմոյ ընդ  
անյաջողելս հետազօտութեան քո : Ո՛չ զար-  
մանամ մեծապէս ընդ յամբութիւն այցելութե  
քո. գիտեմ զի սողերջանիկքն ոչ երբէք են

յանկալի և հաճելի . և բնական է ամենեցուն  
 հեռացուցանել յինքեանց զտարախոխիկ ախտ  
 թշուառութեան այլոց : Լսել զտրտունչս է  
 միօրինակ ձանձրացուցիչ թշուառայելոց և  
 երջանկաց . վն զի ո՛վ կամեսցի նսեմացուցանել  
 եկամուտ և պատահական տրտմութեամբ զգիւ-  
 ընցիկ նշոյլս զուարճութեան , զոր գտանեմք  
 ՚ի կեանս մեր . կամ ո՛վ արդեօք յաւելցէ յա-  
 դէտս տառապանաց իւրոց զյաւս թշուառուց  
 այլոց :

Արդէն մերձեալ է ժամանակն՝ յորժամ  
 հառաչանք և տագնաոք Նեկայայ այլ ոչ ևս  
 խառովեալ վշտացուցէ զմիտս այլոց . և հե-  
 տազօտութիւն երջանկութեան իմոյ զարդիս ՚ի  
 յանգ ելեալ զըւեցաւ : Եդեալ էմ ՚ի մտի  
 իմում առ ՚ի առանձնանալ յաշխարհէ և հե-  
 ուանալ յամենայն հրապուրանաց և ՚ի պատրա-  
 նաց նորա . թագուցից զանձն իմ ՚ի միայնակե-  
 ցութեան . ո՛չ նեղեցեն զիս հոգք և վիշտք  
 աշխարհի . այլ միայն խնամ կալայց առ ՚ի  
 հանդարտեցուցանել զխոկմունս մտաց իմոյ , և  
 կանոնաւորել զժամս իմ անընդհատ յաջորդութե  
 անվեաս և անմեղ գործառնութեանց . մինչև  
 միտք իմ մաքրեալ յաղտոյ երկրաւոր ցանկութեց  
 փութացեալ մտոց ՚ի վիճակն յայն , առ որ ա-  
 մենեքեան ճեպելով գնան . և յուսամ վայելել

վերստին անդամօր զցանկալի բարեկամութիւն սիրականին իմոյ Պեկուայ :

Մի շիտթեր զմիտս քո՝ սասայ Իմլակ՝ աննա-  
հանջելի դիտաւորութեամբք . և մի ծանրացու-  
ցաներ զբեռն կենաց քոյ՝ յօժարական կուտե-  
լով՝ ի վերայ նորա զցաւս թշուառութեանց .  
տաղտկութիւն միայնակեցութեան տեեսցէ կամ  
սաստկասցի , յորժամ ՚ի մոռայօնս արկչես ըզ-  
կորուստ Պեկուայ : Թէպէտ և զրկեալ էս  
դու ՚ի հեշտութենէ միոջէ , սակայն չունիս  
դու զիրաւայի պատճառս առ ՚ի մերժել ՚ի  
քէն զայլ հեշտութիւնս աշխարհի :

Յորմէ հետէ կորուսի զսիրելին իմ զՊե-  
կուա՝ սասայ դուստր արքային՝ օչ ունիմ ՚ի  
բայ ձգել կամ պահել զհեշտութիւն ինչ և  
զզուարճութի : Որ միանգամ չունի զոք սիրել  
կամ վստահանալ ՚ի նմա , պարտի ունիլ զսա-  
կաւ յոյս կամ զանկնկալուի : Արօտի նա արմա-  
տական սկզբան երջանկութե : Թերեւս հնար է  
մեզ հաւանիլ զի բերկրութիւնն այն՝ զոր աշ-  
խարհս այս կարէ մատուցանել՝ պարտի յառաջ  
դալ ՚ի միաւորութենէ ճոխութեան , գիտուե  
և բարութեան . ճոխութիւնն ոչինչ է՝ բայց  
միայն յորժամ առատաձեռնեմք զայն այլոյ . և  
գիտութիւնն ոչինչ է՝ բայց միայն յորժամ հա-  
ղորդեմք զայն այլոյ . սին իրի արժան է մա-

տուչանել զնոսա այլոյ . և ո՛ւմ՝ արդեօք այժմ՝  
բերկրեցայց ես առ ՚ի մատուցանել զնոսա և  
Բարութիւն միայն ընձեռէ մարդոյս զմխիթար-  
ութիւն՝ զոր հնար է վայելել առանց ընկերի  
միոյ . և մարթ է ինձ ՚ի կիր արկանել զգործս  
բարութիւն ՚ի վայրս առանձնակեցութեան :

Ո՛չ վիճեցից այժմ՝ ասաց իմլակ՝ թէ որքան  
առանձնակեցութիւնն կարէ ընդունիլ և յա-  
ռաջացուցանել զբարութիւն մարդկան և Չմտաւ  
ած զխոստովանութիւն բարեպաշտ ճգնաւորին և  
Յանկասցես դառնալ վերստին յաշխարհ , յոր-  
ժամ պատկեր ընկերին քոյ հեռասցի ՚ի խոկ-  
մանց մտաց քոյ : Ժամանակն այն՝ ասաց Նեկայա՝  
ոչ երբէք եկեսցէ , յորժամ հնար լիցի ինձ  
՚ի մոռացօնս արկանել զսիրականն իմ : Որքան  
առաւել կեցից յաշխարհի առ ՚ի տեսանել  
զմոլութիւնս և զյիմարութիւնս մարդկան , այն-  
քան առաւել մոռացայց զազնուաբարոյ պարզ-  
մտութիւն , զխոհական ծառայութիւն և զհաւա-  
տութիւն խորհրդապահութիւն սիրեցելոյն իմոյ Պե-  
կուայ :

Կացութիւն մտաց վշտացելոյ ՚ի յանկարծա-  
հաս թշուառութենէ՝ ասաց իմլակ՝ նման է մը-  
տաց առասպելէալ բնակչայ նորաստեղծ աշխար-  
հին : Յորժամ առաջին գիշերն եկն եհաս ՚ի  
վերայ սոցա , կարծէին նոքա թէ տիւն այլ ոչ

ևս դարձ արասցէ վերստին : Յորժամ անպէ  
 յաւոյ և տրտմութեան ժողովեալ կուտակին 'ի  
 վերայ գլխոյ մերոյ , մեք ո՛չ կարեմք տեսանել  
 ինչ անպէ քան զնսեմութիւն նոցա , և ո՛չ կա-  
 րեմք խորհիլ թէ զիարդ Տնայր է փարատել  
 զնոսա 'ի մէնջ . սակայն նորածագ տիւ մի յա-  
 ջորդեայ զգիշէլն յերկրին յայնմիկ . և տրտ-  
 մութիւնն ո՛չ կարէ ընդերկար մնալ առանց ա-  
 ռաւօտու մխիթարութեան և անդորրութեան :  
 Բայց սակայն որք միանգամ արդելուն զինքեանս  
 'ի ստանալոյ զսփոփանս մխիթարութեան , վա-  
 րին նոքա ըստ որում ունէին վարիլ վայրագա-  
 սուն բնակիչքն այնր երկրի , եթէ Տանէ ին նոքա  
 զաչս իւրեանց յորժամ պատեայ զնոսա խա-  
 ւար գիշերային : Միտք մեր նման մարմնոց մերոյ  
 կայ 'ի Տանապաղորդական Տոսանս . յամենայն  
 ժամու կորուսանեմք մեք զիր ինչ , և յամենայն  
 ժամու 'ի ձեռս բերեմք զիր ինչ : Դժուարին  
 է մտայ կամ մարմնոյ կորուսանել զբազում իրս  
 միանգամայն . բայց մինչ կենսական զօրութիւնք  
 մեան անվնաս , բնութիւնն գտցէ զմիջոցս նորո-  
 գութեան : Չեռաւորութիւն ունի զմի և զնոյն  
 ներգործութիւն 'ի վերայ մտայ որպէս 'ի վր-  
 աչայ մերոյ . և մինչ անցանեմք մեք ընդ Տո-  
 սանս կենայ , գոր ինչ թողումք զինի մեր՝ տե-  
 սանեմք յարժամ նուազեալ . և յոր ինչ մեք-



ձենամք՝ տեսանեմք զայն առաւելեալ 'ի մեծութեան : Մի թողուր զհոսանս կենաց քոյ լճանալ և անշարժ մնալ . եղիցի նա տղմալից և պղտորեալ առ 'ի չգոյէ շարժողութեան . արկ զքեզ վերստին 'ի հոսանս աշխարհի . Պեկուս սակաւ առ սակաւ հեռասցի 'ի մտաց քոյ . հանդիպեսցիս 'ի ճանապարհի քում այլոյ ու մեմն մտերիմ սիրականի . կամ ուսցիս տարածել զխոկմունս մտաց քոյ յընդհանրական թօսակցութեան :

Գոնեայ՝ ասաց արքայորդին՝ մի արկաներ ըզքեզ 'ի խորս յուսահատութե , մինչև հնարիցեմք զամենայն հնարս վանս սիրկութեան սիրականին քոյ . տակաւին բազումք ըստ պատուիրանաց մերոյ շրջին 'ի պէսպէս տեղիս 'ի խնդիր տարաբաղդ տրկնոջն այնորիկ . և ոչ այսչափ միայն՝ այլ և առաւելցուք զձանս հետազօտութեան մերոյ մեծագոյն խնամովք , եթէ խոստասցիս զամ մի ողջոյն սպասել առ 'ի տեսանել զկատարած հետազօտութեան մերոյ , առանց այլոյ իրիք անսխալութի զիտաւորութեան :

Նեկայա համարեցաւ զյառաջադրութիւնս զայս իրաւացի և խոհական , և խոստացաւ եղբոր իւրում առնել այնպէս . բայց խորհուրդս այս էր ծնունդ մտայն իմլակայ : Արդարև իմլակ չունէր բնաւ զյոյս գտանելոյ վերստին

զՊեկուա, սակայն կարծէր, զի եթէ Տնօր լինէր ինքեան հաւանեցուցանել զՆեկայա առ ՚ի համբերել զամ մի միայն, այլ ոչ ևս լինէր վտանգ մեկուսանալոյ նորա ՚ի վայրս առանձնութեան :

### ԳԼՈՒԽ • ԼԶ •

Նեկայա քաղաքին յիշէ շիրուսի Պեկուայ : Յոտանգլազ  
դիմանելուն որդիմանելուն նորա :

Նեկայա տեսանելով զի ոչինչ փորձ ֆայանսփորձ վասն փրկութեան սիրական իւրոյ, և խոստմամբ իւրով ՚ի բայ եղեալ զղիտաւորութի միայնակեցութեան՝ սկսաւ սակաւ առ սակաւ պարապիւլ վերստին ՚ի հասարակ հոգս և ՚ի հասարակ հեշտութիւնս : Բերկրէր նա առանց հաճութե իւրոյ ընդ դադարումն տրտմութեանց իւրոյ . և երբեմն սրտմտէր բարկութի վերայ անձին իւրոյ, յորժամ տեսանէր ըզմիտա իւր հեռացեալ ՚ի յիշողութենէ նորա՝ զոր տակաւին ոչ կամէր բնաւ մոռանալ :

Ապա կարգեաց նա զժամ մի յաւուր վասն մտածելոյ զարժանաւորութիս և զկաթոգնութի սիրոյ Պեկուայ, և ՚ի քանի մի շաբաթս մեկուս

սանայր առանձնակի ՚ի պայմանագրեալ ժամանակին , և դառնայր անդրէն ուղուցեալ աչօք և մթագնեալ կերպարանօք : Սակաւ առ սակաւ պայմանագրեալ տրտմութիւն նորս սկսաւ նուազիլ . և ինքն թոյլ տայր ամենայն հարկաւոր և շտապողական գործոյ առ ՚ի յամեյուցանել զնուէրս օրական արտաստաց իւրոյ : Ապա տեղի տայր տրտմութեան ո՛չ սյնպէս յաճախակի և սաստկութեամբ՝ որպէս առնէր յառաջագոյն . երբեմն մտանայր զոր ինչ ճշմարտիւ երկնչէր մտաբերել . և ՚ի վերջոյ զերծ կայոյց զանձն իւր բոլորովին յօրական տրտմութենէ և յարտաստաց :

Սակայն ճշմարիտ սէր իւր վասն Պեկուայ տակաւին ո՛չ էր նուազեալ : Հազարաւոր պատահմունք բերէին զնա ՚ի միտս իւր . և հազարաւոր պիտոյք՝ զոր ոչինչ բայց միայն վստահութիւն բարեկամութե կարէ լցուցանել առնէին զնա յաճախակի ներեալ և վշտացեալ : Սմին իրի թախանձանօք աղաչէր նա զիմլակ ոչ երբէք դադարիլ ՚ի խնդրելոյ զկորուսեալ սիրականն իւր խնամով հետազօտութեան , և ո՛չ երբէք թողուլ զհնարս ինչ մտայ անփորձ . զի գոնեայ միխթարութեամբ խորհեայի , թէ ո՛չ կրեսցայ նա զվիշտս զանցառութեամբ կամ պրզերգութեամբ իւրով : Սակայն զի՛նչ՝ ասաց նա

կարեմք ակն ունիլ 'ի հետազօտութենէ երջան-  
կութեան մերոյ, յորժամ տեսանեմք զհանգա-  
մանս կենաց լինիլ այնպէս, մի'չ զի երջանկուին  
ինքնին է պատճառ թշուառութեան: Ընդէ՛ր  
պարտիմք ջանալ առ 'ի գտանել զայն՝ զոր  
յորժամ 'ի ձեռս բերեմք՝ ո՛չ կարեմք առել  
զնա ազասոլ: Պարտիմ այսուհետեւ երկըն-  
չիլ առ 'ի նուիրել զսիրտ իմ գերազանցուե՛-  
որ թէպէտ պայծառ իցէ, կամ կաթոզնութե՛-  
որ թէպէտ քաղցր իցէ. զի մի գուցէ կորու-  
սանիցեմ կրկին զոր ինչ կորուսեալ եմ յանձն  
Պեկուայ:

### ԳԼՈՒԽ • ԼԵ:

Դասաբար արտայի: Լեւ Լուր Ինչ շնորհակալ:

Զինի եօթն ամսոյ մի 'ի հրեշտակայ անտի՛  
զոր առաքեալ էին 'ի խնդիր Պեկուայ յառուր  
խոստանալոյ Նեկայայ սպասել համբերութե՛-  
դարձ արար անդրէն 'ի սահմանայն Նուբիոյ ըզ-  
կնի բազում անպտուղ թափառմանց և հետա-  
զօտութեան. ասէր սա թէ Պեկուա էր 'ի  
ձեռս Արաբացի ի շխանի միոյ, որ ունէր զամ-  
բոյ կամ զբերդ մի 'ի ծագս Եգիպտոսի:

Արաբային՝ որոյ եկամուտն էր յափշտակութի՛ն յօժարէր վերադարձուցանել զնա և զերկուս ապաստանարկուս նր՛ , առնլով զփրկանս երկե-  
րիւր ունկեաց ոսկւոյ վասն նոցա :

Փրկանքն ո՛չ էր առարկայ հոգունակութե՛հ կամ հակառակութե՛հ : Դուստր արքային բերկ-  
րութեամբ փոխեցաւ ՚ի յափշտակութիւն մը-  
տաց , յորժամ լուա թէ կենդանի է սիրականն  
իւր , և հնար է այսպէս դիւրագին փրկանսու-  
րել զնա : Ո՛չ կարէր նա զվայրկեան մի յածե-  
ցուցանել զերջանկութիւն իւր և զՊեկուայ .  
այլ աղաչեաց զեղբայր իւր թախանձանօք առ  
՚ի յետս յլել զհրեշտակն հանդերձ վերոյա-  
սացեալ ոսկուլ : Խորհուրդ հարցին նոքա յիմ-  
լակայ սակս այսր յառաջագրութեան . սակայն  
նա ո՛չ հաւատայր վստահութե՛ք ՚ի ճշմարտութե՛ր  
բանից պատմողին , և ս առաւել երկբայէր  
զանկեղծութենէ Արաբայի իշխանին . վասն զի  
եթէ տային նմա յառաջագոյն զառատ պարգևս ,  
կարէր նա միտնգամայն արգելուլ զգերիսն և ըն-  
դունայն ստանալ զդրամն : Նա և վտանգաւոր  
համարէր նա առ ՚ի արկանել զանձինս իւրեանց  
ընդ իշխանութեամբ Արաբայւոյն՝ գնալով ՚ի  
սահմանս բնակութեան նորին . և ո՛չ ևս կարէր  
ակն ունիլ զի աստանդական աւազակն այն արկ-  
ցէ զանձն իւր ՚ի վտանդ ըմբռնելոյ և եկեսցէ



ի վայր ՚ի ստորին երկիրն . ուրանօր զօրք փնն-  
շային Եգիպտոսի կային ՚ի պատրաստի առ ՚ի  
ըմբռնել զնա կապանօք :

Ի ժուարին իմն է տուր և առս առնել նց՝  
որք ոչ կամին հաւատալ յանկեղծութիւն իրե-  
րայ : Այլ սակայն իմլակ զկնի սուղ ինչ խոր-  
հրդածութեան , պատուիրեաց հրեշտակի իւր-  
եանց առ ՚ի յառաջագրել Արաբացւոյն , զի ած-  
ցէ նա զՊեկուա տան այրուծիով ՚ի մենաս-  
տան սրբոյն Անտոնի , որ հաստատեալ կայ յա-  
նապատս վերին Եգիպտոսի . ուրանօր գնացեն  
տան այրուծիք ՚ի բանակէն մերոյ , և յայնմ՝  
վայրի հատուպուք նմա զփրկանս վասն ազա-  
տութեան Պեկուայ :

Հաւաստի էին նորա ամենեքին զի Արաբացի  
իշխանն ոչ ունէր ՚ի դերև հանել զյառաջա-  
դրութիւն իւրեանց . սմին իրի առանց կորու-  
սանելոյ զժամանակ յուճկէտս , փութանակի ե-  
լեալ նոցա անտի՝ գնացին առ մենաստանն վե-  
րոյասացեալ . և ՚ի հասանել նոցա անդ՝  
իմլակ գնաց ՚ի միասին ընդ առաջին հրեշ-  
տակին յամրոյ Արաբացի իշխանին : Հուսսե-  
լաս ցանկայր ուղեկից լինիլ նոցա . սակայն ոչ  
քոյր իւր և ոչ իմլակ հաւանեցան զյառաջա-  
դրութիւն ուղեկցութեան նորին : Արաբացին լի  
ազգային սովորութեան իւրում ցուցանէր զօ-

բէճս հիւրընկալութե մեծաւ խնամով և ճրջ դութեամբ այնոցիկ ամենեցուն՝ որք դնէին զանձինս իւրեանց ընդ իշխանութեամբ նորա . և զկնի քանի աւուրց էած նա զՊեկուա և զաղախնայս նորա գիւրագնաց ճանապարհօք առ տեղին վերոյասացեալ . յայսմ վայրի ստացեալ նորա զսակարկեալ փրկանս՝ դարձոյց զՊեկուա մեծաւ յարգանօք յաղատութիւն և ՚ի գիրկս բարեկամաց նր . և ոչ այսչափ միայն՝ այլ և յօժարակամ յանձն էառ առ ՚ի ուղեկցութեամբ գնալ ընդ նս ՚ի միասին ՚ի Այրօ , զի մի գույցէ կրեսցեն նոքա ՚ի ճանապարհին զվնասս բըռնութեան կամ յափշտակութեան աւազակաց :

Դուստր արքային և սիրական նորին գիրկս արկին միմեանց այնպիսի սիրով և կաթոգնութի՛ն՝ զորոյ զչափն անմարթ է աստանօր գրչաւ ճառել կամ ընդ բանիւք արկանել . և ՚ի միասին արտաքս գնացին առ ՚ի հեղուլ զարտասուս սիրոյ և կարեկցութեան ՚ի ծածուկ , և փոխադարձել միմեանց զբանս բարերարութեան և երաստագիտութեան :

Չկնի քանի ժամուց դարձ արարին նոքա ՚ի սեղանատուն մեծաստանին այնորիկ . ուրանօր առաջի վանահօր և միւս միանձանց արքայորդին խնդրեաց ՚ի Պեկուայ պատմել զդիպուածս անձին իւրոյ :

## ԳԼՈՒԽ • ԼԸ :

Պարսկաստանի Կոնստանդուպոլիսի Պեկոս :

Սպասաւորք ձեր յայտնեալ են ձեզ՝ առայ Պեկոս՝ թէ յինչպիսի ժամանակի և ո՞րով եղանակաւ Արաբացիքն տարան զիս ՚ի բաց յափշտակութեամբ : Հիացեալ էի վարմայմամբ ընդ անակնունելի և յանկարծական դիպուածս այս . և ես նոխ առաւել յազուշ կրթեալ ընդարմացեալ էի , քան թէ խռովեալ ՚ի կրից երկիւղի և կամ տրտմութեան : Ըփոթութիւն մտայ իմոյ սաստկայաւ յերագութենէ և յաղմկէ փախստեան մերոյ . թէպէտ և հեծելազօրք Սարակինոսայ պնդէին զհետ մեր և ջանային ըմբռնել զփախստեայսն , սակայն փութով ջանք նոցա երևեցաւ լինիլ ընդունայն . սկսան նոքա յուսահատիլ ՚ի հետապնդութեան իւրեանց , կամ երկնչիլ ՚ի նոցանէ՝ որոց ցույանէին զնշան սպառնալեայ :

Յորժամ Արաբացիքն տեսին զինքեանս լինիլ արտաքոյ վտանգի , նուազեցուցին զընթացս ճանապարհի իւրեանց . և որովհետեւ սակաւ նեղեալ էի ևս յարտաքին բռնուէ , սկսայ զգալ ՚ի ներքուստ զառաւել անդիւրուի ՚ի միտս իմ : Զկնի սուղ ինչ ժամանակի երեկոթս արարաք

մերձ առ աղբիւր մի ստուերայեալ ճառովք  
 'ի զուարճալի մարգագետնի . աստանօր բազմե-  
 ցաք մեք 'ի վերայ երկրի , և տեսաք մեր եդին  
 առաջի մեր զայնպիսի ուտելիս՝ զորս ինքեանք  
 վայելէին : Թոյլ ետուն ինձ նստիլ առանձին  
 ընդ աղանմայց իմոց մեկուսի յայլոց . և ոչ ոք  
 թեկն ածէր մխիթարել զմեզ ախոբանօք կամ  
 արհամարհել զմեզ անարգանօք : Աստանօր զա-  
 ռաջինն սկսայ ես զգալ զբովանդակ ծանրութի  
 թշուառութի իմոյ : Աղջկունք իմ անխօս անմը-  
 ռունչ յողբս և յարտասուս համակէին . և ակ-  
 նարկել յիս ժամանակէ 'ի ժամանակ՝ զախոբանս  
 օգնութի հայցէին : Ոչ գիտէի ես թէ յինչ  
 պիսի վիճակ ունէին դատազարտել զմեզ գե-  
 րիչք մեր . ոչ կարէի խորհիլ անգամ զտեղի գե-  
 րութի մերոյ , և ոչ կարէի իմանալ թէ ուստի՞  
 հնար էր ինձ գտանել զյոյս ազատութի մերոյ :  
 Անկեալ կայի ես 'ի ձեռս աւազակաց և բար-  
 բարոսաց . և չունէի զիրաւունս առ 'ի համարիլ  
 զգթութի նց առաւել քան զարդարութի նց . ո՛ր  
 թողցուք և զայս , զի գուցէ փոյթ լինէին նք  
 առ 'ի լյուրյանել զբորբոք ցանկութեան կամ  
 զմտայածին խորհուրդս բռնաորութի : Բայց  
 և այնպէս համբուրէի ես զաղջկունս իմ և  
 ջանայի առ 'ի հանդարտեցուցանել զմտս նց  
 ասելով , թէ գերեվարք մեր վարէին ընդ մեզ

համեստութեամբ, և քանզի տարեալ էին նք զմեզ անդր քան զկարողութիւն հետամուտ Սարակինոսաց, յայն սակա՛նչ գոյր վտանգ բառնալոյ զկեանս մեր բռնութեամբ ։

Յորժամ հանդերձեալ էին նոքա վերստին նստուցանել զմեզ ՚ի վերայ ձիոց, աղախնայք իմ փարեցան զինև, և յ՛կամէին բաժանիլ յինէն. սակայն ես պատուիրեցի նոցա մի զայրացուցանել զնոսա՛ որք ունէին զմեզ ընդ կարողութեամբ իւրեանց ։ ՚ի Ֆնայել մասն առւրն այնորիկ ճանապարհորդեցայք մեք լէ երկիր մի անմարդաբնակ և անկոխ. և ՚ի ծագել լուսնի ժամանեալ հասաք առ ստորոտ բլրոյ միոյ, ուրանօր բանակեալ կային Ֆնայեալ զօրականք իշխանին մերոյ ։ Հարեալ էին նոքա զվրանս իւրեանց, լուցեալ էին զհուրս և մեծաւ յարգութեամբ ողջունեցին զիշխան մեր իբրև զայր ոմն մեծադէս սիրեալ և պատուեալ ՚ի ծառայից իւրոց ։

Ածին նոքա զմեզ ՚ի վրան մի ընդարձակ, աստանօր հանդիպեցայք այնպիսի կանանց՝ որք եկեալ էին ընդ արանց իւրեանց յարչաւանս նոցա ։ Եդին նոքա առաջի մեր զընթրիս պատրաստեալս ձեռօք իւրեանց, և ես կերի զայն առաւել առ ՚ի սրտայնդէլ զաղախնայս իմ քաջալերութեամբ, քան թէ ընուլ զախօրժակ իմ՝



յազեցութեամբ : Յորժամ 'ի բայ առ ին անտի զսկաւառակս կերակրոյ , տարածեցին զգորգս տակս Տանգասեան քնոյ : Խոնջեալ էի ես վատակով . և յուսալով ակն ունէի գտանել 'ի քուն զայն թեթեւութի նեղութե , զոր բնութի Տաղիւ ուրեմն անտես առնէ տագնապեալ մարդական : Սմին իրի Տրամայեցի աղախնայց իմոյ առ 'ի Տանել յինէն զՏանդերձս իմ . յայտմ ժամու կանայքն բանակին ակնարկէին յիս մեծաւ մտադրութեամբ . և կարծեմ թէ ոչ ակնունէին տեսանել զաղջկունս իմ առ 'ի ծառայել ինձ այսպիսի խոնարհութեամբ և ակնածութեամբ :

Յորժամ մերկայայ յինէն զվերին պատմուձանն իմ , զարմայեալ էին նոքա Տիայմամբ ընդ շքեղութի Տանդերձից իմոյ . և մի 'ի նոցանէ եդ զձեռն իւր երկիւղիւ 'ի վերայ ասղնէնկար գործածոյն : Ապա գնաց նա արտաքս . և 'ի սակաւ ժամանակի դարձաւ անդրէն 'ի վրանն Տանդերձ այլով կանամբ միով , որոյ աստիճանն երևէր լինիլ գերագոյն , և որոյ իջխամութիւնն երևէր լինիլ մեծագոյն : 'Ի մտանել նորա 'ի ներքս՝ եցոյց զսուլորական նշան մեծարանայ և պատուոյ . և կալեալ զձեռանէ իմմէ՝ էած զիս 'ի վրան մի փոքրագոյն . աստամօր սիւսեալ կային գորգք ազնուագոյնք . և ես անյուսի զգիւշերն Տանդարտութեամբ յայտմ վրանի ընդ ա-

ղախնայց իմոց ։

Յառաքտուն ժառու՝ մինչ նստեալ կայի  
 'ի վերայ խոտոյն՝ առաջնորդ զօրացն եկն առ  
 'ի տեսանել զիս ։ Յարեայ ես 'ի տեղոջէ իմ-  
 մէ առ 'ի պատուել զնա յարգութեամբ . և նա  
 ետ ինձ զողջոյն մեծաւ յարգանօք ։ Ով պայծառ  
 տիկին՝ ասաց նա՝ բաղդ իմ բարեգոյն է քան  
 զյոյս ակնկալութեան իմոյ . կանայք իմ ասացին  
 ինձ թէ իշխանուհի մի կայ 'ի բանակի իմում ։  
 Տէր՝ պատասխանեցի ես՝ կանայք քո պատրեալ  
 են վրիպակաւ զինքեանս և զքեզ . ես ոչ եմ  
 իշխանուհի մի , այլ ապերջանիկ ոմն օտարա-  
 կան . որ կամէի կանխաւ հրաժարիլ յերկրէ  
 աստի , յորում այժմ պարտիմ լինիլ բանտար-  
 կեալ յաւիտեան ։ Ով ոք և իցես դու , կամ  
 յորմէ աշխարհէ և եկեալ իցես՝ պատասխա-  
 նեաց Արաբացին՝ զգեստք քո և զգեստք սղախ-  
 նայց քոց յուրանեն զաստիճան քո լինիլ գերա-  
 գոյն և զհարստութիւն քո լինել մեծագոյն ։  
 Ընդէ՛ր ուրեմն դու՝ որ կարես այսպէս դիւ-  
 րաւ հոգալ զփրկանս անձին քո՝ համարես զքեզ  
 անկեալ 'ի վտանգ մշտնջենական գերութեան ։  
 Առարկայ ասպատակութեանց իմոց է՝ առաւե-  
 լուլ և բազմապատկել զճոխութիւն իմ , կամ  
 լաւ ևս ասացից , առ 'ի ժողովել զհարկս 'ի  
 բնակչաց երկրին ։ Ողորթն իստայէլի են բնու-

կան և ժառանգական տեսարք այսր մասին կիս  
 սաքնտին . զոր յափշտակեալ են յետին սապա-  
 տակաւորք և վատատոհմ բռնաւորք . և մեք  
 պարտաւորիմք յետս պահանջել 'ի սոցանէ բըռ-  
 նութք սրոյ զայն ինչ՝ զոր ոչ կամին նոքա դար-  
 ձուցանել մեզ արդարութեամբ : Սաստիութիւն  
 պատերազմի ոչ առնէ զխտրութիւն ինչ 'ի մեջ  
 մարդկան . նիզակն՝ զոր ամբառնամք 'ի վերայ  
 մեղայ և իշխանութե՛ք երբեմն անկցի 'ի վերայ  
 անմեղութեան և հեղութեան :

Զի՛արդ սակաւ՝ սսացի ես՝ ակնկալեալ կար-  
 ծէի թէ յերեկեան աւուր նիզակն ամբարձեալ  
 անկանէր 'ի վերայ անմեղութեան իմոյ :

Տարաբաղդութի՛ք՝ պատասխանեաց Արաբա-  
 ցին՝ են կարի յաճախ 'ի վերայ աշխարհի . և  
 պարտ է մարդոյ յարածամ ակն ունիլ հանդի-  
 պիլ ձախողութեանց : Եթէ աչք թշնամութե՛ք  
 կարէր ուսանիլ զյարգութիւն կամ զգթութի .  
 գերազանցութիւն քո զերծ լինէր 'ի վնասուէ  
 և 'ի նախատանայ : Այլ սակայն հրեշտակք նե-  
 ղութեանց սիւռեն զտառապանս իւրեանց միո-  
 րինակ 'ի վերայ աւաքինեաց և մոլեաց , 'ի վր  
 հզօր և անզօր անձանց : Մի՛ լինիր դու ան-  
 մխիթար և վհատեալ . ես ոչ եմ իբրև մի  
 յանօրէն և յանագորոյն թախառականայն անա-  
 պատի . գիտեմ ես զօրէնս քաղաքական կենաց .

Հաստատեցից ես զսակ փրկանայ քոց . տո՛ւր զՏրամանագիր անցից հրեշտակի քում . և կատարեա՛ն զդաշնադրութիւն իմ գեղիցիկ Ճշդութե

Գիւրաւ մա՛րթ է ձեզ հաւատալ զի ես հաճեցեալ էի մեծագէս ընդ վերոյսասացեալ քանս Արաբացւոյն , և ընդ գովելի պատուասիրութիւն նորա . և տեսանելով իմ զի բուռն կիրք նորա էր ցանկութիւն արծաթոյ , այժմ սկսայ համարիլ զվտանգ անձին իմոյ սակաւահաւոր . քանզի հաւաստեաւ գիտէի զի զոչինչ գումար դրամոյ մեծ համարէիք դուք սակաւզատութեան Պեկուայ 'ի գերութենէ նորա :

Ասացի ես ի շխանին մերոյ , թէ ո՛չ ունէի արեկանել 'ի վերայ իմ զստգտանս ապերախտուէն , եթէ նա ցուցանէր ինձ զճորհս բարերարութե և մարդասիրութեան . և զոր ինչ արժան էր խնդրել վասն փրկութեան աղախնոյ միոյ հասարակ աստիճանի , հնա՛ր էր նմա գտանել 'ի բարեկամայ իմոյ . բայց սակայն չէ՛ր պարտ նմա համարիլ զիս իբրև զիշխանուհի ոմն մեծափառ : Իսկ նա ասաց թէ խորհեսցի 'ի միտս իւր զոր ինչ արժան է նմա պահանջել իբրև զփրկանս անձին իմոյ . և ապա ժպտելով մեծաբեայ զիս ողջունիւ և մեկնեցաւ անտի :

Յետ այսորիկ կանայքն փութանակի ժողովեցան շուրջ զինև , իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ

Չանալով լինիլ առաւել կամակատար և մեծարու  
քան զայլ . և ոչ այսչափ միայն՝ այլ և վարէին  
նոքա ընդ աղախնայց իմոց պատուով և յար-  
գութեամբ : Յառաջ գնայաք մեք , ողևորելով  
ի կարճ ճանապարհս յիւրաքանչիւր աւուր : Ի  
չորրորդում աւուր իշխանն մեր ասաց յիս , թէ  
սակ փրկանաց իմոց եղիցի երկերիւր ունկի ոս-  
կւոյ . և ես ոչ միայն խոստացայ հատուցանել  
նմա զայս քանակութի, ոսկւոյ , այլ ասացի նմա  
թէ յօժարակամ յաւելից ՚ի նոյն զայլ յիսուն  
ունկիս , եթէ նոքա պատուով վարեսցիս ընդիս  
և ընդ աղջկանց իմոց ՚ի ժամանակի գերութեան  
մերոյ :

Ես ոչ երբէք գիտէի յառաջագոյն զզորուի  
ոսկւոյ : Յայսմ ժամանակէ եղէ ես առաջնորդ  
զօրաց իշխանին մերոյ : Ըստ հրամանատարուե  
իմոց ճուեալ յառաջ խաղային նոքա յերկար  
կամ ՚ի կարճ ճանապարհս յիւրաքանչիւր ա-  
ւուր . և ուրանօր կամէի աւնուլ զհանգիստ ,  
իսկ և իսկ կատարէին նոքա զհաճոյս կամաց ի-  
մոց . և հարկանէին զվրանս մեր ՚ի տեղոջն յայն-  
միկ ուր կամէի երեկօթս առնել : Այժմ ու-  
նէաք մեք զուղոս և զայլ պէտս ուղևորուե .  
աղախնայք իմ միշտ էին առ ընթեր իմ . և ես  
զբօսեցուցանէի զանձն իմ քննելով և նկատե-  
լով զվարս թախանախան աղգայ , և նշմարեա-



լու զմնացուածս վաղնջական շինուածոց . որք  
 'ի նախնի դարս կառուցեալ էին առատապէս  
 յայտոսիկ անապատացեալ երկիրս , զարմանալի  
 հոյակապութք և մեծագործութեամբ :

Ի շխան գնդին մերոյ էր այլ գրագէտ և ու  
 սումնասէր . կարող էր նա ճանապարհորդել  
 առաջնորդութեամբ աստեղաց կամ կողմնացու  
 ցի . և նշանակեալ էր 'ի թախառական արշա  
 ւանս իւր զայնոսիկ տեղիս՝ որք կարի արժանի  
 են ծանօթութեան ճանապարհորդաց : Ասէր նա  
 ցիս , թէ յայնոսիկ տեղիս՝ յոր սակա բնակէին  
 մարդիկ և որք դժուարամատոյց էին 'ի բնուէ ,  
 շինուածքն մնացեալ են յարաժամ ըստ մեծի  
 մասին անմլաս և անապական . վասն զի՝ յոր  
 ժամ երկիր մի նուազի 'ի նախնական շքեղուէ  
 իւրմէ , որքան առաւել բնակեացին 'ի նմա մար  
 դիկ՝ այնքան առաւել կանուխ աւերեալ ամայ  
 ասցի : Առաւել դիւրին է գտանել զքարինս  
 'ի մեծագործ պարիսպս քան թէ 'ի քարահանս .  
 և մարդիկ առաւել փութով կործանեցին ըզ  
 պալատս և զտաճարս , առ 'ի շինել զմարմա  
 ըիոնեայ զխտուս և զգորփիւրեան խրճիթս :

## ԳԼՈՒԽ • ԼԹ •

Պարտութիւն դիպարացոյն Պէրոսոյ շարունակէս :

Չայս օրինակ թախառեալ շրջեաք մեք  
 յանապատին գքանի մի շաբաթս . սակայն ո՛չ  
 կարեմ ստուգիւ ասել թէ ի շիսանն մեր դե-  
 գերէր յանապատին 'ի զբօսանս և 'ի հաճութի  
 անձին իմոյ , թէ պէտ ինչն կամէր հաւանեցուցա-  
 նել զիս թէ այս էր առարկայ թախառման իւ-  
 րոյ , բայց ինձ առաւել հաւանական երևէր ,  
 պի նպատակ իւր էր յառաջացուցանել զօգուտ  
 անձին իւրոյ : Չանայի ես երևեցուցանել զանձն  
 իմ շատայեալ ուրանօր գժդմութի և դրժ-  
 կամակութիւն էին ընդունայն և անօգուտ . և  
 Չանքս այսօրիկ պիտանի էին յոյժ առ 'ի պա-  
 Տել զմիտս իմ 'ի յանդորրութեան . սակայն  
 սիրտ իմ յարժամ անբաժան էր 'ի սիրոյ Նե-  
 կայայ . և տագնապք գիշերոյ ծանրացուցանէին  
 մեծապէս զկշիռ զբօսանայ առուր : Աղջկունք  
 իմ՝ որք արկանէին զամենայն պհօքս իւրեանց  
 'ի վերայ տիկնոջ իւրեանց՝ սկսան անդորրացու-  
 ցանել զմիտս իւրեանց յորմէ հետէ տեսանէին  
 զիս պատուեալ և մեծարեալ յարգութեամբ .  
 և նուիրէին զանձինս իւրեանց պատահական թե-  
 թևութեանց վաստակոյ մերոյ՝ առանց անձկութե

սրտի կամ տրամութեան : Հաճեցեալ էի եօ  
 ընդ զուարճութիւն նոցա , և խրախուսեալ քա-  
 ջալերէի 'ի հաւատարմութենէ նոցա : Կորու-  
 սեալ էի այժմ մեծապէս զարհաւիրս վիճակի  
 գերութիւնս , յորմէ հետէ իմացայ թէ Արա-  
 բային այն թափառեալ շրջէր 'ի խոյզ և 'ի  
 խնդիր հարստութեան միայն : Ազահութիւնն  
 է մոլութիւն իմն միակերպ և դիւրանայ . այլ  
 իմացական հիւանդութիւն տարբեր են 'ի միմեանց  
 լը տարբերութիւն կազմութեց մտայ . որ միանգամ  
 քաղցրացուսցէ զհարստութիւն միոյ՝ դառնա-  
 ցուսցէ զհարստութիւն միւսոյ . սակայն դիւ-  
 րին ճանապարհ իմն գոյ առ 'ի հաճեցուցանել  
 զիման ազահին . բեր զարծաթ , և նա զոչինչ  
 արասցէ անտես :

'Ի վերջոյ եկեալ ժամանեցաք մեք 'ի բնա-  
 կութիւն իշխանին մերոյ , որ է տուն մի ամրա-  
 կառոյց և ընդարձակ՝ շինեալ 'ի քարանց 'ի  
 միում 'ի կղզեաց գետոյն Նեղոսի . որ անկանի  
 ըստ աստութիւն բազմոց ընդ արեւդարձիւ : Տե-  
 կին՝ ասաց Արաբային՝ հանգիցես դու զկնի ճա-  
 նապարհորդութեան քոյ զքանի մի շաբաթս  
 յայսմ տեղոջ . ուրանօր պարտիս համարիլ  
 զանձն քոյ իբրև զտէր ոմն գերագոյն : Պատե-  
 բազմ է՝ դործ և զբաղումն իմ . սմին իրի ընտ-  
 րեալ եմ զայս առանձին վայր բնակութեան ,

ուստի կարեմ ելանել արտաքս յանկարծուստ և յանակնկալ ժամու . և կարեմ զերծանիլ ՚ի հետամտութենէ թշնամեաց իմոց՝ փախստեաց անկանելով ՚ի նոյն : Չարդիս արժան է քեզ հանգչիլ աստանօր ապահովութեամբ և անվտանգ . գոն աստ սակաւ զուարճութիք , բայց չիք աստ երկիւղ վտանգի : Ապա էած նա զիս ՚ի ներքին ապարանս տան . և նստուցանելով զիս ՚ի վերայ պատուական բազմոցի՝ խոնարհեցոյց զգլուխ իւր յարգութեամբ : Կանայք նորա՝ որք համարէին զիս իբրև զմի ՚ի սիրականաց նորա՝ հայէին յիս չարխոն՝ ակնարկութեամբ . սակայն իմացեալ նոցա փութանակի թէ ես էի երևելի տիկին ոմն արգելեալ անդանօր վտան փրկեանաց իմոց՝ սկսան մրցիլ ընդ միմեանս ՚ի ցուցանել ինձ զպատիւ մեծարանաց և յարգութեան : Ի շխան մեր վերստին սկսաւ միսիթարել զիս՝ հաւաստեալ խոստանալով առ ՚ի փութանակի զարձուցանել զիս յազատութիւն . և նորուի տեղոյն այնորիկ հեռացոյց ՚ի մտոյ իմոց զվիշտ անհամբերութեան . և այսպէս ՚ի քանի մի առուրս կայի ես ՚ի բերկրանս զբօսանաց : Փոքրիկ աշտարակքն ամրոցին էին վայելուչ իմն ձևով բարձրացեալ . յորոց բարձրութենէ հնար էր տեսանել զերկիրն կարի ընդերկար , և նշմարել զբազմապատիկ պտոյտս շրոց գետոյն : Ի

Ժամ տունջեան դեգերեալ շոջէի ես տեղոջէ  
 'ի տեղի, ըստ որում ընթացք արեգական փո-  
 փոխէր զպայծառութիւն տեսարանին . և տե-  
 ասնէի զբազում իրս՝ զորս ո՛չ էի տեսեալ յա-  
 ռաջագոյն . կոկորդիլոսք և գետաձիք կարի յա-  
 ճախ գտանին յայսմիկ անմարգաբնակ երկրի . և  
 ես յաճախակի ակնարկէի 'ի նոսա երկիւղիւ և  
 արհաւրօք, թէպէտ և գիտէի զի ո՛չ կարէին  
 նոքա մնասել ինձ : Երբեմն երբեմն ակնկալել  
 սպասէի տեսանել զծովային համբարուս և ըզ-  
 տրիտոնս . քանզի լուեալ էի յիմլակայ, զի  
 Եւրոպայի ճանապարհորդք համարին զնոսա ա-  
 ռաւելագէս բնակիլ 'ի գետն Նեղոս . սակայն  
 ո՛չ երևեցան երբէք այսպիսի զարմանալի կեն-  
 դանիք . և յորժամ հարցափորձս արարի վասն  
 երևման նոցա՝ Արաբային ծիծաղեցաւ 'ի վերայ  
 դիւրահաւանութեան իմոյ :

'ի ժամ գիշերոյ Արաբային յամառութեան  
 ծէր զիս յաշտարակ մի կարգեալ վասն երկնայ-  
 ին դիտողութեանց . ուրանօր շանայր նա ուսու-  
 ցանել ինձ զանուանս և զկարգս աստեղաց :  
 Չունէի ես զմեծ յօժարութիւն առ 'ի ուսա-  
 նիլ զաստղաբաշխութիւն . սակայն հարկ էք  
 ինձ յօւցանել զմտադրութիւն առ 'ի տալ ու-  
 սուցչին իմոյ զհաճութիւն . որ կարի պատուա-  
 կան համարէր զանձն իւր թակս գիտութեան իւ-



րոյ . և ՚ի սուղ ժամանակի տեսի , զի գործ կամ  
 զբաղումն ինչ հարկաւոր էր ինձ առ ՚ի զբօ-  
 սեցուցանել զտաղտկութիւն և զերկարութիւն  
 ժամանակի , զոր պարտէի անցուցանել յարա-  
 ժամ ՚ի միջի մի և նոյն առարկայից : Չանձրա-  
 ցիւալ էի ՚ի տեսանել յառաւօտուն զայնպիսի  
 իրս՝ յորոց դարձեալ էի ՚ի բաց ձանձրութե-  
 յերեկոյնս . սին իրի ՚ի վախճանի առաւել յօ-  
 ժարամտութեամբ կամէի նկատել զշարս աստե-  
 ղայ՝ քան թէ զոչինչ առնել և մնալ անգործ .  
 բայց և այնպէս ոչ կարէի յարաժամ անդորրա-  
 ցուցանել զխոկմունս մտայ իմոց . և կարի յա-  
 ճախակի անցանէր ՚ի միտս իմ՝ քաղցր յիշատակ  
 նեկայայ , մինչ այլ ընկերակիցք իմ՝ կարծէին  
 թէ նկատեալ զմէի զհաստատութիւնս երկնից .  
 Փութանակի զմնի այսորիկ Արաբացին ելեալ  
 գնաց յերկար տեղիս առ ՚ի առնել զարշաւանս  
 աստատակութեան . և միայնակ բերկրութիւն և  
 մխիթարութիւն իմ՝ էր խօսիլ ընդ աղախնայց  
 իմոց զգիւպուածոյ անտի՝ որով ՚ի բաց վարե-  
 ցոք ՚ի քաղցր բնակարանայ մերոց , և զերջան-  
 կութենէն այնմիկ՝ զոր ամենեքեանս ակն ունէպք  
 վայելել ՚ի վախճան գերութեան մերոյ :

Գոյին անդ ՚ի բերդի Արաբացոյն քոյ կա-  
 նայք ոմանք՝ ասաց դուստր արքային . ընդէ՛ր ոչ  
 վարէիր ընդ նոսա ընկերութեամբ առ ՚ի վայ-

Ելել զբերկրանս խօսակցութեան նոցա, և բա-  
ժանորդ լինիլ զբօսանաց և զուարճուեց նոցա :  
Քի տեղոջ միում՝ ուրանօր գտանէին նոքա ըզ-  
զբաղումն գործոյ կամ զբերկրանս զբօսանաց,  
ընդէ՞ր դու միայնակ նստէիր հաշեալ և մաշել  
ընդունայն Թաղճութեամբ. կամ ընդէ՞ր դու  
ոչ կարէիր հանդուրժել զքանի մի ամիսս վիճ-  
ակին այնմիկ՝ յոր դատապարտեալ էին նք մինս  
չև ՚ի վախճան կենաց իւրեանց :

Ջբօսանք և զուարճութիք կանանց ամրոյին՝  
պատասխանեաց Պեկուա՝ էին միայն խաղք ման-  
կականք. որք ոչ կարէին պահել զմիտս իմ զբա-  
ղեալ մեծապէս. քանզի սովորել էի ես յառաջա-  
գոյն պարապիլ մտօք ՚ի ներգործութիս հզօրագոյն  
և վսեմագոյն խոկմանց : Հնար էր ինձ առնել  
զամենայն ինչ, զոր նք բերկրէին առնել գրե-  
թէ զգայական կարողութիք. մինչդեռ իմա-  
յական կարողութիք իմ Թռույեալ սաւառնէին  
չորջ զպարսպաւ մեծակառոյց կայրօյին : Ըն-  
թանային նոքա սենեկէ ՚ի սենեակ, ըստ որում  
Թռչուն մի ոստոստէ ՚ի վերայ մետաղեայ Թե-  
լոյ ՚ի մէջ վանդակի իւրոյ : Պարէին նոքա ՚ի  
դատճառաւ շարժութի միայն, ըստ որում գա-  
ռինք պարեն և կայթեն ՚ի դալարագեղ մարգա-  
գետինս : Երբեմն մի ՚ի նոցանէ կեղծէր զանձն  
իւր վիրաւորեալ կամ վնասեալ, զի մնայեալքն

էպիսկոպեալ շիրթեային . կամ թագուցանէր զինքն , զի այլքն որոնեացեն զնա հետազօտելով : Երբեմն ժամալաճառ լինէին նոքա նշմարելով զընթացս թեթեաշարժ մարմնոց ծածանելոց 'ի վերայ ջուրց գետոյն . և երբեմն յուսկէտոս պարագէին . 'ի տեսանել զազգի ազգի ձեւ , յորս փոխարկէին ամպք հաստատութե երկնից :

Ջբաղումն նոցա էր միայն ասղանագործութի , յորում ես և աղախնայք իմ երբեմն օգնէաք նոցա գործակցութեամբ մերով . տակայն գիտես դու զի միտք մարդոյ դիւրաւ զարտուղեալ շրջեայի 'ի գործառնութեանց մատանց . և ո՛չ ունիս կասկածել զի գերութի իմ և բաժանումն 'ի քաղցր տեսութե 'Նեկայայ' ո՛չ կարէին ընդունիլ զսփոփանս մխիթարութեան 'ի մետաքսապործ ծաղկանց :

Եւ ոչ այսչափ միայն՝ այլ և չէր հնար ինձ ակն ունիլ առ 'ի զգալ զմխիթարութիւն ինչ 'ի խօսակցութեան նոցա . քանզի զո՛րպիսի առուարկայից ունէին նոքա խօսիլ : Չոչինչ էին տեսեալ նոքա յաջխարհի . քանզի կեցեալ էին միշտ 'ի կանխասհաս մանկութենէ իւրեանց յայնմիկ անձուկ և 'ի դժուարակոխ տեղոջ . զոր ինչ ո՛չ էին տեսեալ նոքա երբէք 'ի կեանս իւրեանց , ո՛չ կարէին ունիլ զծանօթութի զայնմանէ . քանզի ո՛չ կարէին նոքա ընթեռնուլ :

Չունէին նորա զայլ խոկմունս, բայց միայն զգալսփարս այնպիսի իրաց՝ զորս տեսանէին յանդիման աչաց իւրեանց . և հաղիւ ուրեմն գիտէին զանուանս այլոց իրաց, բայց միայն զհանդերձից և զկերակրոց իւրեանց : Եւ քանզի գերագոյն համարէին նորա զիս քան զինքեանս սակօ գիտութե իմոյ, յաճախակի հրաւիրեալ կոչէին զիս առ ՚ի խաղաղացուցանել զկուիւս և զվէճս նոց . զորս ես դատեալ վճռէի անաչառութե և արդարութեամբ : Եթէ կարէի զգալ յանձին իմում զբօսանս և զբերկրութիւն՝ լսելով ըզգանգատս իւրաքանչիւրոց ընդդէմ՝ այլոց, երկար պատմութիւնք բանից նոցա ունէին արդէլեալ պահել զիս յաճախակի . սակայն շարժանութեք ատելութեան և քիստ նոցա էին այնքան դուրսաբեայ, մինչ զի ոչ կարէի ունկնդիր լինիլ պատմութեանց բանից նոցա առանց ընդմիջելոց զխօսս նոցա :

Զի՛արդ ուրեմն՝ ասաց Հաստեղան՝ Արած բացին այն՝ զոր ցուցեր լինիլ այր գիտնական և հանձարեղ յոյժ, կարէ գտանել զհեշտութիւնչ ՚ի կանանոցի իւրում . յորում լցեալ են այսպիսի անխնայ և անգէտ կանայք : Ե՛ն նորա կատարելապէս գեղեցիկ և չքնաղադէմ :  
 Ո՛չ կարօտին նորա՝ ասաց Պեկուս՝ այնմիկ անզօր և անարգ գեղեցկութեան, որ կարէ

ընիւ առանց զուարթութեան կամ վեճութեան, առանց արդուութեան խորհրդոց կամ գերազանցութեան առաքինութեան ։ Բայց սակայն յաջ առն միոյ նման Արարայոյն՝ այսպիսի գեղեցկութիւն երևէր իբրև ծաղիկ ինչ թագառահման քաղիալ և անհոգութեամբ ՚ի բաց ձգեալ ։ Թէպէտ և գտանէր նա ՚ի միջի նոցա զՏէշտութիւնս և զբերկրանս, սակայն ո՛չ էին նոքա բերկրանք բարեկամութեան կամ ընկերութեան ։ Յորժամ կանայքն զուարճութիւն խաղային շուրջ զնովա, նա հայեր ՚ի նոսա անհոգ գերակայութեամբ ։ յորժամ նոքա մըցէին ի միմեանս սակս մեծարանաց նորա, նա երբեմն ՚ի բաց դառնայր ՚ի նոցանէ զզուեալ և զայրացեալ ։ Եւ քանզի չունէին նոքա զուսումն և զգիտութիւն, խօսակցութիւն նոցա ո՛չ կարէր բառնալ ՚ի միջոյ զտարակութիւն և ըզձանձրութիւն կենաց ։ և քանզի չունէին նոքա զընտրութի կամաց, խանդաղատանք նոցա կամ երևոյթ խանդաղատանաց նոցա, շարժէր ՚ի սիրտ նր ո՛չ զպարծանս և ո՛չ զչորհակալութի ։ ո՛չ մեծ և բարձր համարէր նա զինքն ՚ի կարծիս իւր ՚ի պատճառս ժպտանաց և ուրախութեան կնոջ միոյ, որ ո՛չ տեսանէր զայլ արաբայց միայն զնա ։ և ոչ այսչափ միայն՝ այլ և ո՛չ համարէր զանձն իւր երախտապարտ սակս



այնորիկ իգական ակնածութեան, զորոյ ոչ կար  
 բեր երբէք իմանալ զանկեղծութիւն. քանզի  
 կինն ՚ի կիր արկանէր ճգամբ զամենայն զգա-  
 տիւ յարգութեան՝ ոչ այնքան առ ՚ի բերկրեցու-  
 ցանել զայր իւր՝ որքան առ ՚ի վշտացուցանել  
 զայլ կանայս սիրականս յաչս նորին: Տուր և  
 առ սիրոյ և կաթողութեան նոցա էր միայն  
 անսիրոյ՝ բաշխումն աւելորդ ժամանակի. զայն-  
 պիսի սէր ասեմ՝ զոր կարէ ոք ցուցանել ումեք,  
 զոր անարգէ արհամարհութեամբ. զայնպիսի  
 սէր իմա՝ որ ոչ ունի զյոյս կամ զերկիւղ, ըզ-  
 բերկրութիւն կամ զտրամութիւն:

Տիկին՝ ասաց իմլակ՝ ունիս դու զպատճառ-  
 առ ՚ի համարիլ վքեզ երջանիկ, սակս լինե-  
 լոյ քո այսպէս դիւրաւ ազատեալ ՚ի գերութի  
 Արաբացոյն: Չի՛արդ հնար իցէ ումեք՝ որ ու-  
 նիցի ՚ի միտս իւր զքաղց գիտութեան՝ յօժա-  
 րիլ ՚ի ժամանակի իմայական սովու առ ՚ի կո-  
 ռուսանել զայնպիսի խրախճան՝ որպէս զկենակ-  
 ցութիւն և զընկերութիւն Պեկուայ:

Յօժարիմ հաւատալ՝ ասաց Պեկուա՝ զի նա  
 առ ժամանակ մի անկեալ կայր ՚ի վարանս երկ-  
 բայութեան. վասն զի՝ թէպէտ և խոստացել  
 էր նա արձակել զիս յազատութիւն, սակայն  
 յրժամ յառաջադրէի նմա առաքել զհրեշ-  
 ցակ մի ՚ի կայրօ, նա դտանէր զպատճառանս:

ինչ յամեցման և կամէր երկարաձգել զգերութի  
 իմ յամբողջի իւրում : Մինչ ես արգելեալ  
 էայի ՚ի տան նորին , բազում անգամ արար նա  
 զասպատակութիւնս ՚ի մերձակայ երկիրս . և  
 թերևս ոչ ունէր նա դարձուցանել զիս յազա-  
 տութի ստանալով զփրկանս , եթէ աւար յափուշ-  
 տակութեան իւրոյ լինէր հաւասար ցանկութեց  
 իւրոյ : Յարժամ դարձ առնէր նա ՚ի տուն  
 քաղցրութեամբ և քաղաքավարութեամբ , պատ-  
 մէր ՚ի լսելիս իմ զանցս և զդիպուածս արշա-  
 ւանայ իւրոյ , զուարճայեալ բերկրէր առ ՚ի  
 լսել զդիտողութիւնս և զկարծիս իմ , և ջա-  
 նայր առ ՚ի յառաջացուցանել զգիտութի իմ  
 ՚ի կարգս և ՚ի շրջանս աստեղաց : Յորժամ  
 աղաչէի զնա թախանձանօք առ ՚ի առաքել  
 հրէշտակաւ միով զթուղթս իմ առ ձեզ , նա  
 շողորթեալ ողորէր զիս բանիւք պատուոյ և  
 հաւատարմութեան . և յորժամ տեսանէր զի  
 այլ ոչ ևս կարէր պատշաճագէս անտես առ-  
 նել զլինդրուածս իմ , խաղայր նա վերստին զօ-  
 րօք իւրովք յանապատս ՚ի պատճառս ասպատա-  
 կութեան , և թողյր զիս իշխել յամբողջի անդ  
 ՚ի բացակայութեան իւրում : Արի յոյ՛ վրչ-  
 տայեալ էի յանձն իմ ընդ այս խորամանկ յեր-  
 կարաձգութիւն նորին . և երբեմն երկնչէի ՚ի  
 միտս իմ՝ զի մի գույէ բարեկամք իմ ՚ի մոռա-

ցօնս աշկիւն զիս 'ի սրտաճառօ արտաքին տարաւ  
պայման յապաղման . քանզի ո՛չ լսելով ձեր  
լուր ինչ զինէն՝ ունէիք մեկնիւ յերկօնն Ե-  
գիպտոսի . և ես պարտէի զրաւել զառուրս Կե-  
նայ իմոյ 'ի գերութեան 'ի միում 'ի կողքեայն  
Նեղոսի :

'Ի վերջոյ համակեցայ ես 'ի խորս յուսա-  
հատութեան և վհատութեան . և այնքան սա-  
կաւ փոյթ ունէի զքօնեցուցանել զնա խօսակ-  
ցութեամբ իմով , մինչ զի նա առաւել յաճա-  
խակի խօսէր ընդ աղանձայց իմոյ :

Եթէ նա յարէր 'ի սէր ն՛ց կամ իմ՝ սիրու-  
հարուի նր լինելոյ էր մեզ հաւասարան Վտան-  
գաւոր և աղէտալի . և ես ո՛չ էի մեծապէս հա-  
ճեցեալ չ առաւելեալ բարեկամուի նր . Մնձ  
կութիւն սրտի իմոյ ո՛չ տուէր ընդերկար . քան-  
զի՝ մինչ գտանէի վերստին սուղ ինչ զուար-  
թամտութիւն , դառնայր նա առիս կրկին . և  
ես ո՛չ կարէի համբերել առ 'ի անարգել ըզ-  
նախկին տագնապս և զանձկութիւնս սրտի իմոյ :

Տակաւին անփոյթ երևէր նա առ 'ի դար-  
ձուցանել զիս յազատութիւն . և յազաղէր առ  
'ի առաքել զհրեշտակ մի վասն գտանելոյ 'ի  
ձէնչ զփրկանս ազատութեան իմոյ . և ո՛չ այս-  
չափ միայն այլ և գուցէ ոչ երբէք դնէր 'ի  
միտս իւր աղաատել զիս 'ի գերութենէ , եթէ

գործակալ ձեր ոչ էր ժամանեալ առ նա բարեբաղդութեամբ : Թէպէտ և խնդրակ իմ՝ ոչ էր բերեալ զոսկին ընդ իւր , սակայն Արաբային ոչ կարէր մերժել զփրկանս զայն՝ որ հըրաւիրեցաւ նմա վասն ազատութե իմոյ . Փութացաւ նա և պատրաստեցաւ առ ՚ի ճանապարհ պորդել յայտ տեղի , նման առն միոյ զերծելոյ ՚ի ցաւոյ ներքին խռովութենէ : Ետու ետ զողջոյն հրաժարման ընկերաց իմոյ յամբոյսի անդ բնակելոյ . սակայն նոքա թոյլ ետուն ինձ երթալ անտի ցուրտ անհողութեամբ և առանց ցուցանելոյ զնշան սիրոյ :

Նեկայա լուեալ զբանս պատմութեան սիրականին իւրոյ՝ յարեաւ և գիրկսէարկ նմա . և Հռասսելաս ետ Պեկուայ զհարիւր ունկիս ոսկւոյ . և նա ետ զայն Արաբայւոյն փոխանակ յիսուն ունկեացն՝ զոր խնայեցեալ էր թալ նմա յամբոյսի անդ :

## ԳԼՈՒԽ • Խ Ե

Պարտաւորութիւն ունի հոյ գիտականի օ

Աստի մեկնեալ նոյա ուրախութիւն՝ դարձ  
արարին 'ի կայրօ . այնքան զուարճութեամբ  
հաճեցեալ էին 'ի գտանել զինքեանս 'ի միա-  
սին՝ մինչ զի ոչ ոք 'ի նոյանէ գնայր կարի յա-  
ճախակի արտաքս : Արքայորդին սկսաւ յուր  
նեւ զսէր ուսմանց և գիտութեան . և յաւուր  
միում ասաց իմլակայ , թէ կամէր նուիրել  
զանձն իւր գրագիտութեան , և անյուրանել  
զմնացեալ աւուրս կենաց իւրոյ 'ի գրագիտական  
առանձնակեցութեան :

Մինչև է քո արարեալ զվերջին ընտրողու-  
քո՝ պատասխանեաց իմլակ՝ պարտիս յառաջագոյն  
քննել և նկատել զվտանգս նորին , և խօսակ-  
ցիւ թ ոմանց յայնպիսի արանց՝ որք համակեալ  
են յալիս ներութեան , անյուրանելով զաւուրս  
կենաց իւրեանց յընկերակեցութեան անձանց իւր-  
եանց : Չարդիս նորոգ եկեալ էմ 'ի գիտանոցե  
միոյ յիմաստնայեղջ աստեղաբաշխից , որք գտա-  
նին 'ի վերայ աշխարհի . սա անյուրանել է ըզ-  
բառաստուն ամս կենաց իւրոյ անխոնջ աշխատա-  
սիրութեամբ թեակոխելով 'ի շարժուածս և  
յերևոյթս եթերական մարմնոյ . և հանեալ



զհոգի իւր արտաքս պարսպելով 'ի տարժանա-  
կիւր և յանվերջանալի համարողուիս. ընդունի  
նա 'ի տուն իւր զքանի մի բարեկամն անգամ մի  
յիւրաքանչիւր ամսի, առ պատմել յականջս նց  
զմակաբերութիւնս և զեզրակայութիւնս իւր,  
միանգամայն և յուցանել նոցա զնորանոր գիւտս  
իւր: Ոմանք ներածելով ծանօթացուցին զիս նմա,  
իբրև զայր ոմն գիտնական և արժանի ծանօ-  
թութեան նորին: Այսպիսի անձինք՝ որք ունին  
զբազմապիսի խորհուրդս և զձոխաբան զրոյյս՝  
յարածամ քաղցրնկալ երևին յաչս նոցա, որոց  
խոկմունքն ընդերկար հաստատեալ միան 'ի վե-  
րայ միոյ միայնոյ առարկայի. և որք տեսանեն  
զպատկերս այլոց իրաց հեռանալ 'ի խորհրդոց  
մտաց իւրեանց: Բերկրեցուցի ես զնա գիտողու-  
թեամբք իմովք. զուարձացեալ բերկրեցաւ նա  
ընդ պատմութի ճանապարհորդութեց իմոց. և  
ուրախ էր յօժարակամ մտանալ զհամաստե-  
ղութիւնս երկնից, և սակաւիկ մի իջանել յաշ-  
խարհ ստորին:

'ի միւսում առւր պարագորդութե կրկին այց  
ելի աստեղաբաշխին. և այնքան բարեբաղդ էի  
եւ՝ մինչ դարձեալ կարացի հաճեցուցանել զնա  
բերկրութե նորանոր պատմութեց: Տեսանելի  
զի յարածամ պատաղեալ կայր նա 'ի վաստակս  
գրագիտութեան. և յարածամ ուրախ լինէր

առ 'ի Թեթևանալ 'ի ծանրութի յոգնապատանդ մակայուեց : Եւ քանզի ունէաք մեք զբազում գիտութիս՝ զոր կամեաք ուսանիլ 'ի միմեանց փոխանակեաք զիմաստս և զկարծիս մեր մեծաբերկրութեամբ : Տեսանէի զի օր յաւուր մտերմութիւն նորա առաւելոյր ընդիս . և յարժամ գտանէի վնոր պատճառ զարմանալոյ և զմայլելոյ ընդ խորութիւն խորհրդոց նորա և ընդ նրբութիւն մտաց նորա : Տեսութիւն մտաց նորա է ընդարձակաստարր . յիշողութիւն նորա է ընդունակ և պահեցողական . բանք և խօսք նորա են կարգաւորեալ . և ասայուածք նորա են պարզ և բայայայտ :

Անկեղծութիւն և բարերարութիւն նորա են համեմատ ուսմանց և գիտութեան նորին : Յօժարակամ խափանէ նա զնրբագոյն գրագիտական քննութիւնս իւր և զյանկալի մակայական ուսմունս իւր , առ 'ի գտանել զգիպողութիւն առնելոյ այլոց զբարերարութիւն խորհրդով և ճոխութեամբ իւրով : Յաւանձնարան սենեկի նորա 'ի կարի գործազբաղ ժամս նորին , ամենեքեան մտանեն անարգել , որք կարօտին օգնութեան նորին : Քանզի՝ ասէ նա՝ Թէպէտ և 'ի բաց վանեմ 'ի սենեկէ իմմէ զթմբբութի դարկակեցութեան և զգրգանս հեշտութեան , սակայն ոչ երբէք փակեցից զդուռն իմ ընդ-

դէմ սիրոյ և ողորմութեան : Տեսութիւնս  
թոյլ տուեալ է մարդոյ զխոհունն երկնից և  
եթերական մարմնոյ . սակայն պատուիրեալ է  
նմա զներգործութի առաքինութեան և զգործս  
բարերարութեան :

Արդարև՝ ասաց դուստր արքային՝ այրս այս  
է՛ երջանիկ :

Գնայի ես յայելութիւն նորա՝ ասաց իմլակ՝  
առաւել և առաւել յաճախակի . և յիւրա-  
քան չիւրում՝ նուագի և ս քան զևս սիրահար լի-  
նէի ընդ խօսակցութիւն նորին . վսեմ էր նա  
առանց ամբարհաւաճութեան . քաղաքալար էր  
նա առանց արուեստակեալ կեղծաւորութեան . և  
հաղորդէր զխօսս իւր այլոց առանց անապար-  
ծութեան : Չառաջինն ես՝ մեծախառ դուստր  
արքայի՝ ունէի զկարծիս քո զնմանէ և համարէի  
զնա երջանկագոյն՝ ի մէջ ամագգի մարդկան . և  
յաճախակի խնդակից լինէի ընդ նմա սակս եր-  
ջանկութեանն՝ զոր նա վայելէր ՚ի պաշտօնի իւ-  
րում : Երևէր նա զոչինչ լսել անհոգութեմ  
բայց միայն զգովեստս վիճակի իւրոյ . և գովո-  
ղաց իւրոց յարածամ դարձուցանէր զհասարակ  
իմն պատասխանի . և փոխէր զնիւթ գովութեմ  
նոյա յայլ իմն առարկայ խօսակցութեան :

Տեսանելով իմ զնա յօժարեալ առ ՚ի լի-  
նիլ հաճեցեալ յայլոց և առ ՚ի հաճեցուցա-

նել գայլս, իսկ և իսկ սկսայ խորհիւ զի վըշ-  
 տագին խոկումն ինչ տառապեցուցանէր զմիտս  
 նորա սաստկապէս: Նա յաճախակի հայէր ակըն-  
 կառոյց ՚ի գունտ արեգական, և թողոյր զձայն  
 իւր նուազիւ ՚ի ժամ խօսակցութեան իւրոյ: Յորժամ  
 էաք մեք առանձին՝ երբեմն երբեմն  
 հայէր նա յիս անխօս լուութեամբ. և ցուցա-  
 նէր ՚ի դէմս իւր զայնպիսի հայեցուածս, որով  
 ցանկայր յայտնել ինձ զայն ինչ՝ զոր տակաւին  
 դնէր ՚ի մտի իւրում առ ՚ի թագուցանել ճաճ-  
 կութեամբ: Յաճախակի կոչէր նա զիս սաստիկ  
 պատուիրանօք շտապոյ և շութախութե, թե-  
 պէտ և յորժամ երթայի առ նա՝ չունէր նա  
 ճանուցանել ինձ զիր ինչ նորանշան: Եւ եր-  
 բեմն՝ յորժամ կամէի մեկնիւ յընկերակցութե  
 նորա՝ կոչէր նա զիս յետս, զկայ առնոյր սա-  
 կաւիկ մի, և ապա թոյլ տայր ինձ երթալ  
 անտի:

## ԳԼՈՒԽ • ԽԱ :

Ապրիլ 20-ին յայտնէ շաբաթուորական հարցն էլ :

Ի վերջոյ եհաս ժամանակն այն՝ յորժամ ճածկութի խորհրդոյ նորա յայտնի երևեցաւ ։ Յանցելում գիշերի նստեալ էաք մեք ՚ի փոքրիկ աշտարակի տան նորին . և զննեաք զվերելս միոյ յարբանեկայն լուսնթագի ։ Յանկարծահաս մըրիկ իմն մթագնեաց զերկինս , և ընդմիջեալ խափանեաց զգիտողութիւն մեր ։ Սակաւիկ մի նստեալ մնայաք մեք անխօս և անմուռնչ ՚ի մթութեան . և ապա նա սկստասել ինչ զհետագայ բանս ։ Իմլակ՝ բազմօք յառաջ համարեալ եմ՝ զբարեկամութիւն քո իբրև մեծագոյն երջանկութիւն կենաց իմոյ ։ Անարատութիւն առանց գիտութեան է՝ սկար և անպիտան . և գիտութիւն առանց անարատե՛ է՝ վտանգաւոր և ասաւոր ։ Գտեալ եմ էս ՚ի քեզ զամենայն որպիսութիւն հարկաւորս վնհաւատարմութեան , բարերարութեան , փորձառութեան և արիութեան ։ Ընդ երկար կատարեալ է իմ՝ զպաշտօնմի՝ զոր կանուխ պարտիմ՝ թողուլ ՚ի կոչմանէ բնութեան . և բերկրեցայց ՚ի ժամու սնկարողութեան և ջաւոյ առ ՚ի սւամդել քեզ զայն ։



Աստեղաբաշխն դադարէլ 'ի խօսելոյ՝ համա-  
բէի ես զանձն իմ պատուէլ այսուիկ գուրուք նո-  
րին . և երդմամբ ասացի ցնա , թէ որ ինչ կարեր  
յառաջացուցանել զերջանկուի նր , ունէր նոյն-  
գունակ առաւելուլ զերջանկուի անձին իմոյ :

Իմլակ՝ կրկնեաց աստեղաբաշխն՝ լուր զբանս  
իմ , զոր ոչ հաւատասցես առանց դժուարուէ և  
երկմտուէ : Յընթացս հինգ ամաց սեպհականէի  
ես զկարգ փոփոխուէ օդոյ , և զբաժանումն ե-  
ղանակաց տարւոյն . արեգակն ունկնդիր է եղեալ  
պատուիրանաց իմոյ , և անցեալ է շրջանա-  
յարեադարձէ 'ի յարեադարձ առաջորդուք  
իմոլ . ամպքն հրամանաւ իմոլ հեղեալ են 'ի  
վայր զհեղեղս անձրեաց . և ջուրք Նեղոսի  
յառաւելութէ իւրեանց ծածկեալ են զգաշտս  
պատուիրանաւ իմոլ . խափանեալ եմ ես ըզ-  
սաստկութիւն շնիկ աստեղ . և նուազեցուցեալ  
եմ զբորբոքս շերմութեան խեցգետնի : Հորկքն  
միայն 'ի մէջ ամենայն տարրական զօրուէց մինչ  
յարդ ոչ են հնազանդեալ իշխանուէ իմում .  
և հազարաւոր անձինք տարաժամ մեռեալ են  
'ի սաստկութենէ մրրկաց գիշերահաւասարի .  
զոր անկարող գտի զանձն իմ արգելուլ կամ  
խափանել : Վարեալ է իմ զայս ծանրակշիռ  
պաշտօն , ճիշդ և անթերի արդարութեամբ :  
և բաշխեալ եմ զանձրե և զարե պէսպէս

ազգաց աշխարհի մեծաւ անաչառութեամբ ։  
 Զի՞նչ ունէր լինիլ թշուառութիւն կիսոյ  
 մասին հողագնտին մերոյ , եթէ ես կարգեալ էի  
 զամպս առ ՚ի անձրեւել ՚ի վերայ մասնաոր  
 գաւառաց , կամ սահմանեալ էի զարեգակն  
 առ ՚ի ճառագայթել միայն ՚ի կողմն միոյ հա-  
 սարակածի ։

### ԳԼՈՒԻՒ • ԽԲ ։

Կրճի՛ սափեղանի՛ն է Բացարեւու և Ելմարբեալ ։

Կարծեմ թէ աստեղաբաշխն եգիտ յիս ՚ի  
 մթու՛ն տեղոյն այնորիկ զնշանս ինչ զարմայման  
 և երկբայու՛ն . քանզի զկնի սակաւիկ մի զկայ  
 առնլոյ , դարձեալ սկսաւ ասել այսպէս ։

Ո՛չ զարմայայց և ոչ վշտայայց երբէք , ե-  
 թէ դու գիւրաւ ինչ հաւատասցես բանից իմոյ .  
 քանզի անտարակոյս ես եմ առաջինն ՚ի մեջ  
 մարդկային էակաց՝ որում յայտնեցաւ այս խոր-  
 հուրդ զարմանալի ։ Նա և շէ՛ մարթ ինձ գի-  
 տել , թէ այս գերազանցութիւն անձին իմոյ ի-  
 սկ պարգև թէ պատուհաս ինչ . յորմէ հետե  
 իմացեալ գիտայի զայս խորհուրդ բազմաօ-  
 գուտ , եղէ՛ ես սակաւ երջանիկ քան թէ էի

յառաջագոյն • և ոչինչ բայց միայն ներքին ծա-  
նօթութիւն բարի դիտաւորութե կարողայուցած  
նէր զիս առ 'ի համբերել տաղտկութեան ան-  
խոնջ տքնութեան :

Արքան ժամանակ է տէր՝ ասայի ես՝ յորմէ-  
հետէ այս ծանրակշիռ պաշտօն մտեալ է 'ի  
ձեռս քոյ :

Արդ տանն ամք են՝ ասայ նա՝ յորմէ հետէ  
դիտողութիւնս առնելով յամ առուր 'ի վերայ  
փոփոխութեանց երկնից՝ ցանկացայ խորհիւ, զի  
եթէ ունէի ես զկարողութիւն 'ի վերայ փոփո-  
խութեանց եղանակայ, կարող լինէի հեղու-  
ղմեծագոյն առատութի 'ի վերայ բնակչաց երկ-  
րին : Այս խոկումն հաստատեալ սեղմեցաւ 'ի  
վերայ մտաց իմոց • և ես նստեալ պարսպէի  
զտիւս և զգիշերս յերեւակայական իշխանութե,  
հեղուլ 'ի վերայ այսր երկրի և 'ի վերայ այնր  
նահանգի զանձրևս պտղաբերութեան, և զկնի  
իւրաքանչիւր անձրևայ, տարածեալ սիրտէի  
յայնտիկ երկիրս զչտխաւոր ճառագայթս արև-  
ու : Մինչ ցարդ ունէի ես միայն զկամս առ-  
նելոյ զբարերարութիւնս • և ոչ կարծէի զի հը-  
նար լինէր ինձ երբէք ունիլ զկարողութիւն  
բարեբարելոյ :

Յառուր միում՝ մինչ հայէի ես 'ի դաշտս  
չորայեալս 'ի շերմութենէ արևու՝ յանկարծա-

կի զգացի 'ի միտս իմ զցանկութիւն իմն առաքելոյ զանձրես 'ի վերայ հարաւային լերանց և սփռելոյ զՏեղեղս Նեղոսի 'ի մէջ երկրին: 'Ի շտապ տագնապի երեակայութեան իմոյ հըրամայեցի անպոյ Տեղուլ զյորդութիւն անձրեաց. և բողբոջտելով զժամանակ հրամանի իմոյ ընդ ժամանակի յորդութեան շուրջն Նեղոսի տեսի զի անպքն հնազանդեալ էին բանից շըրթանց իմոց:

Ո՞չ ազաքէն այլ ինչ պատճառ՝ ասացի ես՝ կարէ յառաջ բերել զայս զուգընթացութիւն և Նեղոս ո՞չ բարձրանայ յարածամ 'ի նիւն առուր:

Մի՛ հաւատար՝ ասացնա անհամբերութեամբ՝ զի այսպիսի դիմադրութիւնք կարէին վրիպել յաչայ իմոց. աբարի ես զերկար առարկութիւն ընդդէմ սոգայուցի և իրազեկութեան իմոց, և տաժանէի ընդդէմ ճշմարտութեան մեծաւ կամակորութեամբ և յամառութեամբ: Երբեմն համարէի զանձն իմ խելագարեալ. և ո՞չ իշխէի յայտնել զայս խորհուրդ այլոյ ումեք բայց միայն առ միոյ նման քեզ. քանզի կարող ես որոշել և զանազանել զզարմանալիս յանհարաւորաց և զանհաւատալիս 'ի սուտ իրաց:

Ընդէ՛ր դու տէ՛ր՝ ասացի ես՝ կոչէս զայն անհաւատալի, զոր դու գիտես կամ համարիս գիտէլ առ 'ի լինիլ ճշմարիտ:

Ասան զի՛ սոսայ նա՛՝ ո՛չ կարեմ՝ հաստատել՝  
 զայն արտաքին վկայութեամբ իւրիք . և ես կա-  
 րի բարութի գիտեմ՝ զօրէնս ապայուցութեան .  
 և ո՛չ կարեմ՝ խորհիլ զի ապայուց իմ՝ պարտի  
 ներգործել՝ ի միտս այլոյ ուրութի, որ ո՛չ կարե-  
 նման ինձ իրազեկ լինիլ ներգործութեան նորին .  
 սմին իրի ո՛չ ջանացայց վիճաբանութեամբ հա-  
 ւանական ընծայել քեզ զբանս իմ : Բաւական  
 իմն է զի զգամ՝ ես զայս իշխանութի, զի ընդ-  
 երկար սեպհականեալ եմ՝ զայն, և յամենայն  
 աւուր ՚ի կիր եմ արկեալ զնոյն : Բայց սակայն  
 կեանք մարդոյ է՛ կարճ և դիւրանցիկ . զաւբ և  
 տկարութիւնք ծերութեան առաւելուն ՚ի վերայ  
 իմ . և եկեսցէ փութանակի ժամանակն այն՝ յոր-  
 ժամ կանոնաւորիչն տարւոյն պարտի խառնիլ  
 ՚ի հող գերեզմանի : Հոգունակութի՛ կարգելոյ  
 ինձ զյաջորդ ոմն՝ խռովեալ է զհոգի իմ լե-  
 երկար . անյուշեալ եմ զբազում տիւս և զբա-  
 զում գիշերս բազդատելով զամենայն անձինս՝  
 ընդ որոյ ունիմ զճանօթութիւն . սակայն ո՛չ  
 եմ գտեալ ՚ի միջի նոյա զոք այնպէս արժա-  
 նաւոր և պատուական որպէս զքեզ :



## ԳԼՈՒԽ • ԽԳ •

Առիւնքս լինաւ ի յճրդիւնս շնորհիւնս և շնորհիւնս Իւր ։

Սմին իրի լուր ինձ՝ ասաց աստեղաբաշխնս  
 ցիմլակ՝ և այնպէս մտադրութեամբ ՚ի միտ առ  
 զբանս իմ՝, ուր բարօրութիւն աշխարհի պահանջե  
 ջէ զնոյն ։ Եթէ պաշտօն թագաւորի միոյ հա  
 մարեսցի դժուարին և տարժանելի, որ ունի մի  
 այն զխնամն հոգումակութեան ՚ի վերայ քանի  
 մի միլիոն անձանց, որոց ոչ կարէ նա առնել  
 զմեծ բարութիւն կամ զմեծ ինչ մլաս, ա  
 պա ուրեմն ո՛րքան մեծ եղիցի հոգումակութիւնս  
 և անձկութիւնս նորա՝ զորմէ կատեալ կայ ներ  
 գործութիւն տարերայ, և մեծամեծ պարգևք  
 լուսոյ և ջերմութեան ։ Սմին իրի լուր ինձ  
 մեծաւ մտադրութեամբ ։

Քննեալ եմ ես խնամով և սրտի մտօք ըզ  
 դրութիւն երկրի և արեգական, և ձեւայու  
 ցեալ եմ զանթուելի գաղտնիարս՝ յորս փոխե  
 ցի զզիրս նոյս ։ Երբեմն ՚ի բայ դարձուցի զա  
 ռանցս երկրին, և երբեմն փոփոխեցի զծիր խա  
 ւարման արեգական, սակայն ոչ գտի երբէք ըզ  
 հնարս առ ՚ի հասուցանել զօգուտ ընդ հանուր  
 աշխարհի, զոր ինչ երկիր մի շահի, միւս եր  
 կիր մի կորուսանէ զնոյն երեւակայական փոփո

խուժեամբ, և ս և առանց խորհելոյ զՏեռաւոր կարգս արեգակնային դրութեան՝ զորոց չունիմք մեք զճանօթութի : Սմին իրի՝ ի մատակարարել քո զեղանակս տարւոյն՝ մի հաճեր զհամս քո խորհելով, զի կարես դու գերահաշակ ընծայել զանուն քո թանայն ապագայից, փոփոխելով զկարգս չորից եղանակաց : Յիշատակութիւն պնիրաութեան ոչ է համբաւ պատուական և ցանկալի : Եւ ոչ այսչափ միայն՝ այլ և ոչ պարտիս աշարութեամբ ճորհսունիլ ի վերայ մասնաւոր նահանգաց : Մի՛ երբէք զրկեացես զայլ երկիրս ի յորդութենէ անձրեաց, առ ի հելուլ զայն առատաբար ի վերայ երկրի քո : Բաւական են մեզ ջուրքն Նեղոսի :

Յորժամ աստեղարաշին աւարտեաց զխօսս իւր՝ ես խոստացայ նմա թէ՛ յորժամ սեպհականցից զայն իշխանութիւն, ի կիր արկից զայն անդրդուելի արդարութե և անաշարութե . և նա թոյլ ետ ինձ երթալ՝ սեղմելով զձեռն իմ : Սիրտ իմ՝ ասաց նա՛ այժմ մնացէ՛ ի յանդորրու . և բարեխարութիւն իմ այլ ոչ ևս խառովեսցէ զանդորրուի անձին իմոյ : Գտեալ է իմ զայր, ոմն իմաստուն և առաքինի, որում

մարթ է ինձ կամակար և զուարթագին թողուլ զժառանգութիւն արեգական :

Աւարտեալ իմլակայ զգատմութիւն իւր՝ արքայորդին ունկնդիր եղև նմա մեծաւ զգուշութե և ծանր մտադրութեամբ : Սակայն դուստր արքային ժպտեցաւ . և Պեկուս մերձ էր թալկանալ ծիծաղելով : Տիկնայք՝ ասաց իմլակ՝ ո՛չ մարդասիրութիւն է և ո՛չ իմաստութիւն առ ՚ի ծաղր առնել զսաստկագոյն տառապանս մարդկան : Սակաւք կարեն գտանել զգիտութիւնս այսորիկ . և սակաւք կարեն ՚ի կիր արկանել զառաքինութիւնս նորա . բայց հնար է ամենեցուն կրել զաղէտս և զթշուառութիւնս նորա : Յանհաւաստութեանց այժմեան վիճակի մերոյ . առաւել սոսկալին և զարհուրելին է անհաստի տեղութիւն բանականութեան :

Դուստր արքային բարեօք ՚ի միտ էառ ըզյանդիմանութիւն իմլակայ . և սիրական նորա ամաչեալ պատկառեցաւ : Հուսսեղատ առաւել սաստկապէս զգածեալ ՚ի բանից նորա՝ եհարց յնա թէ արդեօք այսպիսի տկարութիւնք մտայ է՞րն յաճախադէպ . և թէ զի՞արդ հասանէին նոքա ՚ի վերայ մտայ մարդկան :



միայն յորժամ եղանի այն անդուսդ և ըմբոստ-  
 և ըստ երևութիւն ներգործէ 'ի խօսս և 'ի  
 գործս մարդկան :

Գգուել և հաճել զկարողութիւն ստեղ-  
 ծաբանութեան , և առաքել զերևակայութիւնն  
 արտաքս 'ի թուիչս հետազօտութեան՝ է՛ յաճա-  
 խակի զբօսանք այնոցիկ ամենեցուն , որք կարի  
 յոյժ բերկրին յանխօս և յանմունչ խոկմունս  
 խորհրդոց : Յորժամ եմք մեք միայնակ՝ միտք  
 մեր ո՛չ է յարժամ՝ զբաղեալ . գործ խորհե-  
 լոյ և հնարելոյ կարի խիստ է առ 'ի տեւել  
 ընդերկար . եռանդն հետազօտութեան երբեմն  
 տեղի տայէ անգործութեան և տաղտկութեան :  
 Որ միանգամ զոչինչ արտաքին իրս ունի առ 'ի  
 զբօսեցուցանել զանձն իւր , պարտի գտանել  
 զբերկրանս զբօսանայ 'ի խոկմունս խորհրդոց  
 իւրոց . և պարտի համարիլ զինքն որ ինչ ո՛չ  
 է . քանզի ո՛վ որ է հաճեցեալ չէ այն՝ որ ինչ  
 է : Ապա նա շրջեալ ձեմէ 'ի խորս անվախ-  
 ձան աղագայ ժամանակայ . և ընտրանօք հա-  
 ւաքէ յամենայն երևակայական վիճակաց զայն  
 ինչ՝ զոր յայսմիկ ժամու մեծապէս յանկայ ու-  
 նիլ . զբօսեցուցանէ զցանկութիւնս իւր անհնա-  
 րաւոր զուարճութեամբք . և պարգևէ հպար-  
 տութեան իւրում զանհասանելի իշխանութի :  
 Միտք մարդոյ կայթէ պարէ տեսարանէ 'ի



տեսարան , միաւորէ զամենայն զբերկրանս և ըզբօսանս յամենայն միաւորութիւնս . և ո՛չ այսչափ միայն՝ այլ և զեղևի և շուայտի յայնպիսի բերկրութիւնս՝ զորս բնութիւն և բաղդ ո՛չ կարեն պարգևել յսմ՝ առատուէց իւրեանց :

Երբեմն մասնաւոր խոկմունք և խորհուրդք ինչ կալեալ ունին զմտադրութիւն մարդոյ . և յալագս այսորիկ ՚ի բաց ձգեալ մերժէ նա զայլ ամենայն իմացական բերկրութիս և զհաճութիւնս . միտք նորա տաղտկացեալ և ձանձուրայեալ կամ անգործ և անգբաղ մնացեալ յաճախակի դառնայ անդրէն ՚ի սիրելի պատկեր խոկմանոյ իւրոյ . և խրախայեալ բերկրի ընդ քաղցրահամ բանս ստութեան , յորժամ նեղեալ վշտանայ ընդ անախորժ դառնութի ճրջմարտութեան : Սակաւ առ սակաւ պնդեալ հաստատի իշխանութիւն երեւակայութի . զառաջինն եղանի նա գոռոզ և սէգ . և ապա ինքնիշխան և բռնական . յայնժամ ստութիւնք սկսին ներգործութիւնս առնել իբրև ճշմարտութիւնք . սուտ կարծիք հաստատեալ սևեռին ՚ի խորս մտայ . և կեանքն անցանէ յերթագս յափշտակութեան մտայ կամ տառապանաց և վշտայ :

Տէ՛ր՝ այս է մի ՚ի վտանգայն առանձնակեցութեան , զոր ճգնաւորն խոստովանեցաւ ո՛չ

յարաժամ յառաջացուցանել զբարութի, և թըշուառութիւն աստեղբաշխին եցոյց ոչ յարաժամ լինել յաջողակ և նպաստամտոյց իմաստութեան :

Այլ ոչ ևս՝ ասաց Պեկուս՝ համարեցայց զանձն իմ դշխոյ Եթովպիոյ, զոր երեակայուին տայր ինձ պատկերացուցանել ՚ի միտս իմ : Անցուցեալ է իմ զբազում ժամս՝ յորս բամբիշ իմ թոյլ տայր ինձ մնալ անգործ՝ ուղղելով զարարողութիւնս և կարգադրելով զիրս արքանեայն Եթովպիոյ . նուաճեալ էմ ես զհպարտութիւն հզօրաց, և կատարեալ էմ զաղաչանս կարօտաւորաց . կերտեալ էմ զնորանոր պալատս ՚ի բարեյաջող գիրս երկրի . տնկեալ էմ զանտառս ՚ի կատարս բարձրաբերձ լեռանց, և ցնծալով բերկրեալ էմ ՚ի բարեգործութե և յառատաձեռնութեան թագաւորութեան . և ոչ այսչափ միայն՝ այլ և երեակայութիւնս իմ այնքան սաստկացեալ էր ՚ի վերայ բանականութեան իմոյ, մինչ զի յորժամ բամբիշ իմ եմուտ ՚ի սենեակ իմ՝ գրեթէ մոռացեալ էի ես յառնել և յտիին կալով մատուցանել նմա զողջոյն խոնարհութեան և մեծարանայ :

Էւ ես ևս՝ ասաց դուստր արքային՝ այլ ոչ ևս թոյլ տաց անձին իմում առ ՚ի համարիլ զիս իբրև զկին խաշնարածի յերեակայական

խոհմունս անբուն երազոյ իմոյ : Յաճախակի քաղցրացուցեալ եմ զխորհուրդս մտայ իմոյ անդորրութեամբ և անմեղութեամբ հովուական զուարճութեանց և տուարածական զբօսանաց . այնքան երեակայութիւն բռնացեալ էր ՚ի վերայ իմ , մինչև լսել ինձ ՚ի սենեկի իմում ըզհնչիւն հողմոյ և զբառաչիւն ոչխարաց . էր՝ զի արձակեալ զերծուցանէի զգառն արգելեալ և պաշարեալ ՚ի թաւ անտառի . և էր՝ զի միայնակ ընդ առաջ ելանէի գայլոյ հովուական ցրպով իմով առ ՚ի արգելու զնա ՚ի գիշատելոյ զխաչինս իմ : Ունիմ ես զհանդերձս նման հանդերձից գիւղական կանանց . զոր զգեծում ես առ ՚ի սաստկացուցանել զգօրութիւն երեակայութեան իմոյ . և նոյնպէս ունիմ զարինգ մի , զոր հնչեցուցանեմ մեղմաձայն . և յեռանդեան երեակայութեան իմում թուի ինձ թէ հօտք իմ երամովին հետեւին զկնի իմ :

Խոստովանեցայ ես՝ ասաց արքայորդին՝ ըզվայելութիւն երեակայական բերկրութեան և զբօսանաց , որ առաւել վտանգաւոր է քան զմտացածին խորհուրդս ձեր : Յաճախակի ջանայել եմ պատկերացուցանել մտայ իմոյ զհնարաւորութիւն կատարեալ և աներկեան տերութեան . որով մարթ իյէ խառնանել զամենայն զգործս անիրաւութեան և զրկանաց , և ուղղել զամե-

նայն մոլութիւնս և պահպանել զամենայն հը-  
պատակս յանդորրութեան և յանմեղութեան :  
Այս խոկումն մտայ իմոյ յառաջ եբեր զան-  
թուելի ձևս բարեկարգութեան , և եյոյյ ըզ-  
բազմադիմի կենդարգուտ կարգադրութիւնս և  
զօգտակար հրամանս հրովարտակայ թագաորի :  
Այս երևակայական խորհուրդ եղեալ է զբո-  
սանք և մերթ ևս աշխատանք առանձնակեցու-  
իմոյ . և ես պահնում հիացմամբ , յորժամ խոր-  
հիմ թէ որքան սակաւ տառապանօք և յաօք  
համարելի զհայր և զեղբարս իմ վախճանեալ  
և բարձեալ 'ի գահէ իշխանութեան :

Այսպէս՝ ասայ իմ լակ՝ են ներգործութիւնք  
երևակայական տեսլեանոյ , յորժամ զառաջինն  
կերպարանեմք 'ի միտս մեր զայստսիկ պատկերս  
երևակայութեան , գիտեմք զի են նոքա անտե-  
ղի և անվայելուչ . սակայն սակաւ առ սակաւ  
ընտելացուցանեմք զնոսա մտայ մերոյ . և զկնի  
սուղ ինչ ժամանակի մտանամք զանվայելու-  
ի խորհելոյ զնոսա 'ի միտս մեր :

## ԳԼՈՒԽ ԽԵ Ե

Խօսանքին նոքա ընդ ծերունի ասն հոյ Ե

Չարդիս կարի տարածանեալ էր օրն, և նոքա էլին անտի առ ՚ի դառնալ անդրէն ՚ի տուն իւրեանց: Մինչ զգնային նոքայ զերա գեօտոյն Նեղոսի՝ բերկրեալ և զուարճայեալ ընդ մեղի նշոյլս լուսնոյ դողդոջէլոյ ՚ի վերայ Չուրց՝ տեսին նոքա սուղ ինչ հեռի վայր ոմն ծերունի, զորոյ վարդապետութիւնս արքայորդին բազմիցս լուեալ էր ՚ի ժողովարանին իմաստնոյ: Ահաւասիկ՝ ասայ նա՝ է այր մի, որոյ ամբ կենաց խաղաղայութեալ են զկիրս նորա. ասկայն սչ են նաեմայութեալ և մթագնեալ զբանականութիւնս նորա. արժան է մեզ եզերել զհետազօտութիւն երեկոյն՝ խնդրելով առ ՚ի գիտել զկարծիս նորա, զոր ունի զվիճակէ իւրմէ. զի կարիցեմք իմանալ թէ արդեօք պատանեկութիւնս միայն պարտի տագնապիլ ՚ի նեղութեց, և թէ արդեօք մնայ բարեգոյն ինչ յոյս վասն վերջին մասին մարդկային կենաց:

Յայտ՝ վայրի իմաստասէրն մերձեցեալ առ նոսա՝ ողջունեաց ցնոսա սիրով և յարգութբ Ե  
 Հրաւիրեցին նոքա զնա առ ՚ի ուղեկից լինիլ նոցա ՚ի ճանապարհին. և սակաւիկ մի խօսեցան



զբանս քաղաքաւարութեան՝ իբրև ծանօթք յան-  
ակնկալ ժամու հանդիպեալ միմեանց : Ծե-  
լունին էր զուարթամիտ և շատախօս , և ճա-  
նապարհս երևէք կարճ և դիւրագնաց յընկե-  
քակցութեանս նորին , Հաճեցեալ էր նա բերկ-  
րութեամբ ՚ի տեսանել զինքն ո՛չ արհամարհել  
անպատուութիւնս : և գնաց ընդ նոսա ՚ի տունս նոցա-  
և ըստ խնդրոյ արքայորդւոյն եմուտ ՚ի ներքս  
ընդ նոսա : Նոքա նստուցին զնա ՚ի պատուա-  
ւոր տեղւոջ , և եղին առաջի նորա զգինի և  
զքաղցրաւենիս :

Տէր՝ ասաց դուստր արքային՝ Ղեմուծն երե-  
կոյի պարտի տալ առն գիտնականի նման քեզ  
զայնպիսի բերկրանս զբօսանայ՝ զոր անգիտութի  
և պատանեկութիւն հազիւ ուրեմն կարեն իմա-  
նալ : Գիտես դու զորպիսութիւնս և զպատ-  
ճառս ամենայն իրաց յանդիման եղելոյ աչաց  
քոյ , զօրէնս հոսանայ ջուրց գետոյն , և զժա-  
մանակս կատարելոյ մոլորակոյ զըրջանս իւրեանց .  
ամենայն ինչ պարտի մատակարարել քեզ պիտի  
մտախորհութեան , և նորոգել զներքին ծանօ-  
թութիւն գերազանցութեանս անձին քո :

Տիկին՝ պատասխանեաց իմաստասէրն՝ զուար-  
թունքն և կորովիքն անկալ լիցին առ ՚ի <sup>ուար-</sup>  
զգալ զբերկրանս ՚ի Ղեմս և ՚ի գնացս իւրեանց . <sup>ի</sup>  
բտանկան իմն է ծերութեան գտանել զդիւրու- <sup>նց</sup>

Թիւն անդորրութեան : Ասան իմ աշխարհն հոս  
 բուսեալ է զբերկրանս նորութեան իւրոյ . հայ-  
 իմ ես շուրջանակի ակնարկութեամբ , և տեսա-  
 նեմ վերստին զոր ինչ տեսեալ է իմ յերջան-  
 հագոյն աւուրս կենաց իմոյ : Յեցեալ մնամ 'ի  
 ծառ մի 'ի ճանապարհին և խորհիմ 'ի միտս  
 իմ , զի ընդ նովին հովանեաւ ծառոյն անգամ  
 մի վիճարանէի զտարեկան յորդութենէ և ըզ-  
 հեղեղմանէ 'Նեղոսին ընդ բարեկամի միում' որ  
 այժմ անխօս և անմուռնչ ննջէ 'ի հողակերտ  
 գերեզմանի : Բարձրացուցանեմ զաչս իմ 'ի  
 վեր . յառեմ զնոսա 'ի վերայ լուանոյ . և խոր-  
 հիմ ցաւօք զփոփոխութեանց կենաց : Դատա-  
 րեալ եմ ես զգալ զբազում բերկրանս ֆիլի-  
 գական ճշմարտութեան . վասն զի զի՞նչ պէտս  
 ունիմ այնոյիկ իրաց' զորս պարտիմ թողու-  
 փութանակի :

Հնար է քեզ գոնեայ սփոփելով զուարճա-  
 ցուցանել զքեզ' ասաց իմլակ' յիշելով 'ի միտս  
 քո զփառաւոր և զօգտակար կեանս քո , և վայ-  
 ելելով զգովեստս նուիրեալս անուան քում  
 հաճութեամբ ամենեցուն :

Գովուին' ասաց իմաստասէլն հաւաքմամբ  
 է' դատարկաճայն հնչումն ինչ յականջս ձերուն-  
 ւոյ միոյ : Իս ո՞չ զմայր ունիմ առ 'ի բերկ-  
 րիւ ընդ համբաւ որդւոյ իւրոյ , և ո՞չ զկին ու-

նիմ առ ՚ի բաժանորդ լինիլ պատուոյ և յարգութեան առն իւրոյ . կեցեալ էմ ես յաշխարհի առաւել քան զկեանս բարեկամաց և թըշնամեաց իմոյ : Ոչինչ է ինձ այժմ կարի հարկաւոր և պիտանի . քանզի ո՛չ կարեմ՝ ձգել զօգուտ իմ անդր քան զչափ անձին իմոյ : Պատանեկութիւնն զուարճայեալ բերկրի ընդ բանս գովեստից , քանզի համարի զայն իբրև զառհաւատչեայ ինչ ապագայ օգտից և բարեաց . և ոչ այսչափ միայն՝ այլ և հայեցումս կենաց պատանեկին է առաւել ևս տարածեալ . բայց սակայն ես՝ որ այժմ հոլովեալ էմ յառուս զառամութե՛ս սակաւ պարտիմ՝ երկնչիլ ՚ի չարութենէ մարդկան , և առաւել սակաւ ակնունիլ և յուսալ ՚ի սէր կաթողումե՛ն նոցա կամ՝ ՚ի յարգ պատուոյ նոցա : Դեռ ևս հնար է նոցա առնուլ ինչ յինէն ՚ի բաց . սակայն ո՛չ կարեն նոքա տալ ինձ զիր ինչ աւելի : Ճոխուին է՛ ինձ այժմ անպիտան . և գերագոյն պաշտօն եղիցի ինձ այժմ տառապանք : Չայելով իմ ՚ի դիպումս անցեալ կենաց իմոյ՝ ՚ի միտս բերեմ զբազում դիպողութիս բարեաց , զոր զանց արարի առնել , և զբազում ժամանակս՝ զոր յուժնէտս անցուցի , միանգամայն և զյոլով առուս՝ զոր կորուսի ՚ի թմբրութե՛ն անգործութե՛ն և դատարկակեցութեան : Թողում ես զբազում մեծամեծ

դիտաւորութիւնս անխորձ, և զբազում մեծա-  
 ժեծ փորձս անկատար: Միտք իմ՝ ոչ է՝ ծանրա-  
 բեռնեալ սաստիկ կամ անտանելի յանցանօք:  
 ասին իրի հանգուցանեմ զանձն իմ՝ ՚ի յանդոր-  
 րութեան: Չանահնար լինիմ առ ՚ի հրաժարե-  
 ցուցանել զխոկմունս իմ՝ ՚ի յուսոյ և ՚ի հո-  
 գոյ: որք՝ թէպէտ բանականութիւնս գիտէ ըզ-  
 նոսա լինիլ ընդունայն՝ տակաւին նկրտին պա-  
 հել զհին ի շխանութի իւրեանց ՚ի վերայ սրբ-  
 տի իմոյ: անկալեալ սպասեմ անդորր խո-  
 նարհութեամբ ժամուն այնմիկ՝ զոր բնութիւնս  
 ոչ կարէ աւելի երկարաձգել: և յուսամ գտա-  
 նել ՚ի բարեգոյն վիճակի միում զայն երջան-  
 կութիւն՝ զոր աստ ոչ կարայի գտանել: և ու-  
 նիլ զայն առաքինութիւն՝ զոր աստ ոչ եղե-  
 րնձ ունիլ:

Աւարտեալ իմաստասիրին զբանս իւր՝ յա-  
 րեաւ ՚ի տեղոջէ իւրմէ և գնաց անտի ՚ի բայ՝  
 թողլով զունկնդիրս իւր ոչ կարի բարձրացեալ  
 յուսով ընդերկար կենցաղաւարելոյ: Արքայոր-  
 դին սիրտեալ մխիթարէր զսիրտ իւր ասելով,  
 թէ ոչ էր իրաւացի և խոհական առ ՚ի լինիլ  
 վհատեալ ՚ի բանից իմաստասիրին: վասն զի  
 ձերութիւնս ոչ երբէք համարեցաւ լինիլ յար-  
 մար ժամանակ երջանկութեան: և եթէ հնա-  
 բաւոր էր լինիլ անդորր և անխոռով ՚ի նուա-

զութեան և ՚ի տկարութեան հասակի, հաւանական իմն լինէր զի առուրք առուգութեան և զուարթութեան ունէին լինիլ երջանիկ. և միջօրէն կենաց ունէր լինիլ պայծառ և փայլուն, եթէ երեկոյն լինէր խաղաղ և անգորր :

Գուտը արքային կարծէր, զի ծերութիւն էր դժգոհ և յաչաղկոտ և բերելէր ճնշել զյոյս և զակնկալութիւնս նոցա՝ որք նորոգ մտեալ էին ՚ի թատրոն աշխարհի : Տեսեալ էր նա զբազում մեծահարուստ անձինս, որք նախանձու հայէին ՚ի ժառանգս ստացուածոց իւրեանց. և ոչ այսչափ միայն՝ այլ և ծանօթ էր բազմաց անձանց, որք ոչ կարէին աւելի վայելել զհեշտութիւն բայց միայն յորժամ վայելէին զայն յանձինս իւրեանց :

Պեկուս կարծէր, թէ իմաստասէրն էր առաւել ծերագոյն քան թէ կերպարանք նորացուցանէին զնա լինիլ. և յօժար էր վերագրել զտրտունչս և զգանգատս նորա ՚ի ցնորեալ վրահատութիւն և ՚ի տկարութիւն հասակի նորա. կամ թէ ոչ կարծէր թէ եղեալ էր նա տաբաբաղդ ՚ի վերայ աշխարհի. և յաղագս այնորիկ էր դժգոհ և տխուր. քանզի ոչինչ ասաց նա՝ է՛ առաւել սովորական, քան թէ կոչել զվիճակ մեր վիճակ կենաց :

Իմլակ՝ որ ոչ կամէր տեսանել զնոսա ճըն-



շեալ և վճատեալ ժպտեր Է սիրտիանս մխի-  
թարութեան, զոր նորա այսպէս դիւրաւ հնա-  
րէին ինքեանց. և խորհէր 'ի միտս իւր զի 'ի  
նմին հասակի ինքն միօրինակ աներկբայ յուսայր  
վայելիլ զանխառն բարեբաստութիւն, և մի-  
օրինակ ունէր զբազում հնարս սիրտիանայ և  
մխիթարութեան: Չգուշանայր նա 'ի տպաւո-  
րելոյ 'ի միտսնց ստիպաւ զիրս դժուարընկալս  
և զանհաճոյս, զորս ժամանակն ինքնին կարի  
փութանակի տպաւորեսցէ 'ի միտսնց: Դուսոր  
արքային և սիրական նորին առանձնայան 'ի սե-  
նեակ իւրեանց. խելագարութիւն աստեղաբաշ-  
խին հանգեաւ 'ի միտսնոցս, և նորա խնդրե-  
ցին յիմլակայառ 'ի սկսիլ զժառանգեալ պաշ-  
տօն իւր, և 'ի միւսում առաւօտաւ յամեցու-  
ցանէլ զձագումն արևու:

### ԳԼՈՒԽ . ԽԶ :

Դուսոր արքային և Պելուսայ ելանն ստիպելու զիւրեան

Դուսոր արքային և Պելուսայ խօսեցեալ  
առանձին ընդ միմեանս զաստեղաբաշխին իմլա-  
կայ՝ համարէին զհանգամանս անձին նորա լինիլ  
այնքան սիրելի միանգամայն և այնքան զարմա-  
նալի, մինչ զի ոչ կարէին շատանալ առանց

ուճեցող ընդ նմա զմտերիմ ծանօթութի . ամին  
իրի խնդրեցին յիմ լակայ առ ՚ի գտանել զՏը-  
նարս և ամեւ զնոսա ՚ի միասին ՚ի տուն աստե-  
ղաբաշխին :

Այս էր փոքր ինչ դժուարին . իմաստասէրն  
բնաւ ո՛չ էր ընկալեալ զայցելութիւնս ՚ի կա-  
նանց , թէպէտ և բնակէր նա յայնպիսի քաղա-  
քի միում՝ յորում կային բազում Եւրոպայիք ,  
որք հետեւ էին վարուց և սովորութեանց երկրի  
իւրեանց . և ոչ այսչափ միայն՝ այլ և եկեալ  
էին անդ բազումք յայլոց կողմանց աշխարհի , որք  
կենցաղավարէին անդանօր ըստ ազատութեան  
Եւրոպայոց : Զէր հնար անտես առնել զխըն-  
դրուած տիկնայն . և յաղագս այնորիկ իմ լակ  
առնէր զազգի ազգի յառաջադրութիւնս առ  
՚ի կատարել զխորհուրդ դիտաւորութեան նց :

Յառաջագրեցաւ առ ՚իներածել զնս ՚ի ծա-  
նօթութիւն իմաստասիրին իբրև զեկս և զպանս  
դուխտս անկեալս ՚ի տառապանս նեղութեան .  
քանզի իմաստասէրն յարաժամ քաղցրընկալ և  
նպաստամատոյց էր այսպիսեաց վշտագնեալ ան-  
ձանց . այլ սակայն զինի սուղ ինչ մտախոր-  
հութեան տեսին նոքա , զի այսպիսի հնարիք  
չէր հնար նոցա բարեոք ծանօթանալ նմա . վասն  
զի խօսակցութիւն նոցա լինելոյ էր համառօտ ,  
և ոչ կարէին նոքա պատշաճապէս ձանձրայու-

ցանէլ զնա յաճախական թախանձանօք :

Ճշմարիտ է այս՝ ասոյ Հռասսելաս . բայց սակայն ունիմ ես զսաստկագոյն դիմադրութիւն ընդդէմ այլ ընդ այլոյ ցուցանելոյ իմաստասիրին զՏանգամանս իսկական վիճակի ձերոյ . Յաճախակի համարեալ եմ ես իբրև դաւանանուն ինչ ընդդէմ մեծի հասարակագետութե մարդկայինս բնութեան , առ ՚ի առնել զառաքինութիւն ուրուք գործիք խաբելոյ զնա պատրանօք , եթէ ՚ի մեծամեծ և եթէ ՚ի դուզնաքեայ առ իթս և ՚ի դիպուածս : Ամենայն պատրանք խաբելութե տկարացուցանէ զյոյս վտասհութեան , և ցրտացուցանէ զեռանդն բարերարութեան . Յորժամ իմաստասէրն իմասցի թէ դուք ոչ էք այնքիկ որք երևէիք լինիլ , զգաոյէ զցասումն սրամլտութե՝ զոր բնական է ամենայն ումեք զգալ . քանզի ճանաչելով նր զՏանձարեղ ճարտարութիւնս մտայ իւրոյ՝ տեսցէ զանձն իւր պատրեալ ՚ի փոքրիմաստ անձանց . և գուցէ կասկած երկնլտութե՝ զոր այնուհետև ոչ կարէ նա ՚ի բաց դնել յինքենէ՝ արգելցէ զձայն խորհրդոյ նր , և կափուսցէ զձեռն բարերարութեան նորա . և ո՛ր կարող լիջիք դուք գտանել զկարողութե դարձուցանելոյ զգործս բարութեան նորա առայգ մարդկան , կամ զանդորրութիւն նորա առանձն իւր :

Այսմ առարկութեան զոչինչ պատասխանի  
 ետուն տիկնայքն . և Իմլակ սկսաւ յուսալ զի  
 եռանդն հետաքրքրութեան նոյա փութով դա-  
 դարեսցի . բայց սակայն ՚ի միւսում աւուր Պե-  
 կուա ասայ յնա . թէ նա խորհեալ էր այժմ  
 զօրինաւոր պատճառանս ինչ առ ՚ի երթալ  
 յայցելութիւն աստեղաբաշխին . քանզի եդեալ  
 էր ՚ի մտի իւրում առ ՚ի խնդրել ՚ի նմանէ  
 զարձակութիւն շարունակելոյ ընդ դատտիարա-  
 կութեամբ նորա զուսումն աստեղաբաշխութե՝  
 զոր ուսեալ էր յԱրաբացոյ անտի . և դուստր  
 արքային կարէր գնալ ընդ ինքեան կամ իւրե  
 աշակերտակից ոմն կամ իբրև ընկերակից իւր .  
 քան զի ոչ էր վայելուչ կնոջ միոյ երթալ մի-  
 այնակ յայցելութիւն այլոց : Երկնչիմ ես՝ ասայ  
 Իմլակ՝ զի նա փութով տաղտկացեալ ձանձրա-  
 ցի յընկերութենէ ձերմէ . արք կարի յառա-  
 ջայեալք ՚ի մարգս գիտութեան՝ ոչ ախորժին  
 կրկնել զսկզբունս արհեստի իւրեանց ՚ի լսե-  
 լիս այլոց . և ոչ կարեմ գիտել հաւաստեալ  
 թէ արդեօք հնար իցէ քեզ ունկնդիր լինիլ  
 սկզբանց գիտութեան նորա ընդունակութեամբ  
 մտայ . քանզի պատմեսցէ նա զզարագայս ար-  
 հեստի իւրոյ հանդերձ մակաբերութեամբ և  
 եզրակացութեամբ , միանգամայն և մտածութի  
 և խորհրդածութեամբ :

Պարտ է ինձ՝ ասաց Պեկուս՝ խնամով ըզ-  
գուշութիւն ունիլ առ այս . ես միայն խնդ-  
րեմ՝ ՚ի քէն առ ՚ի ածել զիս ՚ի բնակութիւն  
աստեղաբաշխին : Գուցէ ուսումն աստեղաբաշ-  
խութեան իմոյ է առաւել քան զոր խորհիս  
դու կարծեօք . և յամենայնի համաձայն լինե-  
լով իմ ՚ի կարծիս նորա՝ տաց նմա համարիլ  
զգիտութի իմ լինիլ առաւել քան զչափնորին :

Իմլակ համեմատ այսմ յառաջադրութեան  
ազդ արար աստեղաբաշխին , զի տիկին ոմն օ-  
տարական ճանապարհորդեալ ՚ի խնդիր գիտու-  
թեան՝ լուեալ էր զգերահռչակ համբաւ նր ,  
և ցանկայր միափառանօք առ ՚ի մտանել յաշ-  
կերտութիւն նորա : Այս անբովոր յառաջադր-  
ութի շարժեաց ՚ի միտս նորա միամեամայն ըզ-  
գարմացումն և զեռանդն հետազօտութեան . և  
զկնի սուղ ինչ մտածութի հաւանեցաւ նա ըն-  
դունիլ զտիկինն ՚ի տուն իւր . սակայն ոչ կա-  
րէր նա սպասել առանց անհամբերութե մինչև  
՚ի ծագումն միւսոյ աւուր :

Տիկնայքն զդեցան զհանդերձս ազնիւս և  
պայծառագարդս . և ուղեկցութեամբ իմլակայ  
գնացին յայլելութի աստեղաբաշխին . որ կարի  
զուարճայեալ էր ՚ի տեսանել զանձն իւր պատ-  
ուեալ և մեծարեալ գալստեամբ այսպիսի լու-  
սապայծառ և աղնուաշուք տիկնայ : Նախ ՚ի



փոխադարձել նոյա միմեանց զմեծարանս քաղա-  
 քավարութեան՝ աստեղաբաշխն երեւիւր պատ-  
 կառեալ և երկչոտ . սակայն յորժամ խօսակ-  
 ցութի նոյա եղև կանոնաւոր , յիշեաց նա ըզ-  
 կարողութիւնս մտաց իւրոյ , և ճշմարտեալ  
 եցոյց նց զհանգամանս անձին իւրոյ՝ որով իմլակ  
 նկարագրեալ էր զնա : Աստեղաբաշխն եհարց  
 յՊեկուա , թէ զի՛նչ շարժառիթ յօժարեցոյց  
 զնա առ ՚ի թեւակոխել յուսումն աստեղաբաշ-  
 խութեան . և Պեկուա իսկոյն պատմեաց նմա  
 զպարագայս դիպուածոյն , որ պատահեցաւ ՚ի  
 բրգան . և ետ նմա զծանօթութիւն անցիցն ,  
 զոր անցոյց ՚ի կղզւոջ Արաբացւոյն ՚ի ժամանա-  
 կի գերութեան իւրոյ : Ասէր նա զպատմութիւն  
 իւր դիւրութեամբ և ճարտարութեամբ . և գե-  
 ղեցիկ զրոյցք նր՝ գրաւեցին զսիրտ աստեղաբաշ-  
 խին : Ապա խօսակցութիւնն փոխեցաւ յառար-  
 կայ աստեղաբաշխութեան : Պեկուա եցոյց նմա  
 զոր ինչ գիտէր . աստեղաբաշխն հայեր ՚ի նա  
 իբրև ՚ի հրաշալի անձն ոմն հանձարեղ . և ա-  
 ղաչէր զնա ոչ դադարիլ ՚ի շարունակելոյ զգի-  
 տութիւն մի՛ զոր սկսեալ էր արդէն այսգէս  
 դիւրաւ և յաջողակութեամբ :

Այլեւութիւն նոյա ևս քան զևս լինէր յա-  
 ճախական . և յամենայն աւուր լինէին նոքա ա-  
 ռաւել քաղցրընկալ աստեղաբաշխին քան թէ

յառաջ: Իմաստասէրն ջանայր առ 'ի զուար-  
 ճայուցանել զնոսա զբօսանօք, զի նոքա երկա-  
 րաձգեսցեն զայցելութիւնս իւրեանց. քանզի  
 տեսանէր զի խոկմունք մտաց իւրոց լինէին ա-  
 շտակել պայծառախիայլ յընկերութեան նոցին.  
 ամպք հոգունակութեան սակա առ սակա  
 չքացեալ մեկնէին 'ի մտաց նորա, մինչ նա գուն  
 գործէր և ջանայր առ 'ի զբօսեցուցանել զնն  
 զուարճութեամբ. և յորժամ երթային նոքա  
 'ի տուն իւրեանց և թողուին զնա միայնակ, յա-  
 ւէր և տրտմէր նա 'ի տեսանել զանձն իւր դար-  
 ձեալ միւսանգամ պարապեալ 'ի հին պաշ-  
 տօն արհեստի իւրոց, առ 'ի կանոնաորել զե-  
 ղանակս տարւոյն:

Դուստր արքային և սիրական նորին յարդ-  
 ակնկառոյց հոյեին 'ի շրթունս աստեղաբաշ-  
 խին 'ի բազում ամսոց հետէ, և իչ կարէին  
 լսել զբան մի 'ի նմանէ՝ որով հնար լինէր նոցա  
 իմանալ թէ արդեօք շարունակէր նա տակաւին  
 'ի գերբնական գործաւնութեան իւրում:

Նոքա յաճախակի ջանային և հնարս հնար-  
 էին առ 'ի իմանալ յայտնապէս զմիտս նորա.  
 սակայն նա դիւրաւ խոյս տայր յամենայն հնարից  
 նոցա. և թէպէտ նոքա պէսպէս եղանակա-  
 բունադատէին զնա առ 'ի յայտնել զմիտս իւր,  
 սակայն նա խել և խել փոխէր զբանս նոցա յայլ

իմ անարկայ խօսակցութեան :

Յորժամ մտերմութիւն նոցա առաւելաւ , նոքա յաճախակի հրաւիրէին զնա 'ի տուն իմլահայ . ուրանօր պատուեալ մեծարէին զնա մեծալարգութիւն : Սկսաւ նա սակաւ առ սակաւ բերկրել և զուարճանալ յենթալուսնեայ զբօսանս և 'ի հեշտութիւնս : Քայր նա 'ի տուն իմլահայ կանուխ , և դարձ առնէր անտի անագան . աշխատ լինէր առ 'ի հաճելի ընծայել զանձն իւր յաչս նոցա անդադար ջանիք և հեղութիւն . և յորժամ կամէին նոքա երթալ 'ի խնդիր զբօսանայ կամ 'ի խոյզ զարմանալի և օգտակար իրաց , նա աղաչէր զնոսա առ 'ի ուղեկցութիւն զնալ ընդ նոսա :

Ընդերկար փորձառութեամբ արքայորդին և քոյր իւր քաջ իմացեալ զանարատութիւն և զիմաստութիւն նորա՝ բարեոք ծանեան զի հնար էր նոցա վստահանալ 'ի բարեկամութի նորա աներկեան . և զի մի քաղաքաւարութիւնք իւրեանց տայէն նմա յուսալ սնոտի յուսով՝ յայտնեցին նմա զիսկական վիճակ իւրեանց , և զչարժառիթս ճանապարհորդութիւն իւրեանց . և խնդրեցին 'ի նմանէ առ 'ի խոստովանիլ զկարծիս իւր յաղաքս ընտրութեան կենաց :

Ո՛չ կարեմ էս յայտնել ձեզ՝ ասաց իմաստաւէրն՝ թէ զո՛ր 'ի պէտպէս վիճակայ արժան է

ձեզ նախադաս համարիլ, զորս աշխարհս յան-  
 դիման կայուցանէ աշայ ձերոց : Չայս միայն  
 կարեմ ասել ձեզ, զի սխալեալ եմ ես յընտ-  
 թութեան կենսոց իմոց : Անյուայեալ է իմ ըզ-  
 կեանս իմ 'ի յուսումն գիտութեան առանց փոր-  
 ձառութեան . և ծախեալ եմ զառուրս կենսոց  
 իմոց պարապելով յայնպիսի գիտութիւնս, որք  
 եբբ 'ի բազումս սակաւ պիտանի եղիցին ազգի  
 մարդկան : Գնեալ եմ ես զգիտութիւնս ծա-  
 խութք ամենայն հասարակ միսիթարութեց կե-  
 նայ . կորուսեալ է իմ զքաղցր վայելչութիւն  
 իգական բարեկամութեան, և զերջանիկ կենակե-  
 ցութիւն տնային կաթոգնութե : Եթէ գտեալ  
 եմ զպատիւս կամ զգերակայութիւնս ինչ 'ի վեց  
 քան զայլ ուսումնասէրս, պատիւ և գերակայ-  
 ութիւնն այն ոչ են եղեալ անմասն յերկիւղէ,  
 յանհանգստութենէ և յերկիւղածութենէ . սա-  
 կայն յորմէ հետէ խոկմունք մտայ իմոց են պէս-  
 պիսայեալ առնելով զառաւել հողորդակցու-  
 թիւն ընդ աշխարհի, տարակուսեալ երկբայիմ  
 զճշմարտութենէ այսորիկ պատուոյ և գերակայ-  
 ութեան : Յորժամ 'ի քանի մի առուրս անկեալ  
 կայի 'ի հաճոյական դեգերանս մտայ, յարժամ  
 կարծէի 'ի միտս իմ զի հետազօտութիւնք իմ  
 զբաւեցան 'ի սխալանս մոլորութե . և զի կրեցի ես  
 զբազում նեղութի, և կրեցի զայն ընդունայն :

Իմլակ բերկրեալ էր ՚ի տեսանել զի հան-  
 ար իմաստասիրին ՚ի բայ փարատէր զմառախ-  
 լագատ ամպս երևակայութեան ՚ի մտայ նորա .  
 ամին իրի եդ նա ՚ի մտի իւրում առ ՚ի արգե-  
 լեալ պահել զմիտս նորա ՚ի մոլորակայ , մին-  
 ջև ՚ի մոռայծոս արկցէ նա զպաշտօն կառա-  
 վարելոյ զնոսա . և բանականութիւնն ստասցի  
 վերստին զգորութիւն իւր նախնական :

Յայսմ ժամանակէ աստեղաբաշխն վարէր լի  
 նոսա ընտանեկան բարեկամութեամբ . և բաժա-  
 նորդ լինէր ամենայն առաջարկուեց և զուար-  
 ճութեանց նոցա . յարգութիւն անձին նորա  
 պահէր զնա մտադիր և յօժարամիտ ՚ի զրոյցս  
 կենսակցութեան . և Հռասսելաս ճարտարութիւ  
 իւրով ոչ թողոյր զժամանակն անցանել լի մե-  
 ծի մասին առանց իրիք գործոյ և կամ զբաղ-  
 ման : Պնրտ էր նոցա առնել զիւր ինչ յարա-  
 ժամ . անցուցանէին նոքա զտիւն առնելով զդի-  
 տողութիւս , որ պատրաստէր զզրոյցս վասն երե-  
 կոյին . և անցուցանէին նոքա զերեկոյն առնե-  
 լով զյարաջողութիւս վասն վաղուեան առուր :  
 Իմաստասէրն խոստովան եղև իմլակայ , զի  
 յորմէ հետէ խառնեալ էր զանձն իւր ՚ի բերկ-  
 րազուարճ ուրախութիւնս կենաց , և բաժա-  
 նեալ էր զժամն առուր ՚ի վայելումն պէսպէս  
 զբոսանայ և զուարճութեանց , տեսանէր զի եր-



և ակայեալ ի շխանութիւն իւր ՚ի վերայ երկ-  
 նից սակաւ առ սակաւ նուազեալ անցանէր ՚ի  
 մտայ իւրոց . և ոչ այսչափ միայն՝ այլ և սկսաւ  
 սակաւ հաւատալ այնպիսի կարծեաց , զոր ոչ  
 կարէր ազատութեամբ հաւաստի առնել այ-  
 լոց . քանզի տեսանէր այժմ զկարծիս իւր են-  
 թակայ փոփոխութեան յաղագս այնպիսի պատ-  
 ճառայ , յորս բանականութիւնն չունէր երբէք  
 զման ինչ : Եթէ ըստ պատահման միւս միայ-  
 նակ և առանձին զքանի մի ժամս՝ ասաց նա՝  
 բազմաժամանակեայ կարծիք իմ յանկարծակի  
 յարձակի ՚ի վերայ մտայ իմոց , և անընդդի-  
 մարտ բռնութի ինչ շղթայեալ ծանրաբեռնէ  
 զխոկմունս մտայ իմոց . սակայն զրուցատրութի  
 արքայորդւոյն իսկ և իսկ լուծանէ զխոկմունս  
 իմ ՚ի կապանայ շղթայից . և ընկերութի Պե-  
 կոայ առ ժամայն փարատէ ՚ի մտայ իմոց զաղ-  
 ջամուղջ երևակայական ամպոց : Նմանիմ ես  
 առն միոյ՝ որ սովորաբար երկնչի յերևութական  
 ցնորից . որ անվրդուլ և աներկիւղ նստի ՚ի լոյս  
 լապտերի . և հիայեալ զարմանայ ընդ երկիւղ  
 արհաւրաց՝ որ տառապեցուցանէր զնա ՚ի ժամ  
 խաւարի . սակայն՝ եթէ լապտեր նորա շիջանի-  
 սի , զգասցէ նա վերստին պայն երկիւղ արհաւ-  
 րաց , թէ և գիտէ զի յորժամ լուսցի վերստին  
 լապտեր նորա՝ այլ ոչ ևս ունի զգալ զերկիւղն

զայն : Բայց սակայն երբեմն երկն չիմ ես զի մի  
 գույե ՚ի ժամ անդորրութեան անձին իմոյ վա-  
 րիցեմ յանցաւոր զանցաւութեամբ . և յօժա-  
 րակամ ՚ի մոռացօնս արկանիցեմ զայն ծանօր  
 պաշտօն՝ որ աւանդեալ է ինձ ՚ի վերուստ :  
 Եթէ ես նպաստեալ շորհս առնիցեմ ինձ ՚ի  
 յայտնի սխալման ինչ ; կամ հաստատիցեմ ՚ի  
 մտի զկարծիս ըստ հաճոյից իմոյ ՚ի խնդիր իմն  
 երկբայական , զհարդ մեծ և սոսկալի եղիցի  
 յանցանք իմ :

Ոչինչ տկարութիւն երեւոյցութեան՝ պա-  
 տասխանեաց իմլակ՝ է այնպէս անտանելի և  
 դժուարաբոյժ , որպէս տկարութիւնն կապակ-  
 ցեալ ընդ երկիւղի մեղաց . յայնժամ երեւա-  
 կայութիւն և խիղճ՝ մտաց փոփոխակի ներ-  
 գործութիւնս առնեն ՚ի մեզ . և այնքան յաճա-  
 խակի փոփոխեն զտեղիս իւրեանց , մինչ զի չէ՛  
 հնար որոշել զպատրանս միոյն ՚ի պատուիրա-  
 նաց միւսոյն : Եթէ երեւոյցութիւնն յանդի-  
 ման կայուցանէ մտաց զպատկերս՝ որք չիցեն բա-  
 րոյական կամ բարեպաշտական՝ միտքն ՚ի բացվա-  
 նէ զնոսա յորժամ պատճառեն նոքա զյաւ .  
 բայց սակայն՝ յորժամ մեկամաղձոտ խորհուրդք  
 ստանան զկերպարան պարտեաց՝ ըմբռնեն զմիտս  
 առանց ընդդիմութեան , քանզի երկն չիմք մեք  
 ՚ի բաց մերժել կամ արտօքսել զնոսա : Յա-

դոգս այսր պատճառի աւելորդապաշտքն են յա-  
ճախակի մեկամաղձոտք . և մեկամաղձոտքն են  
գրեթէ յարաժամ աւելորդապաշտք :

Մի թոյլ տար խորհրդոց երկչոտութիւն յաղ-  
թահարել զբարեգոյն միտս քո . վտանգ զանց  
առնելոյ քո զմոլորակօք՝ երևեսցի ՚ի միտս քո  
սակաւ առ սակաւ նուազեալ՝ և յորժամ խոր-  
հիս զայն ազատութեամբ՝ տեսցես զայն կարի  
դուզնաբեայ . և դուզնաբեայ վտանգն այն օր  
յառուր և ս քան զևս նուազեսցի : Բայ զսիրտ  
քո զօրութիւն լուսոյ , որ ժամանակէ ՚ի ժամանակ  
ճառագայթէ ՚ի վերայ քո . յորժամ տարակոյսք  
նեղեալ վշտայուցանեն զքեզ՝ զորս ՚ի լուսաւոր  
ժամն քոյ գիտես լինիլ ընդունայն՝ մի կանգ-  
նիր առ ՚ի բանագնայ լինիլ , այլ դիմեա՛ ՚ի  
զբաղումն գործոց կամ յընկերութի Պեկուայ .  
և ոչ այսչափ միայն՝ այլ և յարաժամ հաս-  
տատուն պահեա զայս խորհուրդ ՚ի միտս քո ,  
զի դու ես միայն հիւլէ մի ՚ի մէջ բազմու-  
թեան ազգի մարդկան . և ո՛չ ոմիս զայնպիսի  
առաքինութիւն և զայնպիսի մոլութիւն , մինչ  
տեսչութիւնն որոչեսցէ զքեզ վասն գերբնական  
շնորհաց կամ տառապանաց :

## ԳԼՈՒԽ • ԽԵ :

Մասնէ արտայայտէն , և Երբ շնոր առարկայ խօսակցանէ :

Յաճախակի խորհեալ եմ ես զայս ամենայն՝ ասաց աստեղաբաշխն . սակայն անլնդդիմամարտ և ճնշողական խորհուրդ ինչ այնքան ընդերկար նուաճեալ է զբանականութիւն իմ , մինչ զի ոչ համարձակի նա վստահանալ ՚ի վրձիւս և յընտրութիւնս իւր : Չարդիս բայայտ տեսանեմ թէ զիարդ շարաչար խուռլէլ եմ զանդորրութիւն անձին իմոյ , թողլով զեղջերուաբաղս և զարալեզս մաշել և ծախել զանձն իմ ՚ի ծածուկ . բայց սևամաղձն տեղի տայ և խորշի ՚ի կենցաղակցութենէ մարդկան . և ես ոչ երբէք գտի յառաջագոյն զայր ոմն՝ որում կարող լինէի յայտնել զտագնապս և ըզվիշտս մտաց իմոյ , թէ պէտ և հաւաստի էի առ ՚ի գտանել զդիւրութիւն վշտաց իմոյ : Յուսամ և ակն ունիմ զի ժամանակն և պէսպիսութիւն իրաց ՚ի բաց փարատեսցեն ՚ի մտաց իմոյ զաղջամուղջն զայն՝ որ այսքան ընդերկար շրջապատեալ է զինն . և վերջին ուուրբ կենաց իմոյ անցցեն ՚ի յանդորրու և ՚ի խողաղուծ : Գիտութիւն և առաքինութիւն քո՝ ասաց իմլակ՝ կարեն իրաւապէս տալ քեզ զյոյս ա-

պագայ դիւրութեան և անդորրութեան :

Յայսմ վայրի Հռաստեղծ եմուտ 'ի ներքս ընդ դստեր արքային և ընդ Պեկուայ, և ե-  
Տարց թէ արդե՞օք հնարեալ եննոքա զնոր ըզ-  
բօսանս ինչ վառն միւսոյ աւուր : Այսպէս՝ ա-  
սայ Նեկայա՝ է՛ վիճակ կենայ, զի ո՛չ ոք լինի  
երջանիկ բայց միայն յառաջագոյն զգալով զփո-  
փոխութիւն . փոփոխութիւնն ինքնին ոչինչ է .  
յորժամ արարեալ եմք զփոփոխութիւնն, ցան-  
կամք այնուհետև առնել զկրկին փոփոխութի-  
ւն յառաջ տակաւին ո՛չ է դատարկեալ և սպա-  
ռեալ . թո՛ղ ինձ տեսանել զիր ինչ 'ի վաղ-  
ուեան աւուր՝ զոր բնաւ չէ՛ իմ տեսեալ յա-  
ռաջագոյն :

Պետպիտութիւն իրաց՝ ասայ Հռաստեղծ՝ այն-  
քան հարկաւոր է բերկրութեան մարդոյ, մինչ  
զի երջանիկ հովիտն ևս յափրացոյց զիս տաղտ-  
կութեամբ յաճախակի վայելելով իմ զառատու-  
թիւնս և զաւելագանցութիւնս նորա . սակայն  
կշտամբեցի զանձն իմ անհամբերութե՛ս, յոր-  
ժամ տեսի զչատայեալ վիճակս միանձանց սրը-  
բոյն Անտոնի . որք առանց տրտնջման վարէին  
զկեանս իւրեանց, ո՛չ թէ միակերպ բերկրութե՛ս  
և դիւրութեամբ, այլ միակերպ ճգնութեամբ  
և նեղութեամբ :

Արքն այնոքիկ՝ պատասխանեաց իմլակ՝ ենսա-



կաւ թշուառական ՚ի հանդարտ մեծաստանի իւրեանց, քան թէ Եթովպեական արքայադունչն ՚ի բանտի հեշտութե իւրեանց: Չոր ինչ առնեն միանձուքն մեծաստանին այնորիկ՝ առնեն զայն սակս ուղիղ և իրուացի պատճառաց: Աստակ և աշխատութիւն նոցա մասակարարէ զպիտոյս նոցա. սին իրի չէ՛ մարթ նց կասիլ ՚ի վաստակոց իւրեանց, և հաւաստեալ վարձս տոանան նոքա վասն աշխատանաց իւրեանց: Բարեպաշտութիւն և ջերմեռանդութի նոցա պատրաստէ զնոսա վասն միւսոյ վիճակի. և յուշ առնէ նոցա զժամանումն հանդերձեալ կենաց, մինչ յարմարեալ հանդերձէ զնոսա վասն նորա: Ժամանակ նոցա է՛ կարգաւ բաժանեալ. մի պարտիք յաջորդէ զմիւս պարտիս, այնպէս զի ոչ Գան նոքա ՚ի զառանցանս յիմարութեան անկառաւար կամաց, և ոչ նուալեալ կորնչին ՚ի ստուերս անփոյթ հեղգութե և պարապորդութե: Պարտ է նց կատարել զհաստատուն գործ ինչ ՚ի յատկայեալ ինչ ժամու. և աշխատանք նց է՛ ուրախ և զուարթագին, քանզի համարին նոքա զայն իբրև զգործս բարեպաշտութեան, որովք յարժամ մերձենալով մերձենան ՚ի սահմանս անվախճան երջանկութեան:

Կարծես դու՛ ասաց Նեկայա՛ զի միանձնական կարգն է՛ առաւել սուրբ և նուազ անկատար

վիճակ քան զայլ վիճակս : Ո՞չ է արժան նման  
 հաւասարապէս յուսալ և ակնունիլ ապագայ  
 երջանկութեան՝ որ յայտնապէս կենցաղաւարի  
 ընդ ազգի մարդկան , որ օգնական լինի ներդրոյ  
 տրուիք ողորմութեան իւրոյ , հրահանգէ զան-  
 գէտս գիտութեամբ իւրով , և աշխատասիրութիւն  
 իւրով նպաստամտոյ լինի ընդհանրական դը-  
 րութեան կենաց մարդկան . թէպէտ և զանց  
 արայցէ նա զայնոքիւք ճգնութեամբք , զոր մի-  
 անձունքն 'ի կիր արկանեն 'ի վանս , և թոյլ  
 տայցէ ինքեան վայելել զայնպիսի անմեղ դիւ-  
 րութիւնս և զբերկրութիւնս , զոր կարող  
 լինիցի գտանել 'ի վիճակի իւրում :

Այս է խնդիր իմն՝ ասայ իմլակ՝ որ ընդեր-  
 կար պառակտեալ է զկարծիս իմաստնոյ և վա-  
 րանեալ է երկբայութեամբ զմիտս առաքինեաց :  
 Երկնչիմ էս վճիռ հատանել 'ի վերայ երկա-  
 քան շիւր մասին : Որ բարեոք կենցաղաւարի յաշ-  
 խարհի՝ բարեգոյն է քան զնա , որ բարեոք կեն-  
 ցաղաւարի 'ի մեծաստանի : Բայց սակայն՝ գու-  
 ցէ ամենայն ոք ո՞չ կարէ ընդդիմանալ փորձու-  
 թեանց հրապարակական կենաց . և եթէ նա ո՞չ  
 է կարող յողթել փորձութեանց , պատշաճ է  
 նմա առանձնանալ յաշխարհէ : Ոմանք սակաւ  
 կարողութիւն ունին առնել զբարիս , և նոյն-  
 գունակ սակաւ ոյժ ունին առ 'ի ընդդիմանալ

չարեաց : Բաղումք վաստակեալ և նեղեալ են  
 'ի մաքառելոյ ընդ ձախողութեան , և յօժար  
 են 'ի բաց ձգել յինքեանց զայնոսիկ կիրս՝ որք  
 այսքան ընդերկար զբաղեցուցեալ են զնոսա ըն-  
 դունայն : Նա և ծերութիւն և Տիւանդութիք  
 թոյլ տան բազմաց հրաժարիլ 'ի տարժանակիր  
 պարտեաց ընկերութեան : 'ի մեծաստանս ան-  
 զօրքն և երկչոտքն դիւրաւ պաշտպանեցին .  
 վաստակեալքն զհանգիստ գացեն . և ապաշխա-  
 րողքն 'ի մտածութիւնս պարապեցին : Այսոքիկ  
 առանձին տեղիք աղօթից և մտածութե ունին  
 զիր ինչ այնքան համբուռն մարդկային մտաց ,  
 մինչ զի գուցէ հաղիւ ուրեմն գացի որք , որ ոչ  
 ցանկասցի եզերել զկեանս իւր 'ի բարեպաշ-  
 տութեան և յաստուածպաշտութեան 'ի մե-  
 նաստանի ընդ քանի մի ընկերաց՝ ծանրաբարոյ  
 եղելոյ նման ինքեան :

Այսպէս՝ ասաց Պեկուս՝ յաճախակի եղեալ՝  
 է ցանկութիւն սրտի իմոյ . և դուստր արքային  
 բազմիցս ասացեալ է ինձ , թէ նա ոչ յօժարա-  
 կամ մեռանիցի 'ի մէջ ամբոխից աշխարհի :

Չիք ինչ արգել մարդոյ՝ ասաց իմլակ՝ առ  
 'ի վայելել զանմեղ հեշտութիւնս . բայց սա-  
 կայն արժան է քննել թէ զինչ են անմեղ հեշ-  
 տութիւնք : Անաս հեշտութեան իրիք՝ զոր նե-  
 կայա կարէ երեւակայել 'ի միտս իւր՝ ոչ է

Ի գործս, այլ ՚ի հետեւութիւնս գործոյն ք  
 Հեշտութիւնն ըստ ինքեան անմեղ լինիցի վնասակար, հաճելի ընծայելով մեզ զվիճակ մի՝  
 զոր գիտեմք լինել վաղանցիկ և փորձառական, և հրաժարեցուցանելով զխոկմունս մեր յայնմիկ  
 վիճակէ՝ յորոյ սկիզբն իւրաքանչիւր ժամ ածէ  
 զմեզ մերձ ընդ մերձ, և յորոյ վախճանն ոչինչ  
 երկարութիւն ժամանակի կարէ ածել զմեզ երբեք : Մեռելութիւն կամ ճնշումն մարմնոյ ոչ  
 է առաքինական ըստ ինքեան . և չունի զայլ  
 ինչ օգուտ, բայց միայն հեռացուցանէ զմեզ  
 ՚ի հրապուրանայ զգայութեան : Ի վիճակի ապագայ  
 կատարելութե՛ն՝ որում ամենեքեանս փափաքելով  
 տեսնալք՝ եղիցի հեշտութիւն առանց վտանգի, և  
 ապահովութի՛ն առանց արգելման :

Գուտոր արքային լուռ արձանայաւ, և Հրատարակչոյ  
 դարձուցեալ զերեսս իւր առ աստեղաբաշխն՝  
 եհարց ցնա, թէ ո՞չ կարէր նա արդեօք  
 յապարհէլ զառանձնանալ նորա յաշխարհէ,  
 ցուցանելով նմա զիր ինչ՝ զոր նա բնաւ ոչ  
 էր տեսեալ յառաջագոյն :

Հետաքրքրութիւն ձեր՝ ասաց իմաստասէրն՝  
 եղեալ է այնքան ընդհանրական, և փոյթ ուսումնասիրուե՛ն  
 ձեր այնքան զօրաւոր, մինչ զի չէ՛ հնար  
 այժմ գտանել զիւրա զիրա նորանորս .  
 բայց սակայն զոր ինչ այլ ոչ ևս կարէք գտանել

ի կենդանեաց, հնար է ձեզ գտանել ՚ի մեռելոց: Ի մէջ հրաշալի իրաց այսր երկրի են ստորերկրեայ դամբարանքն կամ պահարանքն նախնեայ, յորս զեռեղեալ պահպանէին նախնիք զմարմինս մեռելոց իւրեանց. և ՚ի զօրութիւն խժարից նիւթոյն՝ որով դիպատեալ զմեռեալ են զնոսա՝ մինչ ցարդ մեան մարմինք նց առանց արպականութեան և նեխութեան:

Ո՛չ գիտեմ՝ ասաց Հռասսելաս՝ թէ զինչ բերկրանս հեշտութեան կարեմք զգալ ՚ի տեսարանէ ստորերկրեայ դամբարանաց. բայց որովհետեւ ո՛չ գոյ մեզ այլ ինչ առարկայ զբօսանաց, եղեալ եմ ՚ի մտի առ ՚ի տեսանել զայնոսիկ պահարանս մեռելոց. դասեցից զայս զբօսանս ընդ այլոց բազմաց իրաց, զորս արարեալ է իմ իմ, քանզի պարտ է ինձ միշտ առնել զիր ինչ:

Այլան նորա ՚ի վարձու զպահպանս հեծելոց, և ՚ի միւսում աւուր գնացին տեսանել զստորերկրեայ դամբարանս: Յորժամ նորա հանդերձեալ էին իջանել ՚ի խռոչս ստորերկրեայ դամբարանաց, Պեկուս՝ ասաց դուստր արքային՝ զարդիս մեք վերստին յարձակիմք ՚ի բնակարանս մեռելոց. գիտեմ զի դու ո՛չ կամեսցիս գալ ընդ մեզ յերկիւղէ երևութական ոգւոց, այլ հաճեսցիս մեալ զկնի. յուսամ գտանել զքեզ յապահովի և ամբողջ ՚ի վերս-



դառնալ մեր 'ի տեսարանէ դամբարանաց քան  
լիցի տիկինն իմ՝ պատասխանեաց Պեկուա • ես  
նչ քնայից զկնի • գնայից ես 'ի վայր 'ի խո-  
ռոջս դամբարանաց 'ի մէջ քո և արքայորդոյն ։

Յայնժամ ամենեքեան նոքա իջին 'ի խորս  
գերեզմանաց • և դեգերեցան վարմացմամբ 'ի  
բաւիղս ստորերկրեայ ճանապարհաց • ուրանօր  
մարմինք մեռելոց զէտեղեալ կային կարգաւ յա-  
մենայն կողմանէ ։

## ԳԼՈՒԽ • ԽԸ ։

Իմնի խօսի շէտեւէ հոգարն ։

Զինչ է պատճառն՝ ասաց արքայորդին՝  
զի եգիպտայիք այսքան բազում ծախուք պահ-  
պանեալ են զմարմինս մեռելոց , զորս ազգք ո-  
մանք այրեալ կիզանեն հրով • այլք թաղեն ըզ-  
նոսս յերկրի և խառնեն զնոսս ընդ հողոյ • և  
ամենեքեան միաբանին հեռայույսանել զնոսս  
յաչաց իւրեանց , զկնի կատարելոյ զվայելուչ  
պաշտօն մեռելոց ։

Ծագումն նախնի սուլորութեանց՝ ասաց իմ  
լակ՝ է՝ հասարակօրէն անյայտ • վասն զի գործն  
յաճախակի տեւալ շարունակի՝ մինչ պատճառն

զկայ առեալ դադարի . և յաղագս սնտիա-  
պաշտ արարողութեանց ընդունայն է մեզ խոր-  
հիւ ինչ աստանօր . վասն զի զոր ինչ բանակա-  
նութիւնն ոչ թելադրեաց՝ բանականութիւնն ոչ  
կարէ բայայայտել զայն : Ընդերկար կարծեալ  
եմ՝ զի սովորութիւն զմեռսելոյ զմեռեալս ծա-  
գեցաւ ՚ի կաթոգին սիրոյ կենդանեաց առ վախ-  
ճանեալ ազգականս և բարեկամս իւրեանց . և  
առաւել Տաւանական երևի ինձ այս կարծիք .  
քանզի անհնար էր մարդոց առ հասարակ ու-  
նիւ զայս փոյթ զխապատելոյ զմեռեալս իւր-  
եանց . եթէ ամենայն մեռեալք լինէին զմըռ-  
սեալք խժալից նիւթովք՝ պահարանք ոչ պար-  
տէին լինիւ առաւել ընդարձակ քան զբնակա-  
րանս կենդանեաց : Արծեմ զի հարուստքն և  
պատուաւորքն միայն զմեռսելով պահպանեալ  
լինէին յապականութիւն . և մնայեալ մեռեալքն  
թողեալ լինէին առ ՚ի հետեւիւ ընթացից բնուէ :

Բայց սակայն կարծիք է հասարակաց , զի  
Եգիպտացիք հաւատային զհոգին լինիւ կենդա-  
նի՝ ցորչափ մարմինն մնայր անապահան և անլու-  
ծանելի . սմին իրի փորձէին նոքա զայս եղանակ  
խոյս տալոյ ՚ի մահուանէ :

Հնար էր իմաստուն Եգիպտացւոց՝ ստայ Նե-  
կայա՝ այսպէս անհեթեթս խորհիւ զէութենէ  
հոգւոյն : Եթէ հոգին կարէր անգամ մի կեալ

զինի անջատելոյ նորա ՚ի մարմնոյն , զի՞նչ կարէր նա այնուհետեւ ընդունիլ կամ կրել ՚ի մարմնոյն :

Եգիպտայիքն՝ ասաց աստեղաբաշխն՝ անտարակոյս խորհէին լըրիպակաւ ՚ի խաւարի հեթանոսութեան և յառաջին ծագման լուսոյ իմաստասիրութեան : Տակաւին լէ՛ճ մեծ գոյ ՚ի վերայ էութեան հոգւոյ ՚ի մեջ լուսաւոր և գիտնական անձանց . ոմանք դեռ ևս ասեն զի հոգին է նիւթական . բայց և այնպէս համարին զայն անմահական :

Ոմանք՝ պատասխանեաց իմլակ՝ ասացեալ են արդարեւ զի հոգին է նիւթական , սակայն հազիւ ուրեմն կարեմ հաւատալ զի անձն ոք խորհեալ է զայս , որ գիտէր զզիարդն խորհելոյ . քանզի ամենայն եզրակացուիք բանականուէ զօրացուցանեն զաննիւթականուի մտաց . և ամենայն ազդեցութիւնք հանձարոյ և հետազօտութիւնք գիտութեան միաբանին հաստատել զանիմացութիւն նիւթոյ :

Ո՛չ ոք երբէք կարծեաց զի խոկումն ընդաբոյս է ՚ի նիւթս կամ զի իւրաքանչիւր մասնիկ է էակ իմն խոկացող : Այլ սակայն եթէ մասն ինչ նիւթոյ զուրկ իցէ ՚ի խոկմանէ , ի՛նչ հնար իցէ մեզ խորհիլ զի մասն ինչ կարէ խոկալ : Նիւթ կարէ տարբերիլ ՚ի նիւթոյ միայն ՚ի ձև , ՚ի

Հոծութիւն, ՚ի զանգուածի, ՚ի շարժման և յուր  
 զորութեան շարժման. ո՛րմ յայտոյիկ տարբե-  
 րութեց նիւթոյ՝ թէպէտ և իցին փոփոխեալ  
 կամ յարակցեալ մտրթ է մեզ ընծայել զկարո-  
 ղութի խոկալոյ : Լինիլ բոլորակ կամ քառա-  
 կուսի, լինիլ կարծր կամ հոսանուտ, լինիլ մեծ  
 կամ փոքր, շարժել յամբ կամ արագ ՚ի մի կամ  
 ՚ի միւս ճանապարհ, են եղանակք նիւթական  
 գոյութիւն՝ ամենեքեան լինելով հաւասարապէս  
 օտար յեութենէ խոկալոյ : Էթէ նիւթն լինիցի  
 միանգամ առանց խոկման, հնար է միայն տալ  
 նմին խոկալ ՚ի ձեռն նորոգ եղանակաւորութի  
 իրիք : բայց ամենայն եղանակաւորութիւնք՝ զորս  
 հնար է նիւթոյ ընդունիլ են հաւասարապէս  
 ո՛չ կապակցեալ ընդ կարողութեանց խոկալոյ :

Սակայն նիւթաբանքն իմաստասիրեն՝ ասաց  
 աստեղաբաշխն՝ զի հնար է նիւթոյ ունիլ զո-  
 րակութիւնս, որոյ եմք մեք անձանօթ :

Որ միանգամ դիցէ զկարծիս ՚ի մտի իւրում՝  
 պատասխանեաց իմլակ՝ ընդդէմ այնմ՝ զոր ինքն  
 գիտէ, ( քանզի լինիցի իր ինչ՝ զոր ինքն ո՛չ գի-  
 տէ ) որ միանգամ կարէ հաստատել զենթա-  
 դրական հնարաւորութի ընդդէմ ծանուցեալ  
 ճշմարտութի, ո՛չ է արժան ընդունիլ զիս ՚ի շարս  
 բանական էակայ : Նիւթն ըստ քաջ ծանօթու-  
 թեան մերոյ է՝ անշարժ, անզգայ և անկենդան :

և եթէ չիցէ հնար հերբէլ զայս ազայոյց այլովք փաստիւք բայց միայն վերագրելով զայն յիբին՝ զոր ոչ գիտեմք, ունիմք միք զամենայն ըզվկայութիւն, զոր միտք մարդոյ կարէ ընդունիլ կամ հաւանիլ: Եթէ իրք յայտնեալք հերբեցին յերայ անյայտից, ոչինչ էակ (չասեմ զամենիմաստ էակ) կարէ երբեք հասանել ՚ի գիտութիւն ճշմարտութեան:

Բայց և այնպէս՝ սասայ աստեղաբաշխն՝ ոչ է արժան մեզ յանդուզն Ժպրհոութեամբ սահմանաւորել զանասման կարողութիւն Արարչին: Ոչ երբեք է սահմանաւորել զզօրութիւն ամենակալին՝ պատասխանեաց բանաստեղծն, առ ՚ի կարծեւ զի իր ինչ ոչ է համաձայն ընդ միւս իրաց, զի մի և նոյն առաջարկութիւն ոչ կարէ միանգամայն լինիլ ճշմարիտ և սուտ, զի մի և նոյն թիւն ոչ կարէ լինիլ դար և կոճատ, զի չէ հնար ընձեռել զկարողութիւն խոկման այնմ՝ զոր տեսչութիւնն ստեղծեալ է անընդունակ կարողութեան խոկալոյ:

Ոչ տեսանեմ ես զմեծ օգուտ ինչ՝ սասայ Նեկայա՝ յայս խնդիր վիճաբանութեան: Ոչ ապաքէն աննիւթականութիւն հոգւոյ՝ զոր ըստ կարծեաց իմոց հաստատեցեր դու ըստ բաւակաւնին՝ հարկաւորացէս տարունակէ յինքեան ըզմշտն շենական տեղութիւն: Յարագս աննիւթա-



կանութեան հոգւոյ՝ ասաց իմլակ՝ նախադասութիւնք մեր են բացասական , վասնորոյ և մթին և դժուարիմաց : Անիւթականութիւնն երևի նշանակել զբնական զօրութիւն իմն մշտնջեանական տեղութեան , իբրև հետեութիւն ազատութե յամենայն պատճառաց եղծման . որ ինչ ջնջեալ եղծանի՝ ապականեալ լինի ՚ի լուծմանն է յօրինուածոյ նորա , և ՚ի բաժանմանէ մասանց նորա . և չէ՛ հնար մեզ իմանալ թէ զիւրդ այն՝ որ չունի զմասունս , և սակս այնորիկ ո՛չ է ընդունակ լուծման , բնականապէս նուազեալ պակասեցոյի կամ յապականութի փոխեցոյի :

Ո՛չ գիտեմ՝ էս՝ ասաց Հաստէլոս՝ զիւրդ իմանալ զիր ինչ առանց տարածութեան . որ ինչ տարածի՝ պարտի ունիլ զմասունս . և դու հաւանիս , զի որ ինչ ունի զմասունս՝ պարտի յապականութիւն փոխիլ :

Նկատելով քննեա՛ զքո իսկ իմացուածս՝ պատասխանեաց իմլակ՝ և բանք իմ՝ երևեսցոյին քեզ ակաւ դժուարիմաց : Գտցես դու զնիւթ առանց տարածութե : Մտայածին ձեն ո՛չ նուազ ճշմարիտ է քան զզանգուած նիւթական . սակայն մտայածին ձեն չունի զտարածութիւն : Յորժամ խորհիս ՚ի միտս քո զձև բրգան միոյ , ո՛չ նուազ ճշմարիտ է զի միտք քոյ սեպհականէ զիդէայ բրգան միոյ , քան թէ բուրգն ինք-

նին կանգնեալ կայ կառուցեալ : Չի՞նչ տեղի ընու 'ի միտս քո իդէայ բրգան միոյ առաւել քան զիդէայ Տատի ցորենոյ միոյ . կամ զի՞արդ երկաքանչիւր իդէայ կրեսցէ զպատառումն : Որպէս գործն է՝ նոյնպէս և պատճառ նորին . որպէս խոկումն է՝ նոյնպէս և զօրութիւն խոկալոյ . զօրութիւն մի ասեմ անախտակիր և անլուծանելի :

Բայց սակայն էակն այն ասաց Նեկայա՝ զորոյ երկն չիմ յիշատակել զանուն , էակն այն՝ որ քստեղծ զՏոգին , կարէ եղծանել զայն :

Նա հաւաստեալ կարէ եղծանել զայն՝ պատասխանեաց իմլակ . բայց և այնպի գոլով Տոգւոյն անեղծական և անմահական՝ ընդունի 'ի գերագոյն բնութենէն զկարողութի տեղութեան իւրոյ : Հնար է ցուցանել առարկութի փիլիսոփայութի , զի ոչ ապականեսցի Տոգին յո՞ և իցէ ընդաբոյս պատճառէ եղծման կամ 'ի սկզբնէ ապականութի . բայց փիլիսոփայութի այլ ոչ և սկարէ առնել զառարկութի ինչ . էւ զի ոչ 'ի չիք դարձուսցի Տոգին յարարչէ իւրմէ՝ պարտիմք խորհարհարար ուսանիլ 'ի գերագոյն ճշմարտութի :

Ամենեքենն ք՞ զկնի աւարտելոյ իմլակայ զխօսք իւր՝ առ ժամանակ մի լուռ և եթ արձանացան : Եկայք 'ի բայ գնասցութի՝ ասաց Հոստիւստոս յայսմիկ ահաւոր տեսարանի մոհկանայութեան :

Չիարդ աղջամղջին երևէին այսորիկ աղարանք մեռելոց նմա որ ոչ գիտէր թէ ոչ երբէք ունէր մեռանիւ . որ ինչ այժմ գործէ՝ շարունակեսցէ զգործողութիւն իւր . և որ ինչ այժմ խորհի՝ խորհեսցի յաւիտեան : Որք միանգամ անշունչ անմռունչ անկեալ դնին աստանօր առ աջի մեր , այսինքն՝ իմաստուն և հզօրեղ անձինք նախնի ժամանակաց , ազդ առնեն մեզ առ ՚ի յիշէլ զկարճութիւն այժմեան վիճակի մերոյ : գուցէ մինչ դեռ նորա պարագեալ կային նման մեզ յընտրութեան կենայ՝ յանկարծակի ՚ի բայ խլեալ կորուցցան յաշխարհէ մահագաղա մահտան :

Յաչս իմ՝ ասաց չուսար արքային՝ ընտրութի կենայ եղեալ է դուն ինչ պիտանի . յուսամ այսուհետև խորհիւ միայն զընտրութի յաւիտենական կենայ :

Չկնի այսորիկ ամենեքեան նորա փութաջեալ ելին արտաքս ՚ի ստորերկրեայ դամբարանաց անտի . և ընդ պաշտպանութի պահպանի իւրեանց դարձ արարեալ չորան ՚ի կայրօ :

## ԳԼՈՒԽ • ԽԹ •

Արեւիկայն՝ յորում ոչինչ է զերջ-հանել :

Չարդիս հասեալ էր ժամանակ յորդուէ Չուրյն Նեղոսի . սուղ ինչ զինի տեսանելոյ նոցա զստորերկրեայ դամբարանն՝ գետն սկսաւ բարձրանալ :

Յաղագս այսորիկ արգելեալ Տնային նոքա ՚ի տան իւրեանց : Երկիրն ողջոյն լինելով ծածկեալ ՚ի ներքոյ Չուրյ գետոյն՝ ոչ կարելին նոքա գնալ արտաքս սակս իրիք զբօսանայ . և ունելով նոցա զբազում նիւթս զրուցատրութեան՝ զբօսեցուցանէ ին նոքա զինքեանս բաղդատութեամբ և նկարագրութեամբ բազմապատիկ վիճակաց կենաց՝ զորս տեսեալ էին յաշխարհի , և առնելով զբազմապատիկ յառաջադրութիւնս երջանկութեան , զոր իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ խորհեալ էր ՚ի միտս իւր :

Պիեղուս ոչ էրբէք այնքան զմայլեալ էր ընդ տեղի ինչ՝ ույ չ մենաստանն սբյն Անտոնի . ուրաւօր Արաբացին յազատուի դարձոյց զնա ՚ի գիրկս դատեր արբայի . սմին իրի ցանկայր նա միայն ընուլ զտեղին զայն բարեպաշտ կուսանօք , և լինել վանամայր մենաստանին այնորիկ . քանզի

Ճանճրայեալ էր նա յակնկալութի՛ն յուսոյ և ՚ի տաղտկութի՛ն իրայ . և սրտի մտօք կամէր յարատեւել ՚ի վիճակ իմն անփոփոխելի :

Նեկայա կարծէր զի ՚ի մէջ սմեհայն ենթալուսնեայ իրայ գիտութիւնն էր գերազանցագոյն և ցանկալի . ցանկայր նա զառաջինն ուսանիլ զամենայն գիտութիւնս . և ապա յառաջադէր առ ՚ի կառուցանել զճնամարտ մի զգօնամիտ կանանց և լինիլ գահերեց յայնմիկ ճեմարանի . զի խօսակցելով նորա ընդ ծերունեց և հրահանգելով զմատաղատունկ անձինս՝ կարող լիցի բաժանել զժամանակ իւր ՚ի գործառւսանելոյ զգիտութի յիմաստնոց և հաղորդելոյ զիմաստութիւն այլոց . որով հնար էր թողուլ ապագայից զօրինակս իմաստութեան և զյարացոյցս բարեպաշտութեան :

Հաստէլաս ցանկայր ունիլ զփոքրիկ թագաւորութիւն մի , յորում հնար լինէր ինքեան անձամբ անձին մատակարարել ժողովրդեան իւրում զիրաւունս արդարութեան , և տեսանել զամենայն զմասունս տէրութեան աջօք իւրովք . տակայն նա ոչ կարէր երբէք հաստատել զսահմանս տէրութեան իւրոյ , և յարաժամ խառնէր զանձն իւր ՚ի թիւս հպատակաց իւրոյ :

Իմլակ և ստեղաբաշխն հաճեցեալ էին ընթանալ ընդ հոսանաց ծովու կենցաղոյս , առանց



ուղղելոյ զճանապարհ իւրեանց ՚ի մասնաւոր ինչ  
ճառահանգիստ ։

Խորհեալ նոյա ՚ի միտս իւրեանց զայսոսիկ  
փափաքս ցանկութեան՝ քաջ գիտէին զի չէր  
հնար ինքեանց կատարել և ոչ զմի ՚ի նոյանէ ։  
Սակաւիկ մի խորհէին նոքա թէ զինչ էր  
արժան առնել և եդին ՚ի մտի իւրեանց՝ զի  
յորժամ յորդութի շուրջն դադարեսցի՝ դարձ  
արասցեն անդրէն յԵթովպիա ։

ՔԱԽՃԱՆ՝









